«Կառուցողական երկխոսության հանձնառություն»
ծրագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքներում

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի
քաղաքային համայնքներում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիայի կողմից իրականացվող «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ենթադրամաշնորհային ծրագրի հետ համագործակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 6

Ներածություն 7

Մեթոդաբանություն 8

Համահամայնքային քննարկումների ձևաչափը 8

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 10

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 12

Համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականության և իրավական կարգավորման հարցերը 12

Հատուկ դպրոցների անհրաժեշտությունը 12

Ֆինանսների և բյուջեի խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 12

Մանկավարժական կադրերի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 13

Մասնագիտական ուսուցման և որակավորման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 14

Մասնագիտական վերապատրաստման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 14

ԿԱՊԿ գնահատման համակարգի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 15

Աջակցող անձնակազմի դերը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 15

Ենթակառուցվածքների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 16

Տրանսպորտի և հասանելիության խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 16

Սննդի խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 17

Կրթական ծրագրերի և տնային ուսուցման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 17

Դասաժամերին ԿԱՊԿՈՒ երեխայի ներկայության խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 17

Կրթական մակարդակների միջև անցման և ուսումնական պլանների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 17

Նախադպրոցական կրթության ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 18

Կրթական ռեսուրսների, դասագրքերի և մեթոդների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 18

Համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի գենդերային առանձնահատկությունները 18

Մշակույթի, ընկալումների և խտրական կարծրատիպերի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 18
Դասղեկի, հոգեբանի և դասարանի դերակատարումը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում 19
Դպրոցական համայնքի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 19
Կրթական միջավայրի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա 20
Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք 22
Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 22
Ա.1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 22
Ա.2. ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ 23
Բ. ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԲՅՈՒՋԵ 24
Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 28
Գ.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ 28
Գ.2. PRE-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ 33
Գ.3. IN-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 34
Դ. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ 36
Դ.1. ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ 36
Դ.2. ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ 38
Ե. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 42
Ե.1. ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՅՔ, ՄԱՐՁԱԴԱՀԼԻՃ 42
Ե.2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ 44
Ե.3. ՍՆՈՒՆԴ 44
Զ. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 45
Զ.1. ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ 45
Զ.2. ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 46
Զ.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ 47
Զ.4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 47
Է. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 48
Է.1. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ (ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԲՐԵՅԼԻ ԱՅԲՈՒԲԵՆ) 48
Ը. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (ENABLING ENVIRONMENT) 49
Ը.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 49
Ը.2. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ, ԽՏՐԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ 49
Ը.3. ԴԱՍՂԵԿ, ՀՈԳԵԲԱՆ, ԴԱՍԱՐԱՆ 54

Ը.4. ԴՊՐՈՑ (ՀԱՄԱՅՆՔ) 54
Ը.5. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 59
4. Սոցիալական երկխոսություն 64
Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 64
Ա.1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 64
Ա.2. ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ 65
Բ. ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԲՅՈՒՋԵ 66
Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 71
Գ.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ 71
Գ.2. PRE-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ 75
Գ.3. IN-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 76
Դ. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ 79
Դ.1. ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ 79
Դ.2. ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ 80
Ե. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 85
Ե.1. ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՅՔ, ՄԱՐՁԱԴԱՀԼԻՃ 85
Ե.2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ 87
Ե.3. ՍՆՈՒՆԴ 88
Զ. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 90
Զ.1. ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ 90
Զ.2. ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 90
Զ.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ 91
Զ.4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 92
Է. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 93
Է.1. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ (ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԲՐԵՅԼԻ ԱՅԲՈՒԲԵՆ) 93
Ը. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (ENABLING ENVIRONMENT) 94
Ը.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 94
Ը.2. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ, ԽՏՐԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ 94
Ը.3. ԴԱՍՂԵԿ, ՀՈԳԵԲԱՆ, ԴԱՍԱՐԱՆ 99
Ը.4. ԴՊՐՈՑ (ՀԱՄԱՅՆՔ) 100
Ը.5 ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 104
Հավելված 1. Գունային կոդավորում 110
Հավելված 2. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների քննարկման սցենարները 111
Սցենար 1. Յոթ իմաստուններն ու ներառական փիղը 111

Սցենար 2. Ծակ գրպանի բարի մտադրությունները 112
Սցենար 3. Վագրի կաշի՝ կարմիր կովին 113
Սցենար 4. Ինչ գին ունի համընդհանուր ներառումը 114
Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 115
Հավելված 4. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով 116
Հավելված 5. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները 117
Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը 118

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիաի և Արմավիրի մարզերի երկու քաղաքային համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման հիմնախնդիրների վերաբերյալ համահամայնքային քննարկումների կազմակերպմանը: Շնորհակալ ենք նրանց մասնակցության, կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպական հանձնաժողովին, որը մեզ ընձեռել է քննարկումներն ու սույն ամփոփումն իրականացնելու հնարավորությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Պյոտր Սվիտալսկուն: Արդյունավետ կառավարման, քաղաքացիական մասնակցության և երկխոսության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը նրա անմիջական և եռանդուն աջակցությունը նպաստել է ծրագրի և մասնավորապես՝ քննարկումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և այս խնդիրները որպես գերակայություն ճանաչելու գործին:

Քննարկումների նախապատրաստման և իրականացման համար ոգեշնչման աղբյուր են դարձել Հայաստանում համընդհանուր ներառական կրթության ներդրման հետևողական գործընթացը և դրա այլընտրանքները համայնքի բնակիչներին հնարավորինս պարզ ու հասանելի ներկայացնելու, դրա վերաբերյալ բնակիչների կարծիքները արդյունավետ կերպով լսելի դարձնելու գործում հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք կառույցների եռանդուն ջանքերը: Անցած տարիներին նրանց հետևողական և նվիրված աշխատանքի արդյունքում ձևավորված համընդհանուր ներառականության ներդրման օրակարգը հնարավոր դարձավ ամբողջականացնել և ներկայացնել ՀՀ մարզերի համայնքների բնակիչների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, զարգացման գործընկերների շահագրգիռ քննարկմանը, լսելի դարձնել նրանց ձայնը և ամփոփել նրանց բարձրաձայնած կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները սույն փաստաթղթում:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում ՝«Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ենթադրամաշնորհային ծրագրի նախաձեռնությունն ու իրականացման պատասխանատվությունը ստանձնած «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը, իր գործընկերներ՝ Մարտունու կանանց համայնքային խորհրդի, Վայոց Ձորի զարգացման «Հույս-98» ՀԿ-ի, «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ-ի հետ միասին, և հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիայի անդամներին, մեր գործընկերներին, ում շահագրգիռ և արդյունավետ մասնակցությամբ մշակվել են համահամայնքային քննարկումների սցենարները, ՀՀ Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի քաղաքային երկու համայնքներում ապահովել համընդհանուր ներառական կրթության ներդրման վերաբերյալ շահագրգիռ հարյուրավոր քաղաքացիների մասնակցությունը քննարկումներին: Քննարկումները նախապատրաստելու և արդյունքներն ամփոփելու ընթացքում ՄԶՄԿ աշխատակազմը բովանդակալից քննարկումներ է ունեցել կոալիցիայի միավորման անդամների հետ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել համագործակցության և սույն ամփոփման մշակման գործում մեծ ներդրում ունենալու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում միավորման համակարգող խմբին և անձամբ Նաիրա Առաքելյանին, Անահիտ Գևորգյանին, Արման Ղազարյանին, Արմինե Սաֆարյանին և Անահիտ Նահապետյանին՝ մասնագիտական մոտեցման և քննարկումները նախապատրաստելու և կազմակերպելու գործում մեծ ներդրում ունենալու, քննարկումներին մասնակցելու, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Կառուցողական երկխոսություն» ծրագրի մեր գործընկերներին՝ Իրավաբանների հայկական ասոցիացիային, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնին (ՍԻՎԻՏԱՍ), ՓՄՁ համագործակցության ասոցիացիային, Հայաստանի համայնքների միությանը և «Ագորա Սենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպությանը (Չեխիա) իրենց ներդրման և համագործակցության համար:

Ներածություն

Համընդհանուր ներառական կրթության աստիճանական ներդրման այլընտրանքների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը, ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի և դրա «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, ՀՀ Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի քաղաքային երկու համայնքներում 2019թ. մարտին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման, ՀՀ պաշտպանության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության շուրջ 200 քաղաքացի, իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Արմավիրի մարզի Արմավիր համայնքներում:

Քննարկումներն իրականացվել են համընդհանուր ներառական կրթության աստիճանական ներդրման վերաբերյալ ՄԶՄԿ ուսումնասիրությունների, մասնագետների, այդ թվում՝ ԵՄ աջակցությամբ իրականցվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիայի և դրա անդամ կազմակերպությունների հետ քննարկումների, մամուլում հրապարակումների, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄԶՄԿ փորձագետների կողմից մշակված չորս հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Համահամայնքային քննարկումների ՄԶՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄԶՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ http://www.ichd.org հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և վստահելի տեղեկությունների աղբյուր են համընդհանուր ներառական կրթության, դրա ներդրման պետական քաղաքականության և հիմնախնդիրների արծարծմանը, հանրակրթության ոլորտում կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և աղքատության հաղթահարմանն ուղղված հանրային քաղաքականության բարեփոխումների մշակման պատասխանատուների և շահագրգիռ պետական, համայնքային, հասարակական, մասնավոր հատվածի կազմակերպությունների և միջազգային զարգացման գործընկերների համար:

Մեթոդաբանություն

Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության այլընտրանքների շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄՋՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ

դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողներն ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների վերաբերյալ ՀՀ երկու մարզերի քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների (Հավելված 5) և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ

[1] Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

[2] Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքն առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

երկխոսությունը, (h) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության աստիճանական ներդրման այլընտրանքների քննարկումը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ հնարավորությունների զարգացման նախաձեռնությունները կարող են դուրս գալ ուղեգծերից[3]:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն-համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 6): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք[4] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ Մարտունի և Արմավիր համայնքներում աղբահանության ծառայությունների հիմնախնդիրների (Հավելված 5) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենա Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրումն այս կամ այն առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրն այլընտրանքների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

[3] Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

[4] Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականության և իրավական կարգավորման հարցերը

Քննարկումների մասնակիցների կարծիքով ՀՀ բոլոր քաղաքացիներն, անկախ իրենց հնարավորություններից, ունեն կրթություն ստանալու իրավունք: Բոլոր պետական մարմիններն՝ այդ թվում դպրոցներն ու ոստիկանությունը, պետք է գործեն յուրաքանչյուր երեխայի կրթություն ստանալու իրավունքն ապահովելու համար: Մասնակիցներից ոմանք էլ նշում են, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավվածությունը դասաժամերին, խանգարում է մյուս երեխաներին, այդպիսով, խախտելով ոչ ԿԱՊԿՈՒ դպրոցականների որակյալ կրթության իրավունքը:

Քաղաքացիներից ոմանց կարծիքով, ԿԱՊԿՈՒ օրենսդրությունը գրեթե կատարյալ է, բայց մտավախություն ունեն, թե օրենքները կմնան միայն թղթի վրա: Մասնակիցների մեկ այլ խմբի կարծիքով ԿԱՊԿՈՒ օրենսդրությունը թերի է, չի կարգավորում ոլորտի բոլոր հարցերը. այսպես, տնային ուսուցման վերաբերյալ չկա հստակ օրենսդրական կարգավորում: Քաղաքացիների մի խմբի կարծիքով էլ, դպրոցներում ներքին կանոնակարգերի մշակման անհրաժեշտություն կա, ինչը կկարգավորի հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաների հետ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների հարաբերությունները:

Որոշ մասնակիցների կարծիքով, համընդհանուր ներառական կրթության եվրոպական փորձը հաջողված է, և առանձնապես շատ ռեսուրսներ և ջանք թափելու կարիք չկա՝ «նոր հեծանիվ» հորինելու համար, փոխարենը կարելի է առկա պատրաստի մոդելները կիրառել Հայաստանում: Քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ առանց երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու միջազգային փորձի կիրառումը հաճախ հանգեցնում է ներպետական օրենքների կիրարկման տապալմանը:

Հատուկ դպրոցների անհրաժեշտությունը

Քաղաքացիները նշում են, որ համընդհանուր ներառական կրթության անցնելու համար նախապես պետք է մեծ ծավալի աշխատանք կատարել. եթե բոլոր հատուկ դպրոցները փակվեն, ապա քաոս կտիրի, քանի որ, հանրակրթական դպրոցները, բացի ֆիզիկական ենթակառուցվածքներից նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող հատուկ մասնագետների կարիք ունեն, կարծում են քննարկումների մասնակիցները:

Միաժամանակ, մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ պետք է հնարավորինս կրճատել հատուկ դպրոցները, դրանք թողնելով միայն «ծանր» խնդիրներ ունեցող երեխաների համար: Քաղաքացիների մի մասն էլ գտնում է, որ հատուկ դպրոցներին տրվող ֆինանսավորումը հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառականության ներդրման ուղղելը ավելի արդյունավետ կլինի, քանի որ հատուկ դպրոցներում աշխատող մասնագետների մասնագիտական կարողությունները հաճախ կասկածի տակ են առնվում, և որ ամենակարևորն է, հատուկ դպրոցները տարանջատում են երեխաներին: Հատուկ դպրոցներում սովորող երեխաները մեծանում են հասարակությունից մեկուսացած, իսկ հանրակրթական դպրոցները, բացի երեխաների կրթությունից, ապահովում են նաև նրանց սոցիալականացումը, կարծում են քաղաքացիները: Միաժամանակ, համընդհանուր ներառականությունը կարևոր է նաև բոլոր երեխաների և ավելի հանդուրժող և ամուր հասարակություն ձևավորելու համար:

Քննարկումների մասնակիցների մեկ այլ խումբ գտնում է, որ համընդհանուր ներառականությանը ներդրմանը զուգահեռ պետք է աշխատանքներ տարվեն նաև համայնքներում աջակցության և ԿԱՊԿՈՒ շրջանավարտների զբաղվածության կենտրոններ ստեղծելու ուղղությամբ: Ծնողները հատկապես կարևորում են ԿԱՊԿՈՒ երեխաների հետագա զբաղվածության խնդիրը: Դպրոցն ավարտելուց հետո ԿԱՊԿՈՒ երեխաներն իրենց կրթությունը շարունակելու կամ աշխատանք գտնելու մեծ խնդիրների են բախվում, նկատում են մասնակիցները:

Ֆինանսների և բյուջեի խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցներից ոմանք նշում են, թե համընդհանուր ներառական կրթության արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ են բավականին մեծ ֆինանսական ռեսուրսներ, ինչն այսօր պետությունը չունի: Արդյունքում դանդաղում է համընդհանուր ներառական կրթության ներդրման

գործընթացը: Քաղաքացիների կարծիքով, թեև բավարար չեն տրվող ֆինանսական միջոցները, այնուամենայնիվ, այդ գումարների մի մասը պետք է հատկացնել մասնագետների վերապատրաստմանը և նրանց աշխատավարձների ապահովմանը: «Սոցիալական խնդիր ունեցող մարդը՝ մանկավարժը, ինչպես կարող է ուրիշի սոցիալական խնդիրները լուծի», նկատում են մասնակիցներից ոմանք: Ըստ քաղաքացիների, ուսուցիչներին աշխատավարձը չի բավարարում նրանց նվազագույն կարիքները, ուստի լրացուցիչ պարտականություններ ավելացնելու դեպքում, նրանց աշխատավարձը պետք է բարձրացնել: Ինչպես նկատում են որոշ մանկավարժներ, ցածր աշխատավարձն ազդում է նաև ուսուցչի աշխատանքի որակի վրա. «ինչքան աշխատավարձ են տալիս, որ մի հատ էլ ներվերս քայաքայեմ, նման երեխեքի հետ աշխատեմ»: Միաժամանակ, որոշ քաղաքացիներ էլ նշում են, թե ֆինանսական միջոցները գլխավորը չեն, և ցանկալի արդյունքի կարելի է հասնել ցանկության ու բարեխիղճ աշխատանքի շնորհիվ:

Մասնակիցներից ոմանք ուշադրություն են հրավիրում նաև հնարավոր կոռուպցիոն ռիսկերի վրա, նշելով, որ դրանք բարձր են հատկապես մարզերում: Այսպես, ըստ քաղաքացիների, դպրոցի ֆինանսավորումն ավելացնելու համար, տնօրենները երբեմն ԿԱՊԿՈՒ երեխաների ցուցակում ավելացնում են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների:

Ներկաները բարձրաձայնում են նաև դպրոցի բյուջեի վերահսկողության խնդիրը, նշելով, թե դպրոցներում, հատկապես ներառական կրթության համար ծախսվող գումարների թափանցիկությունը պետք է ապահովել լիարժեքորեն: Քաղաքացիների կարծիքով, շահագրգիռ վերահսկողության շնորհիվ հնարավոր կլինի ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին տրամադրվող ֆինանսական միջոցներն ավելի նպատակային օգտագործել, օրինակ՝ անհրաժեշտության դեպքում դպրոց հրավիրել ֆիզիոթերապևտ, լոգոպեդ, կամ ձեռք բերել ԿԱՊԿՈՒ երեխային անհրաժեշտ սարքեր՝ լսողական սարք, կամ բրեյլյան այբուբենով գրքեր:

Ըստ քննարկումների մասնակիցներ՝ համընդհանուր ներառականությունը լուծում է նաև ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների ֆինանսական խնդիրները, օրինակ՝ համայնքում հատուկ դպրոց չլինելու պատճառով, շատ ծնողներ ստիպված են երեխային ամեն օր հասցնել Երևան, մինչդեռ համընդհանուր ներառականության ներդրման արդյունքում նման երեխաները կսովորեն իրենց համայնքում:

Մանկավարժական կադրերի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

Քննարկումների մասնակիցների կարծիքով ներառական կրթության արդյունավետության հարցում մեծ է հատկապես մանկավարժների դերը: Ըստ քաղաքացիների, ուսուցիչը պետք է նաև հոգեբան, սոցիալական աշխատող լինի, որպեսզի երեխային, կախված իրավիճակից կարողանա համապատասխան օգնություն ցուցաբերել: Միայն մասնագիտական կարողությունները բավարար չեն, որ երեխան հարմարվի ու սիրի դպրոցն ու ուսուցչին, նկատում են մասնակիցները: Հետևաբար, ինչպես նշում են քաղաքացիները, համընդհանուր ներառական կրթության համակարգին անցնելուց առաջ նախ պետք ուսուցիչներին նախապատրաստել: Առաջին հերթին պետք է սկսել երևույթի հանդեպ մոտեցումների փոփոխությունից, կարծում են քննարկումների մասնակիցները:

Ինչպես նշում է քննարկումների մասնակիցների մի խումբ, ուսուցիչների շրջանում պետք է փոխել այն կարծրատիպը, թե ԿԱՊԿՈՒ երեխայի հետ անհնար է աշխատել: Որոշ ուսուցիչներ ԿԱՊԿՈՒ երեխա ասելով հասկանում են «աննորմալ», տարօրինակ մարդ, պիտակավորելով երեխաներին, ինչի արդյունքում ուսուցիչները հաճախ խուսափում են նրանց հետ աշխատել՝ երեխաներին դասերից հեռացնելով, դասասենյակի հեռու անկյունում նստեցնելով, որպեսզի «չխանգարեն» դասը: Կան ուսուցիչներ, որոնք պարզապես գնահատական են նշանակում՝ ավելորդ «գլխացավանքից» խուսափելու համար, նկատում են քաղաքացիները: Այլ ուսուցիչներ միջոցառում են անում միայն ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությամբ, առանց ընկալելու, որ սա ևս առանձնացնում՝ մարգինալացնում է այս երեխաներին մյուսներից, նկատում են մասնակիցները: Միաժամանակ, ինչպես նշում են որոշ քաղաքացիներ, կան նաև ուսուցիչներ, որոնք ցանկանում են երեխայի հետ աշխատել նաև դասերից հետո, սակայն օրենքը դա չի թույլատրում:

Քննարկումների որոշ մասնակիցներ, գտնում են, որ դասարաններն այսօր գերծանրաբեռնված են, և ուսուցիչը ժամանակ ու ռեսուրս չունի բոլոր աշակերտների և հատկապես՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ առանձին աշխատելու համար: Ըստ քաղաքացիների՝ համընդհանուր ներառական կրթություն

ապահովելու և ԿԱՊԿՈՒ երեխաներին դասապրոցեսին ներգրավելու համար պետք է դասարանում սովորող աշակերտների թիվը կրճատել:

Քաղաքացիներից ոմանք պնդում են, որ աշխատավարձի բարձրացումն ուսուցիչների համար ավելի լավ աշխատելու մոտիվացիա կլինի: Մասնակիցները նշում են, թե պետք է նախ բարձրացնել ուսուցիչ աշխատավարձը նոր լրացուցիչ պարտականություններ ավելացնել: Մասնակիցների մի խումբ էլ նշում է, որ ուսուցչի համար ամենակարևորը երեխային սիրելն է, և աշխատավարձը կապ չունի, քանի որ «ֆինանսը» միշտ էլ քիչ է:

Ինչպես նկատում են քննարկումներից մասնակիցներից ոմանք, ցանկության և համապատասխան գիտելիքների ու հմտությունների առկայության դեպքում ուսուցիչները կարող են բոլոր երեխաներին ներառել դասապրոցեսում: Սակայն այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է ժամանակ և համատեղ աշխատանք, կարծում են քաղաքացիները:

Մասնակիցներից ոմանք նշում են, որ ծնողների և ուսուցիչների համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքի: Ուսուցիչների և ծնողների համար իրազեկման սեմինարների և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը կբարձրացնի նրանց տեղեկացվածությունը ներառականության վերաբերյալ, ինչն էլ կնպաստի համակարգի ավելի սահուն և արդյունավետ ներդրմանը, կարծում են բնակիչներից ոմանք: Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ առանձին աշխատանքով պետք է զբաղվեն հատուկ մասնագետներն, իսկ ուսուցիչը՝ միայն առարկայական դասերով:

Մասնագիտական ուսուցման և որակավորման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քաղաքացիներից ոմանց կարծիքով, ներառական դպրոցներում ուսուցիչները պետք է ունենան ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու մասնագիտական որակավորում: Ըստ քաղաքացիների, ուսուցիչների հիմնական խնդիրը մասնագիտական կրթության բացակայությունն է. մասնագիտական բարձրագույն կրթությունը հիմնված է տեսական գիտելիքի վրա, փոխարենը շատ քիչ են գործնական դասընթացները: Ինչպես նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք, միայն սեփական նախաձեռնության շնորհիվ է հնարավոր ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հմտություններ ձեռք բերել: Միաժամանակ, մասնակիցներն ընդգծում են մանկավարժական կրթություն ստացող ուսանողների՝ ներառական դպրոցներում ուսումնական պրակտիկա անցնելու անհրաժեշտությունը: Քննարկումների մասնակիցների մեկ այլ խումբ նկատում է, որ ինչպես այլ մասնագիտությունների պարագայում, ներառական կրթության դեպքում ևս լավ մասնագետ դառնալը մեծապես կախված է անձի ունակություններից և նախասիրություններից:

Քննարկումների մասնակիցները բարձրացնում են նաև բուհերի կողմից տրամադրված դիպլոմների արժանահավատության հարցը, նշելով, որ հայաստանյան բուհերի տրամադրած դիպլոմները միշտ չէ, որ վստահելի են: Հատկապես մարզերում գործող բուհերի կրթությունը անհրաժեշտ որակ չունի, կարծում են քաղաքացիները:

Մասնագիտական վերապատրաստման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քաղաքացիների կարծիքով համընդհանուր ներառական կրթության ամենամեծ խնդիրներից մեկը համապատասխան կադրերի և վերապատրաստման հատուկ հաստատությունների բացակայությունն է: Ներառական կրթության ներդրման գործընթացը պետք է սկսել ուսուցիչների վերապատրաստումից, նշում են մասնակիցները: Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը պետք է վերահսկել, իսկ վերապատրաստումներից հետո նաև քննություն անցկացնել: Անհատական մասնագիտական վերապատրաստումների վճարները շատ բարձր են, ինչի պատճառով ուսուցիչները հաճախ չեն ցանկանում գումար տրամադրել վերապատրաստումներին, հետևաբար, ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարներից անհրաժեշտ է միջոցներ տրամադրել մանկավարժների վերապատրաստմանը, առաջարկում են քննարկումների մասնակիցները:

Միաժամանակ, ինչպես նկատում են որոշ քաղաքացիներ, վերապատրաստման դասընթացները շատ հաճախ գործնական գիտելիքներ և հմտություններ չեն տալիս մասնագետին, իսկ դպրոցում աշխատող

մասնագետներին անհրաժեշտ են պրակտիկ հմտություններ: Մասնագետների արդյունավետ վերապատրաստման համար նախ պետք է հստակեցնել վերապատրաստող հաստատությունների ցանկը, վերապատրաստող մասնագետներին ներկայացվող պահանջները, կարծում են քննարկումների մասնակիցները: Վերապատրաստումներին զուգահեռ, պետք է հրատարակվեն նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հատուկ ձեռնարկներ, նշում են մասնակիցները:

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով ներառական դպրոցներում աջակցող անձնակազմը ևս պետք է վերապատրաստման դասընթացների մասնակցի: Օրինակ՝ դպրոցի բուժքույրը պետք է համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունենա ԿԱՊԿՈՒ երեխաների խնդիրների ու հնարավոր լուծումների մասին:

ԿԱՊԿ գնահատման համակարգի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

ԿԱՊԿՈՒ երեխաների գնահատումը շատ կարևոր է: Այն պետք է սկսվի երեխայի ծննդից անմիջապես հետո, կարծում են որոշ քաղաքացիներ: ԿԱՊԿՈՒ ճիշտ գնահատումը հնարավորություն է տալիս որոշել երեխայի զարգացման խնդիրների առկայությունն ու խորության աստիճանը և ըստ այդմ՝ հասկանալ, թե երեխան պետք է սովորի հատուկ, թե հանրակրթական դպրոցում, նշում են մասնակիցները:

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով, ԿԱՊԿ գնահատումը հաճախ թերի կամ ոչ ճիշտ է կազմակերպվում: Օրինակ՝ ԿԱՊԿՈՒ գնահատական է տվում հաճախ սոցիալապես անապահով կամ «ծույլիկ» աշակերտներին: Երբեմն, գնահատման հարցաթերթիկների մեջ առկա հակասությունների պատճառով զարգացման խնդիրներ ունեցող երեխան դուրս է մնում ներառական կրթությունից, ուստի պետք հստակ սահմանել ԿԱՊԿՈՒ գնահատման չափորոշիչներ, նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք:

Քաղաքացիների մի խումբ նշում է, թե ԿԱՊԿՈՒ գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել նաև ծնողների կարծիքը, քանի որ երեխան իր հիմնական ժամանակն անց է կացնում հենց նրանց հետ, մինչդեռ մասնագետները մի քանի ժամվա ընթացքում չեն կարող լիարժեքորեն գնահատել երեխայի կարողությունները: Որոշ մասնակիցներ էլ նշում են, թե ծնողների գնահատականները հիմնականում սիրողական են, երբեմն էլ ծնողները տարբեր պատճառներով խուսափում կամ չեն ընդունում իրենց երեխայի խնդիրները՝ խոչընդոտելով ԿԱՊԿՈՒ մասնագիտական անաչառ գնահատմանը:

Քննարկման մասնակիցները բարձրաձայնում են նաև գնահատման կենտրոնների ֆիզիկական հասանելիության խնդիրը: Ինչպես նշում են քաղաքացիները, գնահատման կենտրոնները շատերին հասանելի չեն, հատկապես եթե երեխան պետք է մի քանի օր մնա այդ կենտրոններում, ինչը ծնողների համար խնդիրներ է առաջացնում: Երեխաների ԿԱՊԿ գնահատումը խմբերով կազմակերպելը նույնպես լրացուցիչ դժվարություններ է առաջացնում, քանի որ երեխաները ստիպված են սպասել մինչև խումբ հավաքվի:

Մասնակիցների մի խումբ էլ բարձրաձայնում է ԿԱՊԿՈՒ երեխաների վերագնահատման խնդիրը, քանի որ երեխաների հետ աշխատանքի շնորհիվ որոշակի դրական արդյունքներ հաճախ ձեռք են բերվում, բայց քանի որ չկա վերագնահատման գործընթաց, մասնագետները և երեխան ստիպված շարունակում են աշխատել նույն կերպ: Ինչպես նշում են քննարկման մասնակիցները, ԿԱՊԿՈՒ գնահատումը չպետք է լինի ինքնանպատակ և գնահատման արդյունքում երեխային պետք է տրվի վկայական, իսկ անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան սարք (օրինակ՝ լսողության խանգարում ունեցող երեխաներին ԿԱՊԿՈՒ գնահատման արդյունքում պետք է տրամադրել լսողական սարք):

Աջակցող անձնակազմի դերը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցների կարծիքով համընդհանուր ներառական կրթության անցնելու համար դպրոցներում պետք է աշխատանք տանել թե՛ դպրոցի ֆիզիկական ենթակառուցվածքների, թե՛ համապատասխան մասնագետների ներգրավման և վերապատրաստման ուղղությամբ: Ինչպես նշում է քննարկմանը մասնակցած քաղաքացիների մեծամասնությունը, դպրոցներում ուսուցչի օգնականի հաստիքի ներդրման և այդ հաստիքի ավելացման անհրաժեշտություն կա: Այսօր դպրոցներին հատկացված են ուսուցչի օգնականի հաստիքներ, սակայն նրանց պարտականությունները դեռ հստակ սահմանված չեն, իսկ երեխաների թվաքանակի համեմատ ուսուցչի օգնականների թիվը շատ քիչ է:

Քննարկումների մասնակիցներից ոմանք առաջարկում են մեկ ԿԱՊԿՈՒ երեխայի հաշվով դպրոցին տրամադրել մեկ ուսուցչի օգնականի հաստիք, ակտիվորեն ներգրավելով նաև բուհերի համապատասխան ֆակուլտետների ավարտական կուրսերում սովորող ուսանողներին:

Միևնույն ժամանակ, քաղաքացիների մեկ այլ խմբի կարծիքով, ուսուցչի օգնականի հաստիքը դեռ հստակ ձևավորված չէ, պարտականությունները հստակեցված չեն և ուսուցչի օգնական են դառնում մարդիկ, ովքեր չեն կարողանում ուսուցիչ դառնալ: Քաղաքացիներից ոմանց կարծիքով ուսուցչի օգնականի հաստիքի փոխարեն պետք է պարզապես բարձրացնել ուսուցչի աշխատավարձը, վերջինս ավելի մեծ հաճույքով կսկսի աշխատել նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Լոգոպեդների, հոգեբանների հաստիքների ներդրման անհրաժեշտությունը ևս բարձրացվեց քննարկումների ընթացքում: Մասնակիցները նշում են, որ ԿԱՊԿՈՒ երեխաների մեծամասնությունն ունի ոչ թե թեքահարթակների, այլ հոգեբանների և լոգոպեդների հետ աշխատելու կարիք: Ինչպես նկատում են քաղաքացիները, դպրոցում բազմամասնագիտական անձնակազմի առկայությունն անհրաժեշտ է երեխաների հետ աշխատանքում ցանկալի արդյունքի հասնելու համար: Միաժամանակ, ինչպես նշում են քաղաքացիները, յուրաքանչյուր մասնագետի պետք է տրամադրել համապատասխան դասասենյակ և նյութեր, քանի որ հաճախ մասնագետներն իրենց ուժերով են ձեռք բերում նյութերը, իսկ տարբեր մասնագետներ հաճախ աշխատում են նույն սենյակում տարբեր հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ՝ երբեմն միմյանց խանգարելով:

Քաղաքացիներից ոմանց կարծիքով դպրոցներում պետք է ներդնել այն հաստիքները, որոնց անհրաժեշտությունը կա կոնկրետ ժամանակահատվածում: Միաժամանակ, դպրոցները պետք է ունենան պրոֆեսիոնալ բուժքույրեր, դայակներ և խոհարարներ, ֆիզիոթերապևտներ:

Քննարկումների մասնակիցների մեկ այլ խումբ էլ կարծում է, թե միայն ուսուցչի և օգնականի համատեղ աշխատանքի արդյունքում է հնարավոր հասնել ցանկալի արդյունքի: Կան հաջողված օրինակներ, երբ օգնականը և ուսուցիչը միմյանց օգնելով և փոխլրացնելով բավականին արդյունավետ աշխատում են:

Ենթակառուցվածքների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցների կարծիքով արդյունավետ ներառական կրթության ապահովման համար անհրաժեշտ է դպրոցներն ապահովել համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքներով: Ինչպես նշում են քննարկումների մասնակիցները, դպրոցներում կա՛մ չկան թեքահարթակներ, կա՛մ չափանիշներին չեն համապատասխանում, դրանով դժվարացնելով հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների ազատ տեղաշարժը: Թեքահարթակներից բացի, դպրոցներում խնդիր են նաև շենքային ընդհանուր պայմանները. Երբեմն դպրոցների առաջին հարկերում դասասենյակներ չկան, կաբինետային ուսուցման դեպքում էլ երեխաները կա՛մ չեն հաճախում դասաժամերին, կա՛մ էլ ուսուցիչներն ու աշակերտներն իրենց ուժերով են փորձում ԿԱՊԿՈՒ երեխաներին հասցնել համապատասխան դասասենյակներ: Ինչպես նշում են քաղաքացիները, դպրոցները չունեն ԿԱՊԿՈՒ երեխաներին համապատասխան գույք, օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող երեխաների համար բրեյլյան դասագրքեր, լսողական խնդիրներ ունեցողների համար՝ լսողական սարքեր, սայլակով երեխաների համար համապատասխան սեղաններ և այլն: Դպրոցների՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին հարմարեցված սանհանգույցները ևս կարևոր են, կարծում են քննարկումների մասնակիցները:

Տրանսպորտի և հասանելիության խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակից քաղաքացիների կարծիքով համայնքային տրանսպորտի ցանցի բացակայության կամ դրա՝ հաշմանդամության խնդիրներ ունեցող անձանց հարմարեցված չլինելը մեծ խնդիրներ է ստեղծում ԿԱՊԿՈՒ երեխաների տեղաշարժման համար: Ինչպես նշում են որոշ քաղաքացիներ, տրանսպորտային խնդիրների պատճառով երեխաները չեն կարողանում հաճախել դպրոց, հետևաբար ծնողները հաճախ նախընտրում են կասկածելի որակով տնային ուսուցման տարբերակը: Որպես լուծում՝ քննարկումների մասնակիցներն առաջարկում են ԿԱՊԿՈՒ երեխաներին տրվող գումարներից հատկացնել նաև այդ երեխաների տեղափոխման ծախսերին՝ հաշվի առնելով, տվյալ համայնքի տրանսպորտային հնարավորությունները:

Սննդի խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

«Եթե բոլորը պետք է հավասար լինեն, սնունդը արդեն անհավասարություն է», նշում են մասնակիցներից ոմանք: Ինչպես նկատում են քաղաքացիները, ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող սնունդը տարանջատում է երեխաներին, որի պատճառով էլ երեխաները հաճախ կոմպլեքսավորվում կամ հրաժարվում են տրամադրվող սննդից: Միաժամանակ, ինչպես նշում են որոշ քաղաքացիներ, կան ծնողներ, որոնք իրենց երեխաներին գրանցում են որպես ԿԱՊԿՈՒ՝ որպեսզի դպրոցում նրանք կարողանան օգտվել ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող սննդից: Որպես լուծում, քննարկումների մասնակիցներն առաջարկում են նվազագույն սննդով ապահովել բոլոր երեխաներին:

Կրթական ծրագրերի և տնային ուսուցման խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Ելնելով մի շարք հանգամանքներից, ծնողները ԿԱՊԿՈՒ երեխայի համար հաճախ նախընտրում են տնային ուսուցումը, նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք:

Ըստ քաղաքացիների՝ տնային ուսուցման հիմնական պատճառներից մեկը ծնողների մտավախությունն է, թե շրջապատը կիմանա իրենց երեխայի հիվանդության մասին: Տրանսպորտի սահմանափակ հասանելիությունը հաճախ տնային ուսուցման նախապատվության պատճառ է դառնում, նշում են մասնակիցները:

Միաժամանակ, ինչպես նշում են քաղաքացիներից ոմանք, տնային ուսուցումն օրենքով կարգավորված չէ, ինչի պատճառով խնդիրներ են առաջանում հատկապես ուսուցիչների համար, քանի որ վերջիններս չգիտեն, թե արդյոք այդ աշխատանքի համար պետք է լրացուցիչ վարձատրվեն կամ այն համարվում է դասաժամ:

Քննարկումների ընթացքում քաղաքացիները բարձրաձայնում են նաև ներառական կրթությունից դուրս մնացող երեխաների խնդիրը, նշելով, որ կան դպրոցահասակ ԿԱՊԿՈՒ երեխաներ, որոնք նախկինում դպրոց չեն հաճախել, և կա նման երեխաներին ներառելու անհրաժեշտություն:

Դասաժամերին ԿԱՊԿՈՒ երեխայի ներկայության խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով, ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման համար խիստ կարևոր է նրանց ներկայությունը դասաժամերին: Ըստ քաղաքացիների՝ եթե նույնիսկ ԿԱՊԿՈՒ երեխան ի վիճակի չէ բոլոր դասաժամերին նստել, այնուամենայնիվ, նպատակահարմար է ապահովել ԿԱՊԿՈՒ դպրոցականների ներկայությունը որոշակի դասաժամերի: Դասերից դուրս մասնագետները կարող են աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, բայց նրանց առանձնացումը կարող է վատ անդրադառնալ թե՛ ԿԱՊԿՈՒ, թե՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների հոգեբանության վրա, կարծում են մասնակիցները:

Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, թե հատկապես ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաների՝ դասաժամերին ներկայությունն, առանձնապես որևէ օգուտ չի տալիս նրանց, փոխարենը հաճախ ԿԱՊԿՈՒ երեխաները խանգարում են դասապրոցեսը, ինչի արդյունքում տուժում է ամբողջ դասարանի կրթության որակը: Որոշ մասնակիցներ առաջարկում են, կա՛մ ԿԱՊԿՈՒ երեխաներին դպրոցում տրամադրել առանձին դասասենյակ, կա՛մ էլ նրանց համար ստեղծել աջակցման կենտրոններ, որտեղ այդ երեխաներն ավելի արդյունավետ կծախսեն իրենց ժամանակը:

Կրթական մակարդակների միջև անցման և ուսումնական պլանների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

«Ներառական կրթության իդեալական ու ճիշտ տարբերակը անհատական մեթոդների կիրառումն է: Յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուրին», նշում են որոշ քաղաքացիներ: Վերջիններիս կարծիքով, ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի անհատական պլան պետք է մշակեն հատուկ մասնագետների և երեխայի ծնողների հետ համատեղ: Ինչպես նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք, յուրաքանչուր երեխա ունի իր առանձնահատկությունը և ուսուցչի աշխատանքն այդ առանձնահատկությունը բացահայտելն է և դրա զարգացման ուղղությամբ աշխատելը:

Որոշ մասնակիցներ էլ նշում են, որ ուսուցիչներն աշխատել, մշակել են ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհատական ուսումնական պլաններ, բայց դրանց իրականացման ռեսուրսներ չկան:

Նախադպրոցական կրթության ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

Քննարկումների մասնակիցների մի խումբ էլ կարծում է, թե կրթությունը սկսվում է նախակրթարանից, և արդյունավետ համընդհանուր ներառականություն ապահովելու համար նախ պետք է այն ներդնել նախակրթարանում: Եթե երեխաների կրթությունը սկսվի մանկապարտեզից, դպրոցական տարիքում նրանք արդեն հաղթահարած կլինեն մի շարք կոմպլեքսներ: Այսօր մանկապարտեզներում հատուկ ենթակառուցվածքների, հատուկ մասնագետների, նրանց վերապատրաստման անհրաժեշտություն կա, կարծում են քաղաքացիները:

Կրթական ռեսուրսների, դասագրքերի և մեթոդների խնդիրները համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցների մեծամասնությունը նշում է, թե ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համապատասխան նյութերի և հատուկ դասագրքերի կարիք կա: Ըստ քաղաքացիների՝ ուսուցիչները, հատուկ մանկավարժները և ծնողները հիմնականում իրենց միջոցներով են ձեռք բերում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության համար անհրաժեշտ նյութերը: Մասնակիցների կարծիքով դպրոցներին պետք է տրամադրել սահմանված չափորոշիչներին համապատասխան ուղեցույցեր, դիդակտիկ նյութեր, քանի որ շուկայում եղածները կա՛մ թանկ արժեն, կա՛մ էլ անորակ են:

Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ էլ նշում է, որ. «եթե նստես, ասես՝ թուղթ, խաղ չկա՝ չեմ աշխատելու, լավ չի լինի»: Վերջիններիս կարծիքով, եթե անգամ չկան անհրաժեշտ նյութեր, ուսուցիչներն իրենք պետք է մշակեն երեխայի կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան նյութեր:

Համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի գենդերային առանձնահատկությունները

Քննարկումների ընթացքում հնչեց կարծիք, թե շատ ծնողներ խուսափում են գնահատելու աղջիկ երեխաների կարիքները, որովհետև մտածում են, թե երեխան հետագայում ամուսնանալու խնդիր կունենա, միաժամանակ, տղա երեխաների ծնողներն էլ երբեմն շահագրգռված են երեխայի ԿԱՊԿՈՒ գնահատմամբ՝ հետագայում բանակից խուսափելու համար: Այնուամենայնիվ, քննարկումների մասնակիցներն ընդգծում են, թե ներառական կրթության կարիք ունեցող երեխաների մեջ տղաներն ավելի շատ են:

Մշակույթի, ընկալումների և խտրական կարծրատիպերի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

Քաղաքացիների մի խմբի կարծիքով էլ, հասարակությունը դեռ չի հարմարվել ներառական կրթությանը, իսկ համընդհանուր ներառական կրթության անցնելու համար դեռ վաղ է: Քննարկումների մասնակիցներից ոմանք կարծում են, թե մեր հասարակությունը դեռ պատրաստ չէ համընդհանուր ներառական կրթության ներդրմանը, որովհետև մարդիկ դեռևս պիտակավորում են հաշմանդամություն ունեցողներին: Ըստ որոշ քաղաքացիների՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին չեն ընդունում, չեն հանդուրժում, ճնշում են: Մասնակիցների մեկ այլ խումբ էլ կարծում է, թե հայաստանցիները ԿԱՊԿՈՒ երեխաներին ընդունող բացառիկ հասարակություն են:

«Ո՛չ մի օրենսդրություն և ֆինանսավորում չի կարող օգնել, քանի դեռ մեր մտածելակերպը չի փոխվել», կարծում են քննարկումների մասնակիցներից ոմանք: Ըստ քաղաքացիների՝ կարծրատիպերի փոփոխության շնորհիվ միայն հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքի, իսկ դրա համար ժամանակ է անհարժեշտ, ինչպես օրինակ՝ տեսողության խնդիրների նկատմամբ վերաբերմունքի հարցում: ԿԱՊԿՈՒ երեխաների հետ ամենօրյա շփումների արդյունքում մարդիկ կսկսեն ընդունել միմյանց այնպիսին, ինչպիսին կան, նշում են քննարկումների մասնակիցները: Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ էլ գտնում է, որ մի քանի տարի առաջ տարանջատում չկար ԿԱՊԿՈՒ ու սովորական երեխաների միջև,

սակայն համընդհանուր ներառականություն ապահովելու համար երեխաներին ստիպված տարանջատում են:

Քննարկումների մասնակիցներից ոմանց կարծիքով, ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է հիմնականում ծնողների վերաբերմունքի պատճառով: Ինչպես նշում են մասնակիցները, որոշ ծնողներ չեն ընդունում կամ խուսափում են բարձրաձայնել երեխայի խնդիրները, հաշմանդամություն ունեցող երեխային մեկուսացնում են հասարակությունից որպեսզի մարդիկ, հարևանները չտեսնեն «հիվանդ» երեխային: Մասնակիցների մեկ այլ խումբ էլ կարծում է, որ հաճախ ԿԱՊԿ չունեցող երեխաների ծնողներն են խոչընդոտում իրենց երեխայի դասարանում ԿԱՊԿՈՒ երեխայի հայտնվելուն. «ինչի պիտի էդ հիվանդ երեխեն իմ երեխու հետ սովորի», նշում են որոշ ծնողներ: Քաղաքացիներից ոմանց կարծիքով ուսուցիչները ևս հաճախ ճիշտ չեն վերաբերվում ԿԱՊԿՈՒ երեխաներին, օգտագործելով այնպիսի ձևակերպումներ, որոնք երեխային կաշկանդում են: Որոշ ուսուցիչների կարծիքով, հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է առանձին դասարաններում սովորեն, քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների ներկայությունը հաճախ ազդում է մյուս երեխաների վարքի վրա:

Միաժամանակ, քննարկումների մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ առանց ծնողների հետ համագործակցության շատ դժվար կլինի հասնել ԿԱՊԿՈՒ երեխայի համար ցանկալի արդյունքի, հետևաբար ծնողների համար դասընթացների կազմակերպումը շատ կարևոր նշանակություն ունի խնդրի մասին նրանց իրազեկելու և գիտակցական մակարդակը բարձրացնելու համար: Մասնակիցները կարևորում են հանրային իրազեկման միջոցառումները, առաջարկելով ներառական կրթության վերաբերյալ սոցիալական գովազդ հեռարձակել հանրային հեռուստատեսությամբ: Նման միջոցառումների արդյունքում հասարակությունը իրազեկվածությունը կբարձրանա և կփոխվի հաշմանդամություն ունեցող անձանց և ներառական կրթության նկատմամբ վերաբերմունքը հասարակության շրջանում:

Որոշ մասնակիցներ կարծում են, որ հատկապես գյուղական համայնքներում հանրակրթության մեջ ներառված ԿԱՊԿՈՒ երեխաների փոքրաթիվ լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծնողները վախենում են, թե իրենց ընտանիքը «մատով ցույց կտան» գյուղում: Որոշ քաղաքացիներ էլ նշում են, թե Երևանում ԿԱՊԿՈՒ երեխաներն ավել շատ են բախվում խնդիրների, քան մարզերում:

Դասղեկի, հոգեբանի և դասարանի դերակատարումը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով, ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման հարցում հատկապես մեծ է դասղեկի դերը: Ինչպես նշում են քաղաքացիները, դասղեկն առաջինը պետք է տեղյակ լինի երեխայի ընտանեկան պայմաններին, իսկ դպրոցում՝ դասղեկը պետք է հնարավորինս փորձի ընդգրկել բոլոր երեխաների դասապրոցեսին և դասից դուրս միջոցառումներին:

Որոշ քաղաքացիների կարծիքով, դպրոցի տնօրեններին տրված լիազորությունները ընդլայնվել են, սակայն պատշաճ հսկողություն չկա նրանց գործունեության հանդեպ: Քաղաքացիները նշում են, թե հատկապես ծնողական խորհուրդները պետք է ակտիվ վերահսկողություն իրականացնեն:

Դպրոցական համայնքի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

Մասնակիցներից ոմանք կարծում են, թե հասարակության՝ երեխայի նկատմամբ տարբերակված վերաբերմունքից խուսափելու համար ծնողները հաճախ թաքցնում են նրա կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Հաճախ խուսափում են երեխաներին դպրոց կամ մանկապարտեզ տանել, դրանով մեկուսացնելով երեխաներին հասարակությունից, նշում են քաղաքացիները: Երբեմն էլ որոշ ծնողներ, խուսափելով ներառական կրթություն բառակապակցությունից, հաճախ հրաժարվում են երեխայի ԿԱՊԿՈՒ գնահատումից: Միաժամանակ, ինչպես նշում են որոշ մասնակիցներ, ծնողի հոգատարությունն ու ուշադրությունն անհրաժեշտ են երեխայի հետ աշխատելու և որոշակի դրական արդյունքի հասնելու համար:

Քննարկումների մասնակիցների մեծամասնության կարծիքով արդյունավետ համընդհանուր ներառականություն ապահովելու համար առաջին հերթին պետք է աշխատել ծնողների հետ: Ծնողական ժողովները, առանձին դասընթացները, սոցիալական հոլովակները կարող են նպաստել ծնողների

իրազեկվածության բարձրացմանը, ինչը կհեշտացնի համընդհանուր ներառական կրթության ներդրումը, կարծում են քաղաքացիները: Այս առումով հատկապես կարևոր է սոցիալական աշխատողի դերը, ով պիտի աշխատի ոչ միայն ԿԱՊԿՈՒ երեխայի, այլև ծնողների հետ: Մասնակիցների մեկ այլ խմբի կարծիքով ծնողներին պետք է իրազեկել իրենց իրավունքների, հնարավորությունների և ԿԱՊԿՈՒ երեխաներին տրվող օգնության մասին: Միաժամանակ, ինչպես նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք, կան բազմաթիվ կազմակերպություններ, որոնց ղեկավարները հաշմանդամ երեխաների ծնողներ են: Այս մասին ևս տեղյակ պետք է պահել ծնողներին, ցույց տալով, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողը ոչ միայն չի ամաչել և թաքցրել իր երեխայի հիվանդությունն, այլ իր երեխայի հետ աշխատելով, փորձել է օգնել նաև մյուսներին:

Որոշ մասնակիցներ բարձրաձայնում են նաև դասապրոցեսին ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների մասնակցության հարցը: Քաղաքացիներից ոմանք կարևորում են ծնողների մասնակցությունը, նշելով որ նրանք պետք է մասնակցեն նաև երեխայի անհատական ուսումնական պլանի կազմմանը, որովհետև ծնողն իր երեխային ամենալավն է ճանաչում: Մասնակիցների մեկ այլ խումբ էլ նշում է, թե ծնողն ինչքան էլ սրտացավ լինի, նա մասնագետ չէ և նրա ներկայությունը կարող է երբեմն խանգարել:

Միաժամանակ, ինչպես նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք, կարևոր է նաև աշխատանք տանել ԿԱՊԿ գնահատման կարիք չունեցող երեխաների ծնողների հետ, քանի որ ծնողները մեծապես ազդում են իրենց երեխայի մտածելակերպի վրա, և նրանց ոչ ճիշտ մոտեցման, ձևակերպումների պատճառով երեխաները հաճախ սկսում են խուսափել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ շփումներից:

Քննարկումների մասնակիցների մի մասի կարծիքով հնարավորության դեպքում ԿԱԽԿՈՒ երեխաների ծնողները փորձում են երեխայի համար անել լավագույնը, անգամ՝ բնակության վայրն են փոխում, որպեսզի երեխան կարողանա հաճախել հատուկ դպրոց: Հաճախ ծնողներն իրենք են գնում ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ դպրոցական պարագաները: Միաժամանակ, ինչպես նկատում են քննարկումների մասնակիցներից ոմանք, կան ծնողներ, որոնք իրենք են առաջարկում իրենց երեխաներին ընդգրկել ներառական դասարաններում, որպեսզի իրենց երեխաներն էլ ստանան ԿԱՊԿՈՒ երեխաներին տրվող սնունդ:

Կրթական միջավայրի ազդեցությունը համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի վրա

Քաղաքացիների կարծիքով երեխաների հոգեբանության վրա մեծ ազդեցություն ունի դպրոցի կրթական միջավայրը: Երբ երեխան նկատում է տարբերակված վերաբերմունք, կամ վատ խոսք իր հասցեին, ապա այլևս չի ցանկանում նման միջավայրում սովորել, նշում են քննարկումների մասնակիցները: Մասնակիցների կարծիքով, պետք է ուսուցիչները հատկապես խուսափեն «ներառականի երեխա» արտահայտությունից, քանի որ դրանով նրանք երեխային պիտակավորում և առանձնացնում ե են մյուսներից:

Քննարկումների մասնակիցներից ոմանց կարծիքով երեխաները դեռ պատրաստ չեն իրենց շրջապատում հավուր պատշաճի ընդունել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Ինչպես նկատում են քննարկումներին մասնակցած որոշ դպրոցականներ, ԿԱՊԿՈՒ երեխաները հաճախ շեղում են մյուսների ուշադրությունը, որի արդյունքում վատանում է ամբողջ դասարանի կրթության որակը: Անգամ ոչ ներառական դասարաններում կան երեխաներ, որոնք դուրս են մնում ընդհանուր խմբից, իսկ ԿԱՊԿՈՒ երեխաների պարագայում՝ ինտեգրումը դասարանին էլ ավելի բարդ է, կարծում են մասնակից-դպրոցականները: Քննարկումների մասնակիցների մի խումբ, հատկապես կարևորում է դասընթացների կազմակերպումը աշակերտների համար, որպեսզի վերջիններս կարողանան ճիշտ վերաբերվել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Քանի որ, եթե աշակերտների շրջանում ձևավորվեն ճիշտ մոտեցումներ, նրանք էլ կօգնեն մանկավարժներին և ԿԱՊԿՈՒ երեխաներին, կարծում են որոշ մասնակիցներ:

Ինչպես նկատում է մասնակիցների մեկ այլ խումբ, դպրոցներում մթնոլորտը փոխվել է և երեխաները պատրաստ են խնդիրներ ունեցող դասընկերներին ընդունել ու օգնել, հաճախ աշակերտներն ավելի լավ են վերաբերվում ԿԱՊԿՈՒ երեխաներին, քան ծնողներն ու ուսուցիչները, օրինակ՝ քայլելու խնդիր ունեցող մի երեխայի, դասարանցիները մեծ սիրով օգնում են տեղափոխվել մի տեղից մյուսը: Եթե ԿԱՊԿՈՒ երեխան դպրոց է հաճախում առաջին դասարանից, ներառականության գործընթացն ավելի սահուն է ընթանում, կարծում են քննարկումների մասնակիցներից ոմանք:

Քննարկումների ընթացքում կարծիքներ հնչեցին, թե ԿԱՊԿՈՒ երեխաներին պետք է առանձնահատուկ մոտեցում ցուցաբերվի, երեխայի հետ պետք է իր լեզվով խոսել, որպեսզի հնարավոր լինի ապահովել ներառականություն: Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ էլ կարծում է, թե չափից շատ հոգատարությունն էլ բացասաբար կազդի ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեբանության վրա, և հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն և հոգատարություն ցուցաբերել բոլոր երեխաներին՝ անկախ նրանց խնդիրներից:

Միաժամանակ, քննարկումների մասնակիցները նկատում են, որ արդյունավետ ներառական կրթություն ապահովելու համար պետք է բեռնաթափել դասարանները: Դպրոցներում դասարանները ներկայում ծանրաբեռնված են, և ուսուցիչը բավարար ժամանակ չունի բոլորին պատշաճ ուշադրություն դարձնելու համար, մինչդեռ դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաների ներկայությունը ուսուցչից պահանջում է լրացուցիչ զգոնություն և ջանք, ինչը ուսուցիչը ֆիզիկապես չի կարող հասցնել, կարծում են քաղաքացիները:

Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք

Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ա.1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլորն էլ ՀՀ քաղաքացիներ են և իրավունք ունեն օգտվելու կրթության հնարավորությունից:

Ես լոգոպեդ եմ աշխատում և հայտարարում եմ, որ ով դեմ է ներառականությանը պետք է հայտնվի բանտում:

Ես դեմ եմ այն մտքին, թե **օրենսդրությունը** լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի փող տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից:

Այսօրվա դրությամբ, օրենքը տնային ուսուցումը չի կարգավորում: Բայց դա անհրաժեշտ է: Մենք կարող ենք գումար տրամադրել ուսուցչին, որպեսզի նա գնա ու տանը կրթի ԿԱՊԿՈՒ երեխային: Սակայն, գումարը քիչ է, աշխատանքից հետո ուսուցիչը հոգնած է լինում ու, բացի դրանից, ուսուցիչները հիմնականում հոգեբանական խնդիր են ունենում երեխային տանը կրթելու հետ կապված, չեն ուզում ուրիշի տանը աշխատանք իրականացնել:

Հանրակրթության մասին օրենքով բացառված է, որ ոչ մասնագետը դպրոցում դասավանդի այլ մասնագիտություն: Օրինակ՝ լոգոպեը հոգեբան չի կարող աշխատել:

Երեխաներին պիտակավորել չի կարելի, հիմա դպրոցներում կան նման մասնագետներ, որ պիտակավորում են: Ծնող-ուսուցիչ-տնօրինություն եռանկյունում պետք է հարցերը լուծվեն: Պետք է լինի ներքին **կանոնակարգ**, բարեխղճության վրա հույս դնել չի կարելի:

Սոցիալական մանկավարժը կատարում է տնայց, հասկանում ընտանեկան դրությունը: Ես որպես սոց. մանկավարժ արդեն երկու անգամ այցելել եմ ԿԱՊԿՈՒ երեխաներից մեկի ընտանիք, քանի որ ծնողները դեմ են նրա կրթություն ստանալու **իրավունքին**, հաջորդ անգամ տնայց կկատարեմ ոստիկանի հետ նախ ծնողների զգաստության, մյուս կողմից հարցը իրավական ճանապարհով կարգավորելու համար:

Եթե Եվրոպան ունի **պատրաստի մոդելներ**, էլ ինչի ենք չարչարվում, թող մեր ԿԳՆ-ն վերցնի ու կիրառի:

Մեզ ասում են ներքին **կանոնակարգ** մշակեք. թողնում են մեզ խնդրի լուծումը:

Օրենսդրությունը թերի է. չեմ պատկերացնում՝ մեր մանկավարժները ինչպես են ընդունելու էդ երեխաներին, երբ հատուկ դպրոցները փակվեն: Խառնաշփոթ կլինի:

ԿԱՊԿՈՒ **օրենսդրությունը** համարյա իդեալական է էսօրվա դրությամբ, բայց մեխանիզմները չեն գործում:

Մեր ազգային թերություններին մեկը այն է, որ մենք ուսումնասիրում ենք եվրոպական փորձը, դա մեզ դուր է գալիս, մենք դա թարգմանում ու ամբողջությամբ ուզում ենք կիրառել մեզ մոտ առանց հաշվի առնելու մեր **առանձնահատկությունները**:

Եվրոպայի **փորձը** վերցրել բերել են մեր մոտ, բայց կարծես թե վերջից են սկսել՝ նախ երեխաներին բերում են, հետո մյուսներին պատրաստում:

Ես նախահաշիվներ եմ հաստատում դպրոցների համար: Ոչ մի տարբերություն չկա ներառականություն ունեցող դպրոցի ու սովորական նախահաշվի միջև: Ոչ մի մանրամասն **հոդվածներ** չկան ներառականությանը վերաբերող:

Նախարարությունից գալիս են դպրոց մոնիտորինգի ամեն մանրուքի համար: Թող գան, այս լուրջ հարցերին անդրադառնան:

Պետք է հաշմանդամության կանխարգելման **մեխանիզմներ** մշակել սկսած ծննդատներից:

Պետք է հստակ տարանջատել ծույլ երեխային, ԿԱՊԿՈՒ երեխայից, բոլորը առանձնահատկություններ ունեն, յուրաքանչյուրը առանձնահատուկ մոտեցման կարիք ունի, հակառակ դեպքում միշտ էլ կարելի է դասը խանգարել:

Ձեր ասածը շատ սիրուն է հնչում, բայց խնդիրն այն է, որ կարող է մնալ միայն թղթի վրա. քանի տարի է խոսում են ներառական կրթության մասին, բայց ոչինչ չի փոխվում:

Այս համակարգը ինքն իրեն չի կարող փոխվել:

Պետք է ստեղծել **հատուկ մարմին**, որը շատ արագ կարձագանքի ԿԱՊԿՈՒ երեխաների բողոքներին:

Մենք պետք է չոտնահարենք մյուս երեխաների **իրավունքները**:

Բոլորն ունեն սովորելու, ապրելու **իրավունք**, ո՞վ կարող է սահմանափակել դա:

Ա.2. ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Եթե առանց պատրաստվելու բոլոր հատուկ դպրոցները փակվեն, քաոս կտիրի, ինչպես հիմա մեզ մոտ Արմավիրում:

Ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին, իմ կարծիքով, պետք չէ բերել սովորական դպրոց: Նրանք պետք է մնան հատուկ դպրոցներում, որովհետև իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ նրանց հետ ընդհանուր այդ մթնոլորտում աշխատել հնարավոր չէ:

Եթե ծանր մտավոր խնդիր ունեցող երեխան տանը արդեն սխալ վերաբերմունքի է արժանանում, ապա նրա համար հատուկ դպրոցը շատ ավելի լավ է:

Եթե բոլորը իրար հետ սովորեն, քաոս կտիրի:

Պետք է հատուկ դպրոցները մնան միայն շատ ծանր երեխաների համար, իսկ թեթև խնդիրներով երեխաները պետք է տեղափոխվեն սովորական դպրոցներ:

Հատուկ դպրոցները տարանջատում են երեխաներին:

Հատուկ դպրոցում սովորող երեխաներն ավելի շատ խաղում են դասերի ժամանակ, քան դաս են սովորում, հետևաբար, երբ գալիս է դասի, իր համար տհաճ է նստել այդքան երկար:

Դասավանդման մեթոդիկան կարևոր է, յուրաքանչյուր երեխայի առանձնահատուկ մոտեցում է պետք:

Ծնող կա, որ եթե **հատուկ** դպրոց չկա մեր մարզում, տանում է Երևան:

Օրենսդրությունը թերի է. չեմ պատկերացնում՝ մեր մանկավարժները ինչպես են ընդունելու էդ երեխաներին, երբ **հատուկ** դպրոցները փակվեն: Խառնաշփոթ կլինի:

Եթե **հատուկ** դպրոցներին տրվող ֆինանսավորումը տրվի հանրակրթական դպրոցներին շատ ավելի արդյունավետ կաշխատեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Արմավիրում կար **հատուկ դպրոց**, որտեղ ես մասնակցել եմ դասապրոցեսի: Այնտեղի մանկավարժները հերոսներ էին, որոնք շատ ճիշտ ու հատուկ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց հանդեպ: Ես դեմ չեմ ներառականությանը, բայց այդ փորձը կորցնել չի կարելի:

Հատուկ դպրոցները փակվել են ու բոլոր համայնքներում մասնագետների կարիք կա, մասնագետները չեն հասցնում սպասարկել:

Ես դեմ եմ այս ներառականությունը, երբ երեխաները կենտրոնացած են **մի տեղում,** ավելի ճիշտ է:

Հատուկ դպրոցներում աշխատում են ծանոթներով տեղավորված աշխատակիցներ, որոնք ոչ մի պատկերացում չունեն կրթության մասին:

Հենաշարժողական խնդիրներով երեխաներին ծնողները նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց տանել-բերելու խնդիր կա:

Ծանր երեխաների մոտ սոցիալիզացիայի խնդիր է, դրա համար էլ պետք է միայն իրենց համար **աջակցության կենտրոն** ստեղծել:

Գոնե ամեն համայնքում մեկ **աջակցության կենտրոն** ստեղծվի՝ թեկուզ փոքր:

Գեղարքունիքում արդյունավետ կլինի **աջակցության** հինգ կենտրոն ունենալը:

Իսկ ավելի լավ չէ, որ մի **դպրոց** սարքեն, շատ լավ դպրոց, բոլոր հնարավորություններով և այդ երեխաներին այնտեղ կրթեն:

Ներառականին զուգահեռ պետք է լինեն նաև մեկ-երկու **գիշերօթիկ**, օրինակ՝ դժվար դաստիարակվողների համար:

Չկա **զբաղվածության** կենտրոն: ԿԱՊԿՈՒ երեխան ամբողջ օրը տանը նստած է, ոչ մի բան չունի անելու: Դրա հետևանքով էլ են առաջանում խնդիրներ:

Զբաղվածության խնդիրը բոլորի համար է, և՛ երիտասարդների, և՛ մեծերի համար:

Միակ **զբաղվածությունը** մեր միջավայրում դա սուրճ խմելն է:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետագա մասնագիտական կրթությունն եմ շատ կարևորում, որպեսզի նրանք հետագայում կարողանան անկախ կյանք վարել:

Երեխային տանում ես դպրոց, սովորում է ու պետք է հատուկ վկայական ստանա, բայց այդ վկայականով քոլեջները չեն ընդունում: Այդ թղթի կտորը դառնում է խնդիր երեխայի համար, ոչ մի տեղ չի կարող գնալ:

Ծնողն առաջարկում է, որ կենտրոն լինի՝ ինչ որ մի տեղ, որ երեխան գնա. հիմնական դպրոցն արդեն ավարտել է:

Պետք է ստեղծել դպրոցներ մանկական հիվանդանոցների ներսում ու վաղ տարիքից պետք է սովորեցվի դպրոցական կյանքին:

Ներառականությունը մեկ կամ երկու դպրոցներում ոչինչ չի փոխում: Դրա համար մենք երեխաներից շատերին հասարակությանը ոչ պիտանի անդամ ենք դարձնում:

Բ. ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԲՅՈՒՋԵ

Մասնագետներին է պետք **վերապատրաստել** և աշխատավարձները բարձրացնել, որ աշխատելու մոտիվացիա ունենան մասնագետները:

Նեղ մասնագետները վճարովի վերապատրաստման չեն գնում, որովհետև դպրոցը չի ապահովում: Եթե մասնագետն էլ 70 հազար պետք է տա վերապատրաստման, էլ ինչի՞ է աշխատում:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:

Այսօրվա դրությամբ թեթև պրոգրես կա ներառականության ոլորտում, բայց բացեր շատ կան, որոնց մեծ մասը կապված է ֆինանսավորման հետ:

Ես, աշխատելով ներառական դպրոցում, անգամ չգիտեի այսքան մանրամասն, որ այս երեխաներին հատուկ գումար է հատկացվում ուտելու համար:

Գործող համակարգը շատ դանդաղ է զարգանում: Ահավոր շատ են խնդիրները, մասնավորապես՝ նյութական ապահովվածությունը:

Ուսուցչի **օգնական** և ուսուցիչ հարաբերություններում հոգեբանական խնդիրներ կան, աշխատավարձերը տարբեր են, աշխատաժամանակը ևս:

Փողը դպրոց չպետք է ուղարկել, պետք է ուղարկել օրինակ պոլիկլինիկա, որտեղ ֆիզիոթերապիայի մասնագետ կա:

Շատ հաճախ **փողը** կա, բայց անիմաստ կորչում է, որովհետև խնդիրները ճիշտ չեն գնահատվում:

Փողը չի կարող կապ չունենալ, ավելին, **փողը** ուղիղ կապ ունի: Եթե նորմալ ֆինանսավորում լինի, մասնագետը կարող է կենտրոնանալ կոնկրետ իր մասնագիտության վրա և ավելի արդյունավետ լինի:

Պետք է երեխայի հետ պարապեն քառասունհինգ րոպե, քսան-քսանհինգ րոպե աշխատում են ու ուղարկում տուն: **Փողն** էդտեղ ի՞նչ կապ ունի:

Ես դեմ եմ այն մտքին, թե օրենսդրությունը լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի **փող** տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից:

Վատ տարիներին ութ-ինը ամիս **փող** չենք ստացել, այնպես որ գումարը հիմնական խնդիրը չէ:

Երբեմն տնօրեններն օգնում են նյութերի ձեռքբերման ժամանակ՝ լրացուցիչ տրամադրվող **գումարների** հաշվին:

Մինչև հեղափոխությունը ոչ մի **գումար** չի ծախսվել և ոչ մեկ տեղեկացված չի եղել:

Դպրոցում ոչ մեկ չի խոսում, որ կա լրացուցիչ ինչ-որ **գումարներ** ներառականի մասով: Ոչ մեկ տեղեկացված չի:

ԿԱՊԿՈՒ երեխաների ֆինանսավորման հետ ուսուցիչները ավելի շատ պատասխանատու են ծնողներին, քան պետությանը, որ այդ **գումարը** տալիս է:

Թեթև գնահատված ներառական երեխաների համար դպրոցը լրացուցիչ **գումար** չի ստանում:

Մենք գնահատել ենք շատ երեխաներ, որոնք ֆիզիոթերապիայի կարիք ունեն: Ոչ մի դպրոց մեզ մոտ չի կարող իրեն սա թույլ տալ: **Գումարը** դպրոց է գնում, բայց մասնագետ չկա, հսկող չկա:

Պետք է վերահսկողական հատուկ ինստիտուտ. դպրոցը գումարը ստանում է, բայց երեխան շաբաթվա մեջ կարող է ընդամենը մեկ ժամ գալ դպրոց:

Յուրաքանչյուր ներառական դպրոցին երեք մասնագետ է հատկացվում՝ հոգեբան, հատուկ մանկավարժ և սոցմանկավարժ, դրան գումարած սնունդ, հատուկ ձեռնարկներ, նյութեր և այլն, գումարը այսքանին ինչպե՞ս կբավարարի:

Մարդիկ իրենք չեն ուզում, որ ստեղծված ծանր իրավիճակից դուրս գան (հաշմանդումություն ունեցողների մասին է խոսքը): Պետությունից գումար են ստանում, իրենց ձեռնտու է:

Եթե մասնագետը ցանկություն ունենա օգնելու, աշխատելու, նա **գումարին** չի նայի: Թեկուզ քառորդ դրույքը բավարար է:

Մենք ասում ենք, որ մասնագետի համար **գումարը** քիչ է: Ախր չի էլ առաջարկվել մասնագետին այդ քիչ գումարը, որ նա էլ մերժի: Առաջարկեք՝ թող մերժեն, ինչի վրա կասկածում եմ:

Մենք **գումար** ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին սնունդ տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչու է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել:

Դպրոցներում պետք է լինի ներառական կրթության համար ծախսվող գումարների թափանցիկություն: Նույնիսկ երեխաների ծնողները տեղյակ չեն այդ շարժի մասին:

Այսօրվա տրված **գումարով** երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿՈՒ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար:

Տրանսպորտի **գումարն** էլ բավարար չի:

Ֆինանսական հաշվետուվությունները դպրոցներում նորմալ թափանցիկ են, բայց տնտեսված **գումարը** չենք կարողանում այլ բաների վրա ծախսել:

Ծնողները խուսափում են լոգոպեդի անհատական պարապմունքի տանել երեխային, **վճարելու** խնդիր կա, հաճախ տնօրենները չեն պահանջում, որ դպրոցում լինի լոգոպեդ:

Ծնողը պետք է ստանա գումար՝ տրանսպորտային ծախսերի համար: Ներկայումս ամեն տեսակ բյուրոկրատիա և պատճառաբանություններ են ստեղծվել, որ գումարը չտան:

Հիմա **գումարը** գալիս է մարզպետարան, բայց ըստ նպատակի չի հասցվում: Թե ինչ է լինում, չգիտեմ:

Մասնագետների աշխատավարձը երեխաների համար ստացվող **գումարներից** է: Դիտակտիկ պարագաներ ենք օգտագործում, որի ֆինանսավորումը հենց երեխաների համար ստացվող գումարներից է: Ուստի վերահսկողությունը խնդիր չէ, իմ կարծիքով:

Ա Կախված երեխայի բնակության վայրից, **սոցիալական** խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

Յնքանով, որքանով տեղյակ եմ ուսումնական հաստատությունների կողմից ծախսվող **գումարների** մասին, ոչ մի խնդիր չեմ տեսնում: Նրանք բավականին նպատակային են ծախսում մեր երեխաների համար ստացվող գումարները:

Այլ հարց է, որ ներառական համակարգով, ենթադրենք, տասը երեխա չի եղել, բայց դրա **գումարը** ստացվել է:

Ունենք մի բալիկ, ով գովասանագիր պետք է ստանար, բայց տեսողական խնդիր ունի և չէր կարողանում անգամ իր գովասանագիրը կարդալ: Բայց այդ բալիկը շատ **ֆինանս** է բերում դպրոց, փաստը մնում է փաստ, որ նրա խնդիրը այդպես էլ չի լուծվել:

Երեխաների հաշվով **ֆինանս** է հատկացվում դպրոցին, բայց էս երեխան անգամ լսողական սարք չունի, պետք է շատ հարցեր վերանայվեն:

Ֆինանասավորումը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մանկավարժների համար պետք է ավելանա:

Մեր համայնքապետարանը պատճառաբանեց, որ **ֆինանս** չունի, որպեսզի նախակրթարանում հատուկ մասնագետի հաստիք բացի:

Եթե հատուկ դպրոցներին տրվող **ֆինանսավորումը** տրվի հանրակրթական դպրոցներին շատ ավելի արդյունավետ կաշխատեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Մասնագետներն չեն **ֆինանսաավորվում** դպրոց միջոցներից, այլ՝ առանձին ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրվող ֆինանսավորումից:

Մեր մոտ ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձին **ֆինանսավորում** չկա:

Այսօրվա դրությամբ մանկավարժահոգեբանական կենտրոնները միայն վկայագրերով են զբաղված, գործնական աջակցություն չեն ցուցաբերում: Մեծագույն խնդիրը ցածր աշխատավարձն ու ոչ բավարար **ֆինանսավորումն** է:

Ֆինանսների մասին ի՞նչ խոսենք, բոլորդ էլ գիտեք մեր եկամուտների մակարդակը:

Ցանկացած օրենդրություն և ցանկացած **ֆինասավորում** չի կարող օգնել, քանի մեր մտածելակերպը չի փոխվի:

Եթե **ֆինանս** չունենք, ուրեմն մեր ոտքերը վերմակի չափով պետք է մեկնենք:

Վայոց Ձորում օրինակ դպրոցի տնօրենը գումարը ստանում էր, բայց հստակ չգիտեր քանի՞ ԿԱՊԿՈՒ երեխա է հաճախում իր դպրոց, կենտրոնանում էր **ֆինանսավորման** վրա... պատասխանատվությունը պետք է խստացվի:

Ֆինանսավորողն էլ պետք է վերահսկի դրամական միջոցների շարժը դպրոցում կամ այլ հաստատությունում:

Ցանկացած դպրոց երկու-երեք տարին մեկ անցնում է աուդիտ: Դպրոցում բոլոր կառույցները, այդ թվում խորհուրդը և ծնողները, այնքան ակտիվ են, որ ամբողջությամբ վերահսկում են **ֆինանսական** շարժը: Չգիտեմ նախկինում ոնց է, բայց հիմա այդ մասով ամեն ինչ կարգին է:

Սոցիալական ծանր պայմաններում ապրող գյուղերի բնակիչները տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել նախակրթարաններ:

Կախված երեխայի բնակության վայրից, **սոցիալական** խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

Կան ծնողներ, որոնք սրտացավորեն են վերաբերվում իրենց երեխայի խնդրին ու պատրաստ են աջակցել դպրոցին, ուսուցչին: Կան նաև ծնողներ, որոնց համար միևնույն է: Անտարբերությունը հիմնականում

գալիս է **սոցիալական** վիճակից՝ ծնողը ուղղակի ժամանակ չունի դրան տրամադրելու, քանի որ օրվա հաց պետք է վաստակի:

Մեր հանրակրթական դպրոցում կա մտավոր թերզարգացած երեխա, որը արդեն հասել է վեցերորդ դասարան, բայց համարյա ոչինչ չի հասկանում, երբ ինչ-որ բան ես բացատրում: Նրա ընտանիքը **սոցիալապես** անապահով է, դրա համար ծնողները չեն կարող տանել հատուկ դպրոց, իսկ մենք չենք կարողանում ապահովել ներառականությունը:

Մանկավարժի աշխատավարձը շատ քիչ է, դա **սոցիալական** խնդիր չի լուծում: Բայց մենք՝ մանկավարժներս, նաև բարոյական խնդիր ենք լուծում:

Սխալ է, երբ սնունդը տալիս են երեխայի ձեռքին ու ուղարկում են դասարան. դասարանում կան **սոց.անապահով** երեխաներ:

Ծնողները կարող են **սոցիալապես** անապահով լինել և չկարողանալ երեխային համայնքներից բերել:

Հատուկ դպրոց տանում են նաև **սոցիալական** պատճառով. երեխայի սնվելու հարցը լուծվում է:

Դեպքեր կան, երբ երեխան ուղղակի մաթեմատիկայից է թույլ, կամ **սոցիալական** վատ պայմաններում է ապրում, բայց ներառվել է ԿԱՊԿՈՒ-ի մեջ:

Դպրոցներից շատերը **սոցիալապես** խնդիրներ ունեցող երեխաներին ներառում են որպես ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Մենք պետք է ստեղծենք մի խումբ, որը կարողանա խնդիրներ ունեցող ու **սոցիալական** ծանր պայմաններում ապրող ընտանիքների մասին տեղեկատվություն տրամադրեն:

Այսօրվա դրությամբ, որպեսզի իմ երեխան մասնագիտական աջակցություն ստանա, ես նրան Երևան եմ տանում: Բայց մենք **սոցիալապես** անապահով բազմանդամ ընտանիք ենք:

Սոցիալական խնդիր ունեցող մարդը՝ մանկավարժը, ինչպես կարող է ուրիշի սոցիալական խնդիրները լուծի:

Ոչ մի ուսուցիչ, ոչ մի ծնող հատկապես գյուղական համայնքներում չգիտեն, թե դպրոցը իրենց երեխաների համար ինչքան փող է ստանում, ոնց է ծախսում:

Այսօր ուսուչից կա, որ անգամ տանը համացանց չունի. ուսուցչից շատ բան պահանջում են, բայց շատ քիչ վարձատրում:

Ավելի ճիշտ է ապահովել տրանսպորտ, քան տրանսպորտից օգտվելու **ֆինանս**: Եթե դա լուծվի, էական չի արդեն հարուստի երեխա է, թե՞ աղքատի:

Գյուղերում դպրոցները բարձիթողի վիճակի չեն, բոլորը ամեն ինչ անում են, որ դպրոցները բոլոր պայմաններ ունենան, բայց ցանկությունը քիչ է. **ֆինանսական** խնդիրները մեծ են:

Այսօրվա դրությամբ դպրոցներում ունենք առցանց տիրույթ, որտեղ պարբերաբար դպրոցը ներկայացնում է **ֆինանսական** թափանցիկ հաշվետվություն, այդ թվում նաև առանձին ներառականության վերաբերյալ: Եթե մարդը ինֆորմացված է, կարող է այդ ամեն ինչը ուսումնասիրել ու տեսնել, թե որտեղ կան թերություններ:

Ֆինանսները թափանցիկ չեն: **Ֆինանսները** տնօրենը պետք է հատկացնի առաջնային խնդիր ունեցողին, բայց ո՞ր տնօրենը իր գլուխը ցավի տակ կդնի:

Եթե մասնագետն ունի անելիք անում է, անկախ նրանից որքան է վարձատրվում, **ֆինանսը** միշտ էլ քիչ է:

Եթե երեխան լոգոպեդի կարիք չունի, անիմաստ այդ **ֆինանսները** ուղղում են լոգոպեդ պահելու համար:

Ֆինանսները պետք է տնօրինի յուրաքանչյուր տնօրեն ըստ իր խղճի: Չունենք դեռ մասնագետներ, որոնք արժանի են հազար դոլար վարձատրության:

Տնօրենի համար պետք է հստակ պարզ լինի, թե որն է առաջնային խնդիրը և որն է այն ցանկը, որին համապատասխան պետք է **ֆինանսներ** տրամադրեն:

Ոչ ոք մասնագետներին չի կանչում սեղանի շուրջ, որ քննարկի՝ ո՞ր երեխային ինչ է պետք, ինչքան **ֆինանս** է պետք:

Ցանկացած հաստատության **ֆինանսական** հաշվետվությունը բաց դրված է, բայց ո՞վ է նայում:

Մի երեխա ունենք, ում հատուկ մանկավարժ պետք չէ, այլ Բրայլյան այբուբեն է պետք: Բայց **ֆինանսները** դրան չեն ուղղվում:

Եթե ծնողը ամեն օր երեխայի հետ պետք է գա դպրոց, ուրեմն նա պետք է չաշխատի: Արդյո՞ք նրան կֆինանսավորեն, որ չաշխատի:

Մարդուն պետք է տալ այնքան **աշխատավարձ**, որ նա կարողանա ընտանիքի մինիմալ պահանջները հոգալ:

Պետք է արձանագրենք, որ ԿԱՊԿՈՒ երեխաներ ներկայության արդյունքում դպրոցում կրթության մակարդակը իջնում է: Ուսուցչի համար ծանրբեռնվածությունը մեծանում է, **աշխատավարձը** ոչ:

Մի ուրիշ դժգոհության հարց էլ **աշխատավարձն** է: Եթե մասնագետը մի երեխայի հետ է աշխատում, մենք 30-ի հետ:

Մարզպետարանից ասում են՝ դուք են բարձրացրած **աշխատավարձովն** ե՞ք: Մի բան էլ կարծես լավություն են արել:

Ունենք ուսուցիչ, որը գերազանց է աշխատում, ու իր համար **աշխատավարձը** կապ չունի:

Ուսուցիչներ կան, որ ասում են. «ինչքան **աշխատավարձ** են տալիս, որ մի հատ էլ ներվերս քայաքայեմ, նման երեխեքի հետ աշխատեմ»:

Եթե դպրոցի ուսուցչի **աշխատավարձը** բարձրացնեն նա ավելի մեծ հաճույքով կանի իր աշխատանքը:

Նախ պետք է ուսուցչին շատ լավ **վարձատրել**, հետո նոր լրացուցիչ պարտականություններ դնել նրանց ուսերին:

Ներկայումս **ճանապարհածախս** և **սնունդ** չի տրամադրվում:

Հիմա խորհուրդն է տնօրինում դպրոցի **բյուջեն**, նախկինում այլ էր: Ներկայումս վերահսկողությունը բարձր մակարդակի վրա է: Հաշվետվությունը հրապարակվում է դպրոցի կայքում և հասանելի է բոլորի համար:

Երևանում աշխատելով այլ մասնագիտությամբ օրական **վաստակում** էի 10000-12000 դրամ, այսօր՝ դպրոցում մանկավարժ եմ աշխատում օրական 2000 դրամով:

Վայոց Ձորում շատերը երեխային ներառական են գրանցում, որ **սնունդ** ստանան:

Ցանկալի է, որ պետությունը իր վրա վերցնի երեխաների **տեղափոխման** հարցը:

Յուրաքանչյուր տարի նախահաշիվ ենք ներկայացնում, տարվա ընթացքում էլ **հաշվետվություն** ենք տալիս: Այդ մեխանիզմում առանձնապես խնդիրներ չենք տեսնում:

Հնարավոր է, որ փոքր **մախինացիաներ** լինեն, բայց էական խնդիրներ տվյալ համակարգում չեմ պատկերացնում:

Ես ամեն առավոտ իմ երեխային տանում եմ դպրոց տաքսիով, պատկերացնում եք ինչ դժվար է ինձ:

Օրինակ, տնտեսված գումարի հաշվին նոր գույք ձեռք բերեցին:

Պետք է ուշադիր լինել **կոռուպցիոն** ռիսկերից խուսափելու համար, հնարավոր է քանակ ապահովելու համար սխալ ընտրություն լինի:

Կոռուպցիոն ռիսկեր կան բոլոր տեղերում՝ հատկապես հեռու մարզերում:

Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գ.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ

Պետք չի առանձնացնել սովորական երեխաներ և հատուկ կարիքներով երեխաներ, պետք է ընտրել հատուկ լավ մանկավարժներ, որոնք ամեն ինչ կանեն, որ տարբերությունը կտրուկ չլինի:

Մեր դպրոցներում կան մասնագետներ, բայց չեն աշխատում:

Ուսուցիչը մեծ ազդեցություն ունի երեխաների վրա, պետք է ուսուցիչը պատրաստ լինի:

Ունենք տարբեր խնդիրներով երեխաներ, կարելի է ասել, որ նրանցից շատերը կրթություն չեն ստանում: **Ուսուցիչն** ի վիճակի չի լինում յուրաքանչյուրի հետ անհատական աշխատել, հիմնականում կենտրոնանում են առավել ծանր դեպքերի վրա:

Սոցիալական խնդիր ունեցող մարդը՝ **մանկավարժը**, ինչպես կարող է ուրիշի սոցիալական խնդիրները լուծի:

Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, ու ինձ ասել են, որ միայն մի դպրոց կա, որտեղ իմ երեխային կարող են ընդունել: Ես չէի կարող իմ երեխային այդ դպրոց տանել, քանի որ սայլակի ու տրանսպորտի խնդիր կա: Բայց հիմա պարզվում է, որ մոտակա դպրոցն էլ կարող է ընդունել իմ երեխային: Բայց այնտեղ էլ **մասնագետի** խնդիր կա:

Ավելի ճիշտ է ապահովել **տրանսպորտ**, քան տրանսպորտից օգտվելու ֆինանս: Եթե դա լուծվի, էական չի արդեն հարուստի երեխա է, թե՞ աղքատի:

Եթե մասնագետն ունի անելիք անում է, անկախ նրանից որքան է վարձատրվում, **ֆինանսը** միշտ էլ քիչ է:

Լավ **մանկավարժը** պետք է լավ **հոգեբան** լինի: Միայն մասնագիտական կարողությունները բավարար չեն, որ երեխան հարմարվի ու սիրի ուսուցչին:

Եթե **մանկավարժը** աշխատելու է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, պետք է նա շատ լավ հոգեբան, սոց աշխատող էլ լինի: Կարող է նա իր ոլորտի լավ մասնագետ է, բայց ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ կարողություններ են պետք:

Պետք է արձանագրենք, որ ԿԱՊԿՈՒ երեխաներ ներկայության արդյունքում դպրոցում կրթության մակարդակը իջնում է: **Ուսուցչի** համար ծանրբեռնվածությունը մեծանում է, աշխատավարձը ոչ:

Մի ուրիշ դժգոհության հարց էլ աշխատավարձն է: Եթե մասնագետը մի երեխայի հետ է աշխատում, մենք 30-ի հետ:

Ունենք ուսուցիչ, որը գերազանց է աշխատում, ու իր համար աշխատավարձը կապ չունի:

Ուսուցիչներ կան, որ ասում են. «ինչքան աշխատավարձ են տալիս, որ մի հատ էլ ներվերս քայքայեմ, նման երեխեքի հետ աշխատեմ»:

Եթե դպրոցի **ուսուցչի** աշխատավարձը բարձրացնեն նա ավելի մեծ հաճույքով կանի իր աշխատանքը:

Այսօրվա դրությամբ ԿԱՊԿՈՒ թեմայով սեմինարներին մասնագետներին են հրավիրում, որոնց իրականում դա պետք չէ: Այդ սեմինարներին պետք է հրավիրել **ուսուցիչներին** ու ծնողներին, այլ ոչ թե մասնագետներին:

Ուսուցիչները մասնագիտական որակների խնդիր ունեն, երբ ներառական կրթությունը ներդրվեց, ուսուցիչների խնդիրներն էլ են ավելի տեսանելի դարձան:

Շատերը ներառական ասելով հասկանում են տարօրինակ մարդ, անգամ գիժ: Եթե ծնողն ու **ուսուցիչը** չխանգարի, երեխաները իրենք կհամակերպվեն:

Առաջին հերթին պետք է աշխատել ծնողի ու **ուսուցչի** հետ:

Մենք առաջին հերթին պետք է **ուսուցիչներին** պատրաստենք ներառականությանը, հետո նոր անցնենք երեխաներին: Այսօրվա դրությամբ մեր գյուղում հապճեպ ներառականությունը բերեց այն բանի, որ գյուղացիները սկսեցին ասել. «գյուղի կեսը իզուր դեբիլ հանեցին, ուրիշ ոչինչ չփոխվեց»:

Ուսուցիչների մոտ պետք է հոգեբանորեն վերափոխել այն կարծրատիպը, որ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ դժվար է:

Եթե տարբեր համայնքներում հաճախակի սեմինարներ անցկացվեն ծնողների ու **ուսուցիչների** համար, դա կբերի մեծ արդյունքի:

Ուսուցիչները երեխաների հետ աշխատելիս նախ ծնողի հետ ենք խոսում, ծնողները պետք է տեղյակ լինեն իրենց երեխայի վիճակի մասին:

Ուսուցիչները ներառականով երեխային գցում են դասարանի մի անկյուն, դրանով բնականաբար ոչ մի արդյունք էլ չի լինի:

Երեխաներին պիտակավորել չի կարելի, հիմա դպրոցներում կան նման մասնագետներ, որ պիտակավորում են: Ծնող-**ուսուցիչ**-տնօրինություն եռանկունում պետք է հարցերը լուծվեն: Պետք է լինի ներքին կանոնակարգ, բարեխղճության վրա հույս դնել չի կարելի:

Եթե **ուսուցիչը** կամ դաստիարակը աշխատի ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, ապա շատ արագ փոփոխությունը կզգացվի:

Անկախ նրանից դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, թե՝ ոչ, բոլորը **ուսուցիչները** պետք է իմանան՝ ինչ անել:

Հաճախ **ուսուցիչները** խուսափում են աշխատելուց. ասում է մի չորս կդնեմ, կասեմ խնդիր չունի: Մեկ էլ ԱՈՒՊ չլրացնեմ:

Իմ կարծիքով, բոլոր **մանկավարժները** պետք է նաև հոգեբան լինեն: Ուսուցիչը պետք է պարբերաբար այցելի իր աշակերտների ընտանիքներ, որպեսզի հասկանա ինչ վերաբերմունք ցուաբերի տվյալ աշակերտի նկատմամբ:

Բոլոր աշակերտներին պետք է անհատական մոտեցում **ուսուցչի** կողմից, անկախ նրանից նա ներառված է թե ոչ: Սա է լուծումը:

Ուսուցիչը չի կարող ամբողջ օրը աշխատել երեխայի հետ, դրա համար էլ ծնողը պետք է աշխատի: Ուսուցիչը հո կաշվից դուրս չի՞ գալու:

ԱՈՒՊ-ը կրկնակի աշխատանք է **ուսուցիչների** համար, ինչպես նաև dasaran.am-ը:

Երեխաների ընտանեկան պայմաններին, յուրահատկություններին պետք է դասղեկը տեղյակ լինի: Իսկ դասավանդող **ուսուցիչը** պարտադիր չէ պարբերաբար այցելի իր բոլոր աշակերտների տներ, նա կարող է դասղեկից հարցնել:

Ուսուցիչների մոտ պետք է փոխել երևույթի հանդեպ մոտեցումները:

Շատ կարևոր է, որ հանընդհանուր ներառականության դեպքում **ուսուցչին** աստիճան տալիս, ատեստավորելիս անպայման իրականում հաշվի առնվի նրա հմտությունները ԿԱՊԿՈՒ երեխայի հետ առնչվելու:

Ուսուցիչ ունենք, աչքի ընկնելու համար միջոցառում է անում միայն ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությամբ: Այս տարի հազիվ համոզեցինք, որ չանի:

Սկզբնական փուլում աշխատում ենք երեխայի հետ, արդեն կարողանում է նստել դասին: Բայց **ուսուցիչը** չի կարողանում կենտրոնանալ առանձին-առանձին յուրաքանչյուրի վրա: Եթե ներառում են, անհրաժեշտ է մասնագետ, որը չունենք:

Աուտիզմով հիվանդ երեխային բերում ենք առաջին դասարան, **ուսուցիչը** սթրեսի մեջ է ընկնում:

Մենակ կոնկրետ մասնագետի աշխատանքը չի, յուրաքանչյուր **ուսուցիչ** պետք է հասկանա, որ ինքն էլ գործ ունի:

Զարմանալի է, երբ երկարամյա **ուսուցիչները** ասում են՝ մենք չգիտեն, թե ինչպես աշխատել այդ երեխաների հետ:

Ունենք մասնագետների խնդիր. մենք բարձր որակավորում ունեցող հատուկ **ուսուցիչներ** չունենք, այսօր ուսուցիչը զբաղվում է միայն այդ երեխաների նիստ ու կացով... վերջ:

Ուսուցիչը պետք է զբաղվի իր առարկայով, ոչ թե այդ երեխաների դաստիարակությամբ:

Ներառականությունը պետք է սկսել **ուսուցիչների** հետ աշխատանքից, իրազեկեն, տեղյակ պահեն խնդրի առանձնահատկությունների մասին:

Դպրոցի **ոուսուցիչը** ցանկանում էր դասերից հետո առանձին աշխատել իմ երեխայի հետ, որպեսզի նա կարողանա հասնել մյուս աշակերտներին, բայց ԿԳՆ-ից թույլ չտվեցին:

Ցանկացած **ուսուցիչ** կարող է դասընթացը այնպես կազմակերպել, որի շնորհիվ խնդիրներ ունեցող երեխան կկարողանա ընդգրկվել դասապրոցեսին:

Երեխայի որակի վրա առաջինը ազդում են անտեղյակ **մանկավարժները**: Դեպք ունենք, երբ ուսուցիչը ուղղակի չի տիրապետում երեխայի հիվանդության պատմությանը, առանձնահատկություններին և ավտոմատ մեկուսացնում է երեխային հենց դասարանում:

Խնդիրներ չունեցող երեխայի հետ աշխատելու փոխարեն **ուսուցիչը** ստիպված է լինում աշխատել խնդիրներ ունեցող երեխայի հետ: Պետք է մի դասարանում մեկից ավել խնդիրներ ունեցող երեխա չլինի:

Պետք է դասարաններում լինեն աշակերտների թվականակի պակասեցում, որպեսզի **ուսուցիչը** ԿԱՊԿՈՒ երեխաներով էլ զբաղվելու ժամանակ ունենա:

Եթե ծնողը չի համաձայնում երեխային տանի ներառական դպրոց, ինչ պետք է անի **ուսուցիչը**... դիմանա:

Նախ պետք է **ուսուցչին** շատ լավ վարձատրել, հետո նոր լրացուցիչ պարտականություններ դնել նրանց ուսերին:

Ես ինքս հատուկ երեխայի ծնող եմ, անհատապես բացատրում եմ իմ երեխային դասերը մի քանի անգամ, ինչպես կկարողանա մեկ **ուսուցիչ** քառասուն հոգու բացատրի, հատկապես եթե դասարանում էլ կան նման խնդիրներով բալիկներ:

Ուսուցիչները սովոր են կաղապարված կրթության: Գնում են, իրենց դասը անում, վերջացնում:

Ուսուցչանոցում ասում են՝ երանի ուրիշ ներառական դպրոց լիներ, երեխաներին տանեին:

Մասնագետներ-**ուսուցիչ**-ծնող ճիշտ համագործակցության շնորհիվ կարող ենք արդյունք ունենալ:

Ներառական երեխաների համար ճիշտ է առանձին դասագրքեր հրատարակելը, այլ ոչ թե **ուսուցչի** վրա ամբողջ բեռը թողնելը:

Դասարանում 35 աշակերտ կա, **ուսուցիչը** ո՞նց պիտի աշխատի բոլորի հետ առանձին-առանձին:

Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին:

ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող և դպրոցում **ուսուցիչ** աշխատող ծնողի համար շատ դժվար է տեսել իր կոլեգաների և դպրոցի մնացած աշխատողների վերաբերմունքը իր երեխայի նկատմամբ:

Իրազեկ պետք է լինեն բոլոր **ուսուցիչները**:

Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին:

Կարևոր է, որ դպրոցի **ուսուցիչները** մասնագիտորեն տեղեկացված լինեն ներառականության մասին, որպեսզի նրանք աշխատեն ոչ միայն երեխաների հետ, այլև ծնողների:

Ուսուցչի և ծնողների ճիշտ աշխատանքի դեպքում խնդիրներ չպիտի լինեն:

Ես, որպես **ուսուցիչ**, կարծում եմ, որ խորը հիվանդություն ունեցող երեխաները ավելի լավ է չգան, միևնույն է իր կյանքում ոչինչ չի փոխվում, ժամանցի համար է գալիս, բայց խանգարում է մյուսներին:

Սովորական դպրոցում **ուսուցիչները** այն ԿԱՊԿՈՒ երեխաներին, որոնք մեծ ակտիվություն են ցուցաբերում դասերին և խանգարում են դասապրոցեսը, հանում են դուրս, որպեսզի դասը չտուժի:

Ծնողներն ու երեխաները, անգամ **մանկավարժները** այնպիսի ձևակերպումներ են հնչեցնում, որ արդեն հասկանալի է՝ չի կարող լավ աշխատել:

Արմավիրում կար **հատուկ դպրոց**, որտեղ ես մասնակցել եմ դասապրոցեսի: Այնտեղի **մանկավարժները** հերոսներ էին, որոնք շատ ճիշտ ու հատուկ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց հանդեպ: Ես դեմ չեմ ներառականությանը, բայց այդ փորձը կորցնել չի կարելի:

Ունենք **մանկավարժի** որակավորում ունեցողների մեծ քանակ, բայց որակը մի քանի անգամ քիչ է:

Եթե ամեն մարդ իր գործն անի, սկսած **մանկավարժից** մինչև տնօրեն, ամեն ինչ կարգին կլինի:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ **մասնագետներ** ունենք:

Մասնագետի համար ամենակարևորը երեխային սիրելն է, ինչ մասնագետ ուզում ես եղիր, եթե սերը չեղավ անհնար է:

Մասնագետը չի ընդունում այնպիսին, ինչպիսին կա երեխան:

Գավառում կա դպրոց, որը տարածաշրջանում ապահովում է ներառական կրթություն. կան **մասնագետներ**, ովքեր լիարժեք աշխատում են, բայց ֆիզիկական պայմանները բավարար չեն:

Մի քանի գյուղերից, նաև մեծ գյուղերից, ստիպված ԿԱՊԿՈՒ երեխաներին բերում են Մարտունի, իրենց մոտ **մասնագետ** չկա:

Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը նորոգելուց հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև **մասնագետների** կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը ընդհանուր դասարանում, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն դասարանում:

Ցավոք սրտի այսօր մենք ունենք տգետ **մասնագետներ**, որոնք առանձնացնում են դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Համընդհանուր ներառական կրթության մասին մարդիկ տեղյակ չեն, նույնիսկ **մասնագետներս** տեղյակ չենք, չնայած քսան թվականին արդեն ներդրվելու է համակարգը Գեղարքունիքում:

Ներառական կրթություն տրամադրող դպրոցները, այսօրվա դրությամբ, չունի համապատասխան **մասնագետներ**, օրինակ՝ տեսողական խնդիր ունեցող երեխայի հետ աշխատող: Բացի դրանից, համապատասխան դասագրքեր ու հարմարություններ չունենք:

Շատ ծնողներ էլ կան, որ չեն վստահում **մասնագետին**:

Մասնագետները պետք է հասկանան, որ միայն առարկայական հարմարեցումը «ծանր» երեխաների համար ծիծաղելի է, պետք է սոցիալիզացիայի այլ տարբերակներ գտնել:

Հատուկ դպրոցները փակվել են ու բոլոր համայնքներում մասնագետների կարիք կա, **մասնագետները** չեն հասցնում սպասարկել:

Մինչև դու որպես **մասնագետ** քո տեղն ու դերը չհասկանաս, քո արածի չափը չպատկերացնես, միևնույն է ոչինչ չի փոխվելու:

Երբ համադպրոցական ծնողական ժողովներին դպրոցի տնօրենը կամ ուսմասվարն է զեկուցում ներառականության վերաբերյալ, ծնողները մտածում են, որ **տնօրենը** ինչ-որ շահ ունի սրա հետ կապված: Իսկ երբ համապատասխան մասնագետն է գալիս զեկույցով, ապա ծնողները ավելի են վստահում:

Երբ նեղ **մասնագետը** պահանջում է իր իրավունքը, ասում են՝ արդարացնում եք ձեզ:

Անկախ ամեն ինչից՝ մանկապարտեզի բոլոր **մասնագետները** պետք է կարողանան աշխատել երեխաների մոտ ճիշտ խոսք զարգացնելու ուղղությամբ:

Հարցը երկկողմանի է, և՛ ծնողը, և՛ **մասնագետը** բավարար իրազեկվածություն պիտի ունենան:

Ամեն ինչը ժամանակի խնդիր է, սկզբից շատ դժվար է նման երեխաների հետ **աշխատելը**, հետո ամեն ինչ փոխվում է:

Մեր մոտ փայլուն **պրակտիկանտ** էր եկել, փորձեցինք իրեն պահել պրակտիկայից հետո, ոչ մի կերպ չստացվեց: Բայց պահակ ինչքան ասես ունենք:

Մեզ մոտ **դասատուն** հասել էր նրան, որ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում անընդհատ վեր կացող երեխային, մի բան էլ՝ գնում էին, բերում, նստեցնում:

Հատուկ դպրոցներում աշխատում են ծանոթներով տեղավորված **աշխատակիցներ**, որոնք ոչ մի պատկերացում չունեն կրթության մասին:

Մեզ հիմա **բազմակողմանի զարգացած** դաստիարակներ են պետք մանկապարտեզներում:

Ի սկզբանե կար խնդիր բազմամասնագիտական անձնակազմի և **մասնագիտական** անձնակազմի միջև:

Մանկավարժը պետք է ներառական մանկավարժությանը տեղյակ լինի:

Բոլոր երեխաների հետ էլ կարելի է աշխատել՝ անկախ իրենց մտավոր ունակություններից, ուղղակի պետք է **ցանկություն** ունենալ:

Առաջին հերթին մտածելակերպի փոփոխություն է պետք: **Մասնագետները** պետք է պատրաստ լինեն:

Պետք է **մանկավարժների** աշխատանքը վերահսկող ինչ-որ պետական կառույց լինի:

Երրորդ դասարանում հատուկ երեխայի հետ սկսել եմ աշխատել հանում-գումարման վրա: Ժամանակն ու համբերությունը արդեն իսկ արդյունք տալիս են, նաև կողմնակի՝ զարգացել է երեխայի մանր մոտորիկան:

Այսօր մեր հասարակությունը պետք է ամեն ինչ անի, որ դպրոցում **տղամարդ** մանկավարժներ աշխատեն:

9.2. PRE-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Վերապատրաստման փողերը պետք է ուղղել համալսարաններին, որ ավարտելուց հետո միանգամից գիտելիքներ ու փորձ ունենա ուսանողը:

Մասնագիտական օգնություն չկա. լրացուցիչ գրականություն է պետք, **վերապատրաստում** է պետք: Մեր բուհերում չի տրամադրվել մասնագիտական գիտելիքներ ներառականի մասով, դրա կարիքը շատ է զգացվում մանկավարժների համար:

Շրջանների **բուհական** կրթությունը միանշանակ չենք կարող համեմատել Երևանի բուհեր հետ:

Գավառի համալսարանը դժվար կարողանա **մասնագետ** պատրաստել:

Շատ լավ կլինի, որ **համալսարանավարտ** մասնագետներ ունենանք ներառական կրթության համար: Չեմ կարծում, որ դա հնարավոր է հենց սկզբից: Բայց փուլ-փուլ կարող է լինել:

Մենք չորսից վեց տարի սովորում ենք մասնագիտական **բուհում**, դեռ այդ ժամանակ թերանում ենք, ուր մնաց մի քանի ամսում նորմալ հասկանանք՝ ինչ անել:

Հնարավոր է, որ, օրինակ, ֆիզիկայի դասատուն երկու տարում ստանա **դիպլոմ** ու դառնա ներառականի մասնագետ: Բայց, բնականաբար, նա չի կարող համեմատվել չորս-վեց տարի տվյալ մասնագիտությունն ուսումնասիրած մարդու հետ:

Մասնագետի պրոբլեմը գալիս է **բուհից**: Մեզ տեսական ինչ ասես սովորեցնում են, բայց պրակտիկ հմտություններ ձեռք չեմ բերում: Պրակտիկան պետք է շատ լինի:

Մասնագետների նախապատրաստումը պետք է սկսել **բուհերից**:

Ես կարծում եմ, որ բուհը պետք է տեսականը տա, իսկ պրակտիկն՝ արդեն քեզանից է կախված:

Պետք է **բուհ**-երից պահանջել, որ նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հատուկ որակավորում տան:

Ներառական կրթության **մասնագետ** դառնալը կախված է կոնկրետ անհատից, ինչպես նաև այլ մասնագետների պարագայում:

Եթե որպես դպրոցի տնօրեն ընդունում եմ մասնագետ, ինչպե՞ս կարող եմ ստուգել նրա որակները, մեր **բուհ**-երի դիպլոմները ոչ միշտ են վստահելի:

Ուսուցիչները պետք է ունենան ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու **բուհ**-ական մակարդակի կրթություն:

Ես խնդիրներով երեխաների հետ աշխատելու համար հատուկ կրթություն եմ ստացել, բայց միայն **պրակտիկայով** եմ կարողացել նորմալ մասնագետ դառնալ:

Մանկավարժական **համալսարանը** պետք է որակյալ կադրեր ունենա, որ գոնե մինիմալ պրակտիկա ունենան ավարտողները:

Ունենք ճիշտ մոտեցում ունեցող մասնագետների պակաս: **Դիպլոմը** բավարար չէ, պատկերացում չունեն, թե ինչ աշխատանք պետք է անեն:

Մեծ խնդիր է համապատասխան **մասնագիտական կրթությունը**՝ ովքե՞ր կարող են, ի՞նչ մասնագիտական պատրաստվածություն պետք է ունենան, ի՞նչ աշխատանքային փորձ պետք է ունենան, սրանք խնդիրներ են, որոնք պետք է հստակ լինեն:

Շատ կարևոր է, որ **ուսանողները** հաճախեն դպրոցներ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու՝ պրակտիկ փորձ ձեռք բերելու համար:

Գ.3. IN-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ներառական կրթության ամենամեծ բացը այն է, որ համապատասխան կադրեր չունենք, վերապատրաստման հատուկ նորմալ ինստիտուտ չունենք:

Դպրոցներում **վերապատաստումներ** եղել են, բայց ազդեցությունը մեծ չի, տասնհինգ տարուց ավելի աշխատած ուսուցիչներին արդեն դժվար է փոխել:

Մեր մարզում միանգամից մտավ ծրագիրը, առանց նորմալ **վերապատրաստումների**:

Անհատական ուսուցման պլանի դասընթացի ու **վերապատրաստման** ենք մասնակցել, հետո էլ հենց կենտրոնից գալու են դպրոց:

Աջակցման կենտրոնի հետ շփվել ենք, միակ իմաստը եղել է էլեկտրոնային հաշվետվության տրամադրման եղանակներին ծանոթանալը: **Վերապատրաստում** չի եղել:

Նեղ մասնագետները վճարովի վերապատրաստման չեն գնում, որովհետև դպրոցը չի ապահովում: Եթե մասնագետն էլ 70 հազար պետք է տա վերապատրաստման, էլ ինչի՞ է աշխատում:

Եթե մենք **ավարտել** ենք տասը տարի առաջ, ինչքան էլ պրպտենք, լճանում ենք:

Մասնագիտական օգնություն չկա. լրացուցիչ գրականություն է պետք, **վերապատրաստում** է պետք: Մեր բուհերում չի տրամադրվել մասնագիտական գիտելիքներ ներառականի մասով, դրա կարիքը շատ է զգացվում մանկավարժների համար:

Դեռ ութանասունականներից կա հատուկ ներառական դպրոց, բայց անձնակազմը բացարձակ **պրոֆեսիոնալիզմ** չունի (Աբովյան քաղաքում):

Պետք է առանձնացվեն այն կազմակերպությունների և անհատների անունները, ովքեր պատրաստ են **վերապատրաստելու** նոր մասնագետներին:

Ներառական կրթության պետք է անցնել միայն այն ժամանակ, երբ դպրոցները ունենան **վերապատրաստված** ուսուցիչներ:

Ես երաժիշտ եմ, ես էլ պետք է աշխատեմ ԿԱՊԿՈՒ բալիկների հետ, բա իմ **վերապատրաստման** հարցը. պետք է ինքնակրթմամբ զբաղվե՞մ:

Ես մանկապարտեզի դաստիարակչուհի եմ, ես էլ եմ շատ ուզում **վերապատրաստվել**, տարբեր տեսակի բալիկներ ունենք, որոնց հետ աշխատում ենք սիրողական մակարդակով՝ ինչպես կարողանում ենք...:

Դպրոցների բուժքույները պարտավոր են ունենալ լուրջ կրթություն, **վերապատրաստված** լինի, ինչպես նաև տեղյակ լինի ԿԱՊԿՈՒ երեխաների խնդիրների ու հնարավոր լուծումների մասին:

Պետք է դպրոցական բուժքույրերը **վերապատրաստվեն**, որպեսզի կարողանան ԿԱՊԿՈՒ երեխաների խնդիրների մասին էլ տեղյակ լինեն:

Մասնագետներին է պետք **վերապատրաստել** և աշխատավարձները բարձրացնել, որ աշխատելու մոտիվացիա ունենան մասնագետները:

Մանկապարտեզում հատուկ սենյակի կարիք է լինելու, հատուկ մասնագետների, հատուկ **վերապատրաստման**, մենք անգամ մտավոր թերզարգացած երեխաներ ենք ունեցել, պահել ենք առանց հարմարությունների:

Դպրոցնում մասնագետի դերը շատ կարևոր է: Պետք է բոլոր դպրոցները ունենան **վերապատրաստված** ու պրոֆեսիոնալ մասնագետներ:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:

Վերապատրաստումը միայն տեսական չպետք է լինի, նաև պետք է լավ պրակտիկա:

ԿԱՊԿՈՒ մասնագետների միջուկ է պետք բոլոր մարզերում, որոնք հասանելի լինեն բոլոր դպրոցներին պրակտիկ հարցեր առաջանալու դեպքում: Ինչպես նաև մեծ քանակով վերաատրաստումների կարիք կա ուսուցիչների համար:

Ուսուցիչ. մենք մասնակցել ենք սեմինարների և անհրաժեշտության դեպքում աշխատանքներ ենք տանում շահառուների հետ:

Ես մասնակցել եմ **վերապատրաստման**, որտեղ միայն տեսական գիտելիք են տալիս: Դա բավարար չէ:

Մանկվարաժներ կան, որ տասնհինգ-քսան տարի աշխատել են հատուկ դպրոցում, բայց չունեն **վերապատարստում** և կրճատվել են. հնարավոր չի՞ իրենք դառնան ուսուցչի օգնական:

Մենք չորսից վեց տարի սովորում ենք մասնագիտական **բուհում**, դեռ այդ ժամանակ թերանում ենք, ուր մնաց մի քանի ամսում նորմալ հասկանանք՝ ինչ անել:

Ամբողջ կոլեկտիվը **վերապատրաստվել** է, բայց դա յոթ տարի առաջ էր, դրանից հետո նոր վերապարտաստում չի եղել:

Ծնողը հիասթափություն է ապրում մասնագետներից, քանի որ նա ծախս է անում ու օգուտ չի ստանում: Նախապես պետք է ուշադրություն դարձնել մասնագետների վերապատրաստմանը: Լավ մասնագետների պակաս շատ կա:

Դպրոցը սարքում են ներառական, առանց հաշվի առնելու այդ դպրոցի պայմանները, հնարավորությունները, առանց **վերապատրաստելու** ուսուցիչներին, առանց վերանորոգելու սանհանգույցները, առանց սարքելու առանձին սենյակներ և այլն:

Հանրապետական կենտրոնը **վերապատրաստում** չի կազմակերպում:

Մեր ուսուցիչները **վերապատրաստում** անցել են մի անգամ, բայց դա բավարար չէ: Շարունակական վերապատրաստման կարիք ունենք:

Պետք է ներդրում արվի ԿԱՊԿՈՒ մասնագետների հետ աշխատողներին անընդհատ **վերապատրաստելու** համար:

Պետք է ներդրում արվի ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մասնագետների անընդհատ վերապատրաստելու մեջ:

Պետք է նաև ուսուցիչները **վերապատասրտվելուց** բացի քննություն տա. պատրաստ է արդյոք նա աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Վերապատրաստումը պետք է ոչ թե լինի դասախոսական լեկցիաներ, այլ պրակտիկ դաշտում:

Ներառական կրթության լուծումը պետք է սկսել մանակվարժներին **վերապատրաստումից**:

Առաջին հերթին բոլոր ուսուցիչների հետ պետք է աշխատեն: Ես ուսուցիչ եմ ու **վերապատրաստման** կարիք ունեմ:

Վերապատրաստոմը պետք է ունենա երկու ճյուղ. նեղ մասնագետների **վերապատրաստում**, և ընդհանուր բազմամամսնագիտական խմբերի ընդհանուր վերապատրաստումներ՝ ընդհանուր կանոնների մասին:

Կրթության ազգային ինստիտուտին տրվող գումարներն պետք է ուղղել մանկավարժական անձնաազմի **վերապատրաստմանը**:

Պետք է մի մոդել լինի, որով ուսուցիչը անընդհատ **վերապատրաստումներ** կունենա: Կարճաժամկետ վերապատրաստումները անօգուտ են:

Իսկ հենց **վերապատրաստողները** ունե՞ն արդյոք հատուկ պրակտիկա այս բալիկների հետ աշխատելու, թե միայն թեորիա գիտեն ու վերջ:

Եթե երեխաները դպրոց գան, **նախապատրաստված** դպրոցի անձնակազմն արդեն ի վիճակի է կառավարել իրավիճակը:

Այսօրվա դրությամբ ԿԱՊԿՈՒ թեմայով **սեմինարներին** մասնագետներին են հրավիրում, որոնց իրականում դա պետք չէ: Այդ սեմինարներին պետք է հրավիրել ուսուցիչներին ու ծնողներին, այլ ոչ թե մասնագետներին:

Եթե տարբեր համայնքներում հաճախակի **սեմինարներ** անցկացվեն ծնողների ու ուսուցիչների համար, դա կբերի մեծ արդյունքի:

Մարդիկ այս թեմայի վերաբերյալ հիմնականում ինֆորմացված չեն, մանավանդ գյուղերում: **Սեմինարներ** է պետք անել:

Տեսական նյութ բավականաչափ ունենք, իսկ պրակտիկ հարցերի դեպքում **համակարգված մոտեցում** չկա: Ուղղակի ծանոթ մասնագետների հետ քննարկելով գալիս ենք ինչ-որ եզրակացությունների ու կիրառում ենք:

Ես ինքս եմ իմ ձեռքերով հատուկ խաղալիքներ պատրաստում, հատուկ նյութեր, շատ կուզենայինք **հատուկ ուղեցույց** ունենալ, ուզում ենք հասկանալ, թե ումից ինչ պահանջենք, երբ դրա ժամանակը գա:

Դասվարները հիմնականում **ինքնակրթությամբ** են զբաղվում և չունեն ռեսուրսներ՝ նաև մասնագիտական խորհրդատվություն, որ զարգացնեն իրենց ունակությունները:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հատուկ **ձեռնարկներ** են պետք, հատուկ նյութեր, դրանք իսպառ բացակայում են:

Դ. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

Դ.1. ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համընդհանուր ներառումը ճիշտ է, պետք է երեխայի դժվարությունները բացահայտել դեռ մանկապարտեզից, պետք է աշխատել ծնողի հետ:

Ներառելուց առաջ պետք է երեխաներ հիվանդության աստիճանը հաշվի առնեն, նոր...:

Դեպքեր կան, երբ երեխան ուղղակի մաթեմատիկայից է թույլ, կամ սոցիալական վատ պայմաններում է ապրում, բայց **ներառվել** է ԿԱՊԿՈՒ-ի մեջ:

Դպրոցներից շատերը սոցիալապես խնդիրներ ունեցող երեխաներին **ներառում** են որպես ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Ամենակարևոր բանը այս ոլորտում երեխաներին շատ ճիշտ **գնահատելն** է ճիշտ մասնագետի կողմից և՝ ոչ ինտուիտիվ, կամ էլ հենվելով ծնողի սիրողական կարծիքի վրա:

Երեխա ունենք, որ երկու տարի է չեն **վերագնահատում**: Մենք էլ ստիպված հետը շարունակում ենք աշխատել, չնայած ժամանակի մեջ չենք տեղավորվում:

Շատերն են բողոքում, որ համապատասխան **գնահատում** չկա. ծնողը ամբողջ օրը երեխայի հետ է, իսկ գնահատումը երեք օրվա ընթացքում է կատարվում:

Առաջնային **գնահատման** հարցաթերթիկների մեջ շատ հակասական բաներ կան. շատ խնդիրներով երեխաներ դուրս են մնում կիրառական կրթությունից:

Գնահատման պրոցեսները շատ հաճախ չեն համապատասխանում. երեխան գալիս է դպրոց այլ գնահատական է ստանում, աջակցման կենտրոնում՝ այլ:

Գնահատումը պետք է կատարել ընդամենը երկու մակարդակում, և ոչ՝ երեք:

Անգամ **գնահատման** կենտրոնները հասանելի չեն:

Գնահատման կենտրոններում մակերեսային են վերաբերում իրենց խնդիրներին:

Երեխան պետք է մի քանի օր մնա **գնահատման** կենտրոնում, բայց դա ծնողների համար հասնալի չի, արդյունքում թերի է լինում գնահատումը:

Երբ երեխաներին խմբով են **գնահատում**, երեխաները պետք է այնքան սպասեն, մինչև խմուբը հավաքվի:

Շատ են լինում դեպքեր, որ անգամ **գնահատման** ընթացքը սխալ են անում, և մենք գոհ չենք գնահատման ընթացքից:

Երբեմն գնահատման կենտրոնի տրված **գնահտումը** ոչ թե սխալ է, այլ մասնակի ճիշտ է, օրինակ մեր դպրոցի հենաշարժողականն և մտավոր խնդիր ունեցող երեխայի գնահատման եզրակացությունն ուղարկվել էր որպես թեթև մտավոր թերզարգացվածություն:

Մինչև երեխային **գնահատելը**, ծողի համձայնույթունը պետք է տրվի, այսինքն առաջին շփումը ծնողի հետ է:

Շատ ծնողներ կան, որ խուսափում են աղջիկ երեխաներին տանեն **գնահատելու**, որովհետև մտածում են երեխան հետագայում ամուսնանալու խնդիր կունենա, և շատ տարածված պրակտիկա է որ աղջիկների ծնոնղներն ավելի շատ են խուսափում գնահատումից:

Նախ պետք է ճիշտ **գնահատել** այս երեխաներին, սա շատ կարևոր է, և այն երեխաները, ովքեր ի վիճակի են սովորել բոլորի հետ, պետք է սովորեն հասարակ դպրոցում, նրանց չպետք է առանձնացնել, անգամ եթե պետք է սովորական երեխաներն օգնեն իրենց:

Մենք հաճախ երեխային հասցնում ենք այն կետին, որ երեխան լավ է յուրացնում համապատասխան հարցերը, հաղթահարում է դժվարությունները, բայց չկա **վերագնահատման** գործընթաց:

Մեզ մոտ մտել էին մասնագետներ, մի ժամ դասալսումից հետո ասել էին այս երեք երեխաները **ներառական** են. դա ինչպես պետք է լինի:

Մեր փորձը ցույց է տալիս, որ **վկայագրումը** հիմնականում տեղի է ունենում երեխային որպես սովորական ոչ ԿԱՊԿՈՒ հանրակրթական դպրոց ընդունելուց հետո, և ի հայտ են գալիս նրա խնդիրները: Ծնողները սկզբում չեն համակերպվում այդ մտքի հետ, բայց հետո համոզվում են, որ երեխան հատուկ վերաբերմունքի կարիք ունի ու գրանցում են նրան:

Պետք է լինեն հատուկ **չափանիշներ**, որոնցով ընտրեն այն երեխաներին, որոնք կարող են դասի նստել, մյուսներին էլ հատուկ դասընթացով աստիճանաբար կարողանան մասնակից դարձնել դասապրոցեսին:

Երեխայի **ստուգումն** անելուց հետո պետք է սերտիֆիկատ և տեսողական սարք կամ անվասայլակ տրամադրվի:

Երեխան ծնվեց, խնդիրն արդեն այդ պահից պետք է իմանալ:

Երբ ներառական կրթությունը չկար, առաջ ասում էինք ծույլիկ, հիմա արդեն ամեն մեկը **գնահատվում** է:

Մենք երեխային պետք է **ուսումնասիրենք** առանձին, հասկանանք, որից հետո ներառենք:

ՄՈՒԿ դեպքերը, կախված բարդության աստիճանից, պետք է **համարվեն** ներառական:

Եթե ՄՈՒԿ-ի արդյունքում առաջացել է միայն հենաշարժական խնդիր, նա **ներառականի** կարիք չունի:

Պետք է լուրջ տարբերակում մտցնել ԿԱՊԿՈՒ երեխաների միջև ու կախված խնդրից, նրան ներառել կամ չներառել սովորական հանրակրթական դպրոցներում: Օրինակ, **հոգեկան** խնդիր ունեցող երեխային պետք է համապատասխան հաստատություն տանել, որովհետև վտանգավոր է:

Դ.2. ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Հիմնական դպրոցներում պետք է հասկանան, որ ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ պայմաններ ու վերաբերմունք է պետք: Դեռևս ուսուցչի **օգնականի** մեծ պակաս ունենք: Թեքահարթակների խնդիր ունենք: Մեր դպրոցում, օրինակ, դեռևս թեքահարթակներ չկան:

Մենք ունենք ուսուցչի **օգնականներ**, բայց դեռ հստակ չենք պատկերացնում նրա դերը և պարտականությունները:

Օրինակ՝ Եվրոպայում ցանկացած խնդրով երեխային կցվում է մի **օգնական**, մեզ մոտ էդպես չի լինում:

Սոցաշխատողի և դպրոցի ներառական մասնագետների կողմից արվել է ամեն ինչ, որ տվյալ երեխան այցելի դպրոց: Բայց նա չի ցանկանում, այլ միջոցներ չգիտեմ:

150 երեխայի համար մեկ ուսուցիչ **օգնականը** ոչինչ չի կարողանում անել:

Խնդրում եմ հիմնավորեք, թե ինչո՞ւ է ուսուցչի **օգնականը** ստանում ավելի քիչ. նա ավելի շատ գործ է կատարում, քան մյուսները:

Ուսուցչի օգնականը միայն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար չպիտի լինի, այլ խնդիրներ էլ ունի:

Տասնհինգ ԿԱՊԿՈՒ երեխայի հաշվով մեկ ուսուցչի օգնականը բավարար չէ, մանավանդ եթե այդ երեխաները տարբեր դասարաններում են:

Ես ուսուցչի օգնական եմ ու հենաշարժային խնդրով երեխային ես եմ տեղափոխում անհրաժեշտության դեպքում՝ զուտ մարդկային վերաբերմունքից ելնելով: Դա իմ պարտականությունների մեջ չի մտնում:

Փաստ է, որ չունենք համապատասխան մասնագետներ, դպրոցներում ու այլ վայրերում ԽԾԲ-ն գործում է: Լրիվ անհասկանալի է ուսուցչի օգնականի հաստիքը, դա լինում են մարդիկ, ովքեր չեն կարողանում ուսուցիչ դառնալ ու դառնում են օգնական:

Ավելի լավ է օգնականի հաստիքի փոխարեն ուսուցչի աշխատավարձը բարձրացնել, ավելի մեծ եռանդով կաշխատի:

Եթե լինի ուսուցչի օգնական, նա արդեն կարող է առանձին աշխատել երեխայի հետ:

Իմ երեխային օգնում է, որ ուսուցիչն ունի օգնական: Նա օրվա ընթացքում կարող է երկու-երեք ժամ տրամադրել իմ երեխային, արդյունքն ակնհայտ է:

Ուսուցչի օգնականը պետք է միայն այն դեպքում, երբ կան ծանր երեխաներ, օրինակ, աուտիկ երեխաների հետ հասարակ դասվարն էլ կարող է աշխատել:

Ենթադրենք երկու-երեք դասարանում միաժամանակ մի քանի խնդիր է առաջանում: Այս դեպքում օգնականի ներկայությունը չեմ հասկանում, թե ինչի համար է:

Կան ուսուցչի **օգնականներ**, ովքեր, օրինակ, ինչ որ մի առարկայից բացարձակ գաղափար չունեն, բա ինչ պետք է անել այս դեպքերում:

Պետք է ուսումնասիրություն արվի, թե քանի ԿԱՊԿՈՒ երեխա կա կոնկրետ դպրոցում, քանի ուսուցչի **օգնական** է պետք:

Դպրոցներում թող մնան նեղ մասնագետները, իսկ ուսուցչի **օգնականի** հաստիքը կարելի է տալ համալսարանի ուսանողին, ով կամավոր կաշխատի, ստաժ էլ կունենա: Սրանով պետության փողերը կխնայենք:

Ես հիմա չեմ կարողանում ոչ ուսուցչին բացատրեմ իր անելիքները, ոչ **օգնականին**: Ուղեցույցները այնքան լղոզված են, որ չենք կարողանում հստակ ասենք իրենց անելիքները:

Ուսուցչի **օգնականի** պարտականությունները հստակ չեն: Այսօր սխալ բաշխում է արվել, ուսուցչի օգնականի պաշտոնը դպրոցի շատ աշակերտների պետք չէ:

Ուսուցչի **օգնականի** պարտականությունները հստակ չեն: Այսօր սխալ բաշխում է արվել, ուսուցչի օգնականի պաշտոնը դպրոցի շատ աշակերտների պետք չէ:

Ուսուցչի **օգնականի** վրա դնում ենք հատուկ մանկավարժի պարտականություններ. պետք է հստակ գործառույթներ նշել:

Մեր մոտ դասվարն ու ուսուցիչն ասում են, որ **օգնականի** աշխատանքի արդյունքը հստակ տեսնում են:

Դասվարն ու ուսուցիչը նախորոք համաձայնեցնում են **օգնականի** հետ գրաֆիկը և բավականին արդյունավետ աշխատում են:

Քանի որ իմ կարծիքով մեկ ուսուցչի **օգնականը** տասնհինգ ԿԱՊԿՈՒ երեխայի հաշվով բավարար չէ, ես առաջարկում եմ, որ համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետը իր ուսանողներին պրակտիկայի ուղարկի դպրոցներ: Դրանով նաև բուհի պրակտիկ կրթություն չտալու խնդիրը կլուծվի:

Ուսուցչի **օգնականը** պետք է փոխարինվի հատուկ մասնագետ, որն ունի գիտելիքներ, ոչ թե գերազանցության դիպլոմ:

Շատ կարևոր է, որ ուսուցչի օգնականը ուսման ընթացքում պրակտիկա անցնի դպրոցներում, որպեսզի նախապես հասկանա, թե ուսուցչի օգնականի համար այդ գեղեցիկ գրված գործառույթները իրականում ճիշտ են գրված, աշխատում են, թե ոչ:

Ունենք ուսուցչի **օգնական**, որը մագիստրատուրայում սովորել է լոգոպեդի ծրագրով: Բայց նման հաստիք դժվար ստեղծվի դպրոցում:

Լավագույն լուծումը՝ մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտին մեկ ուսուցչի **օգնական**:

Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, պարբերաբար այցելում եմ դպրոց, բայց երբեք չեմ հանդիպել ու չեմ տեսել ուսուցչի **օգնականին**, որ իրականում այնտեղ կա:

Ես որպես դպրոցի տնօրեն պահանջել եմ, որ մեր դպրոցին տրամադրեն **լոգոպեդի**, **հոգեբանի**, ուսուցչի **օգնականի**, **սոց**. **աշխատողի** հաստիքներ, այլապես ներառականությունը հնարավոր չէ:

Շատ դպրոցներ անգամ հասարակ **լոգոպեդ** չունեն, որովհետև ԿԱՊԿՈՒ երեխաների բավարար քանակ չկա:

Մասնագետների քանակը՝ մկե **լոգոպեդ**, մեկ **հոգեբան**, շատ քիչ է: Բազմամասնագիտական թիմի առկայությունը պարտադիր է, բայց դպրոցի ներսում:

Որոշ դեպքերում ներառականությունը ձևական է դառնում ու սխալ արդյունքի է բերում: Օրինակ, երեխան **լոգոպեդի** կարիք ունի, բայց մեր դպրոցը նրան չի կարողնաում դա տրամադրել: Ներառականությունն ապահովվում է, բայց ինչը նրան իրականում պետք է, նա չի ստանում:

Գյուղերում չունեն **լոգոպեդներ**, **հոգեբաններ** ու բոլոր անհրաժեշտ նյութերը, որպեսզի կարողանան անհրաժեշտության դեպքում օգնել ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Մենք, օրինակ, չունենք լոգոպե: Կենտրոնի **լոգոպեդը** կարողանում է ամեն դպրոց այցելել ամիսը մեկ անգամ: Մասնագետների քանակը քիչ է:

Ինձ պատասխանել են, որ չունենք **լոգոպեդ** և այլ հատուկ մասնագետներ, ուստի ես եմ զբաղվում երեխայի հետ:

Ծնողները խուսափում են **լոգոպեդի** անհատական պարապմունքի տանել երեխային, վճարելու խնդիր կա, հաճախ տնօրենները չեն պահանջում, որ դպրոցում լինի լոգոպեդ:

Իմ երեխան, ով դպրոցում աշխատում է **լոգոպեդի** հետ, նրա տված աշխատանքներն ավելի հաճույքով է կատարում, քան դպրոցի դասատուներինը:

Լոգոպեդի ու **հոգեբանի** համար առանձին սենյակներ չկան հաճախ:

Դպրոցների մեծամասնությունում **հոգեբաններն** ու **լոգոպեդները** գրանցված են որպես աշխատող, բայց աշխատանքի չեն գալիս:

Շատ կուզենայի մանկապարտեզներում լինեն **լոգոպեդներ** ու **հոգեբաններ**:

Մենք 51 երեխա ունենք, որից միայն հինգը հարմարեցման կարիք ունի, մնացածը՝ **լոգոպեդի**, հոգեբանի կարիք ունեն:

Այսօրվա դրությամբ խոսելու պրոբլեմ ունեցող երեխան նույն սենյակում է, ինչ մտավոր խնդիր ունեցող երեխան: Մեկի հետ **լոգոպեդն** է աշխառում, մյուսի հետ **հոգեբանը**, ու այդպես չի ստացվում: Լավ կլինի, որ տարբեր սենյակներում լինեն, բայց դասասենյակների խնդիր ունենք:

Ծնողը ուրախացել է, որ դպրոցում **լոգոպեդ** կա: Սակայն աշխատում եմ երեխայի հետ միայն երկրորդական դասերին: Դա չի բավականացնում:

Լոգոպեդը չի կարող այլ մասնագետների բնագավառից էլ խորհուրդներ տալ և նյութեր ձեռք բերել:

Լոգոպեդները աշխատում են դպրոցում առանց համապատասխան նյութերի ու գործիքների, քանի որ դպրոցը չի ապահովում:

Ուսուցչի **օգնականը** կա, բայց անունը կա, ամանումը չկա:

Ուսուցչի **օգնական** և ուսուցիչ հարաբերություններում հոգեբանական խնդիրներ կան, աշխատավարձերը տարբեր են, աշխատաժամանակը ևս:

Ուսուցիչներին **օգնականներ** պետք են պարտադիր, իրական հանրակրթականներին էլ են նույնիսկ պետք:

Մանկապարտեզներում պետք է դաստիարակը ունենա համապատասխան **մասնագետ-օգնական**, ով կօգնի խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելուն:

Եթե մի դասարանում լինի ուսուցիչ ու **օգնական**, դա չի աշխատի: Ենթադրենք կա թերզարգացած երեխա՝ խոսքի մասով: Պատկերացրեք ուսուցիչը խոսում է, ես էլ օգնում եմ, բացատրում եմ իմ աշակերտին: Բնականաբար մյուս աշակերտները կկենտրոնան իմ՝ մասնագետիս վրա, չեն լսի ուսուցչին: Արդյունքում, կտուժի և՛ ուսուցիչը, և՛ հատուկ երեխան, և՛ մնացած աշակերտները:

Ճիշտ է ուսուցչի **օգնական** ունենալը, հակառակ դեպքում երեխան կառանձնանա, դա սխալ է:

Մինչև չորրորդ դասարան սովորական դպրոց էր գնում, հետո ստիպված տարել եմ հատուկ դպրոց, եթե այն ժամանակ լիներ ուսուցչի **օգնական**, կթողնեի սովորական դպրոցում(ծնող):

Մենք ժամանակից առաջ ընկնելու պրոբլեմ ունենք: Նախ՝ ուսուցչի օգնականի ինստիտուտն է պետք ներդնել նորմալ կերպով, նոր համընդհանուր ներառականություն ապահովել:

Ուսուցչի **օգնականը** դպրոցում ֆոֆռում է, ստանում ահագին աշխատավարձ:

Ուսուցչի **օգնականի** հաստիքը սխալ է, եթե ուսուցիչը աշխատում է, պետք է հստակ պարտականություններ ունենա ու ինքը կատարի դրանք:

Եթե դասարանում մի քանի ԿԱՊԿՈՒ աշակերտ կա, ուսուցչի **օգնական**, ուսուցիչ, աշակերտներ համատեղ կարող են ապահովել ներառականությունը:

Թուղթ կտրող-ճմրթող-անկյուն կանգնացնողներ ունենք, որոնք հաշվետվություն են լրացնում: Թղթի վրա **մասնագետներ** կան, բայց իրականում՝ ոչ:

Հենց դուրս ենք գալիս դպրոցից, ամենակարևոր անձը դառնում է **բուժքույրը**: Իրենցից է սկսվում ծնողների ու անձամբ երեխայի հետ աշխատանքը:

Հոգեբանը կամ **հատուկ** մանկավարժը ինքը պետք է հասկանա՝ երեխային ո՞ր խմբում և ե՞րբ ներառել:

Մեր դպրոցում **սոց. աշխատող** չունենք, հոգեբան չունենք: Ուսուցիչը ստիպված բոլոր գործառույթները պետք է իրականացնի:

Մանկապարտեզում անհրաժեշտ է նեղ մասնագետ, ոչ թե հոգեբան: Ցանկացած դաստիարակ հոգեբան է:

Մանկապարտեզում **հոգեբանի** անհրաժեշտությունը ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների համար են, այլև մնացածի: Շատ ենք հանդիպում, որ հասարակ երեխաները և՛ ագրեսիվ են, և՛ դասի չեն նստում, և՛ ընկերասեր չեն: Այդտեղ արդեն հոգեբանը միանշանակ ցանկալի է:

Ուսուցիչները նույնպես դժվար է աշխատել խնդիրներ ունեցող երեխաների հետ ու դպրոցում պետք է նաև **հոգեբան** մասնագետ լինի, ով կօգնի ուսուցիչներին:

Սովորական երեխաների հետ նույն դասարանում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ պետք է **հոգեբաններ** աշխատեն:

Հոգեբանը համարվում է ամբողջ դպրոցի հոգեբանը, նա չի հասցնում բոլորին:

Ես այն կարծիքին եմ, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխայի հետ միայն **ուսուցչի** աշխատանքը արդյունք չի ապահովի:

Սկզբնական փուլում աշխատում ենք երեխայի հետ, արդեն կարողանում է նստել դասին: Բայց ուսուցիչը չի կարողանում կենտրոնանալ առանձին-առանձին յուրաքանչյուրի վրա: Եթե ներառում են, անհրաժեշտ է **մասնագետ**, որը չունենք:

Մենք չունենք **հատուկ մանկավարժներ**:

Դպրոցում երրորդ դասարանում սովորող երեխաները, որոնց կրթական մակարդակը համապատասխանում է առաջին դասարանի մակարդակին, դասի նստում են իրենց հասակակիցների հետ, բայց **հատուկ մանկավարժը** դասերից դուրս աշխատում է այդ երեխաների հետ այլ ծրագրով:

Լրացուցիչ մանկավարժներ և մասնագետներ են պետք երեխաների համար:

Մասնագետների հաստիքները կախված են ներառական երեխաների քանակից: Եթե այդքան երեխա չունենք, այդ բոլոր հաստիքները չենք կարող ապահովել:

Մեկ տարուց ավել երեխայիս հետ գնացել եմ դպրոց, մասնակցել եմ պրոցեսին: Նոր-նոր աջակցման կենտրոնից մեկ ժամով ինչ-որ **մասնագետ** գալիս է: Հիմա մասնագետի պակասը ահավոր զգացվում է:

Ներառականը, որ ներդրված է, արդեն լավ է, բայց **մասնագետները** դեռ պատշաճ չեն զբաղվում իրենց գործով:

Երեխայի հետ պետք է աշխատեն և՛ ծնողը, և՛ **մասնագետը**:

Ես տնօրեն եմ, բազմիցս բարձրաձայնել ենք խնդիրները, ունենք աուտիզմով երեխա: Դիմել ենք նույնիսկ նախարարին **մասնագետի** համար: Ոչ մի արձագանք չկա:

Կոնկրետ մեր հաստատությունը տեխնիկապես պատրաստ է ներառական համակարգին: Միայն **մասնագետ** չունենք: Դիմել ենք, խնդրել ենք քաղաքապետին, ասում է, որ դա իր խնդիրը չի, թող տանը պահեն:

Մեկ **մասնագետը** քիչ է, դասի ժամին մի քանիսը պետք է լինեն:

Մեկ **մասնագետը** ճիշտ է, որ մեր դասարանի նման երեխաներին ավելի լավ ճանաչենք, կարողանանք օգնել նրանց(աշակերտ):

Ձեր ասած «**սուպեր**» մասնագետի մասին խոսք լինել չի կարող, մենք նույնիսկ ոլորտն ամբողջությամբ չենք պատկերացնում:

Միջազգային կազմակերպությունում հատուկ **մասնագետների** աշխատանքը վեց ժամը չի գերազանցում, իսկ դպրոցում յոթ ժամ ենք աշխատում:

Ունենք ճիշտ մոտեցում ունեցող **մասնագետների** պակաս: Դիպլոմը բավարար չէ, պատկերացում չունեն, թե ինչ աշխատանք պետք է անեն:

Մեր դասարանում կար կարիքներով աշակերտ, կային **հոգեբաններ**, բայց ծանոթ չէին իրենց մեթոդներին: Մենք ենք հուշել մասնագետին, որ զբաղվի մեր դասարանի մի տղայի հետ: Մատների արանքով էին նայում:

Այսօր ԿԱՊԿՈՒ երեխային ընդունելու մատուցման ձևն է սխալ. ոչ մեկ ոչինչ նորմալ չի հասկանում, ոչ մի նորմալ **մասնագետ** չունենք, ամեն ինչը սիրողական մակարդակի է:

Յուրաքանչյուր դպրոց պետք է իջեցնի այն **հաստիքը**, ինչի կարիքն ունի՝ կախված ինչ ԿԱՊԿՈՒ բալիկներ կունենա:

Մանկապարտեզում ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, ովքեր չեն ուզում օրինակ քնել կամ ուտել, ինը ժամ մեր հսկողության տակ են լինում, մեզ **հատուկ դաստիարակներ** են պետք լինելու:

Մանկաբույժի խնդիրներ կան համայնքներում, մեզ պետք են պրոֆեսիոնալ մանկաբույժներ մարզերում:

Ի սկզբանե կար խնդիր բազմամասնագիտական անձնակազմի և **մասնագիտական** անձնակազմի միջև:

Իմ **անհատական պարապմունքները** ամեն օր են՝ յոթ ժամով: Եթե գալիս, տեսնում են նստած ես, ասում են՝ ինչո՞ւ ես անգործ:

Ծանր խնդիրներ ունեցող երեխաների համար դպրոցներում պետք է լինի **անձնական դայակներ**:

Մեր համայնքներում սոցիալական աշխատանքն է կաղում: Այսօրվա դրությամբ **սոցիալական աշխատողների** մեծ կարիք ունենք:

Պետք է դպրոցներում առանձին **խոհարարի** հաստիք էլ լինի:

Աջակցման կենտրոնների աշխատանքի մասով վերջին շրջանում առաջընթաց կա, բայց դեռ շատ ցածր է մակարդակը:

Ե. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ե.1. ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՅՔ, ՄԱՐՉԱԴԱՀԼԻԾ

Ներառական կրթության ասվածի մեջ պետք է սահմանափակումներ լինեն, կան երեխաներ, ում կրթությունը մեր մոտ անհամատեղելի է, ոչինչ չունենք իրենց **հարմարեցված**:

Դպրոցներում չկան ոչ մի **հարմարություններ** ու դա միայն թեքահարթակը չէ, նաև լուսավորության խնդիրը նույնպես իր ուրույն տեղը ունի:

Հիմնական դպրոցներում պետք է հասկանան, որ ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ պայմաններ ու վերաբերմունք է պետք: Դեռևս ուսուցչի օգնականի մեծ պակաս ունենք: **Թեքահարթակների** խնդիր ունենք: Մեր դպրոցում, օրինակ, դեռևս թեքահարթակներ չկան:

Ես աշխատում եմ հաշմանդամ երեխաների հետ: Մենք **թեքահարթակ** չունենք, բայց օգնում ենք տեղափոխվել, զբաղվում ենք իրենց հետ, դրա համար էլ ուզում են մեզ մոտ մնալ:

Մեր դպրոցում **թեքահարթակների** խնդիրներ ունենք, դռների նեղության և այլն: Դրա համար մենք ԿԱՊԿՈՒ աշակերտ ունեցող դասարաններն իջացրել ենք առաջին հարկ:

Դպրոցը սարքում են ներառական, առանց հաշվի առնելու այդ դպրոցի պայմանները, հնարավորությունները, առանց վերապատրաստելու ուսուցիչներին, առանց վերանորոգելու **սանհանգույցները**, առանց սարքելու առանձին սենյակներ և այլն:

Դպրոցներում կա՛մ չկան **թեքահարթակներ**, կա՛մ եղածներն էլ չեն համապատասխանում ստանդարտներին, և ֆիզիկապես առողջ մարդը չի կարող բարձրանալ:

Կառուցելուց առաջ պետք է ճիշտ հաշվարկեն օրինակ **թեքահարթակը**, այլ ոչ թե կառուցելուց հետո ժողով անեն որոշեն պետք է քանդել, որովհետև ստանդարտներին չեն համապատասխանում:

Պետք է սկզբից ներառեն երեխաներին, հետո նոր պայմաններ ստեղծել: Օրինակ, կարող է լինել, որ **թեքահարթակի** կարիք չլինի:

Դպրոցում ունենք երեխա, որն ունի **հենաշարժողական** խնդիր: Բայց ներառական կրթության հատուկ պայմանների կարիք չունի, շատ լավ շփվում է այլոց հետ:

Առաջին հերթին **շենքային** պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ հասարակությունը դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի մանկապարտեզից, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Այսօրվա դրությամբ խոսելու պրոբլեմ ունեցող երեխան նույն սենյակում է, ինչ մտավոր խնդիր ունեցող երեխան: Մեկի հետ լոգոպեդն է աշխառում, մյուսի հետ հոգեբանը, ու այդպես չի ստացվում: Լավ կլինի, որ տարբեր սենյակներում լինեն, բայց **դասասենյակների** խնդիր ունենք:

Մենք 51 երեխա ունենք, որից միայն հինգը **հարմարեցման** կարիք ունի, մնացածը՝ լոգոպեդի, հոգեբանի կարիք ունեն:

Գավառում կա դպրոց, որը տարածաշրջանում ապահովում է ներառական կրթություն. կան մասնագետներ, ովքեր լիարժեք աշխատում են, բայց **ֆիզիկական** պայմանները բավարար չեն:

Կոնկրետ մեր հաստատությունը **տեխնիկապես** պատրաստ է ներառական համակարգին: Միայն մասնագետ չունենք: Դիմել ենք, խնդրել ենք քաղաքապետին, ասում է, որ դա իր խնդիրը չի, թող տանը պահեն:

Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը **նորոգելուց** հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև մասնագետների կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը ընդհանուր դասարանում, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն դասարանում:

Ֆիզիկական մատչելիության խնդիրն ամենահեշտ լուծելին է: Կարելի է տարանջատել այդ տեսակները ներառականից:

ԴՑՊ ունեցող երեխան նախ տեղաշարժման հետ կապված խնդիր ունի, իսկ դպրոցում հարմարեցված սեղան ու աթոռ չկա, երեխան չի կարողանում կոորդինացիան պահել:

Մեր հանրակրթական դպրոցում ունենք մի «ծանր» խնդիր ունեցող երեխա, որը հեռու գյուղից է գալիս, քանի որ նրա ծնողները ուզում են, որ նա հաճախի հենց մեր դպրոց: Նա այցելում է դպրոց ամիսը մեկ անգամ, այնքան որ ուսուցիչները նրան տեսնեն: Նա կես ժամից ավելի դասին չի դիմանում, օրինակ պառկել է պետք լինում, բայց մենք դեռևս նմանատիպ հարմարություններ չունեն:

Դպրոցների մեծ մասում **սանահանգույցները** հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Դպրոցներից իսպառ բացակայում են հատուկ **սանհանգույցները**:

Մեզ մոտ **զուգարանները** հարմարեցված չեն երեխայի կարիքներին: ԴՑՊ ունեցող երեխային մենք ենք ուղեկցում զուգարան կամ բուֆետ:

Մեր դպրոցում ՄՈՒԿ ունեցող երեխայի ծնողն է հարմարեցված **աթոռ** սարքել, բերել դպրոց:

Մենք գնահատել ենք շատ երեխաներ, որոնք **ֆիզիոթերապիայի** կարիք ունեն: Ոչ մի դպրոց մեզ մոտ չի կարող իրեն սա թույլ տալ: Գումարը դպրոց է գնում, բայց մասնագետ չկա, հսկող չկա:

Ունենք մի բալիկ, ով գովասանագիր պետք է ստանար, բայց **տեսողական** խնդիր ունի և չէր կարողանում անգամ իր գովասանագիրը կարդալ: Բայց այդ բալիկը շատ ֆինանս է բերում դպրոց, փաստը մնում է փաստ, որ նրա խնդիրը այդպես էլ չի լուծվել:

Երեխաների հաշվով ֆինանս է հատկացվում դպրոցին, բայց էս երեխան անգամ **լսողական** սարք չունի, պետք է շատ հարցեր վերանայվեն:

Մեր դպրոցի առաջին հարկում դասարաններ չկան, **հենաշարժողական** խնդիրներ ունեցող երեխաների համար դժվար է տեղափոխվելը:

Համայնքում ունենք **հենաշարժողական** խնդիրներ ունեցող մանկապարտեզի տարիքի երեխաներ, նրանք մանկապարտեզ չեն հաճախում, ինչպես հաճախեն առանց հարմարությունների:

Մեր կենտրոնը, օրինակ, սերտ համագործակցում է մեր դպրոցի հետ, բայց դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց վատ են զգում, ոչինչ **հարմարեցված** չէ:

Մենք **հարմարեցման** կարիք ունեցող երեխայի կարիքով ենք առաջ շարժվում, վատ տեսնելու դեպքում՝ առաջ ենք նստեցնում, մուգ ենք գրում:

Դպրոցի պայմաններն էլ մեծ նշանակություն ունեն, երեխան **սայլակով** է, բայց դռան չափը չի համապատասխանում, կամ մնում են առաջին հարկում:

Դպրոցները բարեկարգման կարիք ունեն ու **հարմարացվեն** նաև խնդիրներ ունեցող երեխաներին:

Դասասենյակում չկան որևէ հարմարություններ թույլ տեսողություն ունեցող երեխաների համար:

Ե.2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Եթե մարզում միայն մի կենտոն կա, դա բավարար չի, դժվար է հասնել հեռու համայնքներից:

Մեկ կենտրոնը մարզի համար բավարար չէ, տարածքային առումով կտրտվածությունը շատ է, միջհամայնքային տրանսպորտը վերանում է:

Կախված երեխայի բնակության վայրից, սոցիալական խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է **տնային** ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:

Այսօրվա տրված **գումարով** երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿՒ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար:

Տրանսպորտի **գումարն** էլ բավարար չի:

Ծնողը պետք է ստանա գումար՝ տրանսպորտային ծախսերի համար: Ներկայումս ամեն տեսակ բյուրոկրատիա և պատճառաբանություններ են ստեղծվել, որ գումարը չտան:

Սոցիալական ծանր պայմաններում ապրող գյուղերի բնակիչները տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել նախակրթարաններ:

Գոնե պետք է լուծել **տրանսպորտի** խնդիրը, շատերը անգամ հատուկ սայլակ չունեն:

Խնդիրներ ունեցող երեխաների **տրանսպորտի** հարցը առաջնահերթ է ու պետք է պետությունը կամ դպրոցը այդ հարցը արագ լուծի ու կարգավորվի այդ ոլորտը:

Գյուղական համայնքներում բացառվում է, որ **տրանսպորտը** կարող է օգնել խնդիրներ ունեցող երեխաներին:

ԿԱՊԿՈՒ երեխաներին տրվող երկու հարյուր դրամը հաշվարկված է Երևան քաղաքի օրինակով, հաշվի չեն առել մարզերի առանձնահատկությունները, որտեղ ներքաղաքային **տրանսպորտային** ցանցը բացակայում է, ստիպված օգտվում են տաքսիներից, որը շատ ավեի թանկ է:

Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, ու ինձ ասել են, որ միայն մի դպրոց կա, որտեղ իմ երեխային կարող են ընդունել: Ես չէի կարող իմ երեխային այդ դպրոց տանել, քանի որ սայլակի ու **տրանսպորտի** խնդիր կա: Բայց հիմա պարզվում է, որ մոտակա դպրոցն էլ կարող է ընդունել իմ երեխային: Բայց այնտեղ էլ մասնագետի խնդիր կա:

Հենաշարժողական խնդիրներով երեխաներին ծնողները նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց **տանել-բերելու խնդիր** կա:

Ես իմ բալիկին իմ ուժերով եմ **տանում-բերում** դպրոց. նա քայլել չի կարողանում:

Ե.3. ՍՆՈՒՆԴ

Կան դպրոցներ, որտեղ չեն հետևում ներառական խնդիրներ ունեցող երեխաների սննդակարգին ու տալիս են նույն **սնունդը**, որը տալիս են նաև խնդիրներ չունեցող երեխաներին:

Հատուկ երեխաները **սնունդը** չեն տանում ընդհանուրի մոտ, երբ գալիս են առանձին դասաժամի, այդ ժամանակ են ուտում:

Կարող է շատ լավ սովորող երեխա լինի, ով սոված է գալիս դպրոց: Դպրոցը պետք է ապահովի բոլոր երեխաների **սնունդը**:

Տարրականի **սնունդով** կարողանում ենք ապահովել նաև անապահովներին և ներառականներին:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:

Յուրաքանչյուր ներառական դպրոցին երեք մասնագետ է հատկացվում՝ հոգեբան, հատուկ մանկավարժ և սոցմանկավարժ, դրան գումարած սնունդ, հատուկ ձեռնարկներ, նյութեր և այլն, գումարը այսքանին ինչպե՞ս կբավարարի:

Մենք գումար ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին **սնունդ** տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչու է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել:

Այսօրվա տրված գումարով երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿՒ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար:

Սխալ է, երբ սնունդը տալիս են երեխայի ձեռքին ու ուղարկում են դասարան. դասարանում կան **սոց.անապահով** երեխաներ:

Ներկայումս **ճանապարհածախս** և **սնունդ** չի տրամադրվում:

Վայոց Ձորում շատերը երեխային ներառական են գրանցում, որ **սնունդ** ստանան:

Ծնողները գոհ էին, որ երեխաները **սնունդ** էին ստանում: Ուտելու ժամանակ երեխաները հաճույքով շփվում էին միմյանց հետ, հիմա անհավես են գնում դասի:

Հիմնականում ներառականների համար առանձին սնունդ ապահովելը առանձնապես նպատակային չէ: Ամեն դեպքում ծնողները այդ մասով ապահովում են իրենց երեխաներին սննդով:

Եթե բոլորը պետք է հավասար լինեն, **սնունդը** արդեն անհավասարություն է:

Երբ տրամադրվում էր **սնունդ**, դա ինքնին տարբերակում էր մտցնում երեխաների մեջ. ներառականները ստանում էին, մնացածը՝ ոչ:

Մենք ներառական երեխաներին ամեն օր **կերակրում** ենք դպրոցում, բայց այստեղ էլ հակառակ իրավիճակ է. ինչո՞ւ առողջ բալիկները ուտել չեն ուզո՞ւմ:

Դասասենյակում սխալ է **ուտել** նաև հիգիենիկ պայմանների հետ կապված:

Պետք է և՛ խնդիրներ ունեցող, և՛ առողջ երեխաները նույնը ստանան ու սննդային տարբերություն չդրվի:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար դպրոցում առանձին ապահովում ենք սննդով, մյուսներին՝ ոչ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այսօրվա դրությամբ, օրենքը տնային ուսուցումը չի կարգավորում: Բայց դա անհրաժեշտ է: Մենք կարող ենք գումար տրամադրել ուսուցչին, որպեսզի նա գնա ու տանը կրթի ԿԱՊԿՈՒ երեխային: Սակայն, գումարը քիչ է, աշխատանքից հետո ուսուցիչը հոգնած է լինում ու, բացի դրանից, ուսուցիչները հիմնականում հոգեբանական խնդիր են ունենում երեխային տանը կրթելու հետ կապված, չեն ուզում ուրիշի տանը աշխատանք իրականացնել:

Կախված երեխայի բնակության վայրից, սոցիալական խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է **տնային** ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

Ծնողներից շատերը ուզում են **տնային** ուսուցում, դա հեշտացնում է, նաև չի ուզում երեխայի մասին շատ մարդ իմանա:

Չի բացառվում, երբ ամեն ինչ սկսի աշխատել, ինչ որ փուլից ծնողը որոշի, որ անկախ ամեն ինչից ավելի արդյունավետ է **տնային** ուսուցումը:

Ես գնում են **տնային** ուսուցման, բայց չգիտեմ՝ պիտի վճարվեմ, թե ոչ, դա դասաժամ համարվում է, թե ոչ:

ԿԱՊԿՈՒ ծնողներ կան, որ ասում են, իմ երեխային պետք չէ անգլերենի դաս, որը նա միևնույն է չի սովորելու, ավելի լավ է, թող համապատասխան մասնագետ գա իմ **տուն** ու իմ երեխային անկախ կյանքի նախապատրաստի:

Արդյոք՞ այդ երեխաներին պետք է, որ իրենք դպրոց գան: Օրինակ՝ աուտիզմով երեխաների հետ դժվար է, հնարավոր է իրենց ինչ-որ անձ վանի ու ընկնեն սթրեսի մեջ:

ԿԱՊԿՈՒ երեխաների տասը տոկոսը դեռ տանն են և ոչ մի բանի չեն մասնակցում:

Մոռանում ենք, որ արդեն կա տասներկու տարեկան երեխա, որը մինչև հիմա տանն է: Համընդհանուր ներառում ենք, այդ երեխան ի՞նչ է անելու: Նա չի կարող միանգամից մտնել դպրոց:

2.2. ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ուզում եք ներառել ԿԱՊԿՈՒ երեխաներին, թող ոչ թե դասերին մասնակցեն, այլ ասենք հատուկ **խմբակներին** մասնակցեն:

Որոշ դասերի դեպքում մենք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ **առանձին** ենք պարապում:

Երկրորդական **դասերի ժամին** առանձին տանում են պարապելու, բայց տվյալ երեխան ցանկանում է մասնակցել, օրինակ երգեցողության դասին, աշխատանքի ուսուցման դասին:

Սովորական երեխաները և հատուկ երեխաները պետք է նույն դպրոց հաճախեն, բայց պետք է **առանձին** սովորեն, այլ մեթոդներով պետք է կազմակերպվի նրանց ուսուցումը:

Դպրոցում երրորդ դասարանում սովորող երեխաները, որոնց կրթական մակարդակը համապատասխանում է առաջին դասարանի մակարդակին, **դասի նստում են** իրենց հասակակիցների հետ, բայց հատուկ մանկավարժը դասերից դուրս աշխատում է այդ երեխաների հետ այլ ծրագրով:

Սխալ է, որ դասերից հանում են և տանում **առանձնին** աշխատելու:

Այդ հատուկ բալիկներին ոչ մի դեպքում չի կարելի **առանձնացնել**, դա խտրականություն կլինի, պետք չէ առանձին սենյակներ ունենալ:

Խորը խնդիրներով երեխան ֆիզիկապես չի կարող դասի նստել: Ամենաշատը **5-10 րոպե** կարող են մնալ դասարանում:

Կան բալիկներ, ովքեր չեն կարողանում անգամ դասարանում **քսան րոպեից** ավելի նստել, այս երեխաներին հաստատ հատուկ օժանդակություն է պետք:

Կան դասընթացներ, որոնց **պարտադիր** չի ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությունը, բայց դե դասերից մեծ մասին կարող են մասնակցել:

Շատ կարևոր է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները, որոնք ի վիճակի չեն ամբողջ **դասաժամը** նստել, թող հաճախեն դպրոց, իսկ կից ստեղծվի աջակցման կենտրոն, գոնե ամեն մարզում մեկը:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատում են, բայց այդ երեխաներին հաճախ չեն ներառում, պարապում են **առանձին**:

Ավելի լավ է որ ԿԱՊԿՈՒ երեխաները **այլ ձևով քննություն** տան:

ԿԱՊԿՈՒ երեխաներից ոմանց **քննություններից** ազատում են՝ անհանգստանում են, ուզում են մասնակցել, բայց չեն թողնում: Պետք է մանկավարժներին խնդրել՝ թույլ տան:

Իմ երեխան ներառականով ընգրկված է: Առանձնապես ոչ մի բան չեն անում դպրոցում, մի թուղթ են տալիս, **ժամանակ սպանում**, մինչև դասերն ավարտվեն:

ԿԱՊԿՈՒ երեխաներին ոչ մի պարագայում չի կարելի առանձնացնել **դասերի ժամանակ**, ուղղակի նրանց հետ պետք է առանձին աշխատի դասերից հետո հատուկ կենտրոններում:

Չպետք է տարանջատել այս երեխաներին, գոնե պետք է **դասաժամեր** լինեն, որոնց ընթացքում բոլորն իրար հետ շփվեն:

Եթե բոլորը իրար հետ սովորեն, ընդհանուր կրթական մակարդակը իջնելու է շատ:

Սոցիալիզացիայի հարցը մենք կարող ենք լուծել՝ դպրոցում **գոնե մեկ ժամ** այդ ծանր խնդրով երեխային պահելով:

2.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

Ներառական կրթության իդեալական ու ճիշտ տարբերակը անհատական մեթոդների կիրառումն է: **Յուրահատուկ** մոտեցում յուրաքանչյուրին:

Մեր հանրակրթական դպրոցում կա մտավոր **թերզարգացած** երեխա, որը արդեն հասել է վեցերորդ դասարան, բայց համարյա ոչինչ չի հասկանում, երբ ինչ-որ բան ես բացատրում: Նրա ընտանիքը սոցիալապես անապահով է, դրա համար ծնողները չեն կարող տանել հատուկ դպրոց, իսկ մենք չենք կարողանում ապահովել ներառականությունը:

Ուսուցիչը չպետք է ԿԱՊԿՈՒ երեխային հենց այնպես գնահատական դնել այնքան որ նա առաջ գնա: Ուսուցիչը պետք է հատուկ **պլան** ունենա այդ երեխայի վերաբերյալ:

Մասնագետը անպայման պետք է ԿԱՊԿՈՒ երեխայի մեջ գտնի մեկ **առանձնահատկություն** ու փորձի դրա վրա աշխատել: Օրինակ՝ աուտիզմով երեխեն միգուցե է կարող է լավ նկարել: Այդ դեպքում ԿԱՊԿՈՒ երեխան կհասկանա, որ նա նույնպես տաղանդավոր է:

Ծնողների մասնակցությունը **ԱՈՒՊ**-ի կազմմանը պետք է խրախուսվի, որովհետև ծնողն է, որ իր երեխային ամենալավն է ճանաչում:

ԱՈՒՊ-ը շատ լավ և գովելի գաղափար է, բայց այսօր ծանր երեխայի համար կորցրել է իր իմաստը:

ԱՈՒՊ-ներում է ֆիքսվում ներառականի ազդեցությունը, որը երբ դարձավ էլեկտրոնային՝ բարդացավ:

Երեխաները պետք է **տարբերակվեն** ըստ խնդիրների, որովհետև խնդիրները խիստ **անհատական** են:

Պետք է լինեն ժամեր ընդհանուր դասերի համար, նաև՝ **անհատական** լինեն՝ ըստ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի կարիքի:

ԱՈՒՊ-ները կազմվում են, բայց ռեսուրս չկա, որպեսզի դրանք իրականացվեն:

ԱՈՒՊ-ը ծանր երեխաների համար պետք է ձևափոխել, հարմարեցնել կարիքներին՝ ներառելով նեղ մասնագետների նշումները, այլ ոչ թե աստղագիտության ուսուցչի նշումը:

Մեր դպրոցում հատուկ երեխաները սովորում են բոլոր երեխաների հետ, բայց հատուկ պարապմունքների են գալիս՝ մշակված **հատուկ** մեթոդներով:

Մասնագետները պետք է հասկանան, որ միայն **առարկայական հարմարեցումը** «ծանր» երեխաների համար ծիծաղելի է, պետք է սոցիալիզացիայի այլ տարբերակներ գտնել:

2.4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը սկսվում է նախակրթությունից, իսկ **մանկապարտեզների** մասին ոչինչ չկա:

Ներառական կրթությունը պետք է պետական քաղաքականության մաս կազմի: Պետք է ունենանք ներառական **մանկապարտեզ**, որը հենց կլինի առաջին քայլը դեպի դպրոց:

Ներառական կրթությունը պետք է սկսվի **մանկապարտեզից**, քանի որ ցանկացած երեխայի կրթությունը սկսվում է մանկապարտեզից:

Պետք է ներառական համակարգի կիրառությունը սկսել **մանկապարտեզներից**, հետո նոր նրանց ուղարկել դպրոց:

Իմ երեխան դիաբետ ունի, տարա **մանկապարտեզ**, բայց դաստիարակները լավ չէին վերաբերվում, երեխան հիասթափվեց, հիմա էլ չի ուզում գնալ:

Առաջին հերթին շենքային պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ հասարակությունը դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի **մանկապարտեզից**, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Անկախ ամեն ինչից՝ **մանկապարտեզի** բոլոր մասնագետները պետք է կարողանան աշխատել երեխաների մոտ ճիշտ խոսք զարգացնելու ուղղությամբ:

Մեզ հիմա բազմակողմանի զարգացած դաստիարակներ են պետք **մանկապարտեզներում**:

Ես **մանկապարտեզի** դաստիարակչուհի եմ, ես էլ եմ շատ ուզում վերապատրաստվել, տարբեր տեսակի բալիկներ ունենք, որոնց հետ աշխատում ենք սիրողական մակարդակով՝ ինչպես կարողանում ենք...:

Մանկապարտեզում հատուկ սենյակի կարիք է լինելու, հատուկ մասնագետների, հատուկ վերապատրաստման, մենք անգամ մտավոր թերզարգացած երեխաներ ենք ունեցել, պահել ենք առանց հարմարությունների:

Համընդհանուր ներառումը ճիշտ է, պետք է երեխայի դժվարությունները բացահայտել դեռ **մանկապարտեզից**, պետք է աշխատել ծնողի հետ:

Շատ կուզենայի **մանկապարտեզներում** լինեն լոգոպեդներ ու հոգեբաններ:

Մանկապարտեզներում պետք է դաստիարակը ունենա համապատասխան մասնագետ-օգնական, ով կօգնի խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելուն:

Մանկապարտեզում անհրաժեշտ է նեղ մասնագետ, ոչ թե հոգեբան: Ցանկացած դաստիարակ հոգեբան է:

Մանկապարտեզում հոգեբանի անհրաժեշտությունը ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների համար են, այլև մնացածի: Շատ ենք հանդիպում, որ հասարակ երեխաները և՛ ագրեսիվ են, և՛ դասի չեն նստում, և՛ ընկերասեր չեն: Այդտեղ արդեն հոգեբանը միանշանակ ցանկալի է:

Համայնքում ունենք հենաշարժողական խնդիրներ ունեցող **մանկապարտեզի** տարիքի երեխաներ, նրանք մանկապարտեզ չեն հաճախում, ինչպես հաճախեն առանց հարմարությունների:

Մանկապարտեզներում այս հարցերը լուծվա՞ծ են, որ քննարկում ենք դպրոցների հարցը:

Է. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Է.1. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ (ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԲՐԵՅԼԻ ԱՅԲՈՒԲԵՆ)

Ուսումնական ձեռնարկները հագեցած են, բայց մոնիտորինգների արդյունքները պարզեց, որ ամեն դպրոց չի, որ ի վիճակի է այդ ուսումնական դասապրոցեսը կազմակերպել:

Լոգոպեդները աշխատում են դպրոցում առանց համապատասխան նյութերի ու գործիքների, քանի որ դպրոցը չի ապահովում:

Ներառական երեխաների համար ճիշտ է **առանձին դասագրքեր** հրատարակելը, այլ ոչ թե **ուսուցչի** վրա ամբողջ բեռը թողնելը:

Մասնագետներն իրենք են ձեռքբերում **դիդակտիկ** նյութերը:

Այսօր համապատասխան **դիդակտիկ** պարագաներ կամ չկան, կամ էլ շատ թանկ են: Հաճախ մասնագետները իրենք են ինտերնետով գտնում, սարքում:

Ես ինքս եմ իմ ձեռքերով **հատուկ խաղալիքներ** պատրաստում, հատուկ նյութեր, շատ կուզենայինք հատուկ ուղեցույց ունենալ, ուզում ենք հասկանալ, թե ումից ինչ պահանջենք, երբ դրա ժամանակը գա:

Շատ տեղեր կան, որ ծնողները ստիպված են գնում **գրենական պիտույքներ** և այլ անհրաժեշտ պարագաներ իրենց երեխաների համար, իսկ դպրոցի օգնությունը ավելի շատ ձևական բնույթ է կրում:

Մենք հիմա տեսողական խնդիր ունեցող երեխա ունենք, ում համար աջակցության կենտրոնի աշխատակիցը **Բրայլյան** համակարգ բերեց:

Եթե նստես, ասես՝ **թուղթ, խաղ չկա,** չեմ աշխատելու, լավ չի լինի: Պիտի հստակ ասես՝ ինչի կարիք ունես գործիդ մեջ:

Դիդակտիկ պարագաները թանկ են, իսկ էժանը անորակ է, մեկ էլ տեսար՝ երեխային վնասի:

Ես հատուկ դպրոցում եմ աշխատում, և մենք **հատուկ խաղեր** ենք գնում, հատուկ **գրենական** պիտույքներ ունենք, սնունդ ենք տալիս երեխաներին:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու **համապատասխան նյութերի**, հատուկ դասագրքերի կարիք կա:

Ը. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (ENABLING ENVIRONMENT)

Ը.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ ծնողներ կան, որ խուսափում են աղջիկ երեխաներին տանեն **գնահատելու**, որովհետև մտածում են երեխան հետագայում ամուսնանալու խնդիր կունենա, և շատ տարածված պրակտիկա է որ աղջիկների ծնոնղներն ավելի շատ են խուսափում գնահատումից:

Հայաստանում տղա երեխաները ուղղակի շատ են, և ասեմ նաև, որ **տղաների** մոտ խնդիրները միշտ ավելի շատ են լինում, քան **աղջիկների**:

Ծնողները փորձում են առաջին հերթին **աղջիկ** երեխաների խնդիրները թաքցնել, տղաներն էլ հակառակը, ուզում են բանակից խուսափել:

Մենք բախվել ենք **աղջիկ** երեխաների հետ կապված հոգեբանական խնդիրների հետ: Երեխաները հասունացման շրջանում հուզական խնդիրներ են ունենում ու երեխան չի գալիս:

Հայրերը կամ պապերը կոմպլեքսավորում են **աղջիկ** երեխաներին:

Տղաները ծնողները ավելի ոգևորված են, հետագայում բանակից ազատվելու համար, իսկ աղջիկների դեպքում, ամունսնալու խնդրով պայմանավորված, խուսափում են:

Ներառական կրթության կարիք ունեցող երեխաների մեջ **տղաներն** ավելի շատ են:

Ը.2. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ, ԽՏՐԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

Հասարակությունը լավ տեղեկացված չէ, թե ինչ է ներառական կրթությունը: Մարդիկ ճիշտ տեսանկյունից չեն դիտում այս խնդիրը, չգիտեն, թե որ երեխաները պետք է ներառվեն այս գործընթացում:

Ցանկացած օրենդրություն և ցանկացած **ֆինասավորում** չի կարող օգնել, քանի մեր մտածելակերպը չի փոխվի:

Մարդիկ խուսափում են ներառական կրթությունից, քանի որ այս բառը խուճապ է առաջացնում, պիտակավորում է երեխային, քանի որ ուսուցիչներն էլ են երեխային ասում՝ ներառականի երեխա:

Հանրության կարծիքը բացասական է ներառականի նկատմամբ, բայց հիմնական խնդիրը տեղեկացվածությունն է:

Ծնողը խուսափում է բարձրաձայնի երեխայի խնդիրները:

Հասարակությունը չի հասել այն մակարդակին, որ բոլորը պարզ խոսեն հատուկ երեխաների մասին:

Դպրոցում երեխաների մի մասը, ուսուցիչներն ու ծնողները դեմ էին ներառականությանը, բողոքի ալիք բարձրացավ, քանի որ ոչ-ոք չէր ուզում նույն հարթակի վրա լինել խնդիրներ ունեցող երեխայի հետ:

Եթե արտաքնապես երևում են խնդիրները, ասում են: Եթե ոչ, հաճախ չեն ուզում դա խնդիր համարել:

Ծնողները գիտեն, որ եթե բարձրաձայնեն երեխայի՝ ներառականի կարիք ունենալը հասարակության շրջանում խնդիրներ կառաջացնի:

Մեր հասարակությունը դեռևս պատրաստ չի համընդհանուր ներառականությանը: Դեռևս իրազեկման ու ծանուցման խնդիր կա:

Առաջին հերթին շենքային պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ **հասարակությունը** դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի մանկապարտեզից, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Ես լոգոպեդ եմ աշխատում և հայտարարում եմ, որ ով դեմ է ներառականությանը պետք է հայտնվի բանտում:

Համընդհանուր ներառումը պետք է սկզբից արվեր, իսկ սկզբում ուղղակի ներառական կրթություն կոչվեց, որը առանձնացնում էր:

Մեր Նորավանի դպրոցում մի երեխա կա, ով ամեն ինչից հեռու է: Չեք կարող պատկերացնել, թե հիմա ինչ վիճակում է այդ երեխան: Բոլորը **ծաղրում** են:

Դեմ չենք իրենց դպրոց գալուն, բայց թող **առանձին** լինեն:

Անկախ ամեն ինչից դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաները առանձնանում են, և իրենց **մատով** են ցույց տալիս:

Շատ մարդկանց մոտ թյուր **տպավորություն** է, որ ներառական կրթությունը վերաբերում է միայն **դաունով** հիվանդ երեխաների կրթության հետ:

Եթե երեխան մեկ-երկու անգամ տեսնի խնդիր ունեցող երեխային, **կսովորի**:

Կարևոր է, որ դպրոցից սկսած մարդիկ միմյանց ընդունեն ինչպես որ կան: Կարևոր է, որ փիլիսոփայությունը ճիշտ ընտրվի:

Եթե երեխան հենաշարժային խնդիր ունի ու մտավոր խնդիր չունի, հասարակությունը, մնացած երեխաները պետք է հասկանան, որ նա իրենց **հավասար** անձնավորություն է:

Մենք որպես այդպիսին դեռ ներառական հասարակություն չենք:

Ներառական կրթություն տերմինի ներմուծումը մեզ խանգարեց, դեռ **պատրաստ** չէին այդ գաղափարին(մանկավարժ):

Ես դեմ եմ այն մտքին, թե օրենսդրությունը լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի **փող** տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից:

Տարիներ առաջ ծնողը, իմանալով հանդերձ, որ իր երեխան տեսողական խնդիրներ ուներ, չէր թողնում ակնոց կրել:

Մենք **գումար** ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին սնունդ տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչու է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել:

Կան ծնողներ, որոնք **սրտացավորեն** են վերաբերվում իրենց երեխայի խնդրին ու պատրաստ են աջակցել դպրոցին, ուսուցչին: Կան նաև ծնողներ, որոնց համար միևնույն է: **Անտարբերությունը** հիմնականում գալիս է սոցիալական վիճակից՝ ծնողը ուղղակի ժամանակ չունի դրան տրամադրելու, քանի որ օրվա հաց պետք է վաստակի:

Շատ դպրոցներ կան, որտեղ ԿԱՊԿՈՒ երեխաներ են գրանցված, բայց «սովորական» երեխաների բողոքների պատճառով չեն հաճախում դպրոց: Երեխաների ծնողները պատճառաբանում են, որ ԿԱՊԿՈՒ խնդիր ունեցող երեխաները **խանգարում** են իրենց երեխաներին սովորել, ավելին՝ ԿԱՊԿՈՒ երեխաները **հոգեբանորեն նաև ազդում** են «նորմալ» երեխաների վրա:

Երեխայի հետ աշխատում է **մանկավարժահոգեբանական** խմբի այն մասնագետը, որը եզրակացության մեջ նշված է որ պետք է աշխատի:

Շատերը ներառական ասելով հասկանում են **տարօրինակ** մարդ, անգամ գիժ: Եթե ծնողն ու ուսուցիչը չխանգարի, երեխաները իրենք կհամակերպվեն:

Ծնողներից շատերը ուզում են տնային ուսուցում, դա հեշտացնում է, նաև չի ուզում երեխայի մասին շատ մարդ իմանա:

Ես, որպես ուսուցիչ, կարծում եմ, որ խորը հիվանդություն ունեցող երեխաները ավելի լավ է չգան, միևնույն է իր կյանքում ոչինչ չի փոխվում, **ժամանցի** համար է գալիս, բայց խանգարում է մյուսներին:

Հասարակությունը նոր-նոր **ընդունում** է, **հարմարվում** է ներառական կրթությունը, իսկ հիմա համընհանուր ներառական են մտցնում: Ախր թողեք մի հատ հարմարվենք էս էղածին, հետո բերեք համընդհանուրը փաթաթեք...:

Տարիների ընթացքում **կարծրատիպերը** փոփոխվում են, բայց դե ամբողջապես չեն հաղթահարվել:

Ծնողներն ու երեխաները, անգամ մանկավարժները այնպիսի **ձևակերպումներ** են հնչեցնում, որ արդեն հասկանալի է՝ չի կարող լավ աշխատել:

Խնդիրներ չունեցող երեխաների ծնողները պետք է երբեք իրենց երեխաներին **չտրամադրեն** ԿԱՊԿՈՒ երեխաների դեմ:

Որպեսզի հասարակությունը տարբերակված վերաբերմունք չցուցաբերի երեխային, ծնողները **թաքցնում** են նրա ԿԱՊԿՈՒ լինելու փաստը:

Շատ դեպքերում ծնողներն են դեմ լինում, հենց բառից արդեն՝ ներառական կրթություն, **վախենում** են:

Ծնողն ասում է՝ **ինչի** պիտի էդ հիվանդ երեխեն իմ երեխու հետ սովորի:

Ծնողը հոգեբանորեն **պատրաստ չէ** ընդունել խնդիրը, աշակերտների պարագայում նման խնդիր չկա:

Խնդիրներ ունեցող երեխաները չեն հաճախում մանկապարտեզ, քանի որ ծնողների մեծ մասը **չեն ցանկանում** իրենց երեխային հանել տնից:

Ամենավատն այն է, որ ծնողներն իրենց երեխաներին համարում են **թերի** ու չեն ցանկանում նրան դուրս հանել, որի գլխավոր պատճառը հասարակության արձագանքն է:

Խնդիրներ ունեցող երեխաների ծնողները չեն կարողանում հաղթահարել **կաշկանդվածությունը**:

Ծնողներ կան, ովքեր **չեն ընդունում** իրենց երեխաների խնդիրները, կամ գուցե այդքան էլ լուրջ չեն վերաբերվում այդ խնդիրներին:

Ծնողների մոտ էլ **կարծրատիպեր** կան, իրենք էլ պիտի հասկանան ինչպես շփվել երեխաների հետ:

Ծնողներ կան, որ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխային համարում են **հիվանդ**, և հաճախ ընդդիմանում է, որ իր երեխան հիվանդ չէ, բայց ընդգրկված է ներռական դասարաններում:

Ներառական երեխայի ծնողն է **մեկուսացնում** երեխային:

Ծնողներից ոմանք կարծում են, որ **ամոթ** է, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական դասարաններում, այստեղ խնդիր ունենք, երբ ծնողն առաջնահերթություն է տալիս հասարակության կարծիքին, քան թե իր երեխայի առողջությանը:

Ծնողը վախենում է **հասարակական կարծիքից**, երբ իրենց երեխան տարբերվում է ընդհանուր մասսայից:

Պետք է սկսել նրանից, որ ծնողները այլ երեխաներին «**հիվանդ**» երեխա չանվանեն:

«Սովորական» երխաների ծնողներից մի մասը կողմ է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները նրանց երեխաների հետ միասին ուսում ստանան, մի մասն էլ դեմ է: Պետք է փոխել **մտածելակերպը**:

Տեղաշարժման խնդիր ունեցող երեխաներին նույնիսկ իրենց դասարանցիները մեծ սիրով օգնում էին, բայց այդ երեխաների ծնողները վատ էին **վերաբերվում** դրան:

Ներառականությունը սկսվում է տանը, շարունակվում դպրոցում և արտահայտվում **հասարակության** մեջ:

Շատերը մտածում են, որ եթե երեխես դուրս գա, հարևանս կտեսնի, մյուսը **կտեսնի**:

Ես շատ ափսոսում եմ, որ իմ երեխային շուտ չեմ տարել դպրոց, **մտածել** եմ՝ չի կարող սովորել:

Ես էլ կարծում եմ, որ մենք բոլորս էլ ժամանակի ընթացքում պիտի սովորենք այս բալիկներին, **հանդուրժենք, օգնենք**:

Ես սկզբում **ամաչում** էի իմ երեխայի խնդրի համար, հետո հասկացա, որ պետք չէ թաքցնել:

Հիմնականում մեր շրջապատում «**ուրիշ**» երեխաներին անվանում են հիվանդ:

Մեր ազգային մենթալիտետը թույլ չի տալիս մարդկանց այլ կերպ **վերաբերել** ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Հայ հասարակությունը ԿԱՊԿՈՒ երեխային **ընդունող** բացառիկ հասարակություններից է:

Մենք պետք է ունենանք պատրաստ **հասարակություն** ու ԿԱՊԿՈՒ երեխային օգնելու պատրաստակամ հասարակություն:

Գյուղերի դպրոցներում նման երեխաներ հիմնականում չկան, հնարավոր է վախենում են, որ մյուսները **ծաղրեն, ճնշեն:**

Ընդհանուր առմամբ, այդ երեխաներին **չեն ընդունում, չեն հանդուրժում**, ճնշում են շատ:

Ես հինգ երեխա ունեմ, չորսը խնդիր չունեն, այս մեկը ունի, և ես չեմ ուզում իմ բալիկին **մեկուսացնել**, անգամ եթե պետք է մատով ցույց տան, թող ցույց տան, ես ուզում եմ ինքը սովորական դպրոց գնա:

Մեր երկրի համար դեռ **շուտ** է համընդհանուր ներառականությանը անցնելու համար:

Երեխաների ինտեգրումը տարիների ընթացքում կփոխի մարդկանց **մտածելակերպը**:

Ներառական կրթությունը միայն տեսանելի խնդիրներով երեխաների համար չի:

Ամբողջ **խնդիրը** առաջանում է, երբ երեխան դուրս է գալիս դպրոցից:

Չի կարելի **տարբեր կատեգորիաների** երեխաներին նույն կերպ վերաբերվել:

Որտեղ նոր են սկսում այս գործընթացը, **դիմադրության** են հանդիպում:

Համընդհանուր ներառական կրթությունից տուժելու են **խնդիրներ չունեցող** երեխաները:

ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոցներ բերելը դրական ազդեցություն է թողնում խնդիրներ չունեցող երեխաների վրա, քանի որ երբ խնդիր չունեցող երեխան տեսնում է տեսողական խնդիր ունեցող երեխային սկսում է **գնահատել** իր՝ տեսնելու հնարավորությունը:

Երեխաներին պետք է սովորեցնել, որ նրանք պետք է ԿԱՊԿՈՒ երեխաներին վերաբերվեն որպես **յուրայինի**:

Սա այն դեպքն է, որ փորձն էլ է կարևոր, **ժամանակի** ընթացքում կսովորեն բոլորը:

Գալիք սերունդները ավելի **գիտակից** են, գուցե իրենց ժամանակ մտածելակերպը փոխվի:

Ժամանակին **կանանց** իրավունքներն էլ են խնդիրներ եղել, հիմա էլ ներառական կրթության խնդիրն է, **ժամանակի** ընթացքում կփոխվի:

Ներառականներից շատերը չէին գնում ճաշարան, որովհետև մյուսներն ասում էին. «Տես, ներառական ա, գնաց հացի»:

Դիաբետով հիվանդ երեխային պետք է **չթաքցնել**: Պետք է բոլորը իմանան, որ այդ երեխան այդպիսի խնդիր ունի:

Իմ կարծիքով մտավոր և հաշմանդումություն ունեցող երեխաները պետք է **առանձին** լինեն:

ԿԱՊԿՈՒ երեխաներին **պիտակավորել** չի կարելի, ընդհանրապես չի կարելի. դա ամենամեծ սխալն է:

Կան **թերզարգացած** երեխաներ, որոնք միայնակ կարող են ամբողջ հանդես անցկացնել, իսկ նույն գերազանցիկը՝ ոչ մի բան էլ չի կարող անել: Յուրաքանչյուր դեպք անհատական է:

Միևնույն է, ԿԱՊԿՈՒ երեխաների համար կգա մի պահ, որ իրենք կհասկանան իրենց խնդիրների **անհամատեղելիությունը** սովորական երեխաների հետ:

Առաջին հերթին **մտածելակերպի** փոփոխություն է պետք: Մասնագետները պետք է պատրաստ լինեն:

Երիտասարդներն արդեն իսկ ընդունում են, որ ներառականը շատ ճիշտ է, ինչը չի կարելի ասել խորհրդային սերնդի մասին:

Մեր դպրոցում հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխա կար, բայց **չէին թողնում** տանից դուրս գա, նույնիսկ քրոջ հարսանիքին չէր գնացել:

Վերջին տարիներին **իրավիճակը փոխվել** է: Կային երեխաներ, որոնք տարիներով դուրս չէին եկել, իսկ հիմա հանգիստ շփվում են մնացածի հետ:

Մենք լրիվ **դրական** ենք վերաբերվում հատուկ երեխաներին, հանգիստ շփվում ենք, օգնում ենք:

Տարիների ընթացքում տեսողական խնդիրներին սկսեցին **նորմալ** նայել, ու հիմա ակնոց կրելը ամոթ բան չէ:

Աստված չանի բոլոր դպրոցները ներառական սարքեն, չեմ պատկերացնում ի՞նչ կլինի:

Քսան-երեսուն տարի առաջ տարանջատում չկար ԿԱՊԿՈՒ ու սովորական երեխաների միջև, ու դա ճիշտ էր: Հիմա համընդհանուր ներառականություն ապահովելու համար մենք տարանջատում ենք, որը տարբերակված մոտեցման կարող է բերել, որի հետ ես համաձայն չեմ:

Երևանում ԿԱՊԿՈՒ երեխաներն ավելի շատ են բախվում խնդիրների քան մարզերում:

Անհրաժեշտ է այնպիսի համակարգ, որի դեպքում առաջին հերթին ծնողը չնեղվի իր երեխային ներառական համակարգում ընդգրկելուց:

Ծնողական **ժողովների** ընթացքում պետք է գոնե մի քանի րոպեով անդրադառնալ ներառականության հարցին:

Պայքարող ծնողը մեծ աջակցություն է երեխայի համար: Պետք է **սեմինարներ**, ժողովներ անցկացնել հենց ծնողների հետ:

Ստեղծել մի խումբ, ով կարողանա ծնողներին հավաքի ու **իրազեկի** և՛ ծախսերի մասին, և՛ հասանելիք օգնությունների մասին:

Աջակցության կենտրոնը պետք աշխատի ծնողների **գիտակցական** մակարդակը բարձրացնի:

Ֆինանսական հաշտարարի մասին օրը հազար **գովազդ** են հեռուստատեսությունները տալիս, ներառական կրթության դեպքում նման բան չկա, բայց շատ պետք է:

Սոցիալական հոլվակները, որոնք մարդկանց կսովորեցնեն ճիշտ վերաբերվել ԿԱՊԿՈՒ երեխաներին, օրինակ՝ սերիալի էպիզոդներից մեկում ցույց տալ հաշմանդմ երեխաներին ինչպես է պետք ճիշտ վերաբերել:

Ֆիլմեր նայում ենք, որը փոխում է նույնիսկ տարիքով մարդու մեջ ինչ-որ բաներ, սա շատ լավ միջոց է հասարակությանը բավարար **ինֆորմացիա** տալու համար:

Համայնքում տեղական «**լիդերների**» ներգրավածությունը ներառական կրթության ու դրա ներդրման մեջ, կարող է շատ դրական հետևանքներ ունենան:

ԶԼՄ-ները պետք է օգտագործվեն, որպեսզի հասարակությունը աստիճանաբար պատրաստ լինի նրան, որ ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց «մի մասնիկն են»:

Եթե ամբողջ հասարակությունը **իրազեկվի** ու բոլորի վերաբերմունքը փոխվի, դա մեծ փոփոխությունների կբերի: Սա իրոք ամենկարևոր քայլերից համընդհանուր ներառականությանը անցնելու համար: Ես հավատում եմ, որ հանրության վերաբերմունքը կարելի է արմատապես փոխել:

Խնդիրներ չունեցող երեխաները կարող են ընդօրինակել ԿԱՊԿՈՒ երեխայի շարժումները, որը հետագայում իրենց համար խնդիրներ կառաջացնի:

Մենք հաստատ կհասնենք համընդհանուր ներառմանը, բայց պետք է առանձին ուշադրություն դարձնենք հատկապես ծանր երեխաներին:

Բոլորս էլ պետք է ավելի շատ հմտություններ և մակարդակ ունենանք, որ կարողանանք շփվել այս հատուկ երեխաների հետ:

Ը.3. ԴԱՍՂԵԿ, ՀՈԳԵԲԱՆ, ԴԱՍԱՐԱՆ

Երեխաների ընտանեկան պայմաններին, յուրահատկություններին պետք է դասղեկը տեղյակ լինի: Իսկ դասավանդող **ուսուցիչը** պարտադիր չէ պարբերաբար այցելի իր բոլոր աշակերտների տներ, նա կարող է դասղեկից հարցնել:

Տնօրենն ինձ արգելել է, որ երեխային տանեմ այլ դպրոց, ասել է, որ մասնագետներ ունենալու են:

Երբ համադպրոցական ծնողական ժողովներին դպրոցի տնօրենը կամ ուսմասվարն է զեկուցում ներառականության վերաբերյալ, ծնողները մտածում են, որ **տնօրենը** ինչ-որ շահ ունի սրա հետ կապված: Իսկ երբ համապատասխան մասնագետն է գալիս զեկույցով, ապա ծնողները ավելի են վստահում:

Տնօրենը պետք է իրեն պատասխանատու զգա նույնիսկ շենքային պայմաններ ապահովելու հարցում, չասի՝ հեռու գյուղ է, ո՞վ է գալու ստուգի:

Վերահսկողությունը կարող է լինի նաև դպրոցի **տնօրենի** կողմից:

Հիմա մարզպետարանում ցուցակ կա թափուր հաստիքների, բայց մագիստրատուրայի ուսանողներին **տնօրենը** չի ընդունում, ասում է՝ կրթություն չունես:

Եթե նախկինում համալսարանից տեղեկանք էիր տանում, որ սովորում ես, հիմա դա չի անցնում, որովհետև բոլոր լիազորությունները դպրոցի **տնօրենինն** են: Իր քմահաճույքով աշխատող է ընդունում:

Ցանկացած դպրոց երկու-երեք տարին մեկ անցնում է աուդիտ: Դպրոցում բոլոր կառույցները, այդ թվում խորհուրդը և ծնողները, այնքան ակտիվ են, որ ամբողջությամբ վերահսկում են **ֆինանսական** շարժը: Չգիտեմ նախկինում ոնց է, բայց հիմա այդ մասով ամեն ինչ կարգին է:

Եթե նույնիսկ երեխաները փորձում են առանձնացնել ԿԱՊԿՈՒ երեխաներին, **դասղեկը** պետք է փորձի կանխել դա, ինքը երեխային հրավիրի մասնակցել ընդհանուր խմբի միջոցառումներին:

Դպրոցների կառավարման խորհուրդները այս գործընթացին ներգրավված չեն հիմնականում:

Ը.4. ԴՊՐՈՑ (ՀԱՄԱՅՆՔ)

Առաջնային է, որ մասնագետներն աշխատեն **ծնողների** հետ, նրանց տեղեկացնեն, որ ներառականությունը խուսափելի երևույթ չէ:

Առաջին հերթին պետք է կրթել **ծնողին**:

Հարցը երկկողմանի է, և՛ **ծնողը**, և՛ մասնագետը բավարար իրազեկվածություն պիտի ունենան:

Ծնողը հոգեբանորեն պատրաստ չէ ընդունել խնդիրը, աշակերտների պարագայում նման խնդիր չկա:

Անցած ամիս ունեցել ենք դեպք, որ շատ բացակաների պատճառով պատասխանատվության գործընթաց ենք սկսել **ծնողների** նկատմամբ:

Ծանր խնդրով երեխաներին գոնե մի քանի ժամ պահելով՝ **ծնողին** օգնում ենք:

Որպեսզի հասարակությունը տարբերակված վերաբերմունք չցուցաբերի երեխային, **ծնողները** թաքցնում են նրա ԿԱՊԿՈՒ լինելու փաստը:

Համայնքներում դժվար է նման թեմայով **ծնողական** ժողով կազմակերպել:

Եթե **ծնողները** իմանան ներառականության մասին ժողով է լինելու, չեն գա, կասեն՝ մեկ է իմ երեխան խնդիր չունի:

Շատ դեպքերում **ծնողներն** են դեմ լինում, հենց բառից արդեն՝ ներառական կրթություն, վախենում են:

Ես Դալարիկում եմ աշխատում արդեն մի քանի տարի, հիմա **ծնողների** հետ խնդիրներ չունենք, բոլորն էլ իրազեկված են այս խնդրից:

Առաջին հերթին բողոքում էին ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների **ծնողները**, մեր դպրոցում կար մի հիպերակտիվ երեխա, սոցիալական հոլովակ դիտեցինք ծնողների հետ, արցունքներն աչքերին հեռացան:

Ծնողն ասում է՝ ինչի պիտի էդ հիվանդ երեխեն իմ երեխու հետ սովորի:

Շատ ենք աշխատում որոշ **ծնողների** հետ, բայց նրանք չեն համաձայնվում, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական համակարգում:

Պետք է **ծնողին** ասել, որ թող ձեր երեխան մի բան էլ պակաս իմանա քիմիայից, բայց թող մարդկային հատկանիշներ ունենա:

Անհրաժեշտ է այնպիսի համակարգ, որի դեպքում առաջին հերթին **ծնողը** չնեղվի իր երեխային ներառական համակարգում ընդգրկելուց:

Ծնողական ժողովների ընթացքում պետք է գոնե մի քանի րոպեով անդրադառնալ ներառականության հարցին:

Ծնողներ կան, որ ծանր խնդիրներ ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաներին տնից դուս չեն թողնում ու ամաչում են նրանց տանել հասարակության մեջ: Այդպիսի խնդիրներ ունեցող երեխաները մեկուսացված են արտաքին աշխարհից:

Ծնողներից է շատ բան կախված: Ծնողը մտնում է դասարան և իր առողջ երեխային ասում է, որ նա չնմանվի հիվանդ երեխային, չշփվի նրանց հետ:

Հաճախ լինում են դեպքեր, երբ **ծնողը** չի ուզում ընդունի, որ երեխան խնդիր ունի: Այդ դեպքերում անհնար է իր հետ լեզու գտնել:

Ծնող կա, որ եթե հատուկ դպրոց չկա մեր մարզում, տանում է Երևան:

Շատ կարևոր է այստեղ հասարակության պատրաստակամությունը. ոչ մի իրազեկման գործընթաց չի տարվում: Այդ աշխատանքը հատկապես կարևոր է սկսել **ծնողից**:

Ծնողներին մեծ մասը չեն ցանկանում խնդիրներ ունեցող երեխաներին տանել դպրոց:

Ծողները պետք է շատ ժամանակ հատկացնեն ԿԱՊԿՈՒ երեխաներին ու ծնողական ուշադրությունը, կատարած աշխատանքը կարող է նույնիսկ բուժել իր երեխային:

Ծնողները գոհ էին, որ երեխաները սնունդ էին ստանում: Ուտելու ժամանակ երեխաները հաճույքով շփվում էին միմյանց հետ, հիմա անհավես են գնում դասի:

Հիմնականում ներառականների համար առանձին սնունդ ապահովելը առանձնապես նպատակային չէ: Ամեն դեպքում **ծնողները** այդ մասով ապահովում են իրենց երեխաներին սննդով:

Շատ կազմակերպություններ կան, որոնց ղեկավարները հաշմանդամ երեխաների **ծնողներ** են:

Անընդհատ ստուգելով երեխայի այցելությունը, աշխատելով երեխայի **ծնողի** հետ՝ կարողացել ենք արդյունք ապահովել կոնկրետ երեխայի դեպքում:

Ծնողի մասնակցությունը դասապրոցեսին միանշանակ կխանգարի, ոչ թե կօգնի:

Ես, որպես ծնող, անհանգստանում եմ իմ երեխայի համար, ինքը չի կարողանա մասնակցել միասնական քնությանը, իրեն վատ կզգա, բայց երեխաս ուզում է:

Պետք է սկսել հիվանդանոցներից, մանկաբույժներից: **Ծնողները** պետք է ի սկզբանե ճիշտ հասկանան երեխայի խնդիրները:

Պետք է արդյոք խրախուսել **ծնողների** մասնակցությունը կրթությոանը, թե ոչ. միանշանակ ասել չենք կարող:

Ծնողը որքան էլ սրտացավ լինի, մասնագետ չի ու կարող է սխալ լուծումներ տա:

Ծնողը երեխային միանշանակ կշեղի: Կարող է երբեմն ներկա լինի, բայց մշտական՝ ոչ:

Ծնողները կարող են կազմել գրաֆիկ և յուրաքանչյուր օր մեկնումեկը ներկա լինի:

Ծնողը պետք է իմանա, թե ինչ ձևով են աշխատում իր երեխայի հետ:

Եթե մանկավարժն ու մասնագետը պրոֆեսիոնալ են, **ծնողը** կխանգարի: Բայց որ պրոֆեսիոնալ մանկավարժին ծնողը կօգնի:

Ես, որպես **ծնող**, ամեն ինչ կանեմ, որ մասնակցեմ իմ երեխայի կրթության պրոցեսին, դպրոցը պետք է մտածի՝ ինչպես իմ մասնակցությունը օգտակար դարձնել:

Ծնողը, մասնագետին վստահելուց բացի, այլ տարբերակ չունի:

Պետք է մեխանիզմեր գտնել **ծնողների** հետ ճիշտ աշխատելու, հակառակ դեպքում ամբողջ աշխատանքը կարող է անիմաստ դառնա:

Ծնողները կան, ովքեր պարզապես չեն ցանկանում, որ իր երեխան մասնակցի հանրակրթությանը:

Ծնողների համար շատ դեպքերում կարևորը դպրոցը ավարտելն է:

Երեխան խոսքի խնդիր ունի, ինչքան էլ բացատրում ենք ծնողին, որ երեխան ներառական համակարգում պետք է ընդգրկվի, **ծնողի** չի ցանկանում: Անհրաժեշտ է, որ ծնողների հետ և՛ հոգեբաններ աշխատեն, և՛ սեմինարներ անցկացնեն:

Խնդիրներ ունեցող երեխաները չեն հաճախում մանկապարտեզ, քանի որ **ծնողների** մեծ մասը չեն ցանկանում իրենց երեխային հանել տնից:

Ամենավատն այն է, որ **ծնողներն** իրենց երեխաներին համարում են թերի ու չեն ցանկանում նրան դուրս հանել, որի գլխավոր պատճառը հասարակության արձագանքն է:

Խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** չեն կարողանում հաղթահարել կաշկանդվածությունը:

Ծնողներ կան, ովքեր չեն ընդունում իրենց երեխաների խնդիրները, կամ գուցե այդքան էլ լուրջ չեն վերաբերվում այդ խնդիրներին:

Խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** պետք է տանն էլ ստեղծեն այնպիսի միջավայր, որ երեխան իրեն ազատ զգա ու համարի, որ ինքը հասարակության լիարժեք անդամ է:

Ծնողների մոտ էլ կարծրատիպեր կան, իրենք էլ պիտի հասկանան ինչպես շփվել երեխաների հետ:

Ծնողների հետ աշխատանքը դժվար է, չեն ուզում, որ հանկարծ գյուղում չասեն երեխան խնդիր ունի:

Ծնողներ կան, որ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխային համարում են հիվանդ, և հաճախ ընդդիմանում է, որ իր երեխան հիվանդ չէ, բայց ընդգրկված է ներռական դասարաններում:

Ծնողները իրենք են փնտրում լավ մասնագետների և նման դպրոցներ:

Երեխաները ավելի արագ են փոփոխվում, քան նրանց **ծնողները**:

Կան մեթոդներ, որոնք կօգնեն ոչ միայն ներառել երեխաներին, այլև զարգացնել: **Ծնողը** չի տիրապետում այդ մեթոդներին, իսկ համապատասխան մասնագետները ծնողներին էլ կսովորեցնեն:

Ներառական երեխայի **ծնողն** է մեկուսացնում երեխային:

Ներառականությունը ենթադրում է **ծնողի** հետ աշխատանքը:

Ծնողներից ոմանք կարծում են, որ ամոթ է, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական դասարաններում, այստեղ խնդիր ունենք, երբ ծնողն առաջնահերթություն է տալիս հասարակության կարծիքին, քան թե իր երեխայի առողջությանը:

Երբ ընտանիքը չի բարձրաձայնում խնդրի մասին, գյուղապետարանը կարող է տրամադրել, որ սկզբում աշխատի **ծնողների**, հետո երեխաների հետ:

Ծնող-ուսուցիչ հարաբերությունները պետք է ճիշտ ուղղու վրա դնել, օրինակ տնայցեր կատարել, հասկանալ ընտանեկան իրավիճակը, բացատրել մանկավարժ-ծնող համակործակցության անհրաժեշտությունը:

Ծնողը պետք է հետևողական լինի իր երեխայի նկատմամբ, հատկապես եթե այդ երեխան կրթության առանձնահատուկ կարիքներ ունի:

Սկզբից պետք է փոխել **ծնողների** մտածելակերպը, հետո նոր համակարգը:

Ծնողը վախենում է հասարակական կարծիքից, երբ իրենց երեխան տարբերվում է ընդհանուր մասսայից:

Եթե **ծնողը** հնարավորություն ունենա, ապա ինքը ամեն ինչի պատրաստ է իր երեխայի համար:

Կան **ծնողներ**, որոնք իրենք առաջարկում են իրենց երեխաներին ընդգրկել ներառական դասարաններում, որպեսզի իրենց երեխաներն էլ ստանան ԿԱՊԿԻ երեխաներին տրվող օրական սնունդից:

Ծնողների տեղեկացվածությունը շատ վատ մակարդակի է, անգամ շատերը աուտիզմի մասին չէին լսել:

Ներառական դասարանում պետք է անպայման տեսանկարահանող սարքեր տեղադրված լինեն, որոնց շնորհիվ **ծնողները** կարող են հետևել իրենց երեխայի առօրյային:

Ներկայիս սերունդը շատ լավն է, **բայց** եթե ծնողները դեռ կարծրատիպերով են, դա յուրաքանչյուր օր ազդում է երեխաների վարքի վրա:

Ծնողների հետ պետք է առանձին աշխատել, սոցիալական հոլովակներ տարածել, որպեսզի ծնոնղները կարողանան ճիշտ ընկալել ներառական կրթության դերը:

Միայն այդ երեխայի դասարանցիների և **ծնողի** ուսերին ամբողջ բեռը թողնելը սխալ է, պետք է ամբողջ հասարակությանը պատրաստել:

Երեխաներ կան, որոնք հատուկ վերականգնողական ժամեր ունեն, այդ երեխաներին ի՞նչ պետք է անենք, **ծնողներն** անգամ այս երեխաներին չեն կարող օգնել:

Պետք է սկսել նրանից, որ **ծնողները** այլ երեխաներին «հիվանդ» երեխա չանվանեն:

Պայքարող **ծնողը** մեծ աջակցություն է երեխայի համար: Պետք է սեմինարներ, ժողովներ անցկացնել հենց ծնողների հետ:

Շատ տեղեր կան, որ **ծնողները** ստիպված են գնում գրենական պիտույքներ և այլ անհրաժեշտ պարագաներ իրենց երեխաների համար, իսկ դպրոցի օգնությունը ավելի շատ ձևական բնույթ է կրում:

Երեխաներ կան, որոնց ծնողները երեխային դուրս չեն բերում, որովհետև իրենք էլ չեն հարմարվում այդ իրավիճակի հետ:

Ստեղծել մի խումբ, ով կարողանա **ծնողներին** հավաքի ու իրազեկի և՛ ծախսերի մասին, և՛ հասանելիք օգնությունների մասին:

Հենաշարժողական խնդիրներով երեխաներին **ծնողները** նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց տանել-բերելու խնդիր կա:

Պետք է կազմակերպություններ լինեն, որոնք աշխատեն ծնողի հետ՝ մինչև երեխայի դպրոցական տարիքի հասնելը:

Եթե որակյալ կրթություն լինի խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** նույնիսկ առանց որևէ օգնություն պահանջելու կտանեն դպրոց:

Պետք է երեխայի բուժումը համատեղել **ծնողի** հետ աշխատանքի հետ:

«Սովորական» երխաների **ծնողներից** մի մասը կողմ է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները նրանց երեխաների հետ միասին ուսում ստանան, մի մասն էլ դեմ է: Պետք է փոխել մտածելակերպը:

Աջակցության կենտրոնը պետք աշխատի **ծնողների** գիտակցական մակարդակը բարձրացնի:

Ծնողներին պետք է բացատրել, որ ներառական կրթությունը «բոբո ձյաձյա» չէ, և սա շաատ ավելի անհրաժեշտ է իր երեխային: Պետք է ամուր հիմքի վրա դնել ծնող-դասղեկ-սոց մանկավարժ կապը:

Ամեն ինչ գալիս է դրան, որ պետք է **ծնողների** հետ էլ լուրջ աշխատել:

Առաջին հերթին պետք է բոլորի **ծնողներն** իրենց երեխաներին ճիշտ դաստիարակեն, որ ավելի հանդուրժող լինեն բոլորի հանդեպ:

Ինֆորմացվածության խնդիրը հսկայական է, մարդիկ՝ **ծնողները**, նույնիսկ գաղափար չունեն, թե իրենց՝ խնդիրներ ունեցող երեխաների հետ ինչպես պետք է վարվեն. տանե՞ն մանկապարտեզ, թե՞ չտանեն:

Ես նյարդայնանում եմ, երբ **ծնողը** կոմպլեքսավորվում է իր երեխայի հետ միջավայրում գտնվելուց:

Առաջին հերթին պետությունը, համայնքը պետք է նեցուկ կանգնի այս երեխաներին և նրանց **ծնողներին**:

Ծնող կա՝ վիրավորվում է:

ԾՆող էլ կա չի պատկերացնում կրթության արժեքը. խնդրում ենք ուղարկեք երեխային դպրոց, հետո երեխան շաբաթներով բացակայում է:

Ծնողներ կան, որոնք տեղյակ չեն օրենսդրությունից ու առկա հնարավորություններից: Նրանց իրազեկելու խնդիր կա, որը կարող է իրականացվել ՀԿ-ների միջոցով:

Ծնողները շատ դեպքերում այլ առաջնային խնդրներ էլ ունեն և չեն հասնցում երեխայի խնդրներին:

Տեղաշարժման խնդիր ունեցող երեխաներին նույնիսկ իրենց դասարանցիները մեծ սիրով օգնում էին, բայց այդ երեխաների **ծնողները** վատ էին վերաբերվում դրան:

Ծնողներ կան, որ տեղյակ չեն, որ հիմա դպրոցների ընդունելությունը օնլայն է իրականացվում: Հիմա կարող եք ձեր ԿԱՊԿՈՒ երեխային այդ ընդհանուր կարգով գրանցել:

Կարող է այնպես լինի, որ երեխան կամ **ծնողը** կարևորի ոչ թե կրթությունը, այլ եկեղեցու բակում ողորմություն հավաքելը:

Ծնողների մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազմմանը պետք է խրախուսվի, որովհետև ծնողն է, որ իր երեխային ամենալավն է ճանաչում:

Ծնողը անպայման պետք է մասնակից լինի ողջ գործընթացին՝ տնից մինչև դպրոց:

Որպես **ծնող** ես միշտ հետևում եմ, գնում եմ ներառականի դասերին, հետևում եմ, տանը աշխատում եմ:

Սոցիալական հատուկ աշխատողներ պետք է լինեն, որ ծնողներին էլ օգնեն, ծնողներին առավել շատ է հարկավոր օգնություն...:

Ծնողների անիրազեկվածությունը նաև գալիս է նրանց ոչ պատշաճ վերաբերմունքից: Օրինակ, ծնողների մեծ մասը ինչ-որ բանի տակ ստորագրելուց առաջ նույնիսկ չի էլ կարդում, թե ինչի կտակ են ստորագրում:

Պետք է հատուկ ժամեր լինեն նաև **ծնողների** համար:

Մեր փորձը ցույց է տալիս, որ վկայագրումը հիմնականում տեղի է ունենում երեխային որպես սովորական ոչ ԿԱՊԿՈՒ հանրակրթական դպրոց ընդունելուց հետո, և ի հայտ են գալիս նրա խնդիրները: **Ծնողները** սկզբում չեն համակերպվում այդ մտքի հետ, բայց հետո համոզվում են, որ երեխան հատուկ վերաբերմունքի կարիք ունի ու գրանցում են նրան:

Ծնողին պրոցեսի մեջ ներգրավելը, իր հետ զուգահեռ աշխատելը միայն օգուտ կտա:

ԿԱՊԿՈՒ երեխային գիշերօթիկ դպրոցից հիմա հետ են բերել իր **ընտանիք**, որտեղ շատ ավելի վատ պայմաններ են: Այս դեպքում ներառականությունը վնաս է բերում:

Ընտանիքներ կան, որոնք պատրաստ են փոխել իրենց բնակության վայրը՝ երեխայի շահի համար:

Ընտանեկան միջավայրը շատ կարևոր է ԿԱՊԿՈՒ երեխաների համար ու պետք է ԿԱՊԿՈՒ երեխաները մեծանան ամուր ընտանիքում:

Մի **ընտանիքում** առանձին սենյակում փակել էին խնդիրներ ունեցող երեխային ու մինչև 42 տարեկանը՝ մահը, պահել նրան: Ճաշը տանում, դնում էին դռան առաջ ու գնում:

Երեխաների մասին տեղեկություններ ստանում էինք **պոլիկլինիկաներից**: Պետք է լինեն սոցաշխատողներ, որոնք համագործակցեն ընտանիքների հետ ու իրենցից իմանանք, որ ընտանիքում կա ԿԱՊԿՈՒ երեխա:

Իմ երեխան ունի խնդիրներ, բայց ես ամեն ինչ անում եմ, որ իմ բալիկը գնա դպրոց, սովորի, գոնե իրա անուն, ազգանունը գրի:

Խոսքի խնդիր ունի **իմ երեխան**, ես նպատակ չունեմ, որ նա դառնա գիտնական: Ցանկանում եմ ընդամենը, որ հանգիստ շփվի հասակակիցների հետ:

Ամենաշատը պետք է խոսել **ծնողների** հետ, տեղեկացնել նրանց:

Կան դպրոցներ, որտեղ աշակերտական ու **ծնողական** խորհուրդներն ունեն ֆորմալ բնույթ ու իրականում ոչինչ չեն անում:

Դպրոցում **ծնողխորհուրդներ** կան, բայց դրանց մեջ չի ներառվում խնդիր ունեցող երեխայի ծնողը:

Սովորական հանրակրթական դպրոցներում **ծնողկոմիտեները** պետք է ավելի ակտիվ լինեն ու իրենց ներդրումը ունենան ԿԱՊԿՈՒ երեխաներին դասապրոցեսին ընդգրկելու համար:

Համայնքապետարաններում, մարզպետարաններում մարդիկ գաղափար չունեն, թե «ներառական»-ը ինչ է: Ոչ մի խնդիր գրեթե առաջխաղացում չունի, քանի որ որոշում կայացնողները բացարձակ չեն տիրապետում բնագավառին:

Երբ ընտանիքը չի բարձրաձայնում խնդրի մասին, գյուղապետարանը կարող է տրամադրել, որ սկզբում **աշխատի** ծնողների, հետո երեխաների հետ:

Ը.5. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ներառականի մասին հենց առաջին ասոցացիան կրթության հատուկ պայմաններն են՝ կախված կոնկրետ երեխայի առանձնահատկություններից:

Մարդիկ խուսափում են ներառական կրթությունից, քանի որ այս բառը խուճապ է առաջացնում, պիտակավորում է երեխային, քանի որ ուսուցիչներն էլ են երեխային ասում՝ ներառականի երեխա:

Երեխաները դեռ պատրաստ չեն իրենց շրջապատ ընդունել ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Աշակերտները կարծում են, որ սխալ է նույն դասարանում բոլորի ներկայությունը, օրինակ ԿԱՊԿՈՒ երեխաները աղմկում են, մյուսները կրկնում են դա:

Խնդիրներ ունեցող երեխային սովորաբար երեխաներն ավելի լավ են ընդունում, քան ծնողներն ու ուսուցիչները:

Գալիս են այդ երեխաներին հատուկ առանձնացնում, թե բա դու, դու և դու, գնացեք ուտելու, արդեն իսկ այդ երեխաները առանձնանում են:

Ցանկալի է, որ առանձին սեմինարներ լինեն նաև աշակերտների հետ, որ իրենք էլ իմանան՝ իրենց ինչպես պահեն:

Սոցաշխատողի և դպրոցի ներառական մասնագետների կողմից արվել է ամեն ինչ, որ տվյալ երեխան այցելի դպրոց: Բայց նա չի ցանկանում, այլ միջոցներ չգիտեմ:

ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց ներկայությամբ շեղում են խնդիրներ չունեցող երեխաներին ու դասապրոցեսը խաթարվում է, քանի որ այդ պարագայում ուսուցիչը ավելի շատ ժամանակ է ծախսում ԿԱՊԿՈՒ երեխաների վրա:

Պետք է լուրջ տարբերակում մտցնել ԿԱՊԿՈՒ երեխաների միջև ու կախված խնդրից, նրան ներառել կամ չներառել սովորական հանրակրթական դպրոցներում: Օրինակ, **հոգեկան** խնդիր ունեցող երեխային պետք է համապատասխան հաստատություն տանել, որովհետև վտանգավոր է:

Համընդհանուր ներառականությունը սխալ է: Մեծամասնությանը կարելի ա տանել հանրակրթական դպրոց, բայց, օրինակ, **հոգեկան** խնդիր ունեցողին չի կարելի մնացածի հետ նույն դասարանում նստացնել:

Շատ դպրոցներ կան, որտեղ ԿԱՊԿՈՒ երեխաներ են գրանցված, բայց «սովորական» երեխաների բողոքների պատճառով չեն հաճախում դպրոց: Երեխաների ծնողները պատճառաբանում են, որ ԿԱՊԿՈՒ խնդիր ունեցող երեխաները **խանգարում** են իրենց երեխաներին սովորել, ավելին՝ ԿԱՊԿՈՒ երեխաները հոգեբանորեն նաև ազդում են «նորմալ» երեխաների վրա:

Ուսուցիչները ներառականով երեխային զցում են դասարանի **մի անկյուն**, դրանով բնականաբար ոչ մի արդյունք էլ չի լինի:

Խնդիրներ չունեցող երեխայի հետ աշխատելու փոխարեն ուսուցիչը ստիպված է լինում աշխատել խնդիրներ ունեցող երեխայի հետ: Պետք է մի **դասարանում** մեկից ավել խնդիրներ ունեցող երեխա չլինի:

Պետք է դասարաններում լինեն աշակերտների **թվականակի պակասեցում**, որպեսզի ուսուցիչը ԿԱՊԿՈՒ երեխաներով էլ զբաղվելու ժամանակ ունենա:

Դասարանում 35 աշակերտ կա, **ուսուցիչը** ո՞նց պիտի աշխատի բոլորի հետ առանձին-առանձին:

Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին:

Սովորական դպրոցում ուսուցիչները այն ԿԱՊԿՈՒ երեխաներին, որոնք մեծ ակտիվություն են ցուցաբերում դասերին և **խանգարում** են դասապրոցեսը, հանում են դուրս, որպեսզի դասը չտուժի:

Ավելի լավ կլինի, որ բոլոր ԿԱՊԿՈՒ երեխաները **առանձին** սովորեն մի դասարանում:

Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը նորոգելուց հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև մասնագետների կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը **ընդհանուր դասարանում**, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն դասարանում:

Օրինակ, ես կարծում եմ, որ սովորական երեխաները կարող են խուլ ու համրերի լեզուն սովորել, ինչո՞ւ ոչ:

Եթե մեկ դասարանում սովորեն ոչ թե քսանհինգից-երեսուն երեխա, այլ ավելի քիչ, ասենք տասնհինգ, դա **նպաստող գործոն** կլինի ներառականների համար:

Պետք է դասարաններում **աշակերտների թվաքանակը** քիչ լինի:

Պետք է աստիճանաբար խուսափել ներառական երեխա **արտահայտությունից**, ուղղակի տալ մարդու անունը, ինչպես մնացած բոլորինը:

Երեխային ուղղակի պետք է ասել, որ դու կոնկրետ առարկայից թույլ ես ու քո հետ **աշխատում** ենք, որ **ծնողներիդ** գործը հեշտացնենք:

Օրինակ՝ իններորդ **դասարանում** էպիլեպսիկ երեխա էր նստել, երբ վատացել էր, կողքի երեխան լուրջ հոգեբանական խնդիրներ էր ունեցել:

Արդեն իսկ մեր **դասարաններում** երեխաների թիվը մեծ է, երբ ԿԱՊԿՈՒ էլ է ավելանում, շատ դժվար է դառնում աշխատել: Պետք է դասարանները կիսել:

Երբ երեխան ընդգրկվում է **առաջին դասարանից**, միանշանակ ավելի սահուն է անցնում նրա և շրջապատի միաձուլումը:

Որոշ չափով հասել ենք մի իրավիճակի, որ առաջին **դասարանում** ներառականով ընդգրկված երեխայի նկատմամբ երեխաները շատ **հանդուրժող** են:

Ես, լինելով նորմալ ինտելեկտի տեր աշակերտ, ինքս անգամ մեծ դժվարությամբ եմ հասկանում, օրինակ, իններորդ դասարանի մաթեմատիկայի դասագրքի մեջ գրվածները:

Անընդհատ խոսում ենք կրթությունից, բա՞ հանդեսները, էքսկուրսիաները... Դրանք ներառական **դասարանում** սովորող երեխայի համար ավելի կարևոր են, քան դասերը:

իմ աղջկա **դասարանը** առաջ լավն էր, բոլորը լավ էին սովորում, հիմա երբ իրար են խառնել, ամեն ինչ խճճվել է, օրինակ երեխայիս մազերը կտրել էր դասարանցին:

Ունենք 30 երեխա **դասարանում** ու մի ԿԱՊԿՈՒ երեխա . դա պլյուս 30 երեխա:

Հատուկ պայմանները պետք է լինեն ամեն խմբի համար, ամեն դասարանի համար, ամեն միջավայրի համար:

Հենաշարժողական խնդիր ունեցող երեխան եթե գա **դասարան**, և՛ մեզ համար, և՛ իր համար դժվար կլինի միանգամից ընդգրկվել ընդհանուր խմբում, նույնիսկ մեր դպրոցը, որ ներառական չէ, կան երեխաներ, որ դուրս են մնում, ի՞նչ կլինի եթե հաշմանդամ երեխա գա դասարան:

Դասարանի երեխաներն առաջին հերթին պատրաստակամ են օգնել իրենց դասարանի հենաշարժողական խնդիրներ ունեցող **դասընկերներին**:

Կամերաները կտրականապես չի կարելի **դասարաններում** տեղադրել:

Իմ երեխայի **դասարանում** տարրական դպրոցում կար խնդիրներ ունեցող երեխա, բայց ամբողջ դասարանը ընդունում էր նրան, ինչպես որ կար: Առաջինը նրան էին օգնում, հետո անցնում իրենց գործին:

Սեփական փորձ եմ ունեցել, որ մի **երեխան ազդում** է երեսուն երեխաների վրա:

Կան երեխաներ, որոնք սայլակի վրա են, բայց բոլորից էլ խելացի են, այս երեխաները պետք է սովորական **դասարաններում** սովորեն:

Կարելի է դպրոցում առանձին **դասարան** ունենալ, որտեղ երեխաները իրար նման կլինեն, վատ չեն զգա:

Հնարավոր է, որ ԿԱՊԿՈՒ աշակերտը հետ է գցում ընդհանուր **դասարանին** ուսման պլանից, բայց ես կարծում եմ, որ շատ կարևոր է այդպիսի աշակերտներին ինտեգրել ընդհանուր միջավայրում, ու հանուն էդ նպատակի կարելի է գնալ զոհողությունների:

Ես կարծում եմ, որ ԿԱՊԿՈՒ երեխային մնացածի հետ նույն **դասարանում** ներառելու կամ չներառելու խնդիրը պետք լուծել կախված հաշմանդամության աստիճանից՝ թեթև է, թե ծանր: Նրանց մեկուսացնելը սխալ են:

Ասում ենք, որ հատուկ երեխաները հասարակության անդամ են, բայց հենց **դասարանում** մեկուսացնելու ենք երեխաներին:

Մոռանում ենք, որ նույն **դասարանում** կան տաղանդավոր երեխաներ, որոնց քառասունհինգ րոպե գիտելիք է պետք: Միևնույն ժամանակ հատուկ երեխան էլ ուշադրության կարիք ունի:

Աշակերտ լինելով՝ ես դեմ եմ, որ մենք սովորենք հիվանդ աշակերտների հետ, հաստատ **դասարաններում** երեխաներ կլինեն, որ կնեղացնեն այդ բալիկներին:

Հատկապես դժվար է, երբ մի **դասարանում** մի քանի ԿԱՊԿՈՒ երեխաներ կան:

Եթե կա խնդիր ունեցող երեխա, դպրոցում տեղափոխում են **դասարանից** դասարան, այլ ոչ թե զբաղվում հետը:

Մեր դպրոցում կան ԿԱՊԿՈՒ երեխաներ: Մեր դասարանում չկան: Բայց ես լսել եմ, որ մյուս երեխաները շատ լավ են վերաբերում նման երեխաներին, օրինակ՝ մի քայլելու խնդիր ունեցող երեխայի, լսել եմ, որ **դասարանցիները** մեծ սիրով օգնում են տեղափոխվել մի տեղի մյուսը:

Ներառականության անցնելու համար պետք է բեռնաթափել **դասարանները**:

Կարելի է դասաժամը կիսել, մի կեսի ընթացքում ԿԱՊԿՈՒ երեխան **դասարանում** լինի, մյուս կեսի ընթացքում՝ առանձին:

Դասարանների ծանրաբեռնությունը մեծ խնդիր է:

Այսօրվա դպրոցներում չի ստեղծվում նորմալ **կրթական միջավայր**, օրինակ ջեռուցումը նորմալ չի ապահովվում, ի՞նչ ներառական կրթության խնդիրներից ենք խոսում:

Երեխայի ականջին մի ավելորդ շշուկ եթե լինի, էլ չի ուզի այդ **միջավայր** գնալ:

Իմ համար կարևորն այն է, որ իմ երեխան հարմարվի **միջավայրին**, որ մեծանա, չվախենա միջավայրից:

Ամենագլխավորը այն է, որ պետք է լինի համապատասխան **միջավայր** ու պայմանները համապատասխանեն ԿԱՊԿՈՒ երեխաներին, այլապես այս ներառական կրթության ներդրումը անիմաստ ու անօգուտ ծրագիր է դառնալու:

Տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին մի տեղում հավաքելը կարող է սխալ լինել:

Խոսքի խնդիր ունի իմ երեխան, ես նպատակ չունեմ, որ նա դառնա գիտնական: Ցանկանում եմ ընդամենը, որ հանգիստ **շփվի** հասակակիցների հետ:

Դպրոցներում պետք է ստեղծվի **կամավորական խմբեր,** որոնք մեծ հաճույքով կզբաղվեն խնդիրներ ունեցող երեխաների հետ ու կօգնեն նրանց ավելի արագ համակերպվել դպրոցի կյանքին:

Մեր դպրոցում աշակերտները, սովորելով ԿԱՊԿՈՒ երեխաների հետ շփվելով, **դիսկոմֆորտ** չեն զգում:

ԿԱՊԿՈՒ-ի դեպքում կաբինետային կրթությունը գործում է միայն զարգացած դպրոցներում:

Ներառականի մեջ ներառվածները միայն հենաշարժողական խնդիրներով երեխաները չեն, ունենք շատ երեխաներ, որոնք ո՛չ ներառականի տակ են մտնում, ո՛չ դպրոց տանելու են:

Պետք է կենտրոններ ստեղծենք միայն ծանր խնդրով երեխայի համար: Իսկ մյուս բոլոր երեխաները պետք է սովորական դպրոց գնան:

Եթե դու չես կարող մարդուն **պատշաճ** հրամցնել ներառական կրթությունը, ապա դրա ներդրումը կարող է վնասել ավելի, քան օգնել:

Ներառականով ընգրկված երեխաները պետք է **տարանջատվեն**. մտավոր հետամնացությամբ երեխա ունենք, որ խնդիրներ է առաջացնում մյուս երեխաների համար: Իսկ կան ներառականով՝ ֆիզիկական հաշմանդամությամբ երեխաներ, որոնք ոչինչով խնդիր չեն դասապրոցեսի համար:

Այսօր բոլոր երեխաներն ունեն **հոգատարության** կարիք, ոչ միայն այս՝ հատուկ երեխաները:

Հիմա դպրոցներում **մթնոլորտը** փոխվել է ու երեխաները պատրաստ են խնդիրներ ունեցող երեխաներին ընդունել ու օգնել:

Իմ երեխան դիաբետ ունի, տարա մանկապարտեզ, բայց դաստիարակները լավ չէին **վերաբերվում**, երեխան հիասթափվեց, հիմա էլ չի ուզում գնալ:

Սխալ է տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին **մի սենյակում** նստեցնել ու դասավանդել: Պետք է տեսակավորել:

Ներառական կրթության գլխավոր մասը , որը պետք է շեշտադրենք, այն երեխաների հետ աշխատանքն է, ովքեր կոպիտ վիրավորում են խնդիրներ ունեցող երեխաներին:

Դեպք ունենք, երբ երեխային **առանձին** պահել ենք կաբինետում, ոչ թե ընդհանուրի հետ: Դա սխալ է, բայց այլ տարբերակ չունեինք:

Շատ լավ է, որ մեր հետ սովորում էին խնդիրներ ունեցող երեխաները, քանի որ նրանց հետ էլ է **հետաքրքիր** շփվել:

Եթե բոլորը պետք է հավասար լինեն, սնունդը արդեն **անհավասարություն** է:

Հոգատարությունը, դրական վերաբերմունքը կարևոր է, բայց երկու երանի մի տեղ չունենք: Բայց թեթև մտավոր հաշմանդամ համարվող հոգեկան հիվանդություն ունեցող երեխան բացարձակապես ոչինչ չի հասկանում, երբ բացատրում ես: Իսկ մեզանից հետո միասնական քննության ժամանակ լավ արդյունք են ակնկալելու:

Մենք մասնագիտորեն հենվում ենք կոնկրետ երեխայի ունակությունների վրա: Կարող է դոկտոր-պրոֆեսոր չլինի, բայց հաստատ հասարակության լավ անդամ կլինի:

Եթե աշակերտները **գիտակցեն**՝ ինչ է կատարվում, իրենք էլ կօգնեն մանկավարժներին և ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Երբ տրամադրվում էր սնունդ, դա ինքնին տարբերակում էր մտցնում երեխաների մեջ. ներառականները ստանում էին, մնացածը՝ ոչ:

Պետք է հանրկրթությունը սկսել ճիշտ ժամանակին, որքան ուշացվում է, այնքան բարդանում է:

Շատ երեխաներ տուժեցին, ոչ ճիշտ ներառական կրթության պատճառով:

Ուսման առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները հնարավոր է «նորմալ» երեխաների հետ իրենց **հարմար չզգան**, նրանց հետ պետք է աշխատի հատուկ մասնագետը:

ԿԱՊԿՈՒ երեխաներին ավելորդ **հոգատարությունն** էլ է վնասակար:

Խորհրդային ժամանակ մեզ գոնե ապահովել են կրթության նվազագույն մակարդակը՝ անկախ խնդիրներից:

Անհատին առանձնահատուկ մոտեցում է պետք անկախ ԿԱՊԿՈՒ է, թե ԿԱՊԿՈՒ չի երեխան:

Եթե երեխան ունի ներառականության խնդիր, երեխայի հետ պետք է իր լեզվով խոսել, որպեսզի կարողանանք ապահովել ներառականությունը:

Ներառականությունը մեկ կամ երկու դպրոցներում ոչինչ չի փոխում: Դրա համար մենք երեխաներից շատերին հասարակությանը ոչ պիտանի անդամ ենք դարձնում:

Պետք է ներառական համակարգը կիրառել ոչ բոլոր հանրակրթական ծրագրերում, որպեսզի ոչ մեկ չտուժի:

Վարքային խնդիրներ երեխաների մեծամասնությունն ունեն, բայց երբ ԿԱՊԿՈՒ երեխաները են ունենում նաև վարքային խնդիրներ, շատ դժվար է լինում նրան վերահսկել:

Երեխաներն ունեն տարբեր անցումային շրջաններ: Դիմել ենք, որ նախապատրաստենք: Բայց ասում են, որ ձեր երեխան գերակտիվ է, չենք կարողանա ընդունել:

ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոց գնալու առաջնահերթ խնդիրը սոցիալականացումն է, մյուս երեխաների հետ շփումը:

Մենք պետք է հասկանանք, թե ներառականություն ասելով «ծանր» երեխայի համար ի՞նչ խնդիրներ ենք լուծում:

Իսկ ինձ հետաքրքրում է մեկ հարց. ներառական կրթության շնորհիվ մենք ունե՞նք առաջխաղացում այդ երեխաների մտավոր զարգացման հարցում, աչքս պետք է տեսնի, որ հավատամ:

4. Սոցիալական երկխոսություն

Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ա.1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԿՈՒ **օրենսդրությունը** համարյա իդեալական է էսօրվա դրությամբ, բայց մեխանիզմները չեն գործում:

Եթե Եվրոպան ունի **պատրաստի մոդելներ**, էլ ինչի ենք չարչարվում, թող մեր ԿԳՆ-ն վերցնի ու կիրառի:

Ձեր ասածը շատ սիրուն է հնչում, բայց խնդիրն այն է, որ կարող է մնալ միայն **թղթի** վրա. քանի տարի է խոսում են ներառական կրթության մասին, բայց ոչինչ չի փոխվում:

Այս **համակարգը** ինքն իրեն չի կարող փոխվել:

Հանրակրթության մասին օրենքով բացառված է, որ ոչ մասնագետը դպրոցում դասավանդի այլ մասնագիտություն: Օրինակ՝ լոգոպեդը հոգեբան չի կարող աշխատել:

Երեխաներին պիտակավորել չի կարելի, հիմա դպրոցներում կան նման մասնագետներ, որ պիտակավորում են: Ծնող-ուսուցիչ-տնօրինություն եռանկյունում պետք է հարցերը լուծվեն: Պետք է լինի ներքին **կանոնակարգ**, բարեխղճության վրա հույս դնել չի կարելի:

Մեզ ասում են ներքին **կանոնակարգ** մշակեք. թողնում են մեզ խնդրի լուծումը:

Պետք է հաշմանդամության կանխարգելման **մեխանիզմներ** մշակել սկսած ծննդատներից:

Նախարարությունից գալիս են դպրոց մոնիտորինգի ամեն մանրուքի համար: Թող գան, այս լուրջ հարցերին անդրադառնան:

Պետք է ստեղծել **հատուկ մարմին**, որը շատ արագ կարձագանքի ԿԱՊԿՈՒ երեխաների բողոքներին:

Ես դեմ եմ այն մտքին, թե **օրենսդրությունը** լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի փող տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից:

Օրենսդրությունը թերի է. չեմ պատկերացնում՝ մեր մանկավարժները ինչպես են ընդունելու էդ երեխաներին, երբ հատուկ դպրոցները փակվեն: Խառնաշփոթ կլինի:

Այսօրվա դրությամբ, օրենքը տնային ուսուցումը չի կարգավորում: Բայց դա անհրաժեշտ է: Մենք կարող ենք գումար տրամադրել ուսուցչին, որպեսզի նա գնա ու տանը կրթի ԿԱՊԿՈՒ երեխային: Սակայն, գումարը քիչ է, աշխատանքից հետո ուսուցիչը հոգնած է լինում ու, բացի դրանից, ուսուցիչները հիմնականում հոգեբանական խնդիր են ունենում երեխային տանը կրթելու հետ կապված, չեն ուզում ուրիշի տանը աշխատանք իրականացնել:

Ես նախահաշիվներ եմ հաստատում դպրոցների համար: Ոչ մի տարբերություն չկա ներառականություն ունեցող դպրոցի ու սովորական նախահաշվի միջև: Ոչ մի մանրամասն **հոդվածներ** չկան ներառականությանը վերաբերող:

Եվրոպայի **փորձը** վերցրել բերել են մեր մոտ, բայց կարծես թե վերջից են սկսել՝ նախ երեխաներին բերում են, հետո մյուսներին պատրաստում:

Մեր ազգային թերություններին մեկը այն է, որ մենք ուսումնասիրում ենք **եվրոպական փորձը**, դա մեզ դուր է գալիս, մենք դա թարգմանում ու ամբողջությամբ ուզում ենք կիրառել մեզ մոտ առանց հաշվի առնելու մեր առանձնահատկությունները:

Բոլորն էլ ՀՀ քաղաքացիներ են և իրավունք ունեն օգտվելու կրթության հնարավորությունից:

Ես լոգոպեդ եմ աշխատում և հայտարարում եմ, որ ով դեմ է ներառականությանը պետք է հայտնվի բանտում:

Բոլորն ունեն սովորելու, ապրելու **իրավունք**, ո՞վ կարող է սահմանափակել դա:

Մենք պետք է չոտնահարենք մյուս երեխաների **իրավունքները**:

Սոցիալական մանկավարժը կատարում է տնայց, հասկանում ընտանեկան դրությունը: Ես որպես սոց. մանկավարժ արդեն երկու անգամ այցելել եմ ԿԱՊԿՈՒ երեխաներից մեկի ընտանիք, քանի որ ծնողները դեմ են նրա կրթություն ստանալու **իրավունքին**, հաջորդ անգամ տնայց կկատարեմ ոստիկանի հետ նախ ծնողների զգաստության, մյուս կողմից հարցը իրավական ճանապարհով կարգավորելու համար:

Ա.2. ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Եթե առանց պատրաստվելու բոլոր հատուկ դպրոցները փակվեն, քաոս կտիրի, ինչպես հիմա մեզ մոտ Արմավիրում:

Եթե բոլորը իրար հետ սովորեն, քաոս կտիրի:

Օրենսդրությունը թերի է. չեմ պատկերացնում՝ մեր մանկավարժները ինչպես են ընդունելու էդ երեխաներին, երբ **հատուկ** դպրոցները փակվեն: Խառնաշփոթ կլինի:

Հատուկ դպրոցները փակվել են ու բոլոր համայնքներում մասնագետների կարիք կա, մասնագետները չեն հասցնում սպասարկել:

Իսկ ավելի լավ չէ, որ մի **դպրոց** սարքեն, շատ լավ դպրոց, բոլոր հնարավորություններով և այդ երեխաներին այնտեղ կրթեն:

Ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին, իմ կարծիքով, պետք չէ բերել սովորական դպրոց: Նրանք պետք է մնան հատուկ դպրոցներում, որովհետև իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ նրանց հետ ընդհանուր այդ մթնոլորտում աշխատել հնարավոր չէ:

Եթե ծանր մտավոր խնդիր ունեցող երեխան տանը արդեն սխալ վերաբերմունքի է արժանանում, ապա նրա համար հատուկ դպրոցը շատ ավելի լավ է:

Դասավանդման մեթոդիկան կարևոր է, յուրաքանչյուր երեխայի առանձնահատուկ մոտեցում է պետք:

Ծնող կա, որ եթե **հատուկ** դպրոց չկա մեր մարզում, տանում է Երևան:

Արմավիրում կար **հատուկ դպրոց**, որտեղ ես մասնակցել եմ դասապրոցեսի: Այնտեղի մանկավարժները հերոսներ էին, շատ ճիշտ ու հատուկ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց հանդեպ: Ես դեմ չեմ ներառականությանը, բայց այդ փորձը կորցնել չի կարելի:

Ես դեմ եմ այս ներառականությունը, երբ

Պետք է հատուկ դպրոցները մնան միայն շատ ծանր երեխաների համար, իսկ թեթև խնդիրներով երեխաները պետք է տեղափոխվեն սովորական դպրոցներ:

Հատուկ դպրոցում սովորող երեխաներն ավելի շատ խաղում են դասերի ժամանակ, քան դաս են սովորում, հետևաբար, երբ գալիս է դասի, իր համար տհաճ է նստել այդքան երկար:

Հատուկ դպրոցները տարանջատում են երեխաներին:

Եթե **հատուկ** դպրոցներին տրվող ֆինանսավորումը տրվի հանրակրթական դպրոցներին շատ ավելի արդյունավետ կաշխատեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Հատուկ դպրոցներում աշխատում են ծանոթներով տեղավորված աշխատակիցներ, որոնք ոչ մի պատկերացում չունեն կրթության մասին:

Ներառականությունը **մեկ կամ երկու դպրոցներում** ոչինչ չի փոխում: Դրա համար մենք երեխաներից շատերին հասարակությանը ոչ պիտանի անդամ ենք դարձնում:

երեխաները կենտրոնացած են **մի տեղում,** ավելի ճիշտ է: Հենաշարժողական խնդիրներով երեխաներին ծնողները նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց տանել-բերելու խնդիր կա:	
Ծանր երեխաների մոտ սոցիալիզացիայի խնդիր է, դրա համար էլ պետք է միայն իրենց համար **աջակցության կենտրոն** ստեղծել: Գոնե ամեն համայնքում մեկ **աջակցության կենտրոն** ստեղծվի՝ թեկուզ փոքր: Գեղարքունիքում արդյունավետ կլինի **աջակցության** հինգ կենտրոն ունենալը: Ներառականին զուգահեռ պետք է լինեն նաև մեկ-երկու **գիշերօթիկ**, օրինակ՝ դժվար դաստիարակվողների համար: Պետք է ստեղծել դպրոցներ մանկական հիվանդանոցների ներսում ու վաղ տարիքից պետք է սովորեցվի դպրոցական կյանքին:	**Ծնողն** առաջարկում է, որ կենտրոն լինի՝ ինչ որ մի տեղ, որ երեխան գնա. հիմնական դպրոցն արդեն ավարտել է: Չկա **զբաղվածության** կենտրոն: ԿԱՊԿՈՒ երեխան ամբողջ օրը տանը նստած է, ոչ մի բան չունի անելու: Դրա հետևանքով էլ են առաջանում խնդիրներ: **Զբաղվածության** խնդիրը բոլորի համար է, և՛ երիտասարդների, և՛ մեծերի համար: Միակ **զբաղվածությունը** մեր միջավայրում դա սուրճ խմելն է: Երեխային տանում ես դպրոց, սովորում է ու պետք է հատուկ վկայական ստանա, բայց այդ վկայականով քոլեջները չեն ընդունում: Այդ թղթի կտորը դառնում է խնդիր երեխայի համար, ոչ մի տեղ չի կարող գնալ: ԿԱՊԿՈՒ երեխաների հետագա մասնագիտական կրթությունն եմ շատ կարևորում, որպեսզի նրանք հետագայում կարողանան անկախ կյանք վարել:

Բ. ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԲՅՈՒՋԵ

Փողը չի կարող կապ չունենալ, ավելին, **փողը** ուղիղ կապ ունի: Եթե նորմալ ֆինանսավորում լինի, մասնագետը կարող է կենտրոնանալ կոնկրետ իր մասնագիտության վրա և ավելի արդյունավետ լինի: Գործող համակարգը շատ դանդաղ է զարգանում: Ահավոր շատ են խնդիրները, մասնավորապես՝ նյութական ապահովվածությունը: Այսօրվա դրությամբ թեթև պրոգրես կա ներառականության ոլորտում, բայց բացեր շատ կան, որոնց մեծ մասը կապված է ֆինանսավորման հետ: Ցանկացած օրենդրություն և ցանկացած **ֆինասավորում** չի կարող օգնել, քանի մեր մտածելակերպը չի փոխվի: **Ֆինանսների** մասին ի՞նչ խոսենք, բոլորդ էլ գիտեք մեր եկամուտների մակարդակը:	Շատ հաճախ **փողը** կա, բայց անիմաստ կորչում է, որովհետև խնդիրները ճիշտ չեն գնահատվում: Պետք է երեխայի հետ պարապեն քառասունհինգ րոպե, քսան-քսանհինգ րոպե աշխատում են ու ուղարկում տուն: **Փողն** էդտեղ ի՞նչ կապ ունի: Ես դեմ եմ այն մտքին, թե օրենսդրությունը լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի **փող** տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից: Վատ տարիներին ութ-ինը ամիս **փող** չենք ստացել, այնպես որ գումարը հիմնական խնդիրը չէ: Եթե մասնագետը ցանկություն ունենա օգնելու, աշխատելու, նա **գումարին** չի նայի: Թեկուզ քառորդ դրույքը բավարար է:

Գյուղերում դպրոցները բարձիթողի վիճակի չեն, բոլորը ամեն ինչ անում են, որ դպրոցները բոլոր պայմաններ ունենան, բայց ցանկությունը քիչ է. **ֆինանսական** խնդիրները մեծ են:

Մեր համայնքապետարանը պատճառաբանեց, որ **ֆինանս** չունի, որպեսզի նախակրթարանում հատուկ մասնագետի հաստիք բացի:

Պետք է ուշադիր լինել **կոռուպցիոն** ռիսկերից խուսափելու համար, հնարավոր է քանակ ապահովելու համար սխալ ընտրություն լինի:

Կոռուպցիոն ռիսկեր կան բոլոր տեղերում՝ հատկապես հեռու մարզերում:

Մինչև հեղափոխությունը ոչ մի **գումար** չի ծախսվել և ոչ մեկ տեղեկացված չի եղել:

Դպրոցում ոչ մեկ չի խոսում, որ կա լրացուցիչ ինչ-որ **գումարներ** ներառականի մասով: Ոչ մեկ տեղեկացված չի:

Պետք է վերահսկողական հատուկ ինստիտուտ. դպրոցը գումարը ստանում է, բայց երեխան շաբաթվա մեջ կարող է ընդամենը մեկ ժամ գալ դպրոց:

Մենք գնահատել ենք շատ երեխաներ, որոնք ֆիզիոթերապիայի կարիք ունեն: Ոչ մի դպրոց մեզ մոտ չի կարող իրեն սա թույլ տալ: **Գումարը** դպրոց է գնում, բայց մասնագետ չկա, հսկող չկա:

Ես, աշխատելով ներառական դպրոցում, անգամ չգիտեի այսքան մանրամասն, որ այս երեխաներին հատուկ գումար է հատկացվում ուտելու համար:

Դպրոցներում պետք է լինի ներառական կրթության համար ծախսվող գումարների թափանցիկություն: Նույնիսկ երեխաների ծնողները տեղյակ չեն այդ շարժի մասին:

Այլ հարց է, որ ներառական համակարգով, ենթադրենք, տասը երեխա չի եղել, բայց դրա **գումարը** ստացվել է:

Վայոց Ձորում օրինակ դպրոցի տնօրենը գումարը ստանում էր, բայց հստակ չգիտեր քանի՞ ԿԱՊԿՈՒ երեխա է հաճախում իր դպրոց, կենտրոնանում էր **ֆինանսավորման** վրա. պատասխանատվությունը պետք է խստացվի:

Ֆինանսավորողն էլ պետք է վերահսկի դրամական միջոցների շարժը դպրոցում կամ այլ հաստատությունում:

Ոչ մի ուսուցիչ, ոչ մի ծնող հատկապես գյուղական համայնքներում չգիտեն, թե դպրոցը իրենց երեխաների համար ինչքան փող է

Եթե **ֆինանս** չունենք, ուրեմն մեր ոտքերը վերմակի չափով պետք է մեկնենք:

Մարդիկ իրենք չեն ուզում, որ ստեղծված ծանր իրավիճակից դուրս գան (հաշմանդամություն ունեցողների մասին է խոսքը): Պետությունից գումար են ստանում, իրենց ձեռնտու է:

Յուրաքանչյուր տարի նախահաշիվ ենք ներկայացնում, տարվա ընթացքում էլ **հաշվետվություն** ենք տալիս: Այդ մեխանիզմում առանձնապես խնդիրներ չենք տեսնում:

Հնարավոր է, որ փոքր **մախինացիաներ** լինեն, բայց էական խնդիրներ տվյալ համակարգում չեմ պատկերացնում:

Հիմա խորհուրդն է տնօրինում դպրոցի **բյուջեն**, նախկինում այլ էր: Ներկայումս վերահսկողությունը բարձր մակարդակի վրա է: Հաշվետվությունը հրապարակվում է դպրոցի կայքում և հասանելի է բոլորի համար:

Ֆինանսական հաշվետուվությունները դպրոցներում նորմալ թափանցիկ են, բայց տնտեսված **գումարը** չենք կարողանում այլ բաների վրա ծախսել:

Մասնագետների աշխատավարձը երեխաների համար ստացվող **գումարներից** է: Դիտակտիկ պարագաներ ենք օգտագործում, որի ֆինանսավորումը հենց երեխաների համար ստացվող գումարներից է: Ուստի **վերահսկողությունը** խնդիր չէ, իմ կարծիքով:

Այնքանով, որքանով տեղյակ եմ ուսումնական հաստատությունների կողմից ծախսվող **գումարների** մասին, ոչ մի խնդիր չեմ տեսնում: Նրանք բավականին **նպատակային** են ծախսում մեր երեխաների համար ստացվող գումարները:

Ցանկացած դպրոց երկու-երեք տարին մեկ անցնում է աուդիտ: Դպրոցում բոլոր կառույցները, այդ թվում խորհուրդը և ծնողները, այնքան ակտիվ են, որ ամբողջությամբ **վերահսկում** են **ֆինանսական** շարժը: Չգիտեմ նախկինում ոնց է, բայց հիմա այդ մասով ամեն ինչ կարգին է:

Ցանկացած հաստատության **ֆինանսական** հաշվետվությունը բաց դրված է, բայց ո՞վ է նայում:

Այսօրվա դրությամբ դպրոցներում ունենք առցանց տիրույթ, որտեղ պարբերաբար դպրոցը ներկայացնում է **ֆինանսական** թափանցիկ հաշվետվություն, այդ թվում նաև առանձին ներառականության վերաբերյալ: Եթե մարդը

ստանում, ոնց է ծախսում: Մեր մոտ ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձին **ֆինանսավորում** չկա: Ֆինանսները թափանցիկ չեն: **Ֆինանսները** տնօրենը պետք է հատկացնի առաջնային խնդիր ունեցողին, բայց ո՞ր տնօրենը իր գլուխը ցավի տակ կդնի: Հիմա **գումարը** գալիս է մարզպետարան, բայց ըստ նպատակի չի հասցվում: Թե ինչ է լինում, չգիտեմ:	ինֆորմացված է, կարող է այդ ամեն ինչը ուսումնասիրել ու տեսնել, թե որտեղ կան թերություններ:
Փողը դպրոց չպետք է ուղարկել, պետք է ուղարկել օրինակ պոլիկլինիկա, որտեղ ֆիզիոթերապիայի մասնագետ կա: Թեթև գնահատված ներառական երեխաների համար դպրոցը լրացուցիչ **գումար** չի ստանում: Ծնողը պետք է ստանա գումար՝ տրանսպորտային ծախսերի համար: Ներկայումս ամեն տեսակ բյուրոկրատիա և պատճառաբանություններ են ստեղծվել, որ գումարը չտան:	Երբեմն տնօրեններն օգնում են նյութերի ձեռքբերման ժամանակ՝ լրացուցիչ տրամադրվող **գումարների** հաշվին: Յուրաքանչյուր ներառական դպրոցին երեք մասնագետ է հատկացվում՝ հոգեբան, հատուկ մանկավարժ և սոցմանկավարժ, դրան գումարած սնունդ, հատուկ ձեռնարկներ, նյութեր և այլն, գումարը այսքանին ինչպե՞ս կբավարարի: Մենք **գումար** ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին սնունդ տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչո՞ւ է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել: Այսօրվա տրված **գումարով** երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿՈՒ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար: Տրանսպորտի **գումարն** էլ բավարար չի:
Մասնագետներին է պետք **վերապատրաստել** և աշխատավարձները բարձրացնել, որ աշխատելու մոտիվացիա ունենան մասնագետները: Նեղ մասնագետները վճարովի վերապատրաստման չեն գնում, որովհետև դպրոցը չի ապահովում: Եթե մասնագետն էլ 70 հազար պետք է տա **վերապատրաստման**, էլ ինչի՞ է աշխատում: ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:	
Նախ պետք է ուսուցչին շատ լավ **վարձատրել**,	Մենք ասում ենք, որ մասնագետի համար

հետո նոր լրացուցիչ պարտականություններ դնել նրանց ուսերին:

Ուսուցչի օգնական և ուսուցիչ հարաբերություններում հոգեբանական խնդիրներ կան, **աշխատավարձերը** տարբեր են, աշխատաժամանակը ևս:

Ֆինանսավորումը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մանկավարժների համար պետք է ավելանա:

Մանկավարժի աշխատավարձը շատ քիչ է, դա **սոցիալական** խնդիր չի լուծում: Բայց մենք՝ մանկավարժներս, նաև բարոյական խնդիր ենք լուծում:

Մարդուն պետք է տալ այնքան **աշխատավարձ**, որ նա կարողանա ընտանիքի մինիմալ պահանջները հոգալ:

Սոցիալական խնդիր ունեցող մարդը՝ մանկավարժը, ինչպես կարող է ուրիշի սոցիալական խնդիրները լուծի:

Այսօր ուսուչից կա, որ անգամ տանը համացանց չունի. ուսուցչից շատ բան պահանջում են, բայց շատ քիչ վարձատրում:

Պետք է արձանագրենք, որ ԿԱՊԿՈՒ երեխաներ ներկայության արդյունքում դպրոցում կրթության մակարդակը իջնում է: Ուսուցչի համար ծանրբեռնվածությունը մեծանում է, **աշխատավարձը՝** ոչ:

Մի ուրիշ դժգոհության հարց էլ **աշխատավարձն** է: Եթե մասնագետը մի երեխայի հետ է աշխատում, մենք 30-ի հետ:

Երևանում աշխատելով այլ մասնագիտությամբ օրական **վաստակում** էի 10000-12000 դրամ, այսօր՝ դպրոցում մանկավարժ եմ աշխատում օրական 2000 դրամով:

Եթե դպրոցի ուսուցչի **աշխատավարձը** բարձրացնեն նա ավելի մեծ հաճույքով կանի իր աշխատանքը:

Ուսուցիչներ կան, որ ասում են. «ինչքան **աշխատավարձ** են տալիս, որ մի հատ էլ ներվերս քայաքայեմ, նման երեխեքի հետ աշխատեմ»:

գումարը քիչ է: Ախր չի էլ առաջարկվել մասնագետին այդ քիչ գումարը, որ նա էլ մերժի: Առաջարկեք՝ թող մերժեն, ինչի վրա կասկածում եմ:

Մասնագետները չեն **ֆինանսաավորվում** դպրոց միջոցներից, այլ՝ առանձին ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրվող ֆինանսավորումից:

Այսօրվա դրությամբ մանկավարժահոգեբանական կենտրոնները միայն վկայագրերով են զբաղված, գործնական աջակցություն չեն ցուցաբերում: Մեծագույն խնդիրը ցածր աշխատավարձն ու ոչ բավարար **ֆինանսավորումն** է:

Եթե մասնագետն ունի անելիք անում է, անկախ նրանից որքան է վարձատրվում, **ֆինանսը** միշտ էլ քիչ է:

Մարզպետարանից ասում են՝ դուք են բարձրացրած **աշխատավարձովն** ե՞ք: Մի բան էլ կարծես լավություն են արել:

Ունենք ուսուցիչ, որը գերազանց է աշխատում, ու իր համար **աշխատավարձը** կապ չունի:

Ծնողները խուսափում են լոգոպեդի անհատական պարապմունքի տանել երեխային, **վճարելու** խնդիր կա, հաճախ տնօրենները չեն պահանջում, որ դպրոցում լինի լոգոպեդ:

Սոցիալական ծանր պայմաններում ապրող գյուղերի բնակիչները տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել

Կան ծնողներ, որոնք սրտացավորեն են վերաբերվում իրենց երեխայի խնդրին ու պատրաստ են աջակցել դպրոցին, ուսուցչին: Կան նաև ծնողներ, որոնց համար միևնույն է: Անտարբերությունը հիմնականում գալիս է **սոցիալական** վիճակից՝ ծնողը ուղղակի ժամանակ չունի դրան տրամադրելու, քանի որ

նախակրթարաններ:

Կախված երեխայի բնակության վայրից, **սոցիալական** խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

Ծնողները կարող են **սոցիալապես** անապահով լինել և չկարողանալ երեխային համայնքներից բերել:

Հատուկ դպրոց տանում են նաև **սոցիալական** պատճառով. երեխայի սնվելու հարցը լուծվում է:

Դեպքեր կան, երբ երեխան ուղղակի մաթեմատիկայից է թույլ, կամ **սոցիալական** վատ պայմաններում է ապրում, բայց ներառվել է ԿԱՊԿՈՒ-ի մեջ:

Դպրոցներից շատերը **սոցիալապես** խնդիրներ ունեցող երեխաներին ներառում են որպես ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Մեր հանրակրթական դպրոցում կա մտավոր թերզարգացած երեխա, որը արդեն հասել է վեցերորդ դասարան, բայց համարյա ոչինչ չի հասկանում, երբ ինչ-որ բան ես բացատրում: Նրա ընտանիքը **սոցիալապես** անապահով է, դրա համար ծնողները չեն կարող տանել հատուկ դպրոց, իսկ մենք չենք կարողանում ապահովել ներառականությունը:

Սխալ է, երբ սնունդը տալիս են երեխայի ձեռքին ու ուղարկում են դասարան. դասարանում կան **սոց.անապահով** երեխաներ:

Մենք պետք է ստեղծենք մի խումբ, որը կարողանա խնդիրներ ունեցող ու **սոցիալական** ծանր պայմաններում ապրող ընտանիքների մասին տեղեկատվություն տրամադրեն:

Եթե ծնողը ամեն օր երեխայի հետ պետք է գա դպրոց, ուրեմն նա պետք է չաշխատի: Արդյո՞ք նրան կֆինանսավորեն, որ չաշխատի:

Ներկայումս **ճանապարհածախս** և **սնունդ** չի տրամադրվում:

Վայոց Ձորում շատերը երեխային ներառական են գրանցում, որ **սնունդ** ստանան:

Ցանկալի է, որ պետությունը իր վրա վերցնի երեխաների **տեղափոխման** հարցը:

Ես ամեն առավոտ իմ երեխային տանում եմ դպրոց տաքսիով, պատկերացնում եք ինչ դժվար է ինձ:

Եթե երեխան լոգոպեդի կարիք չունի, անիմաստ այդ **ֆինանսները** ուղղում են լոգոպեդ պահելու

օրվա հաց պետք է վաստակի:

Այսօրվա դրությամբ, որպեսզի իմ երեխան մասնագիտական աջակցություն ստանա, ես նրան Երևան եմ տանում: Բայց մենք **սոցիալապես** անապահով բազմանդամ ընտանիք ենք:

Ավելի ճիշտ է ապահովել տրանսպորտ, քան տրանսպորտից օգտվելու **ֆինանս**: Եթե դա լուծվի, էական չի արդեն հարուստի երեխա է, թե՞ աղքատի:

Ֆինանսները պետք է տնօրինի յուրաքանչյուր տնօրեն ըստ իր խղճի: Չունենք դեռ

համար:

Ոչ ոք մասնագետներին չի կանչում սեղանի շուրջ, որ քննարկի՝ ո՞ր երեխային ինչ է պետք, ինչքան **ֆինանս** է պետք:

Ունենք մի բալիկ, ով գովասանագիր պետք է ստանար, բայց տեսողական խնդիր ունի և չէր կարողանում անգամ իր գովասանագիրը կարդալ: Բայց այդ բալիկը շատ **ֆինանս** է բերում դպրոց, փաստը մնում է փաստ, որ նրա խնդիրը այդպես էլ չի լուծվել:

Երեխաների հաշվով **ֆինանս** է հատկացվում դպրոցին, բայց էս երեխան անգամ լսողական սարք չունի, պետք է շատ հարցեր վերանայվեն:

Մի երեխա ունենք, ում հատուկ մանկավարժ պետք չէ, այլ Բրայլյան այբուբեն է պետք: Բայց **ֆինանսները** դրան չեն ուղղվում:

մասնագետներ, որոնք արժանի են հազար դոլար վարձատրության:

Տնօրենի համար պետք է հստակ պարզ լինի, թե որն է առաջնային խնդիրը և որն է այն ցանկը, որին համապատասխան պետք է **ֆինանսներ** տրամադրեն:

ԿԱՊԿՈՒ երեխաների ֆինանսավորման հետ ուսուցիչները ավելի շատ պատասխանատու են ծնողներին, քան պետությանը, որ այդ **գումարը** տալիս է:

Եթե հատուկ դպրոցներին տրվող **ֆինանսավորումը** տրվի հանրակրթական դպրոցներին շատ ավելի արդյունավետ կաշխատեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Օրինակ, տնտեսված գումարի հաշվին նոր գույք ձեռք բերեցին:

Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գ.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ

Պետք չի առանձնացնել սովորական երեխաներ և հատուկ կարիքներով երեխաներ, պետք է ընտրել հատուկ լավ մանկավարժներ, որոնք ամեն ինչ կանեն, որ տարբերությունը կտրուկ չլինի:

Ուսուցիչը մեծ ազդեցություն ունի երեխաների վրա, պետք է ուսուցիչը պատրաստ լինի:

Լավ **մանկավարժը** պետք է լավ **հոգեբան** լինի: Միայն մասնագիտական կարողությունները բավարար չեն, որ երեխան հարմարվի ու սիրի ուսուցչին:

Իմ կարծիքով, բոլոր **մանկավարժները** պետք է նաև հոգեբան լինեն: Ուսուցիչը պետք է պարբերաբար այցելի իր աշակերտների ընտանիքներ, որպեսզի հասկանա ինչ վերաբերմունք ցուաբերի տվյալ աշակերտի նկատմամբ:

Մենք առաջին հերթին պետք է **ուսուցիչներին** պատրաստենք ներառականությանը, հետո նոր անցնենք երեխաներին: Այսօրվա դրությամբ մեր գյուղում հապճեպ ներառականությունը բերեց այն բանի, որ գյուղացիները սկսեցին ասել. «գյուղի կեսը իզուր դեբիլ հանեցին, ուրիշ ոչինչ չփոխվեց»:

Եթե **մանկավարժը** աշխատելու է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, պետք է նա շատ լավ հոգեբան, սոց աշխատող էլ լինի: Կարող է նա իր ոլորտի լավ մասնագետ է, բայց ԿԱՊԿՈՒ երեխաների

Շատերը ներառական ասելով հասկանում են տարօրինակ մարդ, անգամ գիժ: Եթե ծնողն ու **ուսուցիչը** չխանգարի, երեխաները իրենք կհամակերպվեն:

Սովորական դպրոցում **ուսուցիչները** այն ԿԱՊԿՈՒ երեխաներին, որոնք մեծ ակտիվություն են ցուցաբերում դասերին և խանգարում են դասապրոցեսը, հանում են դուրս, որպեսզի դասը չտուժի:

Ուսուցիչները ներառականով երեխային գցում են դասարանի մի անկյուն, դրանով բնականաբար ոչ մի արդյունք էլ չի լինի:

Երեխաներին պիտակավորել չի կարելի, հիմա դպրոցներում կան նման մասնագետներ, որ պիտակավորում են: Ծնող-**ուսուցիչ**-տնօրինություն եռանկունում պետք է հարցերը լուծվեն: Պետք է լինի ներքին կանոնակարգ, բարեխղճության վրա հույս դնել չի կարելի:

Հաճախ **ուսուցիչները** խուսափում են աշխատելուց. ասում է մի չորս կդնեմ, կասեմ խնդիր չունի: Մեկ էլ ԱՈՒՊ չլրացնեմ:

Ուսուցիչը չի կարող ամբողջ օրը աշխատել երեխայի հետ, դրա համար էլ ծնողը պետք է աշխատի: Ուսուցիչը հո կաշվից դուրս չի՞ գալու:

ԱՈՒՊ-ը կրկնակի աշխատանք է **ուսուցիչների** համար, ինչպես նաև dasaran.am-ը:

Ուսուցիչ ունենք, աչքի ընկնելու համար

հետ աշխատելու համար անհրաժեշտ կարողություններ են պետք:

Ուսուցիչները մասնագիտական որակների խնդիր ունեն, երբ ներառական կրթությունը ներդրվեց, ուսուցիչների խնդիրներն էլ են ավելի տեսանելի դարձան:

Եթե **ուսուցիչը** կամ դաստիարակը աշխատի ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, ապա շատ արագ փոփոխությունը կզգացվի:

Մենք առաջին հերթին պետք է **ուսուցիչներին** պատրաստենք ներառականությանը, հետո նոր անցնենք երեխաներին: Այսօրվա դրությամբ մեր գյուղում հապճեպ ներառականությունը բերեց այն բանի, որ գյուղացիները սկսեցին ասել. «գյուղի կեսը իզուր դեբիլ հանեցին, ուրիշ ոչինչ չփոխվեց»:

Ուսուցիչների մոտ պետք է հոգեբանորեն վերափոխել այն կարծրատիպը, որ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ դժվար է:

Անկախ նրանից դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, թե՝ ոչ, բոլորը **ուսուցիչները** պետք է իմանան՝ ինչ անել:

Ուսուցիչների մոտ պետք է փոխել երևույթի հանդեպ մոտեցումները:

Շատ կարևոր է, որ հանընդհանուր ներառականության դեպքում **ուսուցչին** աստիճան տալիս, ատեստավորելիս անպայման իրականում հաշվի առնվի նրա հմտությունները ԿԱՊԿՈՒ երեխայի հետ առնչվելու:

Ուսուցիչների մոտ պետք է հոգեբանորեն վերափոխել այն կարծրատիպը, որ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ դժվար է:

Մենակ կոնկրետ մասնագետի աշխատանքը չի, յուրաքանչյուր **ուսուցիչ** պետք է հասկանա, որ ինքն էլ գործ ունի:

Ուսուցիչը պետք է զբաղվի իր առարկայով, ոչ թե այդ երեխաների դաստիարակությամբ:

Ցանկացած **ուսուցիչ** կարող է դասընթացը այնպես կազմակերպել, որի շնորհիվ խնդիրներ ունեցող երեխան կկարողանա ընդգրկվել դասապրոցեսին:

Ուսուցչանոցում ասում են՝ երանի ուրիշ ներառական դպրոց լիներ, երեխաներին տանեին:

Իրազեկ պետք է լինեն բոլոր **ուսուցիչները**:

Ունենք **մանկավարժի** որակավորում ունեցողների մեծ քանակ, բայց որակը մի քանի միջոցառում է անում միայն ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությամբ: Այս տարի հազիվ համոզեցինք, որ չանի:

Սկզբնական փուլում աշխատում ենք երեխայի հետ, արդեն կարողանում է նստել դասին: Բայց **ուսուցիչը** չի կարողանում կենտրոնանալ առանձին-առանձին յուրաքանչյուրի վրա: Եթե ներառում են, անհրաժեշտ է մասնագետ, որը չունենք:

Աուտիզմով հիվանդ երեխային բերում ենք առաջին դասարան, **ուսուցիչը** սթրեսի մեջ է ընկնում:

Զարմանալի է, երբ երկարամյա **ուսուցիչները** ասում են՝ մենք չգիտեն, թե ինչպես աշխատել այդ երեխաների հետ:

Ունենք մասնագետների խնդիր. մենք բարձր որակավորում ունեցող հատուկ **ուսուցիչներ** չունենք, այսօր ուսուցիչը զբաղվում է միայն այդ երեխաների նիստ ու կացով... վերջ:

Դպրոցի **ոուսուցիչը** ցանկանում էր դասերից հետո առանձին աշխատել իմ երեխայի հետ, որպեսզի նա կարողանա հասնել մյուս աշակերտներին, բայց ԿԳՆ-ից թույլ չտվեցին:

Ուսուցիչները սովոր են կաղապարված կրթության: Գնում են, իրենց դասը անում, վերջացնում:

Ես, որպես **ուսուցիչ**, կարծում եմ, որ խորը հիվանդություն ունեցող երեխաները ավելի լավ է չգան, միևնույն է իր կյանքում ոչինչ չի փոխվում, ժամանցի համար է գալիս, բայց խանգարում է մյուսներին:

Ցավոք սրտի այսօր մենք ունենք տգետ **մասնագետներ**, որոնք առանձնացնում են դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Մեզ մոտ **դասատուն** հասել էր նրան, որ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում անընդհատ վեր կացող երեխային, մի բան էլ՝ գնում էին, բերում, նստեցնում:

Երրորդ դասարանում հատուկ երեխայի հետ սկսել եմ աշխատել հանում-գումարման վրա: Ժամանակն ու համբերությունը արդեն իսկ արդյունք տալիս են, նաև կողմնակի՝ զարգացել է երեխայի մանր մոտորիկան:

Երեխայի որակի վրա առաջինը ազդում են անտեղյակ **մանկավարժները**: Դեպք ունենք, երբ ուսուցիչը ուղղակի չի տիրապետում երեխայի հիվանդության պատմությանը, առանձնահատկություններին և ավտոմատ

անգամ քիչ է:

Ամեն ինչը ժամանակի խնդիր է, սկզբից շատ դժվար է նման երեխաների հետ **աշխատելը**, հետո ամեն ինչ փոխվում է:

Մանկավարժը պետք է ներառական մանկավարժությանը տեղյակ լինի:

Բոլոր երեխաների հետ էլ կարելի է աշխատել՝ անկախ իրենց մտավոր ունակություններից, ուղղակի պետք է **ցանկություն** ունենալ:

Առաջին հերթին մտածելակերպի փոփոխություն է պետք: **Մասնագետները** պետք է պատրաստ լինեն:

Ներառականությունը պետք է սկսել **ուսուցիչների** հետ աշխատանքից, իրազեկեն, տեղյակ պահեն խնդրի առանձնահատկությունների մասին:

Համընդհանուր ներառական կրթության մասին մարդիկ տեղյակ չեն, նույնիսկ **մասնագետներս** տեղյակ չենք, չնայած քսան թվականին արդեն ներդրվելու է համակարգը Գեղարքունիքում:

Ներառական կրթություն տրամադրող դպրոցները, այսօրվա դրությամբ, չունի համապատասխան **մասնագետներ**, օրինակ՝ տեսողական խնդիր ունեցող երեխայի հետ աշխատող: Բացի դրանից, համապատասխան դասագրքեր ու հարմարություններ չունենք:

Հատուկ դպրոցները փակվել են ու բոլոր համայնքներում մասնագետների կարիք կա, **մասնագետները** չեն հասցնում սպասարկել:

Մինչև դու որպես **մասնագետ** քո տեղն ու դերը չհասկանաս, քո արածի չափը չպատկերացնես, միևնույն է ոչինչ չի փոխվելու:

Հատուկ դպրոցներում աշխատում են ծանոթներով տեղավորված **աշխատակիցներ**, որոնք ոչ մի պատկերացում չունեն կրթության մասին:

Ի սկզբանե կար խնդիր բազմամասնագիտական անձնակազմի և **մասնագիտական** անձնակազմի միջև:

Գավառում կա դպրոց, որը տարածաշրջանում ապահովում է ներառական կրթություն. կան **մասնագետներ**, ովքեր լիարժեք աշխատում են, բայց ֆիզիկական պայմանները բավարար չեն:

Շատերը ներառական ասելով հասկանում են տարօրինակ մարդ, անգամ գիժ: Եթե ծնողն ու **ուսուցիչը** չխանգարի, երեխաները իրենք կհամակերպվեն:

մեկուսացնում է երեխային հենց դասարանում:

Արմավիրում կար **հատուկ դպրոց**, որտեղ ես մասնակցել եմ դասապրոցեսի: Այնտեղի **մանկավարժները** հերոսներ էին, որոնք շատ ճիշտ ու հատուկ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց հանդեպ: Ես դեմ չեմ ներառականությանը, բայց այդ փորձը կորցնել չի կարելի:

Եթե ամեն մարդ իր գործն անի, սկսած **մանկավարժից** մինչև տնօրեն, ամեն ինչ կարգին կլինի:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ **մասնագետներ** ունենք:

Մեր դպրոցներում կան մասնագետներ, բայց չեն աշխատում:

Մի քանի գյուղերից, նաև մեծ գյուղերից, ստիպված ԿԱՊԿՈՒ երեխաներին բերում են Մարտունի, իրենց մոտ **մասնագետ** չկա:

Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, ու ինձ ասել են, որ միայն մի դպրոց կա, որտեղ իմ երեխային կարող են ընդունել: Ես չէի կարող իմ երեխային այդ դպրոց տանել, քանի որ սայլակի ու տրանսպորտի խնդիր կա: Բայց հիմա պարզվում է, որ մոտակա դպրոցն էլ կարող է ընդունել իմ երեխային: Բայց այնտեղ էլ **մասնագետի** խնդիր կա:

Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը նորոգելուց հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև **մասնագետների** կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը ընդհանուր դասարանում, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն դասարանում:

Մեր մոտ փայլուն **պրակտիկանտ** էր եկել, փորձեցինք իրեն պահել պրակտիկայից հետո, ոչ մի կերպ չստացվեց: Բայց պահակ ինչքան ասես ունենք:

Պետք է **մանկավարժների** աշխատանքը վերահսկող ինչ-որ պետական կառույց լինի:

Ուսուցիչները երեխաների հետ աշխատելիս նախ ծնողի հետ ենք խոսում, ծնողները պետք է տեղյակ լինեն իրենց երեխայի վիճակի մասին:

Կարևոր է, որ դպրոցի **ուսուցիչները**

Առաջին հերթին պետք է աշխատել ծնողի ու **ուսուցչի** հետ:

Հարցը երկկողմանի է, և՛ ծնողը, և՛ **մասնագետը** բավարար իրազեկվածություն պիտի ունենան:

Եթե ծնողը չի համաձայնում երեխային տանի ներառական դպրոց, ինչ պետք է անի **ուսուցիչը,** դիմանա:

Երբ համադպրոցական ծնողական ժողովներին դպրոցի տնօրենը կամ ուսմասվարն է զեկուցում ներառականության վերաբերյալ, ծնողները մտածում են, որ **տնօրենը** ինչ-որ շահ ունի սրա հետ կապված: Իսկ երբ համապատասխան մասնագետն է գալիս զեկույցով, ապա ծնողները ավելի են վստահում:

Այսօրվա դրությամբ ԿԱՊԿՈՒ թեմայով սեմինարներին մասնագետներին են հրավիրում, որոնց իրականում դա պետք չէ: Այդ սեմինարներին պետք է հրավիրել **ուսուցիչներին** ու ծնողներին, այլ ոչ թե մասնագետներին:

Ուսուցչի և ծնողների ճիշտ աշխատանքի դեպքում խնդիրներ չպիտի լինեն:

Ծնողներն ու երեխաները, անգամ **մանկավարժները** այնպիսի ձևակերպումներ են հնչեցնում, որ արդեն հասկանալի է՝ չի կարող լավ աշխատել:

Շատ ծնողներ էլ կան, որ չեն վստահում **մասնագետին**:

մասնագիտորեն տեղեկացված լինեն ներառականության մասին, որպեսզի նրանք աշխատեն ոչ միայն երեխաների հետ, այլև ծնողների:

Եթե տարբեր համայնքներում հաճախակի սեմինարներ անցկացվեն ծնողների ու **ուսուցիչների** համար, դա կբերի մեծ արդյունքի:

ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող և դպրոցում **ուսուցիչ** աշխատող ծնողի համար շատ դժվար է տեսել իր կոլեգաների և դպրոցի մնացած աշխատողների վերաբերմունքը իր երեխայի նկատմամբ:

Խնդիրներ չունեցող երեխայի հետ աշխատելու փոխարեն **ուսուցիչը** ստիպված է լինում աշխատել խնդիրներ ունեցող երեխայի հետ: Պետք է մի դասարանում մեկից ավել խնդիրներ ունեցող երեխա չլինի:

Պետք է դասարաններում լինեն աշակերտների թվականակի պակասեցում, որպեսզի **ուսուցիչը** ԿԱՊԿՈՒ երեխաներով էլ զբաղվելու ժամանակ ունենա:

Դասարանում 35 աշակերտ կա, **ուսուցիչը** ո՞նց պիտի աշխատի բոլորի հետ առանձին-առանձին:

Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին:

Ես ինքս հատուկ երեխայի ծնող եմ, անհատապես բացատրում եմ իմ երեխային դասերը մի քանի անգամ, ինչպես կկարողանա մեկ **ուսուցիչ** քառասուն հոգու բացատրի, հատկապես եթե դասարանում էլ կան նման խնդիրներով բալիկներ:

Ներառական երեխաների համար ճիշտ է առանձին դասագրքեր հրատարակելը, այլ ոչ թե **ուսուցչի** վրա ամբողջ բեռը թողնելը:

Մասնագետները պետք է հասկանան, որ միայն առարկայական հարմարեցումը «ծանր» երեխաների համար ծիծաղելի է, պետք է սոցիալիզացիայի այլ տարբերակներ գտնել:

Բոլոր աշակերտներին պետք է անհատական մոտեցում **ուսուցչի** կողմից, անկախ նրանից նա ներառված է թե ոչ: Սա է լուծումը:

Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին:

Մասնագետը չի ընդունում այնպիսին, ինչպիսին կա երեխան:

Ունենք տարբեր խնդիրներով երեխաներ, կարելի է ասել, որ նրանցից շատերը կրթություն չեն ստանում: **Ուսուցիչն** ի վիճակի չի լինում յուրաքանչյուրի հետ անհատական աշխատել, հիմնականում կենտրոնանում են առավել ծանր դեպքերի վրա:

Սոցիալական խնդիր ունեցող մարդը՝ **մանկավարժը**, ինչպես կարող է ուրիշի սոցիալական խնդիրները լուծի:

Մի ուրիշ դժգոհության հարց էլ աշխատավարձն է: Եթե մասնագետը մի երեխայի հետ է աշխատում, մենք 30-ի հետ:

Ուսուցիչներ կան, որ ասում են. «ինչքան աշխատավարձ են տալիս, որ մի հատ էլ ներվերս քայքայեմ, նման երեխեքի հետ աշխատեմ»:

Եթե դպրոցի **ուսուցչի** աշխատավարձը բարձրացնեն նա ավելի մեծ հաճույքով կանի իր աշխատանքը:

Նախ պետք է **ուսուցչին** շատ լավ վարձատրել, հետո նոր լրացուցիչ պարտականություններ դնել նրանց ուսերին:

Մասնագետներ-**ուսուցիչ**-ծնող ճիշտ համագործակցության շնորհիվ կարող ենք արդյունք ունենալ:

Եթե մասնագետն ունի անելիք անում է, անկախ նրանից որքան է վարձատրվում, **ֆինանսը** միշտ էլ քիչ է:

Ունենք ուսուցիչ, որը գերազանց է աշխատում, ու իր համար աշխատավարձը կապ չունի:

Մասնագետի համար ամենակարևորը երեխային սիրելն է, ինչ մասնագետ ուզում ես եղիր, եթե սերը չեղավ անհնար է:

Գ.2. PRE-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Մասնագիտական օգնություն չկա. լրացուցիչ գրականություն է պետք, **վերապատրաստում** է պետք: Մեր բուհերում չի տրամադրվել մասնագիտական գիտելիքներ ներառականի մասով, դրա կարիքը շատ է զգացվում մանկավարժների համար:

Մենք չորսից վեց տարի սովորում ենք մասնագիտական **բուհում**, դեռ այդ ժամանակ թերանում ենք, ուր մնաց մի քանի ամսում նորմալ հասկանանք՝ ինչ անել:

Մասնագետի պրոբլեմը գալիս է **բուհից**: Մեզ տեսական ինչ ասես սովորեցնում են, բայց պրակտիկ հմտություններ ձեռք չեմ բերում: Պրակտիկան պետք է շատ լինի:

Ես կարծում եմ, որ բուհը պետք է տեսականը տա, իսկ պրակտիկն՝ արդեն քեզանից է կախված:

Ներառական կրթության **մասնագետ** դառնալը կախված է կոնկրետ անհատից, ինչպես նաև այլ մասնագետների պարագայում:

Շատ լավ կլինի, որ **համալսարանավարտ** մասնագետներ ունենանք ներառական կրթության համար: Չեմ կարծում, որ դա հնարավոր է հենց սկզբից: Բայց փուլ-փուլ կարող է լինել:

Հնարավոր է, որ, օրինակ, ֆիզիկայի դասատուն երկու տարում ստանա **դիպլոմ** ու դառնա ներառականի մասնագետ: Բայց, բնականաբար,

Շատ կարևոր է, որ **ուսանողները** հաճախեն դպրոցներ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու՝ պրակտիկ փորձ ձեռք բերելու համար:

Պետք է **բուհ**-երից պահանջել, որ նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հատուկ որակավորում տան:

Ես խնդիրներով երեխաների հետ աշխատելու համար հատուկ կրթություն եմ ստացել, բայց միայն **պրակտիկայով** եմ կարողացել նորմալ մասնագետ դառնալ:

Մանկավարժական **համալսարանը** պետք է որակյալ կադրեր ունենա, որ գոնե մինիմալ պրակտիկա ունենան ավարտողները:

Մեծ խնդիր է համապատասխան **մասնագիտական կրթությունը**՝ ովքե՞ր կարող են, ի՞նչ մասնագիտական պատրաստվածություն պետք է ունենան, ի՞նչ աշխատանքային փորձ պետք է ունենան, սրանք խնդիրներ են, որոնք պետք է հստակ լինեն:

նա չի կարող համեմատվել չորս-վեց տարի տվյալ մասնագիտությունն ուսումնասիրած մարդու հետ:

Ուսուցիչները պետք է ունենան ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու **բուհ**-ական մակարդակի կրթություն:

Մասնագետների նախապատրաստումը պետք է սկսել **բուհերից**:

Վերապատրաստման փողերը պետք է ուղղել համալսարաններին, որ ավարտելուց հետո միանգամից գիտելիքներ ու փորձ ունենա ուսանողը:

Շրջանների **բուհական** կրթությունը միանշանակ չենք կարող համեմատել Երևանի բուհեր հետ:

Գավառի համալսարանը դժվար կարողանա **մասնագետ** պատրաստել:

Ունենք ճիշտ մոտեցում ունեցող մասնագետների պակաս: **Դիպլոմը** բավարար չէ, պատկերացում չունեն, թե ինչ աշխատանք պետք է անեն:

Եթե որպես դպրոցի տնօրեն ընդունում եմ մասնագետ, ինչպե՞ս կարող եմ ստուգել նրա որակները, մեր **բուհ**-երի դիպլոմները ոչ միշտ են վստահելի:

Գ.3. IN-SERVICE. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ներառական կրթության ամենամեծ բացը այն է, որ համապատասխան կադրեր չունենք, **վերապատրաստման** հատուկ նորմալ ինստիտուտ չունենք:

Մեր մարզում միանգամից մտավ ծրագիրը, առանց նորմալ **վերապատրաստումների**:

Դպրոցը սարքում են ներառական, առանց հաշվի առնելու այդ դպրոցի պայմանները, հնարավորությունները, առանց **վերապատրաստելու** ուսուցիչներին, առանց վերանորոգելու սանհանգույցները, առանց սարքելու առանձին սենյակներ և այլն:

Ներառական կրթության լուծումը պետք է սկսել մանակվարժներին **վերապատրաստումից**:

Եթե երեխաները դպրոց գան, **նախապատրաստված** դպրոցի անձնակազմն արդեն ի վիճակի է կառավարել իրավիճակը:

Դպրոցներում **վերապատաստումներ** եղել են, բայց ազդեցությունը մեծ չի, տասնհինգ տարուց ավելի աշխատած ուսուցիչներին արդեն դժվար է փոխել:

Մենք չորսից վեց տարի սովորում ենք մասնագիտական **բուհում**, դեռ այդ ժամանակ թերանում ենք, ուր մնաց մի քանի ամսում նորմալ հասկանանք՝ ինչ անել:

Պետք է նաև ուսուցիչները **վերապատասրտվելուց** բացի քննություն տա. պատրաստ է արդյոք նա աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Պետք է մի մոդել լինի, որով ուսուցիչը անընդհատ **վերապատրաստումներ** կունենա: Կարճաժամկետ վերապատրաստումները անօգուտ են:

Ծնողը հիասթափություն է ապրում մասնագետներից, քանի որ նա ծախս է անում ու

Եթե մենք **ավարտել** ենք տասը տարի առաջ, ինչքան էլ պրպտենք, լճանում ենք:

Մասնագիտական օգնություն չկա. լրացուցիչ գրականություն է պետք, **վերապատրաստում** է պետք: Մեր բուհերում չի տրամադրվել մասնագիտական գիտելիքներ ներառականի մասով, դրա կարիքը շատ է զգացվում մանկավարժների համար:

Դեռ ութսունականներից կա հատուկ ներառական դպրոց, բայց անձնակազմը բացարձակ **պրոֆեսիոնալիզմ** չունի:

Ներառական կրթության պետք է անցնել միայն այն ժամանակ, երբ դպրոցները ունենան **վերապատրաստված** ուսուցիչներ:

Մասնագետներին է պետք **վերապատրաստել** և աշխատավարձները բարձրացնել, որ աշխատելու մոտիվացիա ունենան մասնագետները:

Դպրոցնում մասնագետի դերը շատ կարևոր է: Պետք է բոլոր դպրոցները ունենան **վերապատրաստված** ու պրոֆեսիոնալ մասնագետներ:

ԿԱՊԿՈՒ մասնագետների միջուկ է պետք բոլոր մարզերում, որոնք հասանելի լինեն բոլոր դպրոցներին պրակտիկ հարցեր առաջանալու դեպքում: Ինչպես նաև մեծ քանակով **վերաատրաստումների** կարիք կա ուսուցիչների համար:

Առաջին հերթին բոլոր ուսուցիչների հետ պետք է աշխատեն: Ես ուսուցիչ եմ ու **վերապատրաստման** կարիք ունեմ:

Եթե տարբեր համայնքներում հաճախակի **սեմինարներ** անցկացվեն ծնողների ու ուսուցիչների համար, դա կբերի մեծ արդյունքի:

Մարդիկ այս թեմայի վերաբերյալ հիմնականում ինֆորմացված չեն, մանավանդ գյուղերում: **Սեմինարներ** է պետք անել:

Ուսուցիչ. մենք մասնակցել ենք սեմինարների և անհրաժեշտության դեպքում աշխատանքներ ենք տանում շահառուների հետ:

Անհատական ուսուցման պլանի դասընթացի ու **վերապատրաստման** ենք մասնակցել, հետո էլ հենց կենտրոնից գալու են դպրոց:

Դպրոցների բուժքույրերը պարտավոր են ունենալ լուրջ կրթություն, **վերապատրաստված** լինի, ինչպես նաև տեղյակ լինի ԿԱՊԿՈՒ երեխաների խնդիրների ու հնարավոր լուծումների մասին:

Պետք է դպրոցական բուժքույրերը **վերապատրաստվեն**, որպեսզի կարողանան օգուտ չի ստանում: Նախապես պետք է ուշադրություն դարձնել մասնագետների **վերապատրաստմանը**: Լավ մասնագետների պակաս շատ կա:

Նեղ մասնագետները վճարովի **վերապատրաստման** չեն գնում, որովհետև դպրոցը չի ապահովում: Եթե մասնագետն էլ 70 հազար պետք է տա վերապատրաստման, էլ ինչի՞ է աշխատում:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն:

Աջակցման կենտրոնի հետ շփվել ենք, միակ իմաստը եղել է էլեկտրոնային հաշվետվության տրամադրման եղանակներին ծանոթանալը: **Վերապատրաստում** չի եղել:

Այսօրվա դրությամբ ԿԱՊԿՈՒ թեմայով **սեմինարներին** մասնագետներին են հրավիրում, որոնց իրականում դա պետք չէ: Այդ սեմինարներին պետք է հրավիրել ուսուցիչներին ու ծնողներին, այլ ոչ թե մասնագետներին:

Ես մանկապարտեզի դաստիարակչուհի եմ, ես էլ եմ շատ ուզում **վերապատրաստվել**, տարբեր տեսակի բալիկներ ունենք, որոնց հետ աշխատում ենք սիրողական մակարդակով՝ ինչպես կարողանում ենք:

Մանկապարտեզում հատուկ սենյակի կարիք է

ԿԱՊԿՈՒ երեխաների խնդիրների մասին էլ տեղյակ լինեն:	լինելու, հատուկ մասնագետների, հատուկ **վերապատրաստման**, մենք անգամ մտավոր թերզարգացած երեխաներ ենք ունեցել, պահել ենք առանց հարմարությունների: Ես երաժիշտ եմ, ես էլ պետք է աշխատեմ ԿԱՊԿՈՒ բալիկների հետ, բա իմ **վերապատրաստման** հարցը. պետք է ինքնակրթմամբ զբաղվե՞մ:
Վերապատրաստումը միայն տեսական չպետք է լինի, նաև պետք է լավ պրակտիկա: **Վերապատրաստումը** պետք է ոչ թե լինի դասախոսական լեկցիաներ, այլ պրակտիկ դաշտում: Ես մասնակցել եմ **վերապատրաստման**, որտեղ միայն տեսական գիտելիք են տալիս: Դա բավարար չէ: Տեսական նյութ բավականաչափ ունենք, իսկ պրակտիկ հարցերի դեպքում **համակարգված մոտեցում** չկա: Ուղղակի ծանոթ մասնագետների հետ քննարկելով գալիս ենք ինչ-որ եզրակացությունների ու կիրառում ենք:	Վերապատրաստոմը պետք է ունենա երկու ճյուղ. նեղ մասնագետների **վերապատրաստում**, և ընդհանուր բազմամամսնագիտական խմբերի ընդհանուր վերապատրաստումներ՝ ընդհանուր կանոնների մասին: Իսկ հենց **վերապատրաստողները** ունե՞ն արդյոք հատուկ պրակտիկա այս բալիկների հետ աշխատելու, թե միայն թեորիա գիտեն ու վերջ:
Կրթության ազգային ինստիտուտին տրվող գումարներն պետք է ուղղել մանկավարժական անձնաազմի **վերապատրաստմանը**: Հանրապետական կենտրոնը **վերապատրաստում** չի կազմակերպում:	Պետք է առանձնացվեն այն կազմակերպությունների և անհատների անունները, ովքեր պատրաստ են **վերապատրաստելու** նոր մասնագետներին:
Պետք է ներդրում արվի ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մասնագետների անընդհատ վերապատրաստելու մեջ: Ամբողջ կոլեկտիվը **վերապատրաստվել** է, բայց դա յոթ տարի առաջ էր, դրանից հետո նոր վերապարտաստում չի եղել: Մեր ուսուցիչները վերապատրաստում անցել են մի անգամ, բայց դա բավարար չէ: Շարունակական վերապատրաստման կարիք ունենք:	Մանկվարաժներ կան, որ տասնհինգ-քսան տարի աշխատել են հատուկ դպրոցում, բայց չունեն **վերապատարստում** և կրճատվել են. հնարավոր չի՞ իրենք դառնան ուսուցչի օգնական:
ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու հատուկ **ձեռնարկներ** են պետք, հատուկ նյութեր, դրանք իսպառ բացակայում են:	Դասվարները հիմնականում **ինքնակրթությամբ** են զբաղվում և չունեն ռեսուրսներ՝ նաև մասնագիտական խորհրդատվություն, որ զարգացնեն իրենց ունակությունները: Ես ինքս եմ իմ ձեռքերով հատուկ խաղալիքներ պատրաստում, հատուկ նյութեր, շատ կուզենայինք **հատուկ ուղեցույց** ունենալ, ուզում ենք հասկանալ, թե ումից ինչ պահանջենք, երբ դրա ժամանակը գա:

Դ. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

Դ.1. ԿԱՊԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դեպքեր կան, երբ երեխան ուղղակի մաթեմատիկայից է թույլ, կամ սոցիալական վատ պայմաններում է ապրում, բայց **ներառվել** է ԿԱՊԿՈՒ-ի մեջ:

Դպրոցներից շատերը սոցիալապես խնդիրներ ունեցող երեխաներին **ներառում** են որպես ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Շատ են լինում դեպքեր, որ անգամ **գնահատման** ընթացքը սխալ են անում, և մենք գոհ չենք գնահատման ընթացքից:

Երբեմն գնահատման կենտրոնի տրված **գնահատումը** ոչ թե սխալ է, այլ մասնակի ճիշտ է, օրինակ մեր դպրոցի հենաշարժողական և մտավոր խնդիր ունեցող երեխայի գնահատման եզրակացությունն ուղարկվել էր որպես թեթև մտավոր թերզարգացվածություն:

Առաջնային **գնահատման** հարցաթերթիկների մեջ շատ հակասական բաներ կան. շատ խնդիրներով երեխաներ դուրս են մնում կիրառական կրթությունից:

Համընդհանուր ներառումը ճիշտ է, պետք է երեխայի դժվարությունները բացահայտել դեռ մանկապարտեզից, պետք է աշխատել ծնողի հետ:

Երեխան ծնվեց, խնդիրն արդեն այդ պահից պետք է իմանալ:

Պետք է լուրջ տարբերակում մտցնել ԿԱՊԿՈՒ երեխաների միջև ու կախված խնդրից, նրան ներառել կամ չներառել սովորական հանրակրթական դպրոցներում: Օրինակ, հոգեկան խնդիր ունեցող երեխային պետք է համապատասխան հաստատություն տանել, որովհետև վտանգավոր է:

Նախ պետք է ճիշտ **գնահատել** այս երեխաներին, սա շատ կարևոր է, և այն երեխաները, ովքեր ի վիճակի են սովորել բոլորի հետ, պետք է սովորեն հասարակ դպրոցում, նրանց չպետք է առանձնացնել, անգամ եթե պետք է սովորական երեխաներն օգնեն իրենց:

Ներառելուց առաջ պետք է երեխաներ հիվանդության աստիճանը հաշվի առնեն:

Մենք երեխային պետք է **ուսումնասիրենք** առանձին, հասկանանք, որից հետո ներառենք:

Երբ ներառական կրթությունը չկար, առաջ ասում էինք ծույլիկ, հիմա արդեն ամեն մեկը **գնահատվում** է:

Մենք հաճախ երեխային հասցնում ենք այն կետին, որ երեխան լավ է յուրացնում համապատասխան հարցերը, հաղթահարում է դժվարությունները, բայց չկա **վերագնահատման** գործընթաց:

Երեխա ունենք, որ երկու տարի է չեն **վերագնահատում**: Մենք էլ ստիպված հետը շարունակում ենք աշխատել, չնայած ժամանակի մեջ չենք տեղավորվում:

Գնահատումը պետք է կատարել ընդամենը երկու մակարդակում, և ոչ՝ երեք:

Պետք է լինեն հատուկ **չափանիշներ**, որոնցով ընտրեն այն երեխաներին, որոնք կարող են դասի նստել, մյուսներին էլ հատուկ դասընթացով աստիճանաբար կարողանան մասնակից դարձնել դասապրոցեսին:

ՄՈՒԿ դեպքերը, կախված բարդության աստիճանից, պետք է **համարվեն** ներառական:

Եթե ՄՈՒԿ-ի արդյունքում առաջացել է միայն հենաշարժական խնդիր, նա **ներառականի** կարիք չունի:

Շատերն են բողոքում, որ համապատասխան **գնահատում** չկա. ծնողը ամբողջ օրը երեխայի հետ է, իսկ գնահատումը երեք օրվա ընթացքում է կատարվում:

Մինչև երեխային **գնահատելը**, ծողի համձայնությունը պետք է տրվի, այսինքն

Ամենակարևոր բանը այս ոլորտում երեխաներին շատ ճիշտ **գնահատելն** է ճիշտ մասնագետի կողմից և՝ ոչ ինտուիտիվ, կամ էլ հենվելով ծնողի սիրողական կարծիքի վրա:

Շատ ծնողներ կան, որ խուսափում են աղջիկ երեխաներին տանեն **գնահատելու**, որովհետև մտածում են երեխան հետագայում ամուսնանալու

առաջին շփումը ծնողի հետ է:	խնդիր կունենա, և շատ տարածված պրակտիկա է որ աղջիկների ծնողներն ավելի շատ են խուսափում գնահատումից: Մեր փորձը ցույց է տալիս, որ **վկայագրումը** հիմնականում տեղի է ունենում երեխային որպես սովորական ոչ ԿԱՊԿՈՒ հանրակրթական դպրոց ընդունելուց հետո, և ի հայտ են գալիս նրա խնդիրները: Ծնողները սկզբում չեն համակերպվում այդ մտքի հետ, բայց հետո համոզվում են, որ երեխան հատուկ վերաբերմունքի կարիք ունի ու գրանցում են նրան:
Մեզ մոտ մտել էին մասնագետներ, մի ժամ դասալսումից հետո ասել էին այս երեք երեխաները **ներառական** են. դա ինչպե՞ս պետք է լինի: Անգամ **գնահատման** կենտրոնները հասանելի չեն: Երեխան պետք է մի քանի օր մնա **գնահատման** կենտրոնում, բայց դա ծնողների համար հասնալի չի, արդյունքում թերի է լինում գնահատումը: **Գնահատման** կենտրոններում մակերեսային են վերաբերում իրենց խնդիրներին: Երբ երեխաներին խմբով են **գնահատում**, երեխաները պետք է այնքան սպասեն, մինչև խմուբը հավաքվի: Գնահատման պրոցեսները շատ հաճախ չեն համապատասխանում. երեխան գալիս է դպրոց այլ գնահատական է ստանում, աջակցման կենտրոնում՝ այլ:	Երեխայի **ստուգումն** անելուց հետո պետք է սերտիֆիկատ և տեսողական սարք կամ անվասայլակ տրամադրվի:

Դ.2. ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Հիմնական դպրոցներում պետք է հասկանան, որ ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ պայմաններ ու վերաբերմունք է պետք: Դեռևս **ուսուցչի օգնականի** մեծ պակաս ունենք: Թեքահարթակների խնդիր ունենք: Մեր դպրոցում, օրինակ, դեռևս թեքահարթակներ չկան: Մենք ունենք ուսուցչի **օգնականներ**, բայց դեռ հստակ չենք պատկերացնում նրա դերը և պարտականությունները: Օրինակ՝ Եվրոպայում ցանկացած խնդրով երեխային կցվում է մի **օգնական**, մեզ մոտ էդպես չի լինում: Տասնհինգ ԿԱՊԿՈՒ երեխայի հաշվով մեկ ուսուցչի **օգնականը** բավարար չէ, մանավանդ	Խնդրում եմ հիմնավորեք, թե ինչո՞ւ է ուսուցչի **օգնականը** ստանում ավելի քիչ. նա ավելի շատ գործ է կատարում, քան մյուսները: Ուսուցչի **օգնականը** միայն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար չպիտի լինի, այլ խնդիրներ էլ ունի: Ուսուցչի **օգնականը** պետք է միայն այն դեպքում, երբ կան ծանր երեխաներ, օրինակ, աուտիկ երեխաների հետ հասարակ դասվարն էլ կարող է աշխատել: Ենթադրենք երկու-երեք դասարանում միաժամանակ մի քանի խնդիր է առաջանում: Այս դեպքում **օգնականի** ներկայությունը չեմ հասկանում, թե ինչի համար է:

եթե այդ երեխաները տարբեր դասարաններում են:

Մեկ **մասնագետը** քիչ է, դասի ժամին մի քանիսը պետք է լինեն:

Պետք է ուսումնասիրություն արվի, թե քանի ԿԱՊԿՈՒ երեխա կա կոնկրետ դպրոցում, քանի՞ ուսուցչի **օգնական** է պետք:

150 երեխայի համար մեկ ուսուցիչ **օգնականը** ոչինչ չի կարողանում անել:
Եթե լինի ուսուցչի **օգնական**, նա արդեն կարող է առանձին աշխատել երեխայի հետ:

Իմ երեխային օգնում է, որ ուսուցիչն ունի օգնական: Նա օրվա ընթացքում կարող է երկու-երեք ժամ տրամադրել իմ երեխային, արդյունքն ակնհայտ է:

Քանի որ իմ կարծիքով մեկ ուսուցչի **օգնականը** տասնհինգ ԿԱՊԿՈՒ երեխայի հաշվով բավարար չէ, ես առաջարկում եմ, որ համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետը իր ուսանողներին պրակտիկայի ուղարկի դպրոցներ: Դրանով նաև բուհի պրակտիկ կրթություն չտալու խնդիրը կլուծվի:

Դպրոցներում թող մնան նեղ մասնագետները, իսկ ուսուցչի **օգնականի** հաստիքը կարելի է տալ համալսարանի ուսանողին, ով կամավոր կաշխատի, ստաժ էլ կունենա: Սրանով պետության փողերը կխնայենք:

Լավագույն լուծումը՝ մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտին մեկ ուսուցչի **օգնական**:

Ուսուցչի **օգնականի** պարտականությունները հստակ չեն: Այսօր սխալ բաշխում է արվել, ուսուցչի օգնականի պաշտոնը դպրոցի շատ աշակերտների պետք չէ:

Լրացուցիչ մանկավարժներ և մասնագետներ են պետք երեխաների համար:

Մասնագետների հաստիքները կախված են ներառական երեխաների քանակից: Եթե այդքան երեխա չունենք, այդ բոլոր հաստիքները չենք կարող ապահովել:

Մեկ տարուց ավել երեխայիս հետ գնացել եմ դպրոց, մասնակցել եմ պրոցեսին: Նոր-նոր աջակցման կենտրոնից մեկ ժամով ինչ-որ **մասնագետ** գալիս է: Հիմա մասնագետի պակասը ահավոր զգացվում է:

Մեր դպրոցում **սոց. աշխատող** չունենք, հոգեբան չունենք: Ուսուցիչը ստիպված բոլոր գործառույթները պետք է իրականացնի:

Ճիշտ է ուսուցչի **օգնական** ունենալը, հակառակ

Կան ուսուցչի **օգնականներ**, ովքեր, օրինակ, ինչ որ մի առարկայից բացարձակ գաղափար չունեն, բա ինչ պետք է անել այս դեպքերում:

Ես հիմա չեմ կարողանում ոչ ուսուցչին բացատրեմ իր անելիքները, ոչ **օգնականին**: Ուղեցույցները այնքան լղոզված են, որ չենք կարողանում հստակ ասենք իրենց անելիքները:

Շատ կարևոր է, որ ուսուցչի **օգնականը** ուսման ընթացքում պրակտիկա անցնի դպրոցներում, որպեսզի նախապես հասկանա, թե ուսուցչի օգնականի համար այդ գեղեցիկ գրված գործառույթները իրականում ճիշտ են գրված, աշխատում են, թե ոչ:

Ուսուցչի **օգնականը** կա, բայց անունը կա, ամանումը չկա:

Ուսուցչի **օգնականի** պարտականությունները հստակ չեն: Այսօր սխալ բաշխում է արվել, ուսուցչի օգնականի պաշտոնը դպրոցի շատ աշակերտների պետք չէ:

Ուսուցչի **օգնականի** վրա դնում ենք հատուկ մանկավարժի պարտականություններ. պետք է հստակ գործառույթներ նշել:

Մենք ժամանակից առաջ ընկնելու պրոբլեմ ունենք: Նախ՝ ուսուցչի **օգնականի** ինստիտուտն է պետք ներդնել նորմալ կերպով, նոր համընդհանուր ներառականություն ապահովել:

Ունենք ուսուցչի **օգնական**, որը մագիստրատուրայում սովորել է լոգոպեդի ծրագրով: Բայց նման հաստիք դժվար ստեղծվի դպրոցում:

Մեկ **մասնագետը** ճիշտ է, որ մեր դասարանի նման երեխաներին ավելի լավ ճանաչենք, կարողանանք օգնել նրանց:

Փաստ է, որ չունենք համապատասխան մասնագետներ, դպրոցներում ու այլ վայրերում ԽԾԲ-ն գործում է: Լրիվ անհասկանալի է ուսուցչի **օգնականի** հաստիքը, դա լինում են մարդիկ, ովքեր չեն կարողանում ուսուցիչ դառնալ ու դառնում են օգնական:

Դպրոցում երրորդ դասարանում սովորող երեխաները, որոնց կրթական մակարդակը համապատասխանում է առաջին դասարանի մակարդակին, դասի նստում են իրենց հասակակիցների հետ, բայց հատուկ մանկավարժը դասերից դուրս աշխատում է այդ երեխաների հետ այլ ծրագրով:

Ուսուցչի **օգնականը** պետք է փոխարինվի հատուկ մասնագետ, որն ունի գիտելիքներ, ոչ թե

դեպքում երեխան կառանձնանա, դա սխալ է:

Մինչև չորրորդ դասարան սովորական դպրոց էր գնում, հետո ստիպված տարել եմ հատուկ դպրոց, եթե այն ժամանակ լիներ ուսուցչի **օգնական**, կթողնեի սովորական դպրոցում:

Ես որպես դպրոցի տնօրեն պահանջել եմ, որ մեր դպրոցին տրամադրեն **լոգոպեդի**, **հոգեբանի**, ուսուցչի **օգնականի**, **սոց. աշխատողի** հաստիքներ, այլապես ներառականությունը հնարավոր չէ:

Մենք չունենք **հատուկ մանկավարժներ**:

Ներառականը, որ ներդրված է, արդեն լավ է, բայց **մասնագետները** դեռ պատշաճ չեն զբաղվում իրենց գործով:

Սկզբնական փուլում աշխատում ենք երեխայի հետ, արդեն կարողանում է նստել դասին: Բայց ուսուցիչը չի կարողանում կենտրոնանալ առանձին-առանձին յուրաքանչյուրի վրա: Եթե ներառում են, անհրաժեշտ է **մասնագետ**, որը չունենք:

Այսօր ԿԱՊԿՈՒ երեխային ընդունելու մատուցման ձևն է սխալ. ոչ մեկ ոչինչ նորմալ չի հասկանում, ոչ մի նորմալ **մասնագետ** չունենք, ամեն ինչը սիրողական մակարդակի է:

Կոնկրետ մեր հաստատությունը տեխնիկապես պատրաստ է ներառական համակարգին: Միայն **մասնագետ** չունենք: Դիմել ենք, խնդրել ենք քաղաքապետին, ասում է, որ դա իր խնդիրը չի, թող տանը պահեն:

Ձեր ասած «**սուպեր**» մասնագետի մասին խոսք լինել չի կարող, մենք նույնիսկ ոլորտն ամբողջությամբ չենք պատկերացնում:

Ունենք ճիշտ մոտեցում ունեցող **մասնագետների** պակաս: Դիպլոմը բավարար չէ, պատկերացում չունեն, թե ինչ աշխատանք պետք է անեն:

Միջազգային կազմակերպությունում հատուկ **մասնագետների** աշխատանքը վեց ժամը չի գերազանցում, իսկ դպրոցում յոթ ժամ ենք աշխատում:

Իմ անհատական պարապմունքները ամեն օր են՝ յոթ ժամով: Եթե գալիս, տեսնում են նստած ես, ասում են՝ ինչո՞ւ ես անգործ:

Եթե մի դասարանում լինի ուսուցիչ ու **օգնական**, դա չի աշխատի: Ենթադրենք կա թերզարգացած երեխա՝ խոսքի մասով: Պատկերացրեք ուսուցիչը խոսում է, ես էլ օգնում եմ, բացատրում եմ իմ աշակերտին: Բնականաբար մյուս աշակերտները կկենտրոնան իմ՝ մասնագետիս վրա, չեն լսի ուսուցչին: Արդյունքում, կտուժի և՛ ուսուցիչը, և՛ գերազանցության դիպլոմ:

Ես այն կարծիքին եմ, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխայի հետ միայն **ուսուցչի** աշխատանքը արդյունք չի ապահովի:

Երեխայի հետ պետք է աշխատեն և՛ ծնողը, և՛ **մասնագետը**:

Ես ուսուցչի **օգնական** եմ ու հենաշարժային խնդրով երեխային ես եմ տեղափոխում անհրաժեշտության դեպքում՝ զուտ մարդկային վերաբերմունքից ելնելով: Դա իմ պարտականությունների մեջ չի մտնում:

Մեր մոտ դասվարն ու ուսուցիչն ասում են, որ

հատուկ երեխան, և՛ մնացած աշակերտները:

Ուսուցչի **օգնականի** հաստիքը սխալ է, եթե ուսուցիչը աշխատում է, պետք է հստակ պարտականություններ ունենա ու ինքը կատարի դրանք:

Ուսուցչի **օգնականը** դպրոցում ֆոֆռում է, ստանում ահագին աշխատավարձ:

Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, պարբերաբար այցելում եմ դպրոց, բայց երբեք չեմ հանդիպել ու չեմ տեսել ուսուցչի **օգնականին**, որ իրականում այնտեղ կա:

Ուսուցչի **օգնական** և ուսուցիչ հարաբերություններում հոգեբանական խնդիրներ կան, աշխատավարձերը տարբեր են, աշխատաժամանակը ևս:

Ավելի լավ է **օգնականի** հաստիքի փոխարեն ուսուցչի աշխատավարձը բարձրացնել, ավելի մեծ եռանդով կաշխատի:

Ի սկզբանե կար խնդիր բազմամասնագիտական անձնակազմի և **մասնագիտական** անձնակազմի միջև:

Թուղթ կտրող-ճմրթող-անկյուն կանգնացնողներ ունենք, որոնք հաշվետվություն են լրացնում: Թղթի վրա **մասնագետներ** կան, բայց իրականում՝ ոչ:

օգնականի աշխատանքի արդյունքը հստակ տեսնում են:

Եթե դասարանում մի քանի ԿԱՊԿՈՒ աշակերտ կա, ուսուցչի **օգնական**, ուսուցիչ, աշակերտներ համատեղ կարող են ապահովել ներառականությունը:

Դասվարն ու ուսուցիչը նախորոք համաձայնեցնում են **օգնականի** հետ գրաֆիկը և բավականին արդյունավետ աշխատում են:

Ուսուցիչներին **օգնականներ** պետք են պարտադիր, իրական հանրակրթականներին էլ են նույնիսկ պետք:

Մանկաբույժի խնդիրներ կան համայնքներում, մեզ պետք են պրոֆեսիոնալ մանկաբույժներ մարզերում:

Հենց դուրս ենք գալիս դպրոցից, ամենակարևոր անձը դառնում է **բուժքույրը**: Իրենցից է սկսվում ծնողների ու անձամբ երեխայի հետ աշխատանքը:

Յուրաքանչյուր դպրոց պետք է իջեցնի այն **հաստիքը**, ինչի կարիքն ունի՝ կախված ինչ ԿԱՊԿՈՒ բալիկներ կունենա:

Ծանր խնդիրներ ունեցող երեխաների համար դպրոցներում պետք է լինի **անձնական դայակներ**:

Պետք է դպրոցներում առանձին **խոհարարի** հաստիք էլ լինի:

Շատ դպրոցներ անգամ հասարակ **լոգոպեդ** չունեն, որովհետև ԿԱՊԿՈՒ երեխաների բավարար քանակ չկա:

Մասնագետների քանակը՝ մեկ **լոգոպեդ**, մեկ **հոգեբան**, շատ քիչ է: Բազմամասնագիտական թիմի առկայությունը պարտադիր է, բայց դպրոցի ներսում:

Որոշ դեպքերում ներառականությունը ձևական է դառնում ու սխալ արդյունքի է բերում: Օրինակ, երեխան **լոգոպեդի** կարիք ունի, բայց մեր դպրոցը նրան չի կարողնաում դա տրամադրել: Ներառականությունն ապահովվում է, բայց ինչը նրան իրականում պետք է, նա չի ստանում:

Գյուղերում չունեն **լոգոպեդներ**, **հոգեբաններ** ու

Իմ երեխան, ով դպրոցում աշխատում է **լոգոպեդի** հետ, նրա տված աշխատանքներն ավելի հաճույքով է կատարում, քան դպրոցի դասատուներինը:

Դպրոցների մեծամասնությունում **հոգեբաններն** ու **լոգոպեդները** գրանցված են որպես աշխատող, բայց աշխատանքի չեն գալիս:

բոլոր անհրաժեշտ նյութերը, որպեսզի կարողանան անհրաժեշտության դեպքում օգնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Մենք, օրինակ, չունենք լոգոպեդ: Կենտրոնի **լոգոպեդը** կարողանում է ամեն դպրոց այցելել ամիսը մեկ անգամ: Մասնագետների քանակը քիչ է: Ինձ պատասխանել են, որ չունենք **լոգոպեդ** և այլ հատուկ մասնագետներ, ուստի ես եմ զբաղվում երեխայի հետ: Ծնողները խուսափում են **լոգոպեդի** անհատական պարապմունքի տանել երեխային, վճարելու խնդիր կա, հաճախ տնօրենները չեն պահանջում, որ դպրոցում լինի լոգոպեդ: Շատ կուզենայի մանկապարտեզներում լինեն **լոգոպեդներ** ու **հոգեբաններ**: Մենք 51 երեխա ունենք, որից միայն հինգը հարմարեցման կարիք ունի, մնացածը՝ **լոգոպեդի**, հոգեբանի կարիք ունեն: Ծնողը ուրախացել է, որ դպրոցում **լոգոպեդ** կա: Սակայն աշխատում եմ երեխայի հետ միայն երկրորդական դասերին: Դա չի բավականացնում:	
Լոգոպեդը չի կարող այլ մասնագետների բնագավառից էլ խորհուրդներ տալ և նյութեր ձեռք բերել: **Լոգոպեդները** աշխատում են դպրոցում առանց համապատասխան նյութերի ու գործիքների, քանի որ դպրոցը չի ապահովում:	Այսօրվա դրությամբ խոսելու պրոբլեմ ունեցող երեխան նույն սենյակում է, ինչ մտավոր խնդիր ունեցող երեխան: Մեկի հետ **լոգոպեդն** է աշխառում, մյուսի հետ **հոգեբանը**, ու այդպես չի ստացվում: Լավ կլինի, որ տարբեր սենյակներում լինեն, բայց դասասենյակների խնդիր ունենք: **Լոգոպեդի** ու **հոգեբանի** համար առանձին սենյակներ չկան հաճախ:
Մանկապարտեզում **հոգեբանի** անհրաժեշտությունը ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների համար են, այլև մնացածի: Շատ ենք հանդիպում, որ հասարակ երեխաները և՛ ագրեսիվ են, և՛ դասի չեն նստում, և՛ ընկերասեր չեն: Այդտեղ արդեն հոգեբանը միանշանակ ցանկալի է: Մանկապարտեզում ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, ովքեր չեն ուզում օրինակ քնել կամ ուտել, ինը ժամ մեր հսկողության տակ են լինում, մեզ **հատուկ դաստիարակներ** են պետք լինելու:	**Մանկապարտեզում** անհրաժեշտ է նեղ մասնագետ, ոչ թե հոգեբան: Ցանկացած դաստիարակ հոգեբան է: Մանկապարտեզներում պետք է դաստիարակը ունենա համապատասխան **մասնագետ-օգնական**, ով կօգնի խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելուն:
Ուսուցիչները նույնպես դժվար է աշխատել խնդիրներ ունեցող երեխաների հետ ու դպրոցում պետք է նաև **հոգեբան** մասնագետ լինի, ով կօգնի ուսուցիչներին: Սովորական երեխաների հետ նույն դասարանում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների ծնոնղերի հետ	**Հոգեբանը** կամ **հատուկ** մանկավարժը ինքը պետք է հասկանա՝ երեխային ո՞ր խմբում և ե՞րբ ներառել:

պետք է **հոգեբաններ** աշխատեն:

Հոգեբանը համարվում է ամբողջ դպրոցի հոգեբանը, նա չի հասցնում բոլորին:

Մեր դասարանում կար կարիքներով աշակերտ, կային **հոգեբաններ**, բայց ծանոթ չէին իրենց մեթոդներին: Մենք ենք հուշել մասնագետին, որ զբաղվի մեր դասարանի մի տղայի հետ: Մատների արանքով էին նայում:

Մեր համայնքներում սոցիալական աշխատանքն է կաղում: Այսօրվա դրությամբ **սոցիալական աշխատողների** մեծ կարիք ունենք:

Սոցաշխատողի և դպրոցի ներառական մասնագետների կողմից արվել է ամեն ինչ, որ տվյալ երեխան այցելի դպրոց: Բայց նա չի ցանկանում, այլ միջոցներ չգիտեմ:

Ես տնօրեն եմ, բազմիցս բարձրաձայնել ենք խնդիրները, ունենք աուտիզմով երեխա: Դիմել ենք նույնիսկ նախարարին **մասնագետի** համար: Ոչ մի արձագանք չկա:

Ե. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ե.1. ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՅՔ, ՄԱՐԶԱԴԱՀԼԻԾ

Ներառական կրթության ասվածի մեջ պետք է սահմանափակումներ լինեն, կան երեխաներ, ում կրթությունը մեր մոտ անհամատեղելի է, ոչինչ չունենք իրենց **հարմարեցված**:

Դպրոցներում չկան ոչ մի **հարմարություններ** ու դա միայն թեքահարթակը չէ, նաև լուսավորության խնդիրը նույնպես իր ուրույն տեղը ունի:

Հիմնական դպրոցներում պետք է հասկանան, որ ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ **պայմաններ** ու վերաբերմունք է պետք: Դեռևս ուսուցչի օգնականի մեծ պակաս ունենք: **Թեքահարթակների** խնդիր ունենք: Մեր դպրոցում, օրինակ, դեռևս թեքահարթակներ չկան:

Դպրոցներում կա՛մ չկան **թեքահարթակներ**, կա՛մ եղածներն էլ չեն համապատասխանում ստանդարտներին, և ֆիզիկապես առողջ մարդը չի կարող բարձրանալ:

Կառուցելուց առաջ պետք է ճիշտ հաշվարկեն օրինակ **թեքահարթակը**, այլ ոչ թե կառուցելուց հետո ժողով անեն որոշեն պետք է քանդել, որովհետև ստանդարտներին չեն համապատասխանում:

Դպրոցում ունենք երեխա, որն ունի **հենաշարժողական** խնդիր: Բայց ներառական կրթության հատուկ պայմանների կարիք չունի, շատ լավ շփվում է այլոց հետ:

Ես աշխատում եմ հաշմանդամ երեխաների հետ: Մենք **թեքահարթակ** չունենք, բայց օգնում ենք տեղափոխվել, զբաղվում ենք իրենց հետ, դրա համար էլ ուզում են մեզ մոտ մնալ:

Մեր դպրոցում **թեքահարթակների** խնդիրներ ունենք, դռների նեղության և այլն: Դրա համար մենք ԿԱՊԿՈՒ աշակերտ ունեցող դասարաններն իջացրել ենք առաջին հարկ:

Ֆիզիկական մատչելիության խնդիրն ամենահեշտ լուծելին է: Կարելի է տարանջատել այդ տեսակները ներառականից:

Մենք 51 երեխա ունենք, որից միայն հինգը **հարմարեցման** կարիք ունի, մնացածը՝ լոգոպեդի, հոգեբանի կարիք ունեն:

Կոնկրետ մեր հաստատությունը **տեխնիկապես** պատրաստ է ներառական համակարգին: Միայն մասնագետ չունենք: Դիմել ենք, խնդրել ենք քաղաքապետին, ասում է, որ դա իր խնդիրը չի, թող տանը պահեն:

Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը **նորոգելուց** հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև մասնագետների կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը ընդհանուր դասարանում, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն

Մեր դպրոցի առաջին հարկում դասարաններ չկան, **հենաշարժողական** խնդիրներ ունեցող երեխաների համար դժվար է տեղափոխվելը:

Գավառում կա դպրոց, որը տարածաշրջանում ապահովում է ներառական կրթություն. կան մասնագետներ, ովքեր լիարժեք աշխատում են, բայց **ֆիզիկական** պայմանները բավարար չեն:

Մեր կենտրոնը, օրինակ, սերտ համագործակցում է մեր դպրոցի հետ, բայց դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց վատ են զգում, ոչինչ **հարմարեցված** չէ:

Դպրոցի պայմաններն էլ մեծ նշանակություն ունեն, երեխան **սայլակով** է, բայց դռան չափը չի համապատասխանում, կամ մնում են առաջին հարկում:

Դպրոցները բարեկարգման կարիք ունեն ու **հարմարացվեն** նաև խնդիրներ ունեցող երեխաներին:

Առաջին հերթին **շենքային** պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ հասարակությունը դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի մանկապարտեզից, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Այսօրվա դրությամբ խոսելու պրոբլեմ ունեցող երեխան նույն սենյակում է, ինչ մտավոր խնդիր ունեցող երեխան: Մեկի հետ լոգոպեդն է աշխառում, մյուսի հետ հոգեբանը, ու այդպես չի ստացվում: Լավ կլինի, որ տարբեր սենյակներում լինեն, բայց **դասասենյակների** խնդիր ունենք:

Համայնքում ունենք **հենաշարժողական** խնդիրներ ունեցող մանկապարտեզի տարիքի երեխաներ, նրանք մանկապարտեզ չեն հաճախում, ինչպես հաճախեն առանց հարմարությունների:

Դպրոցը սարքում են ներառական, առանց հաշվի առնելու այդ դպրոցի պայմանները, հնարավորությունները, առանց վերապատրաստելու ուսուցիչներին, առանց վերանորոգելու **սանհանգույցները**, առանց սարքելու առանձին սենյակներ և այլն:

Դպրոցների մեծ մասում **սանահանգույցները** հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Դպրոցներից իսպառ բացակայում են հատուկ **սանհանգույցները**:

դասարանում:

Մենք գնահատել ենք շատ երեխաներ, որոնք **ֆիզիոթերապիայի** կարիք ունեն: Ոչ մի դպրոց մեզ մոտ չի կարող իրեն սա թույլ տալ: Գումարը դպրոց է գնում, բայց մասնագետ չկա, հսկող չկա:

Պետք է սկզբից ներառեն երեխաներին, հետո նոր պայմաններ ստեղծել: Օրինակ՝ կարող է լինել, որ **թեքահարթակի** կարիք չլինի:

Մեզ մոտ **զուգարանները** հարմարեցված չեն երեխայի կարիքներին: ԴՑՊ ունեցող երեխային մենք ենք ուղեկցում զուգարան կամ բուֆետ:	
ԴՑՊ ունեցող երեխան նախ տեղաշարժման հետ կապված խնդիր ունի, իսկ դպրոցում հարմարեցված սեղան ու աթոռ չկա, երեխան չի կարողանում կոորդինացիան պահել: Մեր դպրոցում ՄՈՒԿ ունեցող երեխայի ծնողն է հարմարեցված **աթոռ** սարքել, բերել դպրոց: Ունենք մի բալիկ, ով գովասանագիր պետք է ստանար, բայց **տեսողական** խնդիր ունի և չէր կարողանում անգամ իր գովասանագիրը կարդալ: Բայց այդ բալիկը շատ ֆինանս է բերում դպրոց, փաստը մնում է փաստ, որ նրա խնդիրը այդպես էլ չի լուծվել: Դասասենյակում չկան որևէ հարմարություններ թույլ տեսողություն ունեցող երեխաների համար: Երեխաների հաշվով ֆինանս է հատկացվում դպրոցին, բայց էս երեխան անգամ **լսողական** սարք չունի, պետք է շատ հարցեր վերանայվեն: Մեր հանրակրթական դպրոցում ունենք մի «ծանր» խնդիր ունեցող երեխա, որը հեռու գյուղից է գալիս, քանի որ նրա ծնողները ուզում են, որ նա հաճախի հենց մեր դպրոց: Նա այցելում է դպրոց ամիսը մեկ անգամ, այնքան որ ուսուցիչները նրան տեսնեն: Նա կես ժամից ավելի դասին չի դիմանում, օրինակ պառկել է պետք լինում, բայց մենք դեռևս նմանատիպ հարմարություններ չունենք:	Մենք **հարմարեցման** կարիք ունեցող երեխայի կարիքով ենք առաջ շարժվում, վատ տեսնելու դեպքում՝ առաջ ենք նստեցնում, մուգ ենք գրում:

Ե.2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Եթե մարզում միայն մի կենտոն կա, դա բավարար չի, դժվար է հասնել հեռու համայնքներից: Մեկ կենտրոնը մարզի համար բավարար չէ, տարածքային առումով կտրտվածությունը շատ է, միջհամայնքային տրանսպորտը վերանում է: **Սոցիալական** ծանր պայմաններում ապրող գյուղերի բնակիչները տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել նախակրթարաններ: Կախված երեխայի բնակության վայրից, **սոցիալական** խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը, որի	ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն: Ներկայումս **ճանապարհածախս** և **սնունդ** չի տրամադրվում: Ծնողը պետք է ստանա գումար՝ տրանսպորտային ծախսերի համար: Ներկայումս ամեն տեսակ բյուրոկրատիա և պատճառաբանություններ են ստեղծվել, որ գումարը չտան: Ես իմ բալիկին իմ ուժերով եմ **տանում-բերում** դպրոց. նա քայլել չի կարողանում:

որակը հաճախ կասկածելի է: Գոնե պետք է լուծել **տրանսպորտի** խնդիրը, շատերը անգամ հատուկ սայլակ չունեն: Գյուղական համայնքներում բացառվում է, որ **տրանսպորտը** կարող է օգնել խնդիրներ ունեցող երեխաներին: ԿԱՊԿՈՒ երեխաներին տրվող երկու հարյուր դրամը հաշվարկված է Երևան քաղաքի օրինակով, հաշվի չեն առել մարզերի առանձնահատկությունները, որտեղ ներքաղաքային **տրանսպորտային** ցանցը բացակայում է, ստիպված օգտվում են տաքսիներից, որը շատ ավեի թանկ է: Ես ԿԱՊԿՈՒ երեխայի ծնող եմ, ու ինձ ասել են, որ միայն մի դպրոց կա, որտեղ իմ երեխային կարող են ընդունել: Ես չէի կարող իմ երեխային այդ դպրոց տանել, քանի որ սայլակի ու **տրանսպորտի** խնդիր կա: Բայց հիմա պարզվում է, որ մոտակա դպրոցն էլ կարող է ընդունել իմ երեխային: Բայց այնտեղ էլ մասնագետի խնդիր կա: Հենաշարժողական խնդիրներով երեխաներին ծնողները նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց **տանել-բերելու խնդիր** կա:	
Այսօրվա տրված **գումարով** երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿԻ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար: Տրանսպորտի **գումարն** էլ բավարար չի:	Խնդիրներ ունեցող երեխաների **տրանսպորտի** հարցը առաջնահերթ է ու պետք է պետությունը կամ դպրոցը այդ հարցը արագ լուծի ու կարգավորվի այդ ոլորտը:

Ե.3. ՍՆՈՒՆԴ

Երբ տրամադրվում էր **սնունդ**, դա ինքնին տարբերակում էր մտցնում երեխաների մեջ. ներառականները ստանում էին, մնացածը՝ ոչ: Հիմնականում ներառականների համար առանձին սնունդ ապահովելը առանձնապես նպատակային չէ: Ամեն դեպքում ծնողները այդ մասով ապահովում են իրենց երեխաներին սննդով: Սխալ է, երբ սնունդը տալիս են երեխայի ձեռքին ու ուղարկում են դասարան. դասարանում կան **սոց.անապահով** երեխաներ: Մենք ներառական երեխաներին ամեն օր	Կարող է շատ լավ սովորող երեխա լինի, ով սոված է գալիս դպրոց: Դպրոցը պետք է ապահովի բոլոր երեխաների **սնունդը**: Պետք է և՛ խնդիրներ ունեցող, և՛ առողջ երեխաները նույնը ստանան ու սննդային տարբերություն չդրվի: Հատուկ երեխաները **սնունդը** չեն տանում ընդհանուրի մոտ, երբ գալիս են առանձին դասաժամի, այդ ժամանակ են ուտում:

կերակրում ենք դպրոցում, բայց այստեղ էլ հակառակ իրավիճակ է. ինչո՞ւ առողջ բալիկները ուտել չեն ուզո՞ւմ: Դասասենյակում սխալ է **ուտել** նաև հիգիենիկ պայմանների հետ կապված: ԿԱՊԿՈՒ երեխաների համար դպրոցում առանձին ապահովում ենք սննդով, մյուսներին՝ ոչ: Մենք գումար ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին **սնունդ** տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչու է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել: Եթե բոլորը պետք է հավասար լինեն, **սնունդը** արդեն անհավասարություն է: Կան դպրոցներ, որտեղ չեն հետևում ներառական խնդիրներ ունեցող երեխաների սննդակարգին ու տալիս են նույն **սնունդը**, որը տալիս են նաև խնդիրներ չունեցող երեխաներին:	
Յուրաքանչյուր ներառական դպրոցին երեք մասնագետ է հատկացվում՝ հոգեբան, հատուկ մանկավարժ և սոցմանկավարժ, դրան գումարած սնունդ, հատուկ ձեռնարկներ, նյութեր և այլն, գումարը այսքանին ինչպե՞ս կբավարարի: Այսօրվա տրված գումարով երեխաների սնունդի և գրենական պիտույքների հարցը հանարավոր է լուծել, սակայն մենք ունենք տրանսպորտի խնդիր. մեր դպրոցը 49 ԿԱՊԿՈՒ աշակերտ ունի, նախնական հաշվարկով 900 հազար դրամ է անհրաժեշտ նորմալ տրանսպորտ ապահովելու համար:	ԿԱՊԿՈՒ երեխաների համար տրամադրվող գումարը պետք է հավասարաչափ բաժանվի՝ մանակվարժների **վերապատրաստում**, տարածքերի հարմարացում, սնունդ, տրանսպորտ և այլն: Տարրականի **սնունդով** կարողանում ենք ապահովել նաև անապահովներին և ներառականներին:
Ներկայումս **ճանապարհածախս** և **սնունդ** չի տրամադրվում:	Վայոց Ձորում շատերը երեխային ներառական են գրանցում, որ **սնունդ** ստանան: Ծնողները գոհ էին, որ երեխաները **սնունդ** էին ստանում: Ուտելու ժամանակ երեխաները հաճույքով շփվում էին միմյանց հետ, հիմա անհավես են գնում դասի:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կախված երեխայի բնակության վայրից, սոցիալական խնդիր կա, հաճախ մի քանի տրանսպորտ են փոխում, դրա համար ծնողն ընտրում է **տնային** ուսուցման տարբերակը, որի որակը հաճախ կասկածելի է:

Ծնողներից շատերը ուզում են **տնային** ուսուցում, դա հեշտացնում է, նաև չի ուզում երեխայի մասին շատ մարդ իմանա:

Չի բացառվում, երբ ամեն ինչ սկսի աշխատել, ինչ որ փուլից ծնողը որոշի, որ անկախ ամեն ինչից ավելի արդյունավետ է **տնային** ուսուցումը:

ԿԱՊԿՈՒ ծնողներ կան, որ ասում են, իմ երեխային պետք չէ անգլերենի դաս, որը նա միևնույն է չի սովորելու, ավելի լավ է, թող համապատասխան մասնագետ գա իմ **տուն** ու իմ երեխային անկախ կյանքի նախապատրաստի:

ԿԱՊԿՈՒ երեխաների տասը տոկոսը դեռ տանն է և ոչ մի բանի չի մասնակցում:

Մոռանում ենք, որ արդեն կա տասներկու տարեկան երեխա, որը մինչև հիմա տանն է: Համընդհանուր ներառում ենք, այդ երեխան ի՞նչ է անելու: Նա չի կարող միանգամից մտնել դպրոց:

Այսօրվա դրությամբ, օրենքը տնային ուսուցումը չի կարգավորում: Բայց դա անհրաժեշտ է: Մենք կարող ենք գումար տրամադրել ուսուցչին, որպեսզի նա գնա ու տանը կրթի ԿԱՊԿՈՒ երեխային: Սակայն, գումարը քիչ է, աշխատանքից հետո ուսուցիչը հոգնած է լինում ու, բացի դրանից, ուսուցիչները հիմնականում հոգեբանական խնդիր են ունենում երեխային տանը կրթելու հետ կապված, չեն ուզում ուրիշի տանը աշխատանք իրականացնել:

Ես գնում են **տնային** ուսուցման, բայց չգիտեմ՝ պիտի վճարվեմ, թե՝ ոչ, դա դասաժամ համարվում է, թե՝ ոչ:

Արդյոք՞ այդ երեխաներին պետք է, որ իրենք դպրոց գան: Օրինակ՝ աուտիզմով երեխաների հետ դժվար է, հնարավոր է իրենց ինչ-որ անձ վանի ու ընկնեն սթրեսի մեջ:

2.2. ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ուզում եք ներառել ԿԱՊԿՈՒ երեխաներին, թող ոչ թե դասերին մասնակցեն, այլ ասենք հատուկ **խմբակներին** մասնակցեն:

Որոշ դասերի դեպքում մենք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ **առանձին** ենք պարապում:

Սովորական երեխաները և հատուկ երեխաները պետք է նույն դպրոց հաճախեն, բայց պետք է **առանձին** սովորեն, այլ մեթոդներով պետք է կազմակերպվի նրանց ուսուցումը:

Խորը խնդիրներով երեխան ֆիզիկապես չի կարող դասի նստել: Ամենաշատը **5-10 րոպե** կարող են մնալ դասարանում:

Կան բալիկներ, ովքեր չեն կարողանում անգամ դասարանում **քսան րոպեից** ավելի նստել, այս երեխաներին հաստատ հատուկ օժանդակություն է պետք:

Եթե բոլորը իրար հետ սովորեն, ընդհանուր կրթական մակարդակը իջնելու է շատ:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատում են, բայց

Դպրոցում երրորդ դասարանում սովորող երեխաները, որոնց կրթական մակարդակը համապատասխանում է առաջին դասարանի մակարդակին, **դասի նստում են** իրենց հասակակիցների հետ, բայց հատուկ մանկավարժը դասերից դուրս աշխատում է այդ երեխաների հետ այլ ծրագրով:

Երկրորդական **դասերի ժամին** առանձին տանում են պարապելու, բայց տվյալ երեխան ցանկանում է մասնակցել, օրինակ երգեցողության դասին, աշխատանքի ուսուցման դասին:

Այդ հատուկ բալիկներին ոչ մի դեպքում չի կարելի **առանձնացնել**, դա խտրականություն կլինի, պետք չէ առանձին սենյակներ ունենալ:

Սխալ է, որ դասերից հանում են և տանում **առանձնին** աշխատելու:

ԿԱՊԿՈՒ երեխաներին ոչ մի պարագայում չի կարելի առանձնացնել **դասերի ժամանակ**, ուղղակի նրանց հետ պետք է առանձին

այդ երեխաներին հաճախ չեն ներառում, պարապում են **առանձին**: Իմ երեխան ներառականով ընգրկված է: Առանձնապես ոչ մի բան չեն անում դպրոցում, մի թուղթ են տալիս, **ժամանակ սպանում**, մինչև դասերն ավարտվեն:	աշխատի դասերից հետո հատուկ կենտրոններում: Կան դասընթացներ, որոնց **պարտադիր** չի ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությունը, բայց դե դասերից մեծ մասին կարող են մասնակցել: Չպետք է տարանջատել այս երեխաներին, գոնե պետք է **դասաժամեր** լինեն, որոնց ընթացքում բոլորն իրար հետ շփվեն: Շատ կարևոր է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները, որոնք ի վիճակի չեն ամբողջ **դասաժամը** նստել, թող հաճախեն դպրոց, իսկ կից ստեղծվի աջակցման կենտրոն, գոնե ամեն մարզում մեկը: Սոցիալիզացիայի հարցը մենք կարող ենք լուծել՝ դպրոցում **գոնե մեկ ժամ** այդ ծանր խնդրով երեխային պահելով:
ԿԱՊԿՈՒ երեխաներից ոմանց **քննություններից** ազատում են՝ անհանգստանում են, ուզում են մասնակցել, բայց չեն թողնում: Պետք է մանկավարժներին խնդրել՝ թույլ տան:	Ավելի լավ է որ ԿԱՊԿՈՒ երեխաները **այլ ձևով քննություն** տան:

2.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

Ներառական կրթության իդեալական ու ճիշտ տարբերակը անհատական մեթոդների կիրառումն է: **Յուրահատուկ** մոտեցում յուրաքանչյուրին: Ուսուցիչը չպետք է ԿԱՊԿՈՒ երեխային հենց այնպես գնահատական դնել այնքան որ նա առաջ գնա: Ուսուցիչը պետք է հատուկ **պլան** ունենա այդ երեխայի վերաբերյալ: Մասնագետը անպայման պետք է ԿԱՊԿՈՒ երեխայի մեջ գտնի մեկ **առանձնահատկություն** ու փորձի դրա վրա աշխատել: Օրինակ՝ աուտիզմով երեխեն միգուցե է կարող է լավ նկարել: Այդ դեպքում ԿԱՊԿՈՒ երեխան կհասկանա, որ նա նույնպես տաղանդավոր է: Ծնողների մասնակցությունը **ԱՈՒՊ**-ի կազմմանը պետք է խրախուսվի, որովհետև ծնողն է, որ իր երեխային ամենալավն է ճանաչում: **ԱՈՒՊ**-ներում է ֆիքսվում ներառականի ազդեցությունը, որը երբ դարձավ էլեկտրոնային՝ բարդացավ: Երեխաները պետք է **տարբերակվեն** ըստ խնդիրների, որովհետև խնդիրները խիստ **անհատական** են: Պետք է լինեն ժամեր ընդհանուր դասերի	Մեր հանրակրթական դպրոցում կա մտավոր **թերզարգացած** երեխա, որը արդեն հասել է վեցերորդ դասարան, բայց համարյա ոչինչ չի հասկանում, երբ ինչ-որ բան ես բացատրում: Նրա ընտանիքը սոցիալապես անապահով է, դրա համար ծնողները չեն կարող տանել հատուկ դպրոց, իսկ մենք չենք կարողանում ապահովել ներառականությունը: **ԱՈՒՊ**-ները կազմվում են, բայց ռեսուրս չկա, որպեսզի դրանք իրականացվեն: **ԱՈՒՊ**-ը շատ լավ և գովելի գաղափար է, բայց այսօր ծանր երեխայի համար կորցրել է իր իմաստը:

համար, նաև՝ **անհատական** լինեն՝ ըստ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի կարիքի:

ԱՈՒՊ-ը ծանր երեխաների համար պետք է ձևափոխել, հարմարեցնել կարիքներին՝ ներառելով նեղ մասնագետների նշումները, այլ ոչ թե աստղագիտության ուսուցչի նշումը:

Մեր դպրոցում հատուկ երեխաները սովորում են բոլոր երեխաների հետ, բայց հատուկ պարապմունքների են գալիս՝ մշակված **հատուկ** մեթոդներով:

Մասնագետները պետք է հասկանան, որ միայն **առարկայական հարմարեցումը** «ծանր» երեխաների համար ծիծաղելի է, պետք է սոցիալիզացիայի այլ տարբերակներ գտնել:

2.4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը սկսվում է նախակրթությունից, իսկ **մանկապարտեզների** մասին ոչինչ չկա:

Ներառական կրթությունը պետք է պետական քաղաքականության մաս կազմի: Պետք է ունենանք ներառական **մանկապարտեզ**, որը հենց կլինի առաջին քայլը դեպի դպրոց:

Ներառական կրթությունը պետք է սկսվի **մանկապարտեզից**, քանի որ ցանկացած երեխայի կրթությունը սկսվում է մանկապարտեզից:

Պետք է ներառական համակարգի կիրառությունը սկսել **մանկապարտեզներից**, հետո նոր նրանց ուղարկել դպրոց:

Իմ երեխան դիաբետ ունի, տարա **մանկապարտեզ**, բայց դաստիարակները լավ չէին վերաբերվում, երեխան հիասթափվեց, հիմա էլ չի ուզում գնալ:

Առաջին հերթին շենքային պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ հասարակությունը դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի **մանկապարտեզից**, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Մանկապարտեզում հատուկ սենյակի կարիք է լինելու, հատուկ մասնագետների, հատուկ վերապատրաստման, մենք անգամ մտավոր թերզարգացած երեխաներ ենք ունեցել, պահել

Անկախ ամեն ինչից՝ **մանկապարտեզի** բոլոր մասնագետները պետք է կարողանան աշխատել երեխաների մոտ ճիշտ խոսք զարգացնելու ուղղությամբ:

Մեզ հիմա բազմակողմանի զարգացած դաստիարակներ են պետք **մանկապարտեզներում**:

Ես **մանկապարտեզի** դաստիարակչուհի եմ, ես էլ եմ շատ ուզում վերապատրաստվել, տարբեր տեսակի բալիկներ ունենք, որոնց հետ աշխատում ենք սիրողական մակարդակով՝ ինչպես կարողանում ենք...:

Շատ կուզենայի **մանկապարտեզներում** լինեն լոգոպեդներ ու հոգեբաններ:

Մանկապարտեզներում պետք է դաստիարակը ունենա համապատասխան մասնագետ-օգնական, ով կօգնի խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելուն:

Մանկապարտեզում անհրաժեշտ է նեղ մասնագետ, ոչ թե հոգեբան: Ցանկացած դաստիարակ հոգեբան է:

Մանկապարտեզում հոգեբանի անհրաժեշտությունը ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների համար են, այլև մնացածի: Շատ ենք հանդիպում, որ հասարակ երեխաները և՛ ագրեսիվ են, և՛ դասի չեն նստում, և՛ ընկերասեր չեն: Այդտեղ արդեն հոգեբանը միանշանակ ցանկալի է:

ենք առանց հարմարությունների:

Համընդհանուր ներառումը ճիշտ է, պետք է երեխայի դժվարությունները բացահայտել դեռ **մանկապարտեզից**, պետք է աշխատել ծնողի հետ:

Համայնքում ունենք հենաշարժողական խնդիրներ ունեցող **մանկապարտեզի** տարիքի երեխաներ, նրանք մանկապարտեզ չեն հաճախում, ինչպես հաճախեն առանց հարմարությունների:

Մանկապարտեզներում այս հարցերը լուծվա՞ծ են, որ քննարկում ենք դպրոցների հարցը:

Ե. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ե.1. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ (ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԲՐԵՅԼԻ ԱՅԲՈՒԲԵՆ)

Ներառական երեխաների համար ճիշտ է **առանձին դասագրքեր** հրատարակելը, այլ ոչ թե **ուսուցչի** վրա ամբողջ բեռը թողնելը:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու **համապատասխան նյութերի**, հատուկ դասագրքերի կարիք կա:

Լոգոպեդները աշխատում են դպրոցում առանց համապատասխան նյութերի ու գործիքների, քանի որ դպրոցը չի ապահովում:

Շատ տեղեր կան, որ ծնողները ստիպված են գնում **գրենական պիտույքներ** և այլ անհրաժեշտ պարագաներ իրենց երեխաների համար, իսկ դպրոցի օգնությունը ավելի շատ ձևական բնույթ է կրում:

Դիդակտիկ պարագաները թանկ են, իսկ էժանը անորակ է, մեկ էլ տեսար՝ երեխային վնասի:

Այսօր համապատասխան **դիդակտիկ** պարագաներ կամ չկան, կամ էլ շատ թանկ են: Հաճախ մասնագետները իրենք են ինտերնետով գտնում, սարքում:

Ես ինքս եմ իմ ձեռքերով **հատուկ խաղալիքներ** պատրաստում, հատուկ նյութեր, շատ կուզենայինք հատուկ ուղեցույց ունենալ, ուզում ենք հասկանալ, թե ումից ինչ պահանջենք, երբ դրա ժամանակը գա:

Մասնագետներն իրենք են ձեռքբերում **դիդակտիկ** նյութերը:

Եթե նստես, ասես՝ **թուղթ, խաղ չկա,** չեմ աշխատելու, լավ չի լինի: Պիտի հստակ ասես՝ ինչի կարիք ունես գործիդ մեջ:

Ես հատուկ դպրոցում եմ աշխատում, և մենք **հատուկ խաղեր** ենք գնում, հատուկ **գրենական** պիտույքներ ունենք, սնունդ ենք տալիս երեխաներին:

Մենք հիմա տեսողական խնդիր ունեցող երեխա ունենք, ում համար աջակցության կենտրոնի աշխատակիցը **Բրայլյան** համակարգ բերեց:

Ուսումնական ձեռնարկները հագեցած են, բայց մոնիտորինգների արդյունքները պարզեց, որ ամեն դպրոց չի, որ ի վիճակի է այդ ուսումնական դասապրոցեսը կազմակերպել:

Ը. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (ENABLING ENVIRONMENT)

Ը.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ ծնողներ կան, որ խուսափում են աղջիկ երեխաներին տանեն **գնահատելու**, որովհետև մտածում են երեխան հետագայում ամուսնանալու խնդիր կունենա, և շատ տարածված պրակտիկա է որ **աղջիկների** ծնոնղներն ավելի շատ են խուսափում գնահատումից:

Ծնողները փորձում են առաջին հերթին **աղջիկ** երեխաների խնդիրները թաքցնել, տղաներն էլ հակառակը, ուզում են բանակից խուսափել:

Մենք բախվել ենք **աղջիկ** երեխաների հետ կապված հոգեբանական խնդիրների հետ: Երեխաները հասունացման շրջանում հուզական խնդիրներ են ունենում ու երեխան չի գալիս:

Հայրերը կամ պապերը կոմպլեքսավորում են **աղջիկ** երեխաներին:

Հայաստանում տղա երեխաները ուղղակի շատ են, և ասեմ նաև, որ **տղաների** մոտ խնդիրները միշտ ավելի շատ են լինում, քան **աղջիկների**:

Տղաները ծնողները ավելի ոգևորված են, հետագայում բանակից ազատվելու համար, իսկ աղջիկների դեպքում, ամունսնալու խնդրով պայմանավորված, խուսափում են:

Ներառական կրթության կարիք ունեցող երեխաների մեջ **տղաներն** ավելի շատ են:

Ը.2. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ, ԽՏՐԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

Մարդիկ խուսափում են ներառական կրթությունից, քանի որ այս բառը խուճապ է առաջացնում, պիտակավորում է երեխային, քանի որ ուսուցիչներն էլ են երեխային ասում՝ ներառականի երեխա:

Հասարակությունը չի հասել այն մակարդակին, որ բոլորը պարզ խոսեն հատուկ երեխաների մասին:

Առաջին հերթին շենքային պայմանները լիարժեք պատրաստ չեն ներառական կրթության համար, դա կարևոր նախապայման է: Երկրորդ՝ **հասարակությունը** դեռ պատրաստ չի իրենց շարքերում տեսնել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Երրորդը՝ պետք է սկսեն մանկապարտեզներից, քանի որ, եթե ամեն ինչ սկսվի մանկապարտեզից, ապա ԿԱՊԿՈՒ երեխաները դպրոց գալուց արդեն հաղթահարած կլինեն իրենց կոմպլեքսները:

Մեր Նորավանի դպրոցում մի երեխա կա, ով ամեն ինչից հեռու է: Չեք կարող պատկերացնել, թե հիմա ինչ վիճակում է այդ երեխան: Բոլորը **ծաղրում** են:

Մենք որպես այդպիսին դեռ ներառական հասարակություն չենք:

Երեխայի հետ աշխատում է **մանկավարժահոգեբանական** խմբի այն մասնագետը, որը եզրակացության մեջ նշված է որ պետք է աշխատի:

Ցանկացած օրենդրություն և ցանկացած **ֆինասավորում** չի կարող օգնել, քանի մեր մտածելակերպը չի փոխվի:

Բոլորս էլ պետք է ավելի շատ հմտություններ և մակարդակ ունենանք, որ կարողանանք շփվել այս հատուկ երեխաների հետ:

Ես լոգոպեդ եմ աշխատում և հայտարարում եմ, որ ով դեմ է ներառականությանը պետք է հայտնվի բանտում:

Եթե երեխան մեկ-երկու անգամ տեսնի խնդիր ունեցող երեխային, **կսովորի**:

Տարիների ընթացքում **կարծրատիպերը** փոփոխվում են, բայց դե ամբողջապես չեն հաղթահարվել:

Կարևոր է, որ դպրոցից սկսած մարդիկ միմյանց ընդունեն ինչպես որ կան: Կարևոր է, որ փիլիսոփայությունը ճիշտ ընտրվի:

Հայ հասարակությունը ԿԱՊԿՈՒ երեխային **ընդունող** բացառիկ հասարակություններից է:

Ես էլ կարծում եմ, որ մենք բոլորս էլ ժամանակի ընթացքում պիտի սովորենք այս բալիկներին, **հանդուրժենք, օգնենք**:

Մենք պետք է ունենանք պատրաստ **հասարակություն** ու ԿԱՊԿՈՒ երեխային օգնելու պատրաստակամ հասարակություն:

Կան **թերզարգացած** երեխաներ, որոնք

Ներառականությունը սկսվում է տանը, շարունակվում դպրոցում և արտահայտվում **հասարակության** մեջ:

Հիմնականում մեր շրջապատում «**ուրիշ**» երեխաներին անվանում են հիվանդ:

Մեր ազգային մենթալիտետը թույլ չի տալիս մարդկանց այլ կերպ **վերաբերել** ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Ընդհանուր առմամբ, այդ երեխաներին **չեն ընդունում, չեն հանդուրժում**, ճնշում են շատ:

Մեր երկրի համար դեռ **շուտ** է համընդհանուր ներառականությանը անցնելու համար:

Ամբողջ **խնդիրը** առաջանում է, երբ երեխան դուրս է գալիս դպրոցից:

Աստված չանի բոլոր դպրոցները ներառական սարքեն, չեմ պատկերացնում ի՞նչ կլինի:

Հասարակությունը նոր-նոր **ընդունում** է, **հարմարվում** է ներառական կրթությունը, իսկ հիմա համընհանուր ներառական են մտցնում: Ախր թողեք մի հատ հարմարվենք էս էղածին, հետո բերեք համընդհանուրը փաթաթեք:

Ներառական կրթություն տերմինի ներմուծումը մեզ խանգարեց, դեռ **պատրաստ** չէին այդ գաղափարին:

Դեմ չենք իրենց դպրոց գալուն, բայց թող **առանձին** լինեն:

միայնակ կարող են ամբողջ հանդես անցկացնել, իսկ նույն գերազանցիկը՝ ոչ մի բան էլ չի կարող անել: Յուրաքանչյուր դեպք անհատական է:

Առաջին հերթին **մտածելակերպի** փոփոխություն է պետք: Մասնագետները պետք է պատրաստ լինեն:

Երեխաների ինտեգրումը տարիների ընթացքում կփոխի մարդկանց **մտածելակերպը**:

Որտեղ նոր են սկսում այս գործընթացը, **դիմադրության** են հանդիպում:

Սա այն դեպքն է, որ փորձն էլ է կարևոր, **ժամանակի** ընթացքում կսովորեն բոլորը:

Գալիք սերունդները ավելի **գիտակից** են, գուցե իրենց ժամանակ մտածելակերպը փոխվի:

Ժամանակին **կանանց** իրավունքներն էլ են խնդիրներ եղել, հիմա էլ ներառական կրթության խնդիրն է, **ժամանակի** ընթացքում կփոխվի:

Երիտասարդներն արդեն իսկ ընդունում են, որ ներառականը շատ ճիշտ է, ինչը չի կարելի ասել խորհրդային սերնդի մասին:

Վերջին տարիներին **իրավիճակը փոխվել** է: Կային երեխաներ, որոնք տարիներով դուրս չէին եկել, իսկ հիմա հանգիստ շփվում են մնացածի հետ:

Տարիների ընթացքում տեսողական խնդիրներին սկսեցին **նորմալ** նայել, ու հիմա ակնոց կրելը ամոթ բան չէ:

Մենք լրիվ **դրական** ենք վերաբերվում հատուկ երեխաներին, հանգիստ շփվում ենք, օգնում ենք:

ԿԱՊԿՈՒ երեխաներին **պիտակավորել** չի կարելի, ընդհանրապես չի կարելի. դա ամենամեծ սխալն է:

Եթե երեխան հենաշարժային խնդիր ունի ու մտավոր խնդիր չունի, հասարակությունը, մնացած երեխաները պետք է հասկանան, որ նա իրենց **հավասար** անձնավորություն է:

Քսան-երեսուն տարի առաջ տարանջատում չկար ԿԱՊԿՈՒ ու սովորական երեխաների միջև, ու դա ճիշտ էր: Հիմա համընդհանուր ներառականություն ապահովելու համար մենք տարանջատում ենք, որը տարբերակված մոտեցման կարող է բերել, որի հետ ես համաձայն չեմ:

Պայքարող ծնողը մեծ աջակցություն է երեխայի համար: Պետք է **սեմինարներ**, ժողովներ անցկացնել հենց ծնողների հետ:

Ստեղծել մի խումբ, ով կարողանա ծնողներին

Ծնողը խուսափում է բարձրաձայնի երեխայի խնդիրները:

Դպրոցում երեխաների մի մասը, ուսուցիչներն ու ծնողները դեմ էին ներառականությանը, բողոքի

հավաքի ու **իրազեկի** և՛ ծախսերի մասին, և՛ հասանելիք օգնությունների մասին:

Աջակցության կենտրոնը պետք աշխատի ծնողների **գիտակցական** մակարդակը բարձրացնի:

Ֆինանսական հաշտարարի մասին օրը հազար **գովազդ** են հեռուստատեսությունները տալիս, ներառական կրթության դեպքում նման բան չկա, բայց շատ պետք է:

Սոցիալական հոլվակները, որոնք մարդկանց կսովորեցնեն ճիշտ վերաբերվել ԿԱՊԿՈՒ երեխաներին, օրինակ՝ սերիալի էպիզոդներից մեկում ցույց տալ հաշմանդմ երեխաներին ինչպես է պետք ճիշտ վերաբերել:

Ֆիլմեր նայում ենք, որը փոխում է նույնիսկ տարիքով մարդու մեջ ինչ-որ բաներ, սա շատ լավ միջոց է հասարակությանը բավարար **ինֆորմացիա** տալու համար:

Համայնքում տեղական «**լիդերների**» ներգրավածությունը ներառական կրթության ու դրա ներդրման մեջ, կարող է շատ դրական հետևանքներ ունենան:

ՁԼՄ-ները պետք է օգտագործվեն, որպեսզի հասարակությունը աստիճանաբար պատրաստ լինի նրան, որ ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց «մի մասնիկն են»:

Եթե ամբողջ հասարակությունը **իրազեկվի** ու բոլորի վերաբերմունքը փոխվի, դա մեծ փոփոխությունների կբերի: Սա իրոք ամենկարևոր քայլերից համընդհանուր ներառականությանը անցնելու համար: Ես հավատում եմ, որ հանրության վերաբերմունքը կարելի է արմատապես փոխել:

Հասարակությունը լավ տեղեկացված չէ, թե ինչ է ներառական կրթությունը: Մարդիկ ճիշտ տեսանկյունից չեն դիտում այս խնդիրը, չգիտեն, թե որ երեխաները պետք է ներառվեն այս գործընթացում:

Հանրության կարծիքը բացասական է ներառականի նկատմամբ, բայց հիմնական խնդիրը տեղեկացվածությունն է:

Մեր հասարակությունը դեռևս պատրաստ չի համընդհանուր ներառականությանը: Դեռևս իրազեկման ու ծանուցման խնդիր կա:

Ես հինգ երեխա ունեմ, չորսը խնդիր չունեն, այս մեկը ունի, և ես չեմ ուզում իմ բալիկին **մեկուսացնել**, անգամ եթե պետք է մատով ցույց տան, թող ցույց տան, ես ուզում եմ ինքը

ալիք բարձրացավ, քանի որ ոչ-ոք չէր ուզում նույն հարթակի վրա լինել խնդիրներ ունեցող երեխայի հետ:

Ծնողները գիտեն, որ եթե բարձրաձայնեն երեխայի՝ ներառականի կարիք ունենալը հասարակության շրջանում խնդիրներ կառաջացնի:

Տարիներ առաջ ծնողը, իմանալով հանդերձ, որ իր երեխան տեսողական խնդիրներ ուներ, չէր թողնում ակնոց կրել:

Ամենավատն այն է, որ ծնողներն իրենց երեխաներին համարում են **թերի** ու չեն ցանկանում նրան դուրս հանել, որի գլխավոր պատճառը հասարակության արձագանքն է:

Խնդիրներ ունեցող երեխաների ծնողները չեն կարողանում հաղթահարել **կաշկանդվածությունը**:

Ծնողներ կան, ովքեր **չեն ընդունում** իրենց երեխաների խնդիրները, կամ գուցե այդքան էլ լուրջ չեն վերաբերվում այդ խնդիրներին:

Ծնողների մոտ էլ **կարծրատիպեր** կան, իրենք էլ պիտի հասկանան ինչպես շփվել երեխաների հետ:

Ծնողներ կան, որ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխային համարում են **հիվանդ**, և հաճախ ընդդիմանում է, որ իր երեխան հիվանդ չէ, բայց ընդգրկված է ներառական դասարաններում:

Ներառական երեխայի ծնողն է **մեկուսացնում** երեխային:

Ծնողներից շատերը ուզում են տնային ուսուցում, դա հեշտացնում է, նաև չի ուզում երեխայի մասին շատ մարդ իմանա:

Շատ դպրոցներ կան, որտեղ ԿԱՊԿՈՒ երեխաներ են գրանցված, բայց «սովորական» երեխաների բողոքների պատճառով չեն հաճախում դպրոց: Երեխաների ծնողները պատճառաբանում են, որ ԿԱՊԿՈՒ խնդիր ունեցող երեխաները **խանգարում** են իրենց երեխաներին սովորել, ավելին՝ ԿԱՊԿՈՒ երեխաները **հոգեբանորեն նաև ազդում** են «նորմալ» երեխաների վրա:

Ծնողներն ու երեխաները, անգամ մանկավարժները այնպիսի **ձևակերպումներ** են հնչեցնում, որ արդեն հասկանալի է՝ չի կարող լավ աշխատել:

Խնդիրներ չունեցող երեխաների ծնողները պետք է երբեք իրենց երեխաներին **չտրամադրեն**

սովորական դպրոց գնա:

Անհրաժեշտ է այնպիսի համակարգ, որի դեպքում առաջին հերթին ծնողը չնեղվի իր երեխային ներառական համակարգում ընդգրկելուց:

Ծնողական **ժողովների** ընթացքում պետք է գոնե մի քանի րոպեով անդրադառնալ ներառականության հարցին:

Կան ծնողներ, որոնք **սրտացավորեն** են վերաբերվում իրենց երեխայի խնդրին ու պատրաստ են աջակցել դպրոցին, ուսուցչին: Կան նաև ծնողներ, որոնց համար միևնույն է: **Անտարբերությունը** հիմնականում գալիս է սոցիալական վիճակից՝ ծնողը ուղղակի ժամանակ չունի դրան տրամադրելու, քանի որ օրվա հաց պետք է վաստակի:

ԿԱՊԿՈՒ երեխաների դեմ:

Որպեսզի հասարակությունը տարբերակված վերաբերմունք չցուցաբերի երեխային, ծնողները **թաքցնում** են նրա ԿԱՊԿՈՒ լինելու փաստը:

Շատ դեպքերում ծնողներն են դեմ լինում, հենց բառից արդեն՝ ներառական կրթություն, **վախենում** են:

Ծնողն ասում է՝ **ինչի** պիտի էդ հիվանդ երեխեն իմ երեխու հետ սովորի:

Ծնողը հոգեբանորեն **պատրաստ չէ** ընդունել խնդիրը, աշակերտների պարագայում նման խնդիր չկա:

Ծնողներից ոմանք կարծում են, որ **ամոթ** է, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական դասարաններում, այստեղ խնդիր ունենք, երբ ծնողն առաջնահերթություն է տալիս հասարակության կարծիքին, քան թե իր երեխայի առողջությանը:

Ծնողը վախենում է **հասարակական կարծիքից**, երբ իրենց երեխան տարբերվում է ընդհանուր մասսայից:

Խնդիրներ ունեցող երեխաները չեն հաճախում մանկապարտեզ, քանի որ ծնողների մեծ մասը **չեն ցանկանում** իրենց երեխային հանել տնից:

Պետք է սկսել նրանից, որ ծնողները այլ երեխաներին «**հիվանդ**» երեխա չանվանեն:

«Սովորական» երխաների ծնողներից մի մասը կողմ է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները նրանց երեխաների հետ միասին ուսում ստանան, մի մասն էլ դեմ է: Պետք է փոխել **մտածելակերպը**:

Շատերը մտածում են, որ եթե երեխես դուրս գա, հարևանս կտեսնի, մյուսը **կտեսնի**:

Ես սկզբում **ամաչում** էի իմ երեխայի խնդրի համար, հետո հասկացա, որ պետք չէ թաքցնել:

Եթե արտաքնապես երևում են խնդիրները, ասում են: Եթե՝ ոչ, հաճախ չեն ուզում դա խնդիր համարել:

Տեղաշարժման խնդիր ունեցող երեխաներին նույնիսկ իրենց դասարանցիները մեծ սիրով օգնում էին, բայց այդ երեխաների ծնողները վատ էին **վերաբերվում** դրան:

Ես շատ ափսոսում եմ, որ իմ երեխային շուտ չեմ տարել դպրոց, **մտածել** եմ՝ չի կարող սովորել:

Մեր դպրոցում հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխա կար, բայց **չէին թողնում** տանից դուրս գա, նույնիսկ քրոջ հարսանիքին չէր գնացել:

	Դիաբետով հիվանդ երեխային պետք է **չթաքցնել**: Պետք է բոլորը իմանան, որ այդ երեխան այդպիսի խնդիր ունի: Ես դեմ եմ այն մտքին, թե օրենսդրությունը լավն է, բայց մեխանիզմները չեն գործում, որովհետև այսօրվա դրությամբ մենք կարող ենք, օրինակ, ավտոբուսի **փող** տալ հաշմանդամ երեխաներին, բայց նախ ավտոբուսները հարմարեցված չեն, երկրորդն էլ ծնողները գումարն են ուզում ստանալ, այլ ոչ թե օգտվել սրանից:
Երեխաներին պետք է սովորեցնել, որ նրանք պետք է ԿԱՊԿՈՒ երեխաներին վերաբերվեն որպես **յուրայինի**:	Շատ մարդկանց մոտ թյուր **տպավորություն** է, որ ներառական կրթությունը վերաբերում է միայն **դաունով** հիվանդ երեխաների կրթության հետ: Շատերը ներառական ասելով հասկանում են **տարօրինակ** մարդ, անգամ գիժ: Եթե ծնողն ու ուսուցիչը չխանգարի, երեխաները իրենք կհամակերպվեն:
Երևանում ԿԱՊԿՈՒ երեխաներն ավելի շատ են բախվում խնդիրների քան մարզերում:	Գյուղերի դպրոցներում նման երեխաներ հիմնականում չկան, հնարավոր է վախենում են, որ մյուսները **ծաղրեն, ճնշեն:**
Համընդհանուր ներառական կրթությունից տուժելու են **խնդիրներ չունեցող** երեխաները: Խնդիրներ չունեցող երեխաները կարող են ընդօրինակել ԿԱՊԿՈՒ երեխայի շարժումները, որը հետագայում իրենց համար խնդիրներ կառաջացնի:	Ներառական կրթությունը միայն տեսանելի խնդիրներով երեխաների համար չի: ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոցներ բերելը դրական ազդեցություն է թողնում խնդիրներ չունեցող երեխաների վրա, քանի որ երբ խնդիր չունեցող երեխան տեսնում է տեսողական խնդիր ունեցող երեխային սկսում է **գնահատել** իր՝ տեսնելու հնարավորությունը: Անկախ ամեն ինչից դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաները առանձնանում են, և իրենց **մատով** են ցույց տալիս: Համընդհանուր ներառումը պետք է սկզբից արվեր, իսկ սկզբում ուղղակի ներառական կրթություն կոչվեց, որը առանձնացնում էր: Մենք **գումար** ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներին սնունդ տրամադրելու համար, բայց շատ երեխաներ կոմպլեքսավորվում են ու չեն ընդունում այդ սնունդը, որպեսզի մնացածը չիմանան նրանց հաշմանդամության մասին: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչու է պետք այդ սննդի արտոնությունը ԿԱՊԿՈՒ երեխաներին: Կարելի է դա հանել: Ներառականներից շատերը չէին գնում ճաշարան, որովհետև մյուսներն ասում էին. «Տես, ներառական ա, գնաց հացի»: Ես, որպես ուսուցիչ, կարծում եմ, որ խորը հիվանդություն ունեցող երեխաները ավելի լավ է չգան, միևնույն է իր կյանքում ոչինչ չի փոխվում,

	ժամանցի համար է գալիս, բայց խանգարում է մյուսներին: Մենք հաստատ կհասնենք համընդհանուր ներառմանը, բայց պետք է առանձին ուշադրություն դարձնենք հատկապես ծանր երեխաներին: Միևնույն է, ԿԱՊԿՈՒ երեխաների համար կգա մի պահ, որ իրենք կհասկանան իրենց խնդիրների **անհամատեղելիությունը** սովորական երեխաների հետ: Չի կարելի **տարբեր կատեգորիաների** երեխաներին նույն կերպ վերաբերվել: Իմ կարծիքով մտավոր և հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է **առանձին** լինեն:

Ը.3. ԴԱՍՂԵԿ, ՀՈԳԵԲԱՆ, ԴԱՍԱՐԱՆ

Երեխաների ընտանեկան պայմաններին, յուրահատկություններին պետք է **դասղեկը** տեղյակ լինի: Իսկ դասավանդող ուսուցիչը պարտադիր չէ պարբերաբար այցելի իր բոլոր աշակերտների տներ, նա կարող է դասղեկից հարցնել: Եթե նույնիսկ երեխաները փորձում են առանձնացնել ԿԱՊԿՈՒ երեխաներին, **դասղեկը** պետք է փորձի կանխել դա, ինքը երեխային հրավիրի մասնակցել ընդհանուր խմբի միջոցառումներին:	
Տնօրենն ինձ արգելել է, որ երեխային տանեմ այլ դպրոց, ասել է, որ մասնագետներ ունենալու են: Երբ համադպրոցական ծնողական ժողովներին դպրոցի տնօրենը կամ ուսմասվարն է զեկուցում ներառականության վերաբերյալ, ծնողները մտածում են, որ **տնօրենը** ինչ-որ շահ ունի սրա հետ կապված: Իսկ երբ համապատասխան մասնագետն է գալիս զեկույցով, ապա ծնողները ավելի են վստահում: Հիմա մարզպետարանում ցուցակ կա թափուր հաստիքների, բայց մագիստրատուրայի ուսանողներին **տնօրենը** չի ընդունում, ասում է՝ կրթություն չունես: Եթե նախկինում համալսարանից տեղեկանք էիր տանում, որ սովորում ես, հիմա դա չի անցնում, որովհետև բոլոր լիազորությունները դպրոցի **տնօրենինն** են: Իր քմահաճույքով աշխատող է ընդունում:	**Տնօրենը** պետք է իրեն պատասխանատու զգա նույնիսկ շենքային պայմաններ ապահովելու հարցում, չասի՝ հեռու գյուղ է, ո՞վ է գալու ստուգի: Վերահսկողությունը կարող է լինի նաև դպրոցի **տնօրենի** կողմից:
Ցանկացած դպրոց երկու-երեք տարին մեկ անցնում է աուդիտ: Դպրոցում բոլոր կառույցները, այդ թվում խորհուրդը և ծնողները,	Դպրոցների կառավարման խորհուրդները այս գործընթացին ներգրաված չեն հիմնականում:

այնքան ակտիվ են, որ ամբողջությամբ վերահսկում են **ֆինանսական** շարժը: Չգիտեմ նախկինում ոնց է, բայց հիմա այդ մասով ամեն ինչ կարգին է:

Ը.4. ԴՊՐՈՑ (ՀԱՄԱՅՆՔ)

Առաջնային է, որ մասնագետներն աշխատեն **ծնողների** հետ, նրանց տեղեկացնեն, որ ներառականությունը խուսափելի երևույթ չէ:

Առաջին հերթին պետք է կրթել **ծնողին**:

Առաջին հերթին բողոքում էին ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների **ծնողները**, մեր դպրոցում կար մի հիպերակտիվ երեխա, սոցիալական հոլովակ դիտեցինք ծնողների հետ, արցունքներն աչքերին հեռացան:

Շատ կարևոր է այստեղ հասարակության պատրաստակամությունը. ոչ մի իրազեկման գործընթաց չի տարվում: Այդ աշխատանքը հատկապես կարևոր է սկսել **ծնողից**:

Ծնողական ժողովների ընթացքում պետք է գտնե մի քանի ոլորտով անդրադառնալ ներառականության հարցին:

Հարցը երկկողմանի է, և՛ **ծնողը**, և՛ մասնագետը բավարար իրազեկվածություն պիտի ունենան:

Համայնքներում դժվար է նման թեմայով **ծնողական** ժողով կազմակերպել:

Ես Դալարիկում եմ աշխատում արդեն մի քանի տարի, հիմա **ծնողների** հետ խնդիրներ չունենք, բոլորն էլ իրազեկված են այս խնդրից:

Պետք է **ծնողին** ասել, որ թող ձեր երեխան մի բան էլ պակաս իմանա քիմիայից, բայց թող մարդկային հատկանիշներ ունենա:

Անընդհատ ստուգելով երեխայի այցելությունը, աշխատելով երեխայի **ծնողի** հետ՝ կարողացել ենք արդյունք ապահովել կոնկրետ երեխայի դեպքում:

Պետք է մեխանիզմեր գտնել **ծնողների** հետ ճիշտ աշխատելու, հակառակ դեպքում ամբողջ աշխատանքը կարող է անիմաստ դառնա:

Ներառականությունը ենթադրում է **ծնողի** հետ աշխատանքը:

Երբ ընտանիքը չի բարձրաձայնում խնդրի մասին, գյուղապետարանը կարող է տրամադրել, որ սկզբում աշխատի **ծնողների**, հետո երեխաների հետ:

Ծնողների տեղեկացվածությունը շատ վատ մակարդակի է, անգամ շատերը աուտիզմի

Որպեսզի հասարակությունը տարբերակված վերաբերմունք չցուցաբերի երեխային, **ծնողները** թաքցնում են նրա ԿԱՊԿՈՒ լինելու փաստը:

Ծնողը հոգեբանորեն պատրաստ չէ ընդունել խնդիրը, աշակերտների պարագայում նման խնդիր չկա:

Եթե **ծնողները** իմանան ներառականության մասին ժողով է լինելու, չեն գա, կասեն՝ մեկ է իմ երեխան խնդիր չունի:

Շատ դեպքերում **ծնողներն** են դեմ լինում, հենց բառից արդեն՝ ներառական կրթություն, վախենում են:

Ծնողներ կան, որ ծանր խնդիրներ ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաներին տնից դուս չեն թողնում ու ամաչում են նրանց տանել հասարակության մեջ: Այդպիսի խնդիրներ ունեցող երեխաները մեկուսացված են արտաքին աշխարհից:

Անհրաժեշտ է այնպիսի համակարգ, որի դեպքում առաջին հերթին **ծնողը** չնեղվի իր երեխային ներառական համակարգում ընդգրկելուց:

Շատ ենք աշխատում որոշ **ծնողների** հետ, բայց նրանք չեն համաձայնվում, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական համակարգում:

Հաճախ լինում են դեպքեր, երբ **ծնողը** չի ուզում ընդունի, որ երեխան խնդիր ունի: Այդ դեպքերում անհնար է իր հետ լեզու գտնել:

Ծնողներին մեծ մասը չեն ցանկանում խնդիրներ ունեցող երեխաներին տանել դպրոց:

Ծնողները կան, ովքեր պարզապես չեն ցանկանում, որ իր երեխան մասնակցի հանրակրթությանը:

Երեխան խոսքի խնդիր ունի, ինչքան էլ բացատրում ենք ծնողին, որ երեխան ներառական համակարգում պետք է ընդգրկվի, **ծնողի** չի ցանկանում: Անհրաժեշտ է, որ ծնողների հետ և՛ հոգեբաններ աշխատեն, և՛ սեմինարներ անցկացնեն:

Խնդիրներ ունեցող երեխաները չեն հաճախում մանկապարտեզ, քանի որ **ծնողների** մեծ մասը չեն ցանկանում իրենց երեխային հանել տնից:

մասին չէին լսել:

Սկզբից պետք է փոխել **ծնողների** մտածելակերպը, հետո նոր համակարգը:

Միայն այդ երեխայի դասարանցիների և **ծնողի** ուսերին ամբողջ բեռը թողնելը սխալ է, պետք է ամբողջ հասարակությանը պատրաստել:

Ծնողների հետ պետք է առանձին աշխատել, սոցիալական հոլովակներ տարածել, որպեսզի ծնոնղները կարողանան ճիշտ ընկալել ներառական կրթության դերը:

Պետք է կազմակերպություններ լինեն, որոնք աշխատեն ծնողի հետ՝ մինչև երեխայի դպրոցական տարիքի հասնելը:

Պայքարող **ծնողը** մեծ աջակցություն է երեխայի համար: Պետք է սեմինարներ, ժողովներ անցկացնել հենց ծնողների հետ:

Ստեղծել մի խումբ, ով կարողանա **ծնողներին** հավաքի ու իրազեկի և՛ ծախսերի մասին, և՛ հասանելիք օգնությունների մասին:

Աջակցության կենտրոնը պետք աշխատի **ծնողների** գիտակցական մակարդակը բարձրացնի:

Ծնողներին պետք է բացատրել, որ ներառական կրթությունը «բոբո ձյաձյա» չէ, և սա շաատ ավելի անհրաժեշտ է իր երեխային: Պետք է ամուր հիմքի վրա դնել ծնող-դասղեկ-սոց մանկավարժ կապը:

Ամեն ինչ գալիս է դրան, որ պետք է **ծնողների** հետ էլ լուրջ աշխատել:

Ծնողներ կան, որոնք տեղյակ չեն օրենսդրությունից ու առկա հնարավորություններից: Նրանց իրազեկելու խնդիր կա, որը կարող է իրականացվել ՀԿ-ների միջոցով:

Ինֆորմացվածության խնդիրը հսկայական է, մարդիկ՝ **ծնողները**, նույնիսկ գաղափար չունեն, թե իրենց՝ խնդիրներ ունեցող երեխաների հետ ինչպես պետք է վարվեն. տանե՞ն մանկապարտեզ, թե՞ չտանեն:

Պետք է երեխայի բուժումը համատեղել **ծնողի** հետ աշխատանքի հետ:

Ծնողներ կան, որ տեղյակ չեն, որ հիմա դպրոցների ընդունելությունը օնլայն է իրականացվում: Հիմա կարող եք ձեր ԿԱՊԿՈՒ երեխային այդ ընդհանուր կարգով գրանցել:

Ծնողների անհիրազեկվածությունը նաև գալիս է նրանց ոչ պատշաճ վերաբերմունքից: Օրինակ,

Ամենավատն այն է, որ **ծնողներն** իրենց երեխաներին համարում են թերի ու չեն ցանկանում նրան դուրս հանել, որի գլխավոր պատճառը հասարակության արձագանքն է:

Խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** չեն կարողանում հաղթահարել կաշկանդվածությունը:

Ծնողներ կան, ովքեր չեն ընդունում իրենց երեխաների խնդիրները, կամ գուցե այդքան էլ լուրջ չեն վերաբերվում այդ խնդիրներին:

Ծնողների մոտ էլ կարծրատիպեր կան, իրենք էլ պիտի հասկանան ինչպես շփվել երեխաների հետ:

Ծնողների հետ աշխատանքը դժվար է, չեն ուզում, որ հանկարծ գյուղում չասեն երեխան խնդիր ունի:

Ծնողներ կան, որ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխային համարում են հիվանդ, և հաճախ ընդդիմանում է, որ իր երեխան հիվանդ չէ, բայց ընդգրկված է ներռական դասարաններում:

Ներառական երեխայի **ծնողն** է մեկուսացնում երեխային:

Ծնողներից ոմանք կարծում են, որ ամոթ է, որ իրենց երեխան ընդգրկվի ներառական դասարաններում, այստեղ խնդիր ունենք, երբ ծնողն առաջնահերթություն է տալիս հասարակության կարծիքին, քան թե իր երեխայի առողջությանը:

Ծնողը վախենում է հասարակական կարծիքից, երբ իրենց երեխան տարբերվում է ընդհանուր մասսայից:

Երեխաներ կան, որոնց ծնողները երեխային դուրս չեն բերում, որովհետև իրենք էլ չեն հարմարվում այդ իրավիճակի հետ:

Ես նյարդայնանում եմ, երբ **ծնողը** կոմպլեքսավորվում է իր երեխայի հետ միջավայրում գտնվելուց:

Ծնող կա՝ վիրավորվում է:

Մեր փորձը ցույց է տալիս, որ վկայագրումը հիմնականում տեղի է ունենում երեխային որպես սովորական ոչ ԿԱՊԿՈՒ հանրակրթական դպրոց ընդունելուց հետո, և ի հայտ են գալիս նրա խնդիրները: **Ծնողները** սկզբում չեն համակերպվում այդ մտքի հետ, բայց հետո համոզվում են, որ երեխան հատուկ վերաբերմունքի կարիք ունի ու գրանցում են նրան:

ծնողների մեծ մասը ինչ-որ բանի տակ ստորագրելուց առաջ նույնիսկ չի էլ կարդում, թե ինչի կտակ են ստորագրում: Սոցիալական հատուկ աշխատողներ պետք է լինեն, որ ծնողներին էլ օգնեն, ծնողներին առավել շատ է հարկավոր օգնություն: Պետք է հատուկ ժամեր լինեն նաև **ծնողների** համար: Ամենաշատը պետք է խոսել **ծնողների** հետ, տեղեկացնել նրանց: **Ծնողին** պրոցեսի մեջ ներգրավելը, իր հետ զուգահեռ աշխատելը միայն օգուտ կտա: Կան մեթոդներ, որոնք կօգնեն ոչ միայն ներառել երեխաներին, այլև զարգացնել: **Ծնողը** չի տիրապետում այդ մեթոդներին, իսկ համապատասխան մասնագետները ծնողներին էլ կսովորեցնեն:	Մի **ընտանիքում** առանձին սենյակում փակել էին խնդիրներ ունեցող երեխային ու մինչև 42 տարեկանը՝ մահը, պահել նրան: Ճաշը տանում, դնում էին դռան առաջ ու գնում:
Շատ կազմակերպություններ կան, որոնց ղեկավարները հաշմանդամ երեխաների **ծնողներ** են: **Ծողները** պետք է շատ ժամանակ հատկացնեն ԿԱՊԿՈՒ երեխաներին ու ծնողական ուշադրությունը, կատարած աշխատանքը կարող է նույնիսկ բուժել իր երեխային: **Ընտանեկան միջավայրը** շատ կարևոր է ԿԱՊԿՈՒ երեխաների համար ու պետք է ԿԱՊԿՈՒ երեխաները մեծանան ամուր ընտանիքում: **Ծնողը** պետք է հետևողական լինի իր երեխայի նկատմամբ, հատկապես եթե այդ երեխան կրթության առանձնահատուկ կարիքներ ունի: Խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** պետք է տանն էլ ստեղծեն այնպիսի միջավայր, որ երեխան իրեն ազատ զգա ու համարի, որ ինքը հասարակության լիարժեք անդամ է:	ԿԱՊԿՈՒ երեխային գիշերօթիկ դպրոցից հիմա հետ են բերել իր **ընտանիք**, որտեղ շատ ավելի վատ պայմաններ են: Այս դեպքում ներառականությունը վնաս է բերում: Անցած ամիս ունեցել ենք դեպք, որ շատ բացակաների պատճառով պատասխանատվության գործընթաց ենք սկսել **ծնողների** նկատմամբ: **Ծնող** էլ կա չի պատկերացնում կրթության արժեքը. խնդրում ենք ուղարկեք երեխային դպրոց, հետո երեխան շաբաթներով բացակայում է: Կարող է այնպես լինի, որ երեխան կամ **ծնողը** կարևորի ոչ թե կրթությունը, այլ եկեղեցու բակում ողորմություն հավաքելը: **Ծնողները** շատ դեպքերում այլ առաջնային խնդրներ էլ ունեն և չեն հասնցում երեխայի խնդրներին: Ծանր խնդրով երեխաներին գոնե մի քանի ժամ պահելով՝ **ծնողին** օգնում ենք: **Ծնողների** համար շատ դեպքերում կարևորը դպրոցը ավարտելն է:
Երեխաների մասին տեղեկություններ ստանում էինք **պոլիկլինիկաներից**: Պետք է լինեն սոցաշխատողներ, որոնք համագործակցեն ընտանիքների հետ ու իրենցից իմանանք, որ ընտանիքում կա ԿԱՊԿՈՒ երեխա: Պետք է սկսել հիվանդանոցներից, մանկաբույժներից: **Ծնողները** պետք է ի	Առաջին հերթին պետությունը, համայնքը պետք է նեցուկ կանգնի այս երեխաներին և նրանց **ծնողներին**: **Համայնքապետարաններում**, մարզպետարաններում մարդիկ գաղափար չունեն, թե «ներառական»-ը ինչ է: Ոչ մի խնդիր գրեթե առաջխաղացում չունի, քանի որ որոշում

սկզբանե ճիշտ հասկանան երեխայի խնդիրները:	կայացնողները բացարձակ չեն տիրապետում բնագավառին: Երբ ընտանիքը չի բարձրաձայնում խնդրի մասին, գյուղապետարանը կարող է տրամադրել, որ սկզբում **աշխատի** ծնողների, հետո երեխաների հետ:
Կան դպրոցներ, որտեղ աշակերտական ու **ծնողական** խորհուրդներն ունեն ֆորմալ բնույթ ու իրականում ոչինչ չեն անում: Դպրոցում **ծնողխորհուրդներ** կան, բայց դրանց մեջ չի ներառվում խնդիր ունեցող երեխայի ծնողը: Սովորական հանրակրթական դպրոցներում **ծնողկոմիտեները** պետք է ավելի ակտիվ լինեն ու իրենց ներդրումը ունենան ԿԱՊԿՈՒ երեխաներին դասապրոցեսին ընդգրկելու համար:	
Ծնողի մասնակցությունը դասապրոցեսին միանշանակ կխանգարի, ոչ թե կօգնի: Պետք է արդյոք խրախուսել **ծնողների** մասնակցությունը կրթությոանը, թե ոչ. միանշանակ ասել չենք կարող: **Ծնողը** որքան էլ սրտացավ լինի, մասնագետ չի ու կարող է սխալ լուծումներ տա: **Ծնողը** երեխային միանշանակ կշեղի: Կարող է երբեմն ներկա լինի, բայց մշտական՝ ոչ: Եթե մանկավարժն ու մասնագետը պրոֆեսիոնալ են, **ծնողը** կխանգարի: Բայց որ պրոֆեսիոնալ մանկավարժին ծնողը կօգնի: **Ծնողը**, մասնագետին վստահելուց բացի, այլ տարբերակ չունի: **Ծնողը** անպայման պետք է մասնակից լինի ողջ գործընթացին՝ տնից մինչև դպրոց: Որպես **ծնող** ես միշտ հետևում եմ, գնում եմ ներառականի դասերին, հետևում եմ, տանը աշխատում եմ: Երեխաներ կան, որոնք հատուկ վերականգնողական ժամեր ունեն, այդ երեխաներին ի՞նչ պետք է անենք, **ծնողներն** անգամ այս երեխաներին չեն կարող օգնել:	**Ծնողները** կարող են կազմել գրաֆիկ և յուրաքանչյուր օր մեկնումեկը ներկա լինի: **Ծնողը** պետք է իմանա, թե ինչ ձևով են աշխատում իր երեխայի հետ: Ես, որպես **ծնող**, ամեն ինչ կանեմ, որ մասնակցեմ իմ երեխայի կրթության պրոցեսին, դպրոցը պետք է մտածի՝ ինչպես իմ մասնակցությունը օգտակար դարձնել: Ես, որպես ծնող, անհանգստանում եմ իմ երեխայի համար, ինքը չի կարողանա մասնակցել միասնական քնությանը, իրեն վատ կզգա, բայց երեխաս ուզում է: **Ծնողների** մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազմմանը պետք է խրախուսվի, որովհետև ծնողն է, որ իր երեխային ամենալավն է ճանաչում: Ներառական դասարանում պետք է անպայման տեսանկարահանող սարքեր տեղադրված լինեն, որոնց շնորհիվ **ծնողները** կարող են հետևել իրենց երեխայի առօրյային: **Ծնող**-ուսուցիչ հարաբերությունները պետք է ճիշտ ուղղու վրա դնել, օրինակ տնայցեր կատարել, հասկանալ ընտանեկան իրավիճակը, բացատրել մանկավարժ-ծնող համագործակցության անհրաժեշտությունը:
Ծնողները գոհ էին, որ երեխաները սնունդ էին ստանում: Ուտելու ժամանակ երեխաները հաճույքով շփվում էին միմյանց հետ, հիմա անհավես են գնում դասի: Հիմնականում ներառականների համար առանձին սնունդ ապահովելը առանձնապես նպատակային չէ: Ամեն դեպքում **ծնողները** այդ	**Ծնող** կա, որ եթե հատուկ դպրոց չկա մեր մարզում, տանում է Երևան: **Ընտանիքներ** կան, որոնք պատրաստ են փոխել իրենց բնակության վայրը՝ երեխայի շահի համար: Հենաշարժողական խնդիրներով երեխաներին

մասով ապահովում են իրենց երեխաներին սննդով:

Կան **ծնողներ**, որոնք իրենք առաջարկում են իրենց երեխաներին ընդգրկել ներառական դասարաններում, որպեսզի իրենց երեխաներն էլ ստանան ԿԱՊԿԻ երեխաներին տրվող օրական սնունդից:

Ծնողներից է շատ բան կախված: Ծնողը մտնում է դասարան և իր առողջ երեխային ասում է, որ նա չնմանվի հիվանդ երեխային, չշփվի նրանց հետ:

Ծնողն ասում է՝ ինչի պիտի էդ հիվանդ երեխեն իմ երեխու հետ սովորի:

Պետք է սկսել նրանից, որ **ծնողները** այլ երեխաներին «հիվանդ» երեխա չանվանեն:

«Սովորական» երխաների **ծնողներից** մի մասը կողմ է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները նրանց երեխաների հետ միասին ուսում ստանան, մի մասն էլ դեմ է: Պետք է փոխել մտածելակերպը:

Տեղաշարժման խնդիր ունեցող երեխաներին նույնիսկ իրենց դասարանցիները մեծ սիրով օգնում էին, բայց այդ երեխաների **ծնողները** վատ էին վերաբերվում դրան:

ծնողները նախընտրում են հատուկ դպրոց տանել, քանի որ սովորական դպրոց տանել-բերելու խնդիր կա:

Իմ երեխան ունի խնդիրներ, բայց ես ամեն ինչ անում եմ, որ իմ բալիկը գնա դպրոց, սովորի, գոնե իրա անուն, ազգանունը գրի:

Խոսքի խնդիր ունի **իմ երեխան**, ես նպատակ չունեմ, որ նա դառնա գիտնական: Ցանկանում եմ ընդամենը, որ հանգիստ շփվի հասակակիցների հետ:

Ծնողները իրենք են փնտրում լավ մասնագետների և նման դպրոցներ:

Եթե **ծնողը** հնարավորություն ունենա, ապա ինքը ամեն ինչի պատրաստ է իր երեխայի համար:

Շատ տեղեր կան, որ **ծնողները** ստիպված են գնում գրենական պիտույքներ և այլ անհրաժեշտ պարագաներ իրենց երեխաների համար, իսկ դպրոցի օգնությունը ավելի շատ ձևական բնույթ է կրում:

Եթե որակյալ կրթություն լինի խնդիրներ ունեցող երեխաների **ծնողները** նույնիսկ առանց որևէ օգնություն պահանջելու կտանեն դպրոց:

Երեխաները ավելի արագ են փոփոխվում, քան նրանց **ծնողները**:

Ներկայիս սերունդը շատ լավն է, **բայց** եթե ծնողները դեռ կարծրատիպերով են, դա յուրաքանչյուր օր ազդում է երեխաների վարքի վրա:

Առաջին հերթին պետք է բոլորի **ծնողներն** իրենց երեխաներին ճիշտ դաստիարակեն, որ ավելի հանդուրժող լինեն բոլորի հանդեպ:

Ը.5 ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ներառականի մասին հենց առաջին ասոցացիան կրթության հատուկ պայմաններն են՝ կախված կոնկրետ երեխայի առանձնահատկություններից:

Մարդիկ խուսափում են ներառական կրթությունից, քանի որ այս բառը խուճապ է առաջացնում, պիտակավորում է երեխային,

Սոցաշխատողի և դպրոցի ներառական մասնագետների կողմից արվել է ամեն ինչ, որ տվյալ երեխան այցելի դպրոց: Բայց նա չի ցանկանում, այլ միջոցներ չգիտեմ:

Երեխային ուղղակի պետք է ասել, որ դու կոնկրետ առարկայից թույլ ես ու քո հետ

քանի որ ուսուցիչներն էլ են երեխային ասում՝ ներառականի երեխա:

Երեխայի ականջին մի ավելորդ շշուկ եթե լինի, էլ չի ուզի այդ **միջավայր** գնալ:

Իմ երեխան դիաբետ ունի, տարա մանկապարտեզ, բայց դաստիարակները լավ չէին **վերաբերվում**, երեխան հիասթափվեց, հիմա էլ չի ուզում գնալ:

Պետք է աստիճանաբար խուսափել ներառական երեխա **արտահայտությունից**, ուղղակի տալ մարդու անունը, ինչպես մնացած բոլորինը:

Ես, լինելով նորմալ ինտելեկտի տեր աշակերտ, ինքս անգամ մեծ դժվարությամբ եմ հասկանում, օրինակ, իններորդ դասարանի մաթեմատիկայի դասագրքի մեջ գրվածները:

Կամերաները կտրականապես չի կարելի **դասարաններում** տեղադրել:

աշխատում ենք, որ **ծնողներիդ** գործը հեշտացնենք:

Անընդհատ խոսում ենք կրթությունից, բա՞ հանդեսները, էքսկուրսիաները... Դրանք ներառական **դասարանում** սովորող երեխայի համար ավելի կարևոր են, քան դասերը:

Երեխաները դեռ պատրաստ չեն իրենց շրջապատ ընդունել ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Աշակերտները կարծում են, որ սխալ է նույն դասարանում բոլորի ներկայությունը, օրինակ ԿԱՊԿՈՒ երեխաները աղմկում են, մյուսները կրկնում են դա:

Ներառական կրթության գլխավոր մասը , որը պետք է շեշտադրենք, այն երեխաների հետ աշխատանքն է, ովքեր կոպիտ վիրավորում են խնդիրներ ունեցող երեխաներին:

Շատ դպրոցներ կան, որտեղ ԿԱՊԿՈՒ երեխաներ են գրանցված, բայց «սովորական» երեխաների բողոքների պատճառով չեն հաճախում դպրոց: Երեխաների ծնողները պատճառաբանում են, որ ԿԱՊԿՈՒ խնդիր ունեցող երեխաները **խանգարում** են իրենց երեխաներին սովորել, ավելին՝ ԿԱՊԿՈՒ երեխաները հոգեբանորեն նաև ազդում են «նորմալ» երեխաների վրա:

Աշակերտ լինելով՝ ես դեմ եմ, որ մենք սովորենք հիվանդ աշակերտների հետ, հաստատ **դասարաններում** երեխաներ կլինեն, որ կնեղացնեն այդ բալիկներին:

իմ աղջկա **դասարանը** առաջ լավն էր, բոլորը լավ էին սովորում, հիմա երբ իրար են խառնել, ամեն ինչ խճճվել է, օրինակ երեխայիս մազերը կտրել էր դասարանցին:

Հենաշարժողական խնդիր ունեցող երեխան եթե գա **դասարան**, և՛ մեզ համար, և՛ իր համար դժվար կլինի միանգամից ընդգրկվել ընդհանուր խմբում, նույնիսկ մեր դպրոցը, որ ներառական

Ցանկալի է, որ առանձին սեմինարներ լինեն նաև աշակերտների հետ, որ իրենք էլ իմանան՝ իրենց ինչպես պահեն:

Եթե աշակերտները **գիտակցեն**՝ ինչ է կատարվում, իրենք էլ կօգնեն մանկավարժներին և ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Շատ լավ է, որ մեր հետ սովորում էին խնդիրներ ունեցող երեխաները, քանի որ նրանց հետ էլ է **հետաքրքիր** շփվել:

Հիմա դպրոցներում **մթնոլորտը** փոխվել է ու երեխաները պատրաստ են խնդիրներ ունեցող երեխաներին ընդունել ու օգնել:

Դպրոցներում պետք է ստեղծվի **կամավորական խմբեր,** որոնք մեծ հաճույքով կզբաղվեն խնդիրներ ունեցող երեխաների հետ ու կօգնեն նրանց ավելի արագ համակերպվել դպրոցի կյանքին:

Երբ երեխան ընդգրկվում է **առաջին դասարանից**, միանշանակ ավելի սահուն է անցնում նրա և շրջապատի միաձուլումը:

Խնդիրներ ունեցող երեխային սովորաբար երեխաներն ավելի լավ են ընդունում, քան ծնողներն ու ուսուցիչները:

Մեր դպրոցում աշակերտները, սովորելով ԿԱՊԿՈՒ երեխաների հետ շփվելով, **դիսկոմֆորտ** չեն զգում:

Մեր դպրոցում կան ԿԱՊԿՈՒ երեխաներ: Մեր դասարանում չկան: Բայց ես լսել եմ, որ մյուս երեխաները շատ լավ են վերաբերում նման երեխաներին, օրինակ՝ մի քայլելու խնդիր

չէ, կան երեխաներ, որ դուրս են մնում, ի՞նչ կլինի եթե հաշմանդամ երեխա գա դասարան:	ունեցող երեխայի, լսել եմ, որ **դասարանցիները** մեծ սիրով օգնում են տեղափոխվել մի տեղի մյուսը: Դասարանի երեխաներն առաջին հերթին պատրաստակամ են օգնել իրենց դասարանի հենաշարժողական խնդիրներ ունեցող **դասընկերներին**: Իմ երեխայի **դասարանում** տարրական դպրոցում կար խնդիրներ ունեցող երեխա, բայց ամբողջ դասարանը ընդունում էր նրան, ինչպես որ կար: Առաջինը նրան էին օգնում, հետո անցնում իրենց գործին: Որոշ չափով հասել ենք մի իրավիճակի, որ առաջին **դասարանում** ներառականով ընդգրկված երեխայի նկատմամբ երեխաները շատ **հանդուրժող** են: Օրինակ, ես կարծում եմ, որ սովորական երեխաները կարող են խուլ ու համրերի լեզուն սովորել, ինչո՞ւ ոչ: ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոց գնալու առաջնահերթ խնդիրը սոցիալականացումն է, մյուս երեխաների հետ շփումը:
Եթե երեխան ունի ներառականության խնդիր, երեխայի հետ պետք է իր լեզվով խոսել, որպեսզի կարողանանք ապահովել ներառականությունը: Ուսման առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները հնարավոր է «նորմալ» երեխաների հետ իրենց **հարմար չզգան**, նրանց հետ պետք է աշխատի հատուկ մասնագետը: Մենք մասնագիտորեն հենվում ենք կոնկրետ երեխայի ունակությունների վրա: Կարող է դոկտոր-պրոֆեսոր չլինի, բայց հաստատ հասարակության լավ անդամ կլինի: Իմ համար կարևորն այն է, որ իմ երեխան հարմարվի միջավայրին, որ մեծանա, չվախենա միջավայրից:	Անհատին առանձնահատուկ մոտեցում է պետք անկախ ԿԱՊԿՈՒ է, թե ԿԱՊԿՈՒ չի երեխան: **Հատուկ պայմանները** պետք է լինեն ամեն խմբի համար, ամեն դասարանի համար, ամեն միջավայրի համար: ԿԱՊԿՈՒ երեխաներին ավելորդ **հոգատարությունն** էլ է վնասակար: Այսօր բոլոր երեխաներն ունեն **հոգատարության** կարիք, ոչ միայն այս՝ հատուկ երեխաները: Հոգատարությունը, դրական վերաբերմունքը կարևոր է, բայց երկու երանի մի տեղ չունենք: Բայց թեթև մտավոր հաշմանդամ համարվող հոգեկան հիվանդություն ունեցող երեխան բացարձակապես ոչինչ չի հասկանում, երբ բացատրում ես: Իսկ մեզանից հետո միասնական քննության ժամանակ լավ արդյունք են ակնկալելու: Խորհրդային ժամանակ մեզ գոնե ապահովել են կրթության նվազագույն մակարդակը՝ անկախ խնդիրներից:
Դեպք ունենք, երբ երեխային **առանձին** պահել ենք կաբինետում, ոչ թե ընդհանուրի հետ: Դա սխալ է, բայց այլ տարբերակ չունեինք: Խոսքի խնդիր ունի իմ երեխան, ես նպատակ չունեմ, որ նա դառնա գիտնական: Ցանկանում	Ներառականով ընգրկված երեխաները պետք է **տարանջատվեն**. մտավոր հետամնացությամբ երեխա ունենք, որ խնդիրներ է առաջացնում մյուս երեխաների համար: Իսկ կան ներառականով՝ ֆիզիկական

եմ ընդամենը, որ հանգիստ **շբվի** հասակակիցների հետ:

Հնարավոր է, որ ԿԱՊԿՈՒ աշակերտը հետ է գցում ընդհանուր **դասարանին** ուսման պլանից, բայց ես կարծում եմ, որ շատ կարևոր է այդպիսի աշակերտներին ինտեգրել ընդհանուր միջավայրում, ու հանուն էդ նպատակի կարելի է գնալ զոհողությունների:

Ես կարծում եմ, որ ԿԱՊԿՈՒ երեխային մնացածի հետ նույն **դասարանում** ներառելու կամ չներառելու խնդիրը պետք լուծել կախված հաշմանդամության աստիճանից՝ թեթև է, թե ծանր: Նրանց մեկուսացնելը սխալ են:

Ներառականությունը մեկ կամ երկու դպրոցներում ոչինչ չի փոխում: Դրա համար մենք երեխաներից շատերին հասարակությանը ոչ պիտանի անդամ ենք դարձնում:

Կան երեխաներ, որոնք սայլակի վրա են, բայց բոլորից էլ խելացի են, այս երեխաները պետք է սովորական **դասարաններում** սովորեն:

Պետք է կենտրոններ ստեղծենք միայն ծանր խնդրով երեխայի համար: Իսկ մյուս բոլոր երեխաները պետք է սովորական դպրոց գնան:

Կարելի է դասաժամը կիսել, մի կեսի ընթացքում ԿԱՊԿՈՒ երեխան **դասարանում** լինի, մյուս կեսի ընթացքում՝ առանձին:

Պետք է ներառական համակարգը կիրառել ոչ բոլոր հանրակրթական ծրագրերում, որպեսզի ոչ մեկ չտուժի:

Վարքային խնդիրներ երեխաների մեծամասնությունն ունեն, բայց երբ ԿԱՊԿՈՒ երեխաները են ունենում նաև վարքային խնդիրներ, շատ դժվար է լինում նրան վերահսկել:

Երեխաներն ունեն տարբեր անցումային շրջաններ: Դիմել ենք, որ նախապատրաստենք: Բայց ասում են, որ ձեր երեխան գերակտիվ է, չենք կարողանա ընդունել:

հաշմանդամությամբ երեխաներ, որոնք ոչինչով խնդիր չեն դասապրոցեսի համար:

Տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին մի տեղում հավաքելը կարող է սխալ լինել:

Սխալ է տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին **մի սենյակում** նստեցնել ու դասավանդել: Պետք է տեսակավորել:

Պետք է լուրջ տարբերակում մտցնել ԿԱՊԿՈՒ երեխաների միջև ու կախված խնդրից, նրան ներառել կամ չներառել սովորական հանրակրթական դպրոցներում: Օրինակ, **հոգեկան** խնդիր ունեցող երեխային պետք է համապատասխան հաստատություն տանել, որովհետև վտանգավոր է:

Համընդհանուր ներառականությունը սխալ է: Մեծամասնությանը կարելի ա տանել հանրակրթական դպրոց, բայց, օրինակ, **հոգեկան** խնդիր ունեցողին չի կարելի մնացածի հետ նույն դասարանում նստացնել:

Իսկ ինձ հետաքրքրում է մեկ հարց. ներառական կրթության շնորհիվ մենք ունե՞նք առաջխաղացում այդ երեխաների մտավոր զարգացման հարցում, աչքս պետք է տեսնի, որ հավատամ:

Մենք պետք է հասկանանք, թե ներառականություն ասելով «ծանր» երեխայի համար ի՞նչ խնդիրներ ենք լուծում:

ԿԱՊԿՈՒ երեխաները իրենց ներկայությամբ շեղում են խնդիրներ չունեցող երեխաներին ու դասապրոցեսը խաթարվում է, քանի որ այդ պարագայում ուսուցիչը ավելի շատ ժամանակ է ծախսում ԿԱՊԿՈՒ երեխաների վրա:

Խնդիրներ չունեցող երեխայի հետ աշխատելու փոխարեն ուսուցիչը ստիպված է լինում աշխատել խնդիրներ ունեցող երեխայի հետ: Պետք է մի **դասարանում** մեկից ավել խնդիրներ ունեցող երեխա չլինի:

Սովորական դպրոցում ուսուցիչները այն ԿԱՊԿՈՒ երեխաներին, որոնք մեծ ակտիվություն են ցուցաբերում դասերին և **խանգարում** են դասապրոցեսը, հանում են դուրս, որպեսզի դասը չտուժի:

Ավելի լավ կլինի, որ բոլոր ԿԱՊԿՈՒ երեխաները **առանձին** սովորեն մի դասարանում:

Կարելի է դպրոցում առանձին **դասարան** ունենալ, որտեղ երեխաները իրար նման կլինեն, վատ չեն զգա:

Սեփական փորձ եմ ունեցել, որ մի **երեխան**

	ազդում է երեսուն երեխաների վրա: Մեր դպրոցում՝ Մարտունու ավագ դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ, բայց դպրոցը նորոգելուց հետո հնարավորություն ունենք ապահովելու ներառականությունը: Դեռևս ունենք նաև մասնագետների կարիք: Ես, օրինակ, դեմ եմ ԿԱՊԿՈՒ աշակերտի ներառմանը **ընդհանուր դասարանում**, քանի որ դրանով ուսման էֆեկտիվությունն է տուժում: Թող ԿԱՊԿՈՒ աշակերտը լինի նույն դպրոցում, բայց ոչ նույն դասարանում: Օրինակ՝ իններորդ **դասարանում** էպիլեպսիկ երեխա էր նստել, երբ վատացել էր, կողքի երեխան լուրջ հոգեբանական խնդիրներ էր ունեցել: Մոռանում ենք, որ նույն **դասարանում** կան տաղանդավոր երեխաներ, որոնց քառասունհինգ րոպե գիտելիք է պետք: Միևնույն ժամանակ հատուկ երեխան էլ ուշադրության կարիք ունի: Ներառականի մեջ ներառվածները միայն հենաշարժողական խնդիրներով երեխաները չեն, ունենք շատ երեխաներ, որոնք ո՛չ ներառականի տակ են մտնում, ո՛չ դպրոց տանելու են:
Եթե բոլորը պետք է հավասար լինեն, սնունդը արդեն **անհավասարություն** է: Երբ տրամադրվում էր սնունդ, դա ինքնին տարբերակում էր մտցնում երեխաների մեջ. ներառականները ստանում էին, մնացածը՝ ոչ: Ասում ենք, որ հատուկ երեխաները հասարակության անդամ են, բայց հենց **դասարանում** մեկուսացնելու ենք երեխաներին: Գալիս են այդ երեխաներին հատուկ առանձնացնում, թե բա դու, դու և դու, գնացեք ուտելու, արդեն իսկ այդ երեխաները առանձնանում են:	Ուսուցիչները ներառականով երեխային գցում են դասարանի **մի անկյուն**, դրանով բնականաբար ոչ մի արդյունք էլ չի լինի:
Ներառականության անցնելու համար պետք է բեռնաթափել **դասարանները**: **Դասարանների** ծանրաբեռնությունը մեծ խնդիր է: Եթե մեկ դասարանում սովորեն ոչ թե քսանհինգից-երեսուն երեխա, այլ ավելի քիչ, ասենք տասնհինգ, դա **նպաստող գործոն** կլինի ներառականների համար: Պետք է դասարաններում **աշակերտների թվաքանակը** քիչ լինի: Պետք է դասարաններում լինեն աշակերտների	Հատկապես դժվար է, երբ մի **դասարանում** մի քանի ԿԱՊԿՈՒ երեխաներ կան: Այսօրվա դպրոցներում չի ստեղծվում նորմալ **կրթական միջավայր**, օրինակ ջեռուցումը նորմալ չի ապահովվում, ի՞նչ ներառական կրթության խնդիրներից ենք խոսում: ԿԱՊԿՈՒ-ի դեպքում կաբինետային կրթությունը գործում է միայն զարգացած դպրոցներում:

թվականակի պակասեցում, որպեսզի ուսուցիչը ԿԱՊԿՈՒ երեխաներով էլ զբաղվելու ժամանակ ունենա: Դասարանում 35 աշակերտ կա, **ուսուցիչը** ո՞նց պիտի աշխատի բոլորի հետ առանձին-առանձին: Եթե դասարանում 35 երեխա կա, մեկ կամ մի քանի ԿԱՊԿՈՒ, ինչպես կարող է **ուսուցիչը** անհատական ու առանձնահատուկ վերաբերել բոլոր երեխաներին: Ունենք 30 երեխա **դասարանում** ու մի ԿԱՊԿՈՒ երեխա . դա պլյուս 30 երեխա: Արդեն իսկ մեր **դասարաններում** երեխաների թիվը մեծ է, երբ ԿԱՊԿՈՒ էլ է ավելանում, շատ դժվար է դառնում աշխատել: Պետք է դասարանները կիսել:	
Եթե դու չես կարող մարդուն **պատշաճ** հրամցնել ներառական կրթությունը, ապա դրա ներդրումը կարող է վնասել ավելի, քան օգնել: Պետք է հանրկրթությունը սկսել ճիշտ ժամանակին, որքան ուշացվում է, այնքան բարդանում է: Շատ երեխաներ տուժեցին, ոչ ճիշտ ներառական կրթության պատճառով:	Ամենագլխավորը այն է, որ պետք է լինի համապատասխան **միջավայր** ու պայմանները համապատասխանեն ԿԱՊԿՈՒ երեխաներին, այլապես այս ներառական կրթության ներդրումը անիմաստ ու անօգուտ ծրագիր է դառնալու:

Հավելված 1. Գունային կոդավորում

ք. Արմավիր (ՀՀ Արմավիրի մարզ), 20 մարտի, 2019թ.

ք. Մարտունի (ՀՀ Գեղարքունիքի մարզ), 21 մարտի, 2019թ.

Հավելված 2. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների քննարկման սցենարները

Սցենար 1. Յոթ իմաստուններն ու ներառական փիղը

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ապահովելու պայմաններ ստեղծելու վերաբերյալ պարտավորություն ստանձնելուց քառորդ դար անց՝ 2023թ. Հայաստանում համընդհանուր ներառական կրթության համակարգը գոյություն ուներ առավելապես օրենքներում, ծրագրերում և դրանց կատարման հաշվետվություններում: Թեպետ դեռ 2001թ. Երևանում և Տավուշում ներդրվել էր ներառականության սկզբունքների կիրարկման առաջին պրակտիկան, իսկ դրանից մեկ տասնամյակ անց՝ 2014թ. «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններն ամրագրեցին անցումը համընդհանուր ներառական կրթության, ներառական կրթության պրակտիկան մնում էր հատվածական և տարընթերցելի:

Թեև նախորդ տարիներին ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված էր յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը, և նախատեսում էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու, ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն, այդուհանդերձ այս խնդրում խոսքի և գործի միջև անջրպետը տարեց-տարի կրճատվելու փոխարեն ավելանում էր: 21-րդ դարի երրորդ տասնամյակի առաջին կեսին այս ոլորտում հավակնությունները, պարտավորություններն ու թիրախներն առաջանցիկ ավելանում էին, իսկ հատկացվող ռեսուրսներն ու հնարավորությունները ավելի ու ավելի սահմանափակվում: Ներառականության հանրային քաղաքականության շուրջ բանավեճը ավելի ու ավելի էր հիշեցնում փղի և յոթ կույրերի մասին հնդկական առակը: Այս խնդրի վերաբերյալ պետական քաղաքականությունը հանրային օրակարգում կարևորվում էր գերազանցապես դոնորների և միջազգային կառույցների ջանքերով:

2023թ. շուրջ 1.8 տրիլիոն դրամ կազմող պետական բյուջեի միջոցներից կրթությանը հատկացվել էր շուրջ 140 մլրդ դրամ: 2019թ. համեմատ՝ կրթության բյուջեն գրեթե չէր ավելացել: Հանրակրթությանը հատկացվել էր շուրջ 100 մլրդ դրամ. այնքան, որքան 2019թ., հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում էին մեկ աշակերտի հաշվով տարեկան շուրջ 106,000 ՀՀ դրամի չափով: Դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողների համար պետությունը լրացուցիչ ֆինանսավորում էր տրամադրում՝ մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտի հաշվով տարեկան 400-600 հազար դրամ: Այս գումարն ուղղվում էր ուսուցչի օգնականի հաստիքին և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին, ԿԱՊԿՈՒ երեխաների սննդի (օրական՝ շուրջ 800 դրամ) և ճանապարհածախսի (օրական 200 դրամ) ծախսերին: Այսպիսով, համընդհանուր ներառական կրթության համակարգի ապահովմանը 2023թ. տրամադրվել էր շուրջ 3 մլրդ դրամ:

Յուրաքանչյուրում 15 ԿԱՊԿՈՒ սովորողի հաշվով սահմանվել էր հատուկ մանկավարժի, դաստիարակի, հոգեբանի, ինչպես նաև խոհարարի մեկ դրույք: 2023թ. հանրապետության շուրջ 1400 դպրոցների համար սահմանված էր ուսուցչի օգնականի և հատուկ մանկավարժի ավելի քան 3,000 դրույք: Ուսուցչի օգնականի միջին ամսական աշխատավարձը կազմում էր մանկավարժների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի 80%-ը՝ շուրջ 80,000 դրամ: Այդուհանդերձ, հատուկ մանկավարժը և հոգեբանը դասաժամերին հիմնականում ներկա չէին: ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատում են առանձին, ինչը թեթև խնդիրներ ունեցող երեխաների մոտ առաջացնում էր մեկուսացման, խտրականության զգացողություն և համադասարանցիների կողմից խտրական վերաբերմունքի տեղիք էր տալիս: 2023թ. Հայաստանում ԿԱՊԿՈՒ սովորողների շուրջ 8%-ն ուներ հենաշարժական խնդիրներ: Երևանում՝ քաղաքապետարանի, մարզերում՝ ՀԿ-ների ու դոնորների աջակցությամբ և դպրոցների բյուջեների հաշվին հանրապետության բոլոր դպրոցներում կառուցվեցին արտաշենքային և ներշենքային թեքահարթակներ: Միաժամանակ, գրեթե բոլոր դպրոցներում բացակայում էին ներքին հարմարությունները: Դպրոցների մի մասը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպում էին շենքերի առաջին հարկերում: ԿԱՊԿՈՒ սովորողներին դասընկերները հաճախ ստիպված ձեռքերի վրա տեղափոխում էին երկրորդ հարկ, որտեղ կաբինետային դասարաններն էին: Երեխաներն հաճախ չէին էլ մասնակցում լաբորատոր աշխատանքներին: Գրեթե բոլոր դպրոցներում սանհանգույցները տիպային էին՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին չհամապատասխանող, շատ հաճախ՝ անմխիթար վիճակում:

Չնայած ԿԱՊԿՈՒ երեխաների համընդհանուր ներառմանն ուղղված պետության, համայնքների և մյուս դերակատարների ջանքերին, երկրում սոցիալական և կրթական միջավայրը, տրամադրվող սուղ միջոցները նման երեխաների զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին մասնակցության և կրթության արդյունքների ապահովման խիստ սահմանափակ հնարավորություն էին ընձեռում: Շատ ընտանիքներ խուսափում էին դիմել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման, հատկապես՝ աղջիկների պարագայում: 2023թ. Յուրաքանչյուր երեք ԿԱՊԿՈՒ երեխայից միայն մեկն էր աղջիկ:

Սցենար 2. Ծակ գրպանի բարի մտադրությունները

Համընդհանուր ներառական կրթություն ապահովելու նպատակով 2019-2023թթ. կատարված աշխատանքների և հատկապես իրազեկման մեծածավալ արշավների արդյունքում, Հայաստանում 2024 թվականին այս ուղղությամբ էական զարգացումներ եղան, հատկապես՝ ներառականության, ԿԱՊԿՈՒ երեխաներին կրթական համակարգում սոցիալապես ինտեգրելու, այս երեխաների կարիքների հանդեպ հասարակության վերաբերմունքի, կարծրատիպերի փոխակերպման հարցերում, ընդհուպ մինչև՝ խոսակցական մակարդակում լեզվի և մշակույթի փոփոխությունները: ԿԱՊԿՈՒ երեխաներին հասարակությունը հիմնականում այլևս չէր ընկալում որպես «արատ ունեցող», «ինվալիդ», «պակասավոր»: Բոլոր երեխաների կարիքների հանդեպ զգայունությունը և դիմացինի կարիքներն ու խնդիրները սեփականի պես ընկալելը դարձել էր գրեթե համընդհանուր նորմ:

Միաժամանակ, երկրի տնտեսության դանդաղ աճի պայմաններում համընդհանուր ներառական կրթության համակարգի զարգացման նպատակով հատկացված ֆինանսական միջոցները 2019-2023թթ. չգերազանցեցին 3 մլրդ ՀՀ դրամը, ինչը հազիվ բավարարում էր համակարգի նվազագույն ծախսերը հոգալուն:

Հանրապետությունում գործող բոլոր հատուկ դպրոցները 2023թ. դրությամբ վերակազմավորվել էին մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կամ փակվել էին: ՀՀ յուրաքանչյուր մարզում գործում էր առնվազն մեկ, իսկ Երևանում չորս նման տարածքային կենտրոն: Գործում էր երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: ԿԱՊԿՈՒ երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն ստանում էին երեք մակարդակներում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Նախկին հատուկ դպրոցներից բոլոր սովորողները 2024թ. դրությամբ տեղափոխվել էին հանրակրթական դպրոցներ:

Այդուհանդերձ, նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստումը թերի էր: 2019թ. լուծարված ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտը, որը դրա հիմնական պատասխանատուն էր, վերաբացվեց 2020թ. նոյեմբերին, իսկ վերապատրաստման աշխատանքները սկսեց համակարգել միայն 2021թ. սեպտեմբերին: Այդ ժամանակահատվածում վերապատրաստման հիմնական բեռը մնաց Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ուսերին:

Արդյունքում տարածքային կենտրոնների կողմից տրվող մասնագիտական կարծիքի նկատմամբ հասարակության շրջանում անվստահություն էր ձևավորվել: Նման անվստահությունը ծնողներից շատերը հիմնավորում էին մասնագիտական գնահատման ընթացքում ծնողի «սիրողական» կարծիքը հաշվի չառնելու հանգամանքով՝ նշելով, թե. «իմ երեխայի առանձնահատկություններին ինձանից ավելի լավ ոչ ոք ծանոթ չէ»:

Շատերը դժգոհում էին ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հատկացված ֆինանսական միջոցների ծախսերի թափանցիկության ապահովման խնդիրներից: Նշում էին թե, դպրոցների տնօրենները հակված են կատարված ծախսերը ներկայացնել բացառապես ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին: Դպրոցի կառավարման խորհուրդներին նույնպես ծախսերի հաշվետվությունները բավարար կերպով չէին ներկայացնում:

Չնայած համընդհանուր վերաբերմունքի և մթնոլորտի վերը նշված դրական էական փոփոխություններին՝ շատ ծնողներ անգամ միջին խորության ԿԱՊԿՈՒ երեխայի կրթությունը նախընտրում էին կազմակերպել տնային պայմաններում: Միաժամանակ, փաստերի և վերլուծության վրա կառուցված քաղաքականության և համակարգի ներդրման ձեռքբերումները պատշաճ կերպով հասարակությանը ներկայացնելու արդյունքում, անգամ սահմանափակ ֆինանսավորման պայմաններում, հնարավոր դարձավ զարգացման առանձին խնդիրներ և ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող երեխաներին ամբողջությամբ ներառել հանրակրթության համակարգում: Այսպես, լսողության ֆունկցիայի տարբեր խորության խնդիրներ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաները (բոլոր ԿԱՊԿՈՒ երեխաների շուրջ 2%-ը) սովորում էին հարմարեցված հանրակրթական դպրոցներում:

Սցենար 3. Վագրի կաշի՝ կարմիր կովին

2022-2023թթ. Հայաստանի տնտեսության նշանակալի աճի պայմաններում, կրթության ոլորտի հանրային ֆինանսավորումը 2024թ. պետական բյուջեում կազմեց ՀՆԱ-ի գրեթե 4%-ը: Համընդհանուր ներառական կրթության ապահովմանն ուղղվեց շուրջ 6 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում, հնարավոր դարձավ հանրապետության գրեթե բոլոր հանրակրթական դպրոցները հարմարեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին:

Դեռ 2019 թվականին Հայաստանի գրեթե բոլոր դպրոցներում գործում էին բուֆետներ, սակայն, չկային հարմարեցված սպորտային դահլիճներ և ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու ունակ մասնագետ-ուսուցիչներ: Սահմանափակ բյուջեի պայմաններում խնդրահարույց էր մնում դասասենյակների հարմարեցվածությունն ու կահավորումը ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին համապատասխան սեղան-աթոռներով, լայն փեղկով դռներով: 2024-2025թթ. բյուջետային հատկացումների զգալի ավելացումը հնարավորություն տվեց մասնակիորեն լուծել այս խնդիրները: Մինչև 2020թ. հանրապետության բոլոր դպրոցներն ունեին առանձին ռեսուրս սենյակներ, իսկ 2024-2025թթ. դպրոցները հնարավորություն ստացան ձեռք բերելու անհատական կրթության կազմակերպման համար տեխնիկական հարմարանքներ, վերականգնողական կաբինետներ, սանիտարահիգիենիկ և տնտեսակենցաղային սպասարկման միջոցներ: Յուրաքանչյուր դպրոց հատկացրեց առանձնասենյակ երեխայի հետ առանձին աշխատելու նպատակով, ինչի հնարավորությունը ընդհանուր ռեսուրս սենյակը չէր ընձեռնում:

2024թ. Հայաստանում ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարում ունեցող երեխաները կազմում էին ԿԱՊԿՈՒ աշակերտների շուրջ 20%-ը, իսկ տեսողության տարբեր խորության խնդիրներ ունեցողները՝ շուրջ 15%-ը: Կրթական մի շարք ավանդական ռեսուրսներ, այդ թվում՝ դասագրքերը և շտեմարանները, ինչպես նաև առցանց կրթական պաշարները պետբյուջեի միջոցներով հարմարեցվեցին ԿԱՊԿՈՒ այս երեխաների կարիքներին: Այսպիսով, թե՛ կրթական պաշարները, թե՛ դպրոցական միջավայրը այս երեխաների համար ավելի մատչելի դարձան: ՀԿ-ների նախաձեռնությամբ, զարգացման միջազգային գործընկերների աջակցությամբ և մասնավոր տպագրատների ջանքերով, ինչպես նաև 2021թ. ձևավորված Կրթության ազգային ինստիտուտի մասնակցությամբ թարմացվեցին դիդակտիկ նյութերը: Եթե նախկինում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատում էին հիմնականում խաղերի միջոցով, որոնցից երեխաները արագ ձանձրանում էին, ապա նոր ռեսուրսներն ու որոշ մեթոդներ օգնեցին առավել արդյունավետ կազմակերպել երեխաների հետ անհատական աշխատանքը:

Այդուհանդերձ, ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի մեթոդները հիմնականում մնացել էին անփոփոխ: Տարածված պրակտիկա էր ԿԱՊԿՈՒ երեխայի հետ դասաժամերին «ծաղիկ կտրելը»՝ երբ երեխան ներկա է բոլոր դասաժամերին, բայց նրա հետ զբաղվում է հոգեբանը: 2024 թվականից մի շարք դպրոցներում սկսեցին ներդնել ԿԱՊԿՈՒ աշակերտների, ըստ իրենց առանձնահատուկ կարիքների, ընտրողաբար դասաժամերի հաճախելու պրակտիկան. երեխան հաճախում էր առանձին առարկաների դասերին՝ անհատական ուսուցման պլանի համաձայն, իսկ մյուս դասաժամերին մասնակցում էր ընդհանուր ուսումնական պլանով:

Դասավանդող ուսուցիչների և դասղեկների ճնշող մեծամասնությունը չուներ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիք և հմտություններ: Ավելի՛ն, ուսուցչական միջավայրը կրում էր համընդհանուր ներառական ուսուցման խնդիրների և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման հանդեպ հասարակության մեջ գերակայող կարծրատիպերը: Հասարակությունը, ընդհանուր առմամբ, անհանդուրժող էր տարբեր խմբերի առանձնահատուկ կարիքների նկատմամբ և դիմադրում էր դրանց բավարարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նախաձեռնություններին: Դպրոցի հոգեբանները շատ հաճախ չունեին երեխաների առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտ կարողություններ և գրեթե բոլորին վերաբերվում էին նույն կերպ: Այս խնդիրները լուծելու նպատակով, հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների համար 2018-2023թթ. իրականացվեցին վերապատրաստման դասընթացներ՝ հիմնականում Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով:

Թեև ֆիզիկական ենթակառուցվածքների ֆինանսավորմանը նշանակալի միջոցներ ուղղվեցին, համակարգի արդյունավետությունը մնում էր սահմանափակ: Ծնողները բավարար չափով տեղեկացված չէին ուղղորդման անհրաժեշտության և մեխանիզմների մասին: Ուղղորդումը հիմնականում կատարվում էր, երբ առաջանում էր երեխայի դպրոց ընդունվելու կամ դպրոցից այլ դպրոց տեղափոխելու հարցը (թեթև խնդիրների դեպքում իհարկե): Ծնողը այն ընկալում էր հիմնականում որպես երեխային հանրակրթությունից դուրս չթողնելուն ուղղված բյուրոկրատական անխուսափելի քաշքշուկ և ոչ երեխայի զարգացմանը միտված գործընթաց:

Դպրոցների տնօրենները հիմնականում գոհ էին ԿԱՊԿՈՒ սովորողներին հատկացվող ֆինանսավորումից՝ այն համեմատելով ոչ ԿԱՊԿՈՒ աշակերտների ֆինանսավորման հետ: Միաժամանակ, նրանց կարծիքով այս ֆինանսավորումը ուղղված էր ոչ այնքան որակյալ կրթական ծառայությունների, որքան ծառայությունների ֆիզիկական հասանելիության ապահովմանը:

Սցենար 4. Ինչ գին ունի համընդհանուր ներառումը

2023-2024 թվականներին Հայաստանի աննախադեպ տնտեսական աճի պայմաններում նշանակալիորեն ավելացավ հանրակրթության համակարգի ֆինանսավորումը: Ընդ որում, համընդհանուր ներառական կրթության կազմակերպմանն ու զարգացմանը տրամադրվեց ավելի քան 10 մլրդ դրամ: Հանրապետությունում նախորդ տարիներին ծավալված իրազեկման արշավները էականորեն փոխեցին հասարակության վերաբերմունքը խնդրի նկատմամբ, այն դարձրին հանրային օրակարգի գերակա խնդիր, ուստի զարմանալի չէ, որ համընդհանուր ներառականության կայացմանը զգալի աջակցություն ցուցաբերեցին նաև մասնավոր հատվածը և ոչ պետական հիմնադրամները:

2025 թվականից հանրապետության բոլոր բուհերի մագիստրոսի կրթական ծրագրում դասավանդվում էր «Համընդհանուր ներառական ուսուցման մեթոդաբանություն» կամընտրական առարկան, որի եզրափակիչ գնահատման արդյունարար «գերազանց» միավորը պարտադիր էր մանկավարժական համապատասխան որակավորման և ուսումնական հաստատությունում ուսուցիչ և դասղեկ լինելու համար: Ուսանողների ուսումնական պրակտիկայի հիմնական բաղադրիչներից մեկը դարձավ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ հարաբերվելու և աշխատելու հմտություններ ձեռքբերելը:

Ուսուցման և վերապատրաստման ծրագրերում, ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացում կարևորվում էր դասապրոցեսում ուսուցչի կողմից ԿԱՊԿՈՒ աշակերտի վարքային որոշակի յուրահատկությունները հաշվի առնելու հմտությունը (օրինակ՝ երեխայի կենտրոնանալու ժամանակահատվածը, նոր միջավայրին հարմարվելը, առարկայական բովանդակության յուրացման համար անհրաժեշտ ժամանակը): Աստիճանաբար, փոխվում էր նախկին պրակտիկան, երբ իմանալով հանդերձ, որ երեխան որոշակի յուրահատկություններ ունի, ուսուցիչներն ու հոգեբանները նրանից ակնկալում էին նույն վարքն, ինչ առանց ուսուցման առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներից: Հենց նման առանձնահատուկ կարիքները բավարարելու համար էր ներդրվել վերը նշված մեթոդաբանության դասընթացը, իսկ դասապրոցեսի կազմակերպման ընթացքում նախատեսվում էր որոշակի ժամանակ նման աշխատանք տանելու համար:

Ուսուցիչներից շատերը, ովքեր տարիների ընթացքում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքի որոշակի փորձ էին ձեռքբերել, հատկապես կարևորում էին ուսուցչի օգնականի դերը այս գործում: Ուսուցչի օգնականը ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին և առանձնահատկություններին անհամեմատ ավելի լավ էր ծանոթ, քան առանձին առարկա դասավանդող ուսուցիչը, թերևս՝ բացառությամբ դասղեկի: Ամենից առաջ և բոլորից շատ օգնականի աշխատանքի շնորհիվ էր հնարավոր դառնում ուսուցչին ու դասարանը ավելի լավ կապել ԿԱՊԿՈՒ երեխայի հետ, և պահպանել դասապրոցեսի հիմնական առանցքը՝ սովորելը:

Նշում էին, թե երեխայի յուրահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է նրա հետ երկար աշխատել, ինչը հնարավոր է տարրական դպրոցում: Տարրական դպրոցում երեխայի հետ շարունակական աշխատանքի արդյունքում դասվարը և օգնականը բավարար ժամանակ էին ունենում երեխայի առանձնահատկությունները հասկանալու համար և կարողանում էին ձևավորել երեխայի հետ աշխատանքի յուրահատուկ մեթոդաբանություն: Նման մոտեցման արդյունքում բազմաթիվ խնդիրներ, որոնք նախկինում առաջանում էին միջին դպրոց երեխայի փոխադրման ընթացքում, հիմնականում չէին ծագում, քանի որ երեխային նախապատրաստում էին իր կյանքում փոփոխություններին:

Այդուհանդերձ, շատ դպրոցներում հոգեբանը և հատուկ մանկավարժը հաճախ տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին հավաքում էին մի խմբում և, եթե խումբը մեծ էր, երկուսով չէին կարողանում աշխատել բոլորի հետ: Արդյունքում, ավելի ծանր խնդիրներ ունեցող երեխաների վարքը բացասականորեն էր անդրադառնում թեթև խնդիրներ ունեցող երեխաների ինքնազգացողության և վարքի վրա, ինչը ծնողների շրջանում մտահոգությունների պատճառ էր դառնում:

Միաժամանակ, ինչպես նախկինում, չէր խրախուսվում ծնողների մասնակցությունը դպրոցում կազմակերպվող ուսումնական գործընթացին: Մինչդեռ ծնողները վստահ էին, թե կարող են մեծապես օգտակար լինել թե՛ երեխային, թե՛ դպրոցին երեխայի սովորելու առանձնահատկություններն ու կարիքները բացահայտելու գործում:

Ֆինանսական միջոցները ուղղվում էին ոչ միայն ֆիզիկական ենթակառուցվածքների և կրթական պաշարների զարգացմանը, այլև յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները հաշվի առնող կրթական միջավայրի ձևավորմանը: Այսպես, 2023թ. կրթության ոլորտում վարվող քաղաքականությունը կարևորում էր կրթական մակարդակների միջև անցումն ապահովելու անհրաժեշտությունը: Այս առումով, 2024թ. առարկաների ուսումնական պլաններում կատարվեցին էական փոփոխություններ: Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների թվում ավելի քան 55% կազմող ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաների տարբեր խորության խանգարում ունեցող սովորողների առանձնահատուկ կարիքները՝ մշակվեց հանրակրթական համակարգում նրանց ինտեգրելու նոր գործիքակազմ, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների և նորարարության կիրառմամբ:

Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Հավելված 5. Մարտունի և Արմավիր համայնքներում համընդհանուր ներառական կրթության ներդրման այլընտրանքների տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները

- Տեղական ժողովրդավարություն. խոշորացում, արդյունավետ կառավարում, թափանցիկություն, հաշվետվողականություն
- Քաղաքականություն և իրավական կարգավորում
- Ֆինանսներ, բյուջե
- Մարդկային ռեսուրսներ. Pre-service, այդ թվում՝ ներառականությունն ապահովելու մեթոդների ուսուցում, In-service՝ մասնագիտական վերապատրաստում ուսուցիչների և դասղեկների համար
- Դպրոցի կառավարում և ուղղորդում. ԿԱՊԿ գնահատում, օժանդակող աշխատակազմ, այդ թվում՝ բուժքույր, դպրոցի խորհրդի կողմից դպրոցի զարգացման գերակայությունների սահմանման և ֆինանսական աջակցության խնդիրներ
- Ֆիզիկական ենթակառուցվածքներ. ներքին հարմարեցվածություն, դասասենյակների գույք, սանհանգույցների հարմարեցվածություն, թեքահարթակ, դռների լայնք, ՍՆԻՊ-եր, մարզադահլիճ, մասնագետ ուսուցիչներ
- Կրթական ծրագիր. տնային ուսուցում, բոլոր դասաժամերին ԿԱՊԿՈՒ երեխան ներկա է, բայց նրա հետ զբաղվում է հոգեբանը, կամ հաճախում է սելեկտիվ դասերի՝ ըստ առանձնահատկության, կրթական մակարդակների միջև անցումն ապահովելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ առարկաների ուսումնական պլանների փոփոխություններ
- Կրթական ռեսուրսներ. ավանդական ռեսուրսներ, դասագրքեր, մեթոդներ (աուդիո-վիդեո դասագրքեր, Բրեյլ), IT-ի հարմարեցում
- Սոցիալական և կրթական միջավայր (enabling environment). աղջիկ-տղա հարաբերակցություն, մշակույթ և ընկալումներ, խտրական կարծրատիպեր, դասղեկ, հոգեբան, դասարան, դպրոց (համայնք), յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները հաշվի առնող կրթական միջավայր

Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը